

ISSN 2953-786X



**ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ.
ՊԱՏՄԱԿԱՆ
ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ.
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՅՅԱԼԸ ԵՎ
ՆԵՐԿԱՆ**

(ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՍՅԱԿԻՆ)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

N 2

ԵՐԵՎԱՆ 2022

ARMENIA-IRAN. HISTORICAL PAST AND THE PRESENT

(DEDICATED TO THE 30TH ANNIVERSARY OF THE
ESTABLISHMENT OF DIPLOMATIC RELATIONS
BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND THE
ISLAMIC REPUBLIC OF IRAN)

PROCEEDINGS OF THE INTERNATIONAL
CONFERENCE
COLLECTION OF ARTICLES

N 2

YEREVAN 2022

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գի-
տական խորհրդի որոշմամբ:

Գլխավոր խմբագիր՝ Գոհար Մանվելի Իսկանդարյան

Հայաստան-Իրան. Պատմական անցյալը և ներկան, Միջազգային գի-
տաժողովի նյութեր. Հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ արևելագի-
տության ինստիտուտ, 2022 թ., 396 էջ:

Published by the decision of the Scientific Council of the
Institute of Oriental Studies of NAS RA.

Editor-in-Chief: Gohar M. Iskandaryan

Armenia-Iran. Historical Past and the Present, Proceedings of the
International Conference, Collection of Articles, Institute of Oriental
Studies of NAS RA, 2022.- p. 396.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԵՐ

ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ 13

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ 15

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ 18

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ 21

ԻԻՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՈՍԵՅՆ ԱՄԻՐ ԱԲԴՈԼԼԱՀԻԱՆ 23

ԻԻՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՌՈՒԲԵՐՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ 26

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԼՕՐԵՆ

ՌՈՒԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ 29

ԵՊՀ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ

ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ 32

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՏԼՕՐԵՆ

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՅԱՆ 35

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԼՕՐԵՆ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ 38

ՀՀ-ՈՒՄ ԻԻՀ ԴԵՄՊԱՆՈՒԹՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ՍԵՅՅԵԴ ՀՈՍԵՅՆ ԹԱԲԱԹԱԲԱՅԻ 40

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

ՄԵՀԴԻ ԻՄԱՆԻՓՈՒՐ 43

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ԻՐԱՆԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ

ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ 46

ԻԻՀ-ՈՒՄ ՀՀ ԵՎ ՀՀ-ՈՒՄ ԻԻՀ ՏԱՐԲԵՐ ՏԱՐԻՆԵՐԻ ԴԵՄՊԱՆՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐ

ԻԻՀ-ՈՒՄ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ 48

ՀՀ-ՈՒՄ ԻԻՀ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐ

ԲԱՀՐԱՄ ՂԱՍԵՄԻ 62

ԻԻՀ-ՈՒՄ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ

ԳԵՂԱՄ ՂԱՐԻԲԶԱՆՅԱՆ 68

ՀՀ-ՈՒՄ ԻԻՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ

ՍԵՅՅԵԴ ԱԼԻ ՍԱՂԱՅԻԱՆ 71

ԻԻՀ-ՈՒՄ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ 76

ՀՀ-ՈՒՄ ԻԻՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ

ՄՈՀԱՄՄԱԴ ՌԱՅԻՄԻ 81

ՀՀ-ՈՒՄ ԻԻՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ

ՍԵՅՅԵԴ ՔԱԶԵՍ ՍԱԶԱԴԻ 84

ԻԻՀ-ՈՒՄ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԱԳՅԱՆ 85

ՀՀ-ՈՒՄ ԻԻՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ

ԱԲԲԱՍ ԲԱԴԱԽՇԱՆ ԶՈՀՈՒՐԻ 87

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՈՂԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ, ԻՐԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 1991-2021 թթ.95

ԱՐՄԵՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ, ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 115

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ, ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ԻՆՉ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ..... 124

ԵՂԻԱ ԹԱՇՃՅԱՆ, ԻՐԱՆԻ ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ..... 149

ԼԻԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՊԱՆԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2005-2013 թթ. 165

ԱՀԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԻՆՉ ՆԵՐՔԻՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ՝ ՔԱՌՕՐՅԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՍՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ (2016-2020 թթ.)..... 178

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՆՏԴԵՉ ԵՐԱՆՅԱՆ, ՈՐՈՇ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Մ.Թ.Ա. 1-ԻՆ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՈՐՈՇ ՄԱՐԴԱԿԵՐՊ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ.....206

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ.....219

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ, ԻՐԱՆՈՒՄ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ (1918-1920 թթ.)238

ԱՐՏՅՈՄ ՏՈՆՈՅԱՆ, ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ.....254

ԼԵԶՈՒ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՎԵՍ

ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈԶՄՈՅԱՆ, ԲԱԶՄԱԹԵՄԱՏԻԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ «ՀԱՖԵԶՅԱՆ ԳԱԶԵԼԻ» ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ (ՄԵԿ ԳԱԶԵԼԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ).....286

ԳԱՌՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ԻՐԱՆԱԿԱՆԻ, ԻՍԼԱՄԱԿԱՆԻ ԵՎ ՄՈՐԴԵՆԻ ՄԻՆԹԵԶԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ ՊԱՐՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՁԱԿՈՒՄ296

ՀԱՄՄԻԿ ՀՄԱՅԱԿՅԱՆ, ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԽԵԹԱԿԱՆ ԶՈՒԳԱՇԵՌՆԵՐԸ.....308

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, ՊԱՐՄԿԵՐԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒ.....320

ԻՎԵԹ ԹԱԶԱՐՅԱՆ, ԱՆՎԱՆԻ ՀԱՅԵՐԸ ՂԱԶԱՐԱԿԱՆ ԻՐԱՆՈՒՄ.....334

ԱՆԱՀԻՑ ՅԱՀՅԱՄԱՄԻՉԻ, ԻՐԱՆԱՀԱՅ ԳԱՂԹՕԶԱԽՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՎԱՆՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԻՐԱՆՈՒՄ (ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ).....355

ԱՆԻ ԲԱԲԱՅԵԱՆ, ԻՐԱՆԱՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ XX ԴԱՐՈՒՄ (ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ)376

ԱՐԵԳ ԲԱԳՐԱՏՅԱՆ, ՀԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ ՀՈՄԱ ԶԱՍԵՄԻԻ «ԱԽԹԱՄԱՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ383

CONTENTS

WELCOME SPEECHES	
ACADEMICIAN-SECRETARY OF THE DIVISION OF ARMENOLOGY AND SOCIAL SCIENCES NAS RA	
YURI SUVARYAN	13
THE PRESIDENT OF THE NAS RA	
ASHOT SAGHYAN	15
BLESSING REMARKS OF HIS HOLINESS	
KAREKIN II	18
SUPREME PATRIARCH AND CATHOLICOS OF ALL ARMENIANS	
MINISTER OF FOREIGN AFFAIRS OF THE RA	
ARARAT MIRZOYAN.....	21
MINISTER OF FOREIGN AFFAIRS OF THE IRI	
HOSSEIN AMIR-ABDOLLAHIAN	23
MEMBER OF THE PARLAMENT OF IRI	
ROBERT BEGLARIAN.....	26
DIRECTOR OF THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES NAS RA	
ROBERT GHAZARYAN.....	29
HEAD OF THE CHAIR OF IRANIAN STUDIES, AT THE FACULTY OF ORIENTAL STUDIES AT YSU	
VARDAN VOSKANYAN.....	32
DIRECTOR OF NATIONAL ARCHIVE OF ARMENIA	
GRIGOR ARSHAKYAN.....	35
DIRECTOR OF THE INSTITUTE OF HISTORY NAS RA	
ASHOT MELKONYAN.....	38
ADVISOR OF THE CULTURAL CENTER OF THE IRI EMBASSY IN ARMENIA	
SEYED HOSSEIN TABATABAEI	40
DIRECTOR OF THE ISLAMIC CULTURE AND COMMUNICATION ORGANIZATION	
MAHDI IMANIPUR.....	43

HEAD OF DEPARTMENT OF IRANIAN STUDIES AT THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES NAS RA	
GOHAR ISKANDARYAN.....	46
SPEECHES OF AMBASSADORS OF THE RA IN THE IRI AND THE IRI IN THE RA IN DIFFERENT YEARS	
AMBASSADOR EXTRAORDINARY AND PLENIPOTENTIARY OF THE RA TO THE IRI	
VAHAN BAYBURDYAN.....	48
CHARGE D'AFFAIRES OF THE IRI TO THE RA	
BAHRAM GHASEMI	62
AMBASSADOR EXTRAORDINARY AND PLENIPOTENTIARY OF THE RA TO THE IRI	
GEGHAM GHARIBJANYAN	68
AMBASSADOR EXTRAORDINARY AND PLENIPOTENTIARY OF THE IRI TO THE RA	
SEYED ALI SAGHAYAN.....	71
AMBASSADOR EXTRAORDINARY AND PLENIPOTENTIARY OF THE RA TO THE IRI	
GRIGOR ARAKELYAN.....	76
AMBASSADOR EXTRAORDINARY AND PLENIPOTENTIARY OF THE IRI TO THE RA	
MOHAMMAD RAISI.....	81
AMBASSADOR EXTRAORDINARY AND PLENIPOTENTIARY OF THE IRI TO THE RA	
SEYED KAZEM SAJJADI.....	84
AMBASSADOR EXTRAORDINARY AND PLENIPOTENTIARY OF THE RA TO THE IRI	
ARSEN AVAGYAN.....	85
AMBASSADOR EXTRAORDINARY AND PLENIPOTENTIARY OF THE IRI TO THE RA	
ABBAS BADAKHSHAN ZOHOURI.....	87

ARTICLES

POLITICS

GOHAR ISKANDARYAN, DYNAMICS OF CHANGE IN ARMENIAN SOCIETY'S ATTITUDE TOWARDS IRAN: 1991-202195

ARMENI ISRAYELYAN, THE ROLE OF THE MEDIA IN ARMENIA-IRAN RELATIONS 115

KAREN MKRTCHYAN, PARTICIPATION OF THE ARMENIAN COMMUNITY OF IRAN IN THE PROCESS OF ESTABLISHMENT AND DEVELOPMENT OF INTERSTATE RELATIONS RA-IRI 124

YEGHIA TASHJIAN, IRAN'S ASSERTIVE FOREIGN POLICY TOWARDS SOUTH CAUCASUS 149

LIANA PETROSYAN, THE ISSUE OF PAN-TURKISM IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN IN 2005-2013 165

AHARON VARDANIAN, ANI MARGARYAN
PERCEPTION OF THE ARTSAKH CONFLICT IN THE INTERNAL DISCOURSE OF IRI - FROM THE FOUR-DAY TO THE FORTY-FOUR-DAY WAR (2016-2020) 178

HISTORY

NZHDEH YERANYAN, SOME SIMILARITIES BETWEEN ANTHROPOMORPHIC STELAE OF THE STEPPES OF ARTSAKH AND IRAN OF THE 1ST MILLENNIUM.....206

HOVHANNES KHORIKYAN, ON THE TERRITORY OF SATRAPIC ARMENIA219

KHACHATUR STEPANYAN, ON THE PROBLEMS OF ARMENIAN IMMIGRATION IN IRAN (1918-1920)238

ARTYOM TONOYAN, ON THE ISSUE OF RECOGNITION OF THE INDEPENDENCE OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA BY PERSIA254

LANGUAGE, LITERATURE, ART

ARMANUSH KOZMOYAN, MULTITHEMES AS A CHARACTERISTIC FEATURE OF "HAFEZIAN GHAZALS" (AN EXPERIENCE OF ONE GHAZAL ANALYSIS)286

GARNIK GEVORGYAN, THE SYNTHESIS OF IRANIAN, ISLAMIC AND MODERN AS A MANIFESTATION OF NATIONAL-CULTURAL SELF-AWARENESS IN THE MODERN PERSIAN PROSE.....296

HASMİK HMAYAKYAN, POSSIBLE HITTITE PARALLELS OF SOME LOANWORDS IN ARMENIAN CONSIDERED IRANIAN308

TIGRAN MIKAYELYAN, PERSIAN AS A LANGUAGE OF MEDIEVAL EPIGRAPHIC INSCRIPTIONS OF ARMENIA320

YVETTE TAJARIAN, FAMOUS ARMENIANS IN QAJAR IRAN334

ANAHT YAHYAMASIHI, PRESERVATION OF ARMENIAN CHURCHES AND MONASTERIES IN IRAN (CONTEMPORARY PERIOD)355

ANI BABAİAN, BRIEF OVERVIEW OF ARMENIAN IRANIAN PAINTINGS IN THE TWENTIETH CENTURY376

AREG BAGRATYAN, THE ARMENIAN CHARACTER IN THE HOMA DJASSEMI'S "AKHTAMAR" COLLECTION383

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԵՐ

ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ



Հարգարժան գործընկերներ, այսօր հավաքվել ենք գիտա-
ժողովի մի չափազանց կարևոր թեմայով: Այս տարի լրանում է
ԻԻՀ և ՀՀ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների
հաստատման երեսուն տարին: Իհարկե, մենք մինչև Քրիստո-
սի ծնունդը և դրանից հետո, որպես այս տարածաշրջանի
հնագույն ժողովուրդներ՝ հայերը և իրանցիները, և հնագույն
պետություններ ունեցել ենք միջպետական հարաբերություն-
ներ: Հետո, պատմական հանգամանքների բերումով ապրել
ենք միասին, և ահա՛, դիվանագիտական հարաբերություննե-
րի հաստատման այս իրադարձությունը մի նոր փուլ է մեր եր-
կու ժողովուրդների հարաբերությունների մեջ: Մակայն, այն
իր նշանակությամբ չափազանց կարևոր է, նախ այն առումով,
որ մենք բարեկամ ժողովուրդներ ենք: Երկրորդ, 90-ականնե-
րին էական էր ԻԻՀ աջակցությունը մեր երկրին, և երրորդ, այ-
սօր աշխարհաքաղաքական բարդ իրադրության պայմաննե-
րում, մեր հարաբերությունը մեր հնագույն հարևանի հետ
ամուր կառուցելը հնարավորություն կտա դիմակայել սպա-
վող և տեղի ունեցող մարտահրավերներին: Այսօր Իրանի տա-
րածքում գործում է հայկական համայնք, ապրում են հայեր:
Նրանք ունեն կրթական-մշակութային զարգացման բոլոր
հնարավորությունները, պահպանվում են հայկական հուշար-
ձանները և այս առումով, իբրև պետություն, մեծ հարգանքով է

վարվում իր հայ քաղաքացիների նկատմամբ: Դրա ապացույցն է այն, որ ունենք երկու հայ պատգամավոր Մեջլիսում և մի ուշագրավ փաստ. ըստ ավանդույթի, 13-րդ դարում Արաբսի երկու ավերին, դեմ առ դեմ, երկու հովիվ եղբայրներ կառուցել են մատուռներ: Այդ մատուռներից մեկը Ատրպատականում է, կանգուն է, ավելին, պետության աջակցությամբ վերականգնվել է և 2008 թ.-ից ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության հուշարձանների ցանկում: Մյուս մատուռը՝ որը գտնվում է Բուլճարի կողմից Ադրբեջանին նվիրած Նախիջևանի տարածքում, այսօր չկա և ավերվել է: Տեսե՛ք, մի փաստ, թե ինչպե՞ս է վերաբերվում մի հարևան մեզ հետ, և ինչպե՞ս է մեզ հետ վերաբերվում մյուսը: Սա սկզբունքային փաստ է, որը պետք է հաշվի առնել: Գիտաժողովի թեմաների ցանկում կան թեմաներ, որոնք վերաբերում են մեր պատմական և մշակութային անցյալին, և աշխարհաքաղաքական սպասվող իրադարձություններին և մեր հարաբերությունների հեռանկարներին: Ողջունելով գիտաժողովը այն հայտարարում եմ բացված:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ



Մեծարգո դեսպաններ, սրբազան հայր, հարգելի հյուրեր
Գիտաժողովի հարգարժան ներկաներ ցանկանում եմ ջերմորեն ողջունել ձեզ և գիտաժողովի աշխատանքներին մաղթել արդյունավետ ընթացք:

Ծանոթանալով գիտաժողովի ծրագրին՝ ակնհայտ է դառնում, որ այս երկու օրերի ընթացքում բանախոսները ներկայացնելու են Հայաստան-Իրան հարաբերությունների ողջ ներկայակալը, անդրադառնալու են քաղաքական, տնտեսական, գիտական կապերին, ինչպես նաև պատմությանը:

Նշանակալից և խորհրդանշական է, որ այս գիտաժողովը, որը կրում է «Հայաստան-Իրան. պատմական անցյալ և ներկան» խորագիրը, համընկնում է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների 30-ամյակին: Այդ առիթով մեր գիտաժողովի շրջանակում հնարավոր է եղել համատեղել ու ի մի բերել, ինչպես նախկին և գործող դեսպանների փորձը, այնպես էլ գիտնականների հետազոտությունները, ինչն ամբողջացնում է պատկերը:

1991 թվականի սեպտեմբերի 21-ին Հայաստանը դառնալով անկախ պետություն, առաջին հերթին ձգտում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել հարևանների հետ: Հիշատակման է արժանի նաև այն, որ Իրանն առաջին պետություններից մեկն է, որը ճանաչել է ՀՀ անկախությունը: Հայաստանի իշխանությունները, քաջ գիտակցելով տարածաշրջանային զարգացումները, փորձել են առաջին հերթին

սերտ համագործակցություն սկսել Իրանի Իսլամական Հանրապետության հետ՝ ելնելով աշխարհաքաղաքական շահերի ընդհանրություններից:

Նորանկախ Հայաստանը 1990-ականներին կանգնած էր լրջագույն մարտահրավերների առջև, և Իրանը Հայաստանի այն եզակի հարևաններից է, որը փորձում էր հնարավորինս աջակցել: Այսօր էլ, մեզ միավորում է, ինչպես դարավոր անցյալը և ներկան, այնպես էլ արևելյան մշակութային աշխարհում ձևավորված հոգեկերտվածքը:

Մույն գիտաժողովը մի յուրօրինակ հաշվետվություն է վերջին 30 տարիների ընթացքում երկու երկրների միջև իրականացված աշխատանքների առումով: Այս տարիների ընթացքում հայ-իրանական հարաբերությունները բազմաթիվ փորձություններ են հաղթահարել, ինչը կարող է օրինակ հանդիսանալ աշխարհի տարբեր ժողովուրդների համար, թե ինչպես են կողք կողքի համակեցության սկզբունքով ապրում տարբեր կրոնների ներկայացուցիչները: Չենք կարող չհիշել, որ Իրանի տարածքում գործող բազմաթիվ հայկական եկեղեցիներ գտնվում են պետական հոգածության ներքո, Իրանում դարեր ի վեր բնակվում է հոծ հայկական համայնք, որի իրավունքները պաշտպանվում են պետականորեն: Հայերը Մեջլիսում ունեն ամրագրված երկու տեղ և նրանց հիմնական գործառույթն է՝ Մեջլիսի ուշադրությանը ներկայացնել հայերին հուզող խնդիրները:

Այս ամենով հանդերձ պետք է փաստել, որ հայ-իրանական ներկա դրական հարաբերությունների մակարդակում գիտական կապերն Իրանի հետ կարող էին լինել ավելի սերտ և գործուն, քանի որ երկու կողմերում էլ առկա է մեծ ներուժ բոլոր բնագավառներում աշխատելու համար: Հուսով ենք, մոտ

ապագայում այս ուղղությամբ ևս երկուստեք քայլեր կձեռնարկվեն: Ավարտելով խոսքս՝ հույս ունեմ, որ այս գիտաժողովը նոր լիցք կհաղորդի հայ-իրանական հարաբերություններին բոլոր ոլորտներում:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ
30-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջույնն ու օրհնությունն ենք հղում պատվարժան մասնակիցներին՝ միջազգային գիտաժողովին, որը նվիրված է Հայաստան-Իրան դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին: Մեր գնահատանքն ենք բերում գիտաժողովի աշխատանքները կազմակերպած ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի և Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի բարեջան աշխատակիցներին:

Գիտաժողովի հրավիրումը արժևորումն է մեր երկու հարևան պետությունների բարի հարաբերությունների և գործակցության, որը հիմնված է մեր ժողովուրդների բազմադարյա առնչությունների և փորձառության վրա: Հայաստանի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը առիթ է նաև համագործակցության նոր հեռանկարներին անդրադառնալու և համատեղ նոր ձեռքբերումների ուղին նախատեսելու համար: Արդի մարտահրավերներին հանդիպմանը, երբ աշխարհը ալեխոռվ է հակառակություններից, պատերազմներից, երկակի չափանիշներով դրսևորվող անարդարությունից, երբ ոտնահարվում են անհատների, ազգերի ու պետությունների իրավունքները, առավել պահանջ-

ված ու կենսական են դառնում բարի կամքն ու գործակցությունը՝ հանուն խաղաղության և բարօրության հաստատման: Հավատարիմ այս դիրքորոշմանը՝ Հայաստանը և Իրանը հետևողական են եղել արդյունաշատ հարաբերությունների կառուցման հարցում, ինչը նորանկախ մեր երկրին հնարավորություն է ընձեռել նաև դիմակայելու շրջափակման դժվարություններին և բազմակողմանի համագործակցության արգասիքներ բերել մեր երկու բարեկամ ժողովուրդներին: Գնահատանքով ենք անդրադառնում արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում Իրանի իշխանությունների որդեգրած սկզբունքային դիրքորոշումներին և գործադրած խաղաղասիրական ջանքերին:

Ուրախալի է, որ մեր երկրների դիվանագիտական գործուն հարաբերությունները նպաստում են նաև հինավուրց մեր ժողովուրդների մշակութային և հոգևոր կապերի գորացմանը: Հայաստանում Իրանի դեսպանատան մշակույթի կենտրոնի գործունեությունը, ինչպես և Մայր Աթոռի հետ համատեղ իրականացված միջոցառումները միտված են աշխարհին ներկայացնելու քաղաքակրթությունների երկխոսության և միջկրոնական հանդուրժողականության մեր հարուստ փորձառությունը, որի կարիքն առավել քան երբևէ՝ այսօր զգում է աշխարհը: Հավատավոր մեր երկու ժողովուրդները ապավինում են Բարերար Աստծո ողորմածությանն ու հոգածությանը՝ դավանելով խաղաղության, արդարության և համերաշխ գոյակցության համամարդկային արժեքները: Այս հավատամքը պիտի օգնի մեր բարեկամ երկրների ընդհանուր ձգտումին ու կամքին՝ անխոռվ ու ապահով տարածաշրջան կառուցելու, որի վկայությունն են մեր ժողովուրդների օրինակելի հարաբերությունները, միմյանց հավատքի և սրբատեղիների նկատ-

մամբ հարգալից վերաբերմունքը: Վերստին Մեր ժողովրդի երախտագիտությունն ենք հայտնում Իրանի իշխանություններին, որ հայկական հոգևոր արժեքների և բազմաթիվ սրբավայրերի հանդեպ դրսևորում են առանձնահատուկ ուշադրություն և ամենայն հոգատարություն:

Ուրախությամբ ենք անդրադառնում, որ մեր երկրների և ժողովուրդների բարի հարաբերությունների զարգացմանը իրենց ավանդն են բերում վերջին տասնամյակներում Հայաստանում հաստատված իրանցիները, ինչպես և Իրանի ավանդաշատ հայկական համայնքները, որոնք իրանցի բարեկամ ժողովրդի հետ մասնակից են երկրի առաջընթացին և ազատ են ապրելու իրենց հոգևոր ու ազգային արժեքներով: Հիրավի, միջպետական, միջմշակութային և միջկրոնական հարաբերությունների ամրապնդումը շարունակելու է նպաստել փոխճանաչողությանը, հանդուրժողության գորացմանը և կրոնական մոլեռանդության ու այլատյացության դեմ համատեղ վկայությանը: Հավատում ենք, որ բարի կամքի ու փոխհասկացողության և համագործակցության ուղին Բարձրալի օրհնությամբ նոր արգասիքներ պիտի պարգևի մեր ժողովուրդների կյանքին:

Հայցում ենք Բարձրալի օրհնությունն ու հովանին մեր երկրներին ու բարեսեր ժողովուրդներին: Թող Աստված խաղաղություն պարգևի ողջ աշխարհին և մարդկանց հոգիներին:

Արդյունավետ և բարի ընթացք գիտաժողովի աշխատանքներին:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ



Գիտաժողովի հարգելի՛ հյուրեր, սիրելի՛ ներկաներ, Հայաստանի Հանրապետությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունն այսօր նշում են դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը:

Մեր երկու երկրները, անցնելով պատմության բազմադարյա քառուղով և թրծվելով տարբեր փորձությունների խառնարաններում, այսօր աշխարհին են ներկայանում որպես քրիստոնեության և իսլամի օրինակելի երկխոսությամբ և փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտում համագործակցող պետություններ:

Անցնող երեսուն տարիները նշանավորվել են հայ-իրանական բազմատարր հարաբերությունների ընդլայնմամբ, նորանոր նվաճումներով ու կայուն փոխվստահությամբ:

Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության կարևոր գործընկերն է քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մշակութային և այլ բնագավառներում:

Ուրախությամբ կարող ենք փաստել, որ Իրանը Հայաստանի արտաքին առևտրի գործընկերների շարքում շարունակում է զբաղեցնել առաջատար դիրքեր: Այնուամենայնիվ, պետք է նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունն ունեն ավելի մեծ ներուժ՝ նոր թափ հաղորդելու մեր երկու երկրների սերտ և բարիդրացիական հարաբերությունների զարգացմանը:

Երկու պետությունների միջև բազմոլորտ համագործակցության կարևոր մաս են կազմում նաև գիտական կապերը հայ և իրանցի գիտնականների միջև: Թերևս այս ոլորտում նույնպես առկա է դեռևս չիրացված հսկայական պոտենցիալ, որի ուղղությամբ պիտի ջանքեր գործադրենք: Վստահ եմ, որ նմանօրինակ գիտաժողովները նոր խթան կարող են հանդիսանալ գիտակրթական հաստատությունների փոխգործակցության խորացման համար:

Լիահույս եմ, որ համատեղ ջանքերի շնորհիվ այսուհետև հանձնառու կլինենք հայ-իրանական բարձր մակարդակի միջպետական հարաբերությունների խորացմանը, և մեր համագործակցության բազմաբովանդակ օրակարգն առավել կընդլայնվի՝ ի շահ մեր երկրների ժողովուրդների բարօրության և տարածաշրջանային հարատև խաղաղության:

Ամփոփելով՝ շնորհակալություն եմ հայտնում, այս խորհրդանշական միջոցառման կազմակերպիչներին և հետաքրքիր քննարկումներ մաղթում բոլոր մասնակիցներին:

ԻԻՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՈՍԵՅՆ ԱՄԻՐ ԱԲԴՈԼԼԱՀԻԱՆ



Հանուն բարեգութ և ողորմած Աստծո

ՀՀ արտաքին գործերի նախարար մեծարգո պարոն Արաբատ Միրզոյան, հարգելի ներկաներ.

Ուրախությամբ շնորհավորում եմ ձեզ Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ:

Իրանի Իսլամական Հանրապետությունն առաջին երկրներից էր, որ ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը և պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ հաստատեց այս երկրի հետ:

Վերջին երեսուն տարիների ընթացքում երկու երկրների հարաբերությունները տարբեր ոլորտներում ընդլայնվել ու ամրապնդվել են և բազմաթիվ փաստաթղթերի ստորագրմամբ ամրապնդվել են համագործակցության իրավական հիմքերը: Վերջիններիս հետ զուգահեռ երկու երկրների միջև իրականացվել են համագործակցության բազմաթիվ նախագծեր, որոնցից կարևորագույններն են Իրանի Իսլամական Հանրապետության գազատարի և Հայաստանում էլեկտրահաղորդման գծերի կառուցումը: Ինչպես նաև կողմերը հետամուտ են լինում երկու երկրների տարածքով տրանսպորտային միջանցքների ստեղծմանը, որոնք երկու երկրների դիրքերը բարելավելուց բացի, կապահովեն նաև երկու ժողովուրդների

շահերը և կամրապնդեն տարածաշրջանի կայունությունն ու անվտանգությունը:

Չնայած այս հաջողություններին, հավատացած եմ, որ երկու երկրների միջև հարաբերությունները զարգացնելու շատ ավելի մեծ և բազմազան հնարավորություններ ու կարողություններ կան: Ուստի անհրաժեշտ է խոչընդոտները վերացնելու և անհապաղ լուծումներ գտնելու միջոցով վերոնշյալ հնարավորություններից և կարողություններից օգտվելու ուղղությամբ քայլեր ձեռնարկվեն՝ ի նպաստ երկու երկրների հարաբերությունների ամրապնդման:

Մեծարգո պարոն նախարար, հարգելի ներկաներ, ցավոք, Ղարաբաղյան հակամարտությունը վերջին երեսուն տարիների ընթացքում ոչ միայն կովկասյան տարածաշրջանը կանգնեցրեց անվտանգային ճգնաժամի և անկայունության առջև, այլև ազդեց այս տարածաշրջանի և նրա շրջակա միջավայրի աճի և զարգացման վրա և դանդաղեցրեց տարածաշրջանային փոխգործակցությունները: Այնուամենայնիվ, պատիվ ունեմ հայտնել ձեզ, որ հակամարտության սկզբից Իրանի Իսլամական Հանրապետությունը, ընդգծելով երկրների տարածքային ամբողջականությունը հարգելու և ազգերի իրավունքները ապահովելու անհրաժեշտությունը, փորձել և փորձում է աջակցել հակամարտության արդարացի լուծմանը:

Վերջում, գնահատելով անցած տարիների ընթացքում գործադրված ջանքերն ու իրականացված քայլերը և ընդգծելով այն, որ կովկասյան տարածաշրջանում տեղի ունեցող վերջին զարգացումները պայմաններ են ստեղծել Իրանի և Հայաստանի միջև համագործակցության ընդլայնման, ինչպես նաև տարածաշրջանային բազմակողմ համագործակցության ձևավորման համար, ցանկանում եմ ընդգծել իմ երկրի կամքը՝

Հայաստանի Հանրապետության հետ երկկողմ և տարածաշրջանային համագործակցությունը ամրապնդելու հարցում:

Բարձրյալ Տիրոջից հայցում եմ Ձեզ հաջողություն և երջանկություն, իսկ ՀՀ Կառավարությանը և ժողովրդին՝ բարեկեցություն և բարօրություն:

ԻԻՀ 11-ԸԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ,
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՌՈՒԲԵՐՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ



Հարգարժան ներկաներ, ուրախ եմ այս գիտաժողովին ներկա լինելու համար և ողջունում եմ կազմակերպիչներին: Օգտվելով առիթից շնորհավորում եմ Իրանի ժողովրդին հեղափոխության տարեդարձի կապակցությամբ:

Հարգելիներ, այսօր էլ երկու երկրների հարաբերությունների մասին, ի մասնավորի, բարձր մակարդակ ունեցող հարաբերությունների մասին և մենք այժմ, որպես խորհրդարանի անդամներ, և երկկողմ հարաբերություններով հետաքրքրված և ուղղակիորեն դրանք զննող անձինք ակնկալում ենք, որ պահին է անցնել բարիդրացիական մակարդակից և ամրագրել դրանք ոչ միայն մշակութագիտական, այլ ավելի հստակ տնտեսական և տնտեսաանվտանգային ձևերով և մեխանիզմներով:

Այս երկկողմ հարաբերությունների զարգացմանը պիտի խթանի և ամրագրի տնտեսաանվտանգային հարաբերությունները: 44-օրյա պատերազմից առաջացած աշխարհաքաղաքական փոփոխությունները և այն հարափոփոխ իրավիճակը, որ տարածաշրջանն է ապրում և այն շաղկապվածությունը, որին ականատես ենք լինում Միջին Արևելքում և Կովկասում հաստատում են վերոնշյալ միտքը: Իրոք, պետք է նոր թափ ստանան տնտեսական, անվտանգային հարաբերությունները: Հետևաբար, պետք է հստակեցվեն փոխշահավետ տիրույթները, հատկապես լիազորված անձանց կողմից:

Մենք ողջունում ենք այս գիտաժողովը և հույս ունենք, որ ականատեսը կլինենք երկու երկրների հարաբերությունների վերելքին:

ԵԼՈՒՅԹՆԵՐ

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ
ՌՈՒԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ



Գերաշնորհ սրբազան հայր, մեծարգո նախագահ, մեծարգո դեսպաններ, մեծարգո հյուրեր և գիտաժողովի մասնակիցներ

Ինչպես գիտեք, գիտաժողովը նվրված է ՀՀ և ԻԻՀ դիվանագիտական կապերի հաստատման 30-ամյակին, սակայն պետք է արձանագրենք, որ այդ կապերը ունեն հարյուրամյակների պատմություն և 30 տարին այդ փոխառնչությունների լոկ մի հատվածն է, ընդամենը՝ ժամանակակից փուլը: Հայ-իրանական պետական հարաբերությունները մենք կարող ենք տեսնել դեռևս Վանի թագավորության ժամանակաշրջանում, երբ Արևմտյան Իրանի որոշ տարածքներ մտան այդ պետության կազմի մեջ: Իրանում ուրարտական ներկայությունը խորը հետք թողեց տեղի հասարակությունների վրա, ինչն առավել ցայտուն դրսևորվեց ավելի ուշ, երբ պատմության ասպարեզ իջավ Աքեմենյան տերությունը:

Կարող ենք փաստել, որ Աքեմենյան Իրանը ժառանգել է նաև Վանի թագավորության պետական շատ ավանդույթները: Իր հերթին Աքեմենյան Պարսկաստանը վերապրեց իր պետական համակարգի մեջ Հայաստանը և տեղի հայկական արքայատոհմը՝ Երվանդունիները, մի մասը դարձան իրանական վերնախավի: Հայ-իրանական հարաբերությունների դրսևորումներից մեկն էր նաև այն, որ հայերը և պարսիկները կողք կողքի պատերազմում էին արևմտյան եկվորների՝ մակեդոնացիների դեմ՝ Գավգամելայի ճակատամարտում և Աքեմենյան

վերջին արքան՝ Դարեհ Երրորդը մինչ գահ բարձրանալը եղել է Հայաստանի կառավարիչը:

Հաջորդ կարևոր փուլը հայ-իրանական միջպետական հարաբերությունների՝ Արտաշեսյան Հայաստանի և Արշակունյաց Պարսկաստանի միջև եղած հարաբերություններն են: Դա ոչ միայն հակամարտությունների ժամանակաշրջան էր, այլ նաև համագործակցության, երկու արքայատոհմերը ժամանակ առ ժամանակ դաշինք էին կնքում ընդդեմ Հռոմի և մշտական կապի մեջ էին իրար հետ: Չենք մոռանում նաև այն, որ Տիգրան Մեծը, հայոց կարևորագույն թագավորներից մեկը, մինչ գահ բարձրանալը պետական կառավարման փորձ էր ձեռք բերել իրանական Միջագետքում:

Հայ-իրանական պետական փոխառնչություններն ավելի սերտ բնույթ ստացան, երբ իրանական Արշակունիների մի ճյուղը հաստատվեց Հայաստանում և հիմք դրեց հայ Արշակունիների արքայատոհմին: Այդ ժամանակահատվածում Հայաստանում մեծ ազդեցություն ձեռք բերեցին նաև իրանական ծագում ունեցող որոշ նախարարական հայկական տոհմեր: Չենք մոռանում նաև, որ հայոց պետականակիր այնպիսի մի կառույց, որն է հայոց եկեղեցին, նրա առաջին հովվապետներ Գրիգոր Պարթև Լուսավորիչը և Պարթևների տոհմը մեր պատմության այդ փուլում շատ կարևոր դերակատարում են ունեցել:

Սա օրինակների այն փոքր մասն է, որը մեր պետությունների միջև եղել է դեռևս հին և վաղ միջնադարյան շրջանում այն նորից և նորից գալիս է փաստելու, որ մեր պետությունների միջև փոխառնչությունները տարբեր մակարդակների վրա ունեն դարերի պատմություն և ունեն ամուր կայացած հիմքեր և դրանք թրծվել են քաղաքակրթական մակարդակների

վրա՝ ինչը շատ կարևոր է շեշտել: Մեզ մնում է միայն շարունակել և էլ ավելի ամրապնդել այդ կապերը:

Շնորհակալություն և առողջություն մեզ բոլորիս:

ԵՊՀ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ
ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ



Այսօր, իրապես, նշանակալի առիթով ենք հավաքվել գիտության այս տաճարում: Ըստ էության, Հայաստանի և Իրանի, մեր տարածաշրջանի երկու հնագույն քաղաքակրթությունների վերջին երեսուն տարվա ընթացքի հաջողությունը հայ-իրանական հարաբերություններում աչքի են ընկնում մի քանի առաձնահատկություններով, որոնք, ըստ էության, բնորոշ չեն որևէ երկու այլ երկրի, որևէ այլ երկու քաղաքակրթության: Դրանից առաջինն այն է, որ մեր տարածաշրջանում Դարեհ Մեծի թողած Բեհիսթունյան արձանագրության էթնիկ ցանկից այժմ ներկա են միայն հայերը և իրանցիները: Մյուսը այն է, որ Հայաստանի և Իրանի միջև սահմանը պատմական փոփոխություններով հանդերձ աշխարհի հնագույն սահմաններից մեկն է: Աշխարհում շատ քիչ տերություններ կան, որոնք ունեն նման հնագույն սահման, որը նաև երկու պետությունների անվտանգության ապահովման կարևորագույն բաղադրիչներից մեկն է:

Հաճախ, անցյալ 30 տարիների ընթացքում մենք չէինք գիտակցում այդ սահմանի կարևորությունը, այդ սահմանին մոտենում էին որպես խորթային մի տարածք, Երևանից հեռու, ինչպես մեղրեցիները իրենք են ասում՝ Հայաստանի ծայրամասում գտնվող մի հաղորդակցության գիծ, որը չէր օգտագործվում ըստ հարկի՝ ապահովելու երկու կողմերի անվտանգությունը: Այդ սահմանն ուներ երկու բաղադրիչ՝ Հայաստան-Իրան բաղադրիչը և Արցախ-Իրան բաղադրիչը, որոնցից մեկը, մենք ցավոք կորցրինք, հետևաբար Հայաստան-Իրան սահմա-

նի արժեքը շատ ավելին է, քան որևէ այլ սահմանի արժեք, որովհետև դա ապահովում է թե՛ Հայաստանի, և թե՛ Իրանի անվտանգության բավականին կարևոր հատված: Մյուս կարևոր յուրահատկությունը, որն ունեն մեր երկու պետությունները, մեր երկու ժողովուրդները և մեր երկու քաղաքակրթությունները՝ մենք գործ ունենք երկու ավանդական հասարակությունների հետ, որոնք հիմնված են՝ Իրանի պարագայում Իրանի մշակույթի և իսլամի իրանական դրսևորում հանդիսացող շիայականության վրա. Հայաստանի պարագայում կրկին մեր մշակույթի և, ըստ էության, քրիստոնեության հայկական ուղղություն հանդիսացող առաքելական եկեղեցու հավատամքի վրա: Հետևաբար, հայ-իրանական հարաբերությունները սահման են նաև իսլամի և քրիստոնեության միջև և մեր երկու ժողովուրդները այն օրինակն են, որ կարող է լինել համաշխարհային հարթության մեջ, թե ինչպես երկու տարբեր միաստվածական կրոններ դավանող ժողովուրդներ, ինչպես երկու տարբեր մշակութային համակարգեր և քաղաքակրթություն ստեղծած ժողովուրդներ, ինչպես երկու տարբեր բայց միասնական ավանդականությանը տուրք տված ժողովուրդներ կարող են ունենալ նման եղբայրական հարաբերություններ: Ես այդ հարաբերությունները անվանում եմ եղբայրական, որի ողջ պոտենցիալը ցավալիորեն չի օգտագործվել և չի օգտագործվում: Հետևաբար, մեր՝ գիտնականների, երկու պետությունների մշակույթների, լեզուների, գրականության, պատմության և բոլոր քաղաքակրթական այն առանձնահատկությունների խնդիրներով զբաղվողներին առաջնահերթ գործը մեր պետությունների համատեղ անվտանգային համակարգի ապահովումն է: Պետք է ստեղծենք այն մշակութային, գիտական և մարդկային միջավայրը, որտեղ այդ հարաբերու-

թյունները պետք է խնամվեն, պետք է զարգանան և ի վերջո հանգեցնեն, ըստ իս, ռազմավարական դաշինքի կնքմանը: Այո՛, մենք ունենք դրա անհրաժեշտությունը, քանզի դա է մեզ պարտադրում այս տարածաշրջանում առկա մարտահրավերների հսկայական բույլը. սկսած ահաբեկչական խմբավորումների ներկայությունից, որոնք անմիջականորեն հարձակում գործեցին Հայաստանի և Արցախի վրա և փորձում են հարձակումներ գործել նաև Իրանի վրա, թեև ոչ ուղղակիորեն, սակայն Իրանի շահերի դեմ Մերձավոր Արևելքով մեկ: Մեր տարածաշրջանում կան ծավալապաշտությունը և ռասիզմը իրենց համար հիմնական ուղենիշ դարձրած պետական կազմավորումներ և հենց մենք ենք այս տարածաշրջանի հնագույն քաղաքակրթություններ ունեցող պետությունները, որ պետք է հաղթահարենք այս մարտահրավերները համատեղ: Ուստի, օգտվելով առիթից, ուզում եմ կրկին շնորհավորել բոլորիս, քանզի մեզ պատիվ է վիճակվել տեսնելու հայ-իրանական հարաբերությունների այս երեսունամյակը, որը պետք է խնամենք մեր ունեցած միջոցներով:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՏՆՕՐԵՆ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՅԱՆ



Գերաշնորհ սրբազան հայր, ակադեմիայի մեծարգո նախագահ, հարգելի ներկաներ, դիվանագետներ, գործընկերներ

Ողջունում եմ ՀՀ և ԻԻՀ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին նվիրված այս կարևոր միջոցառումը: Հայաստանը և Իրանը ունեն բազմամյա հազարամյակների պատմություն: Դարեր շարունակ ապրելով կողք կողքի այս երկու ժողովուրդները հաղթահարել են բազում դժվարություններ և 21-րդ դար մուտք գործել, որպես կայացած, հարուստ պատմություն և մշակույթ ունեցող ազգեր: Այժմ էլ երկու երկրների հարաբերությունները քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային ոլորտներում վկայում են այն մասին, որ Հայաստանը և Իրանը վստահելի և հուսալի գործընկերներ են: Այս կարևոր միջոցառմանը ՀՀ ազգային արխիվն իր մասնակցությունն է ունեցել հայ-իրանական հարաբերություններին նվիրված փաստաթղթերի ցուցադրությամբ: Հարկ է նշել, որ դեռևս 2021 թվականի սեպտեմբերին ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնի խորհրդական Սեյեդ Հոսեյին Թաբաթաբայիի և մշակութային ժառանգության ակադեմիայի հետազոտության բաժնի պրոռեկտոր Մորթեզա Ռեզնաֆարիի հետ հանդիպման ընթացքում՝ արխիվային ոլորտում երկու երկրների միջև համագործակցությունը խորացնելու համատեքստում, ի թիվս մի շարք հարցերի պայմանավորվածություններ են ձեռք բերվել 2022 թ. հայ-իրանական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-

ամյակի կապակցությամբ կազմակերպել երկու երկրներին նվիրված համատեղ արխիվային նյութերի ցուցադրություն, և ահա այսօր ՀՀ ազգային արխիվը հանդես է գալիս ցուցադրությամբ, որտեղ ներկայացված փաստաթղթերն արտացոլում են երկու երկրների բարեկամական և բազմակողմ հարաբերությունները:

Կցանկանամ անդրադառնալ ցուցադրության որոշ հատվածներին, այո՛, ցուցադրության հիմքն են կազմում երկու երկրների հարաբերություններին վերաբերող 1918-1922 թթ. փաստաթղթերը, որոնք ներկայացնում են դրամատիկ պահերով լեցուն ժամանակահատվածում նորանկախ Հայաստանի Հանրապետության, այնուհետև Խորհրդային Հայաստանի դիվանագիտական և տնտեսական ուղղակի հարաբերությունների հաստատմանը Իրանի հետ: Ուշագրավ են հատկապես ՀՀ արտաքին գործերի առաջին նախարար Ալեքսանդր Խատիսյանի գրագրությունը Պարսկաստանի կառավարության նախագահ Յուսուֆ էդ-Դոուլեի հետ, Պարսկաստանի շահ Ահմադ Ղաջարիի գրությունը խորհրդային ժողկոմխորհի նախագահ Ալեքսանդր Միասնիկյանին, որտեղ արտացոլվում են բարեկամական հարաբերությունները, Պարսկաստանում հայերի նկատմամբ ցուցաբերվող հատուկ ուշադրությունը և բայրացկամությունը:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի նորանկախ հանրապետությունը Իրանի հետ հաստատեց ջերմ ու անմիջական հարաբերություններ: Իրանն առաջին երկրներից էր, որ ճանաչեց Հայաստանի անկախությունը և դիվանագիտական ակտիվ հարաբերություններ հաստատեց իր հյուսիսային հարևանի հետ: Դա ամրագրվեց 1992 թ. փետրվարին ՀՀ և ԻԻՀ արտաքին գործերի նախարարների կողմից ստորագրված ՀՀ և

ԻԻՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին հռչակագիրը, որի հիմքում ընկած են բարիդրացիական հարաբերությունների, տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքի, միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքները:

Ցուցադրության հաջորդ շարքի փաստաթղթերը ներկայացնում են 1992 թ. ՀՀ և ԻԻՀ միջև հաստատված դիվանագիտական հարաբերությունները, որի շնորհիվ արդեն երեք տասնամյակ երկու երկրների միջև հաստատվել է բազմաբնույթ համագործակցություն: Իրագործվել են փոխշահավետ, համատեղ զարգացմանն ուղղված տնտեսական, գիտական, գիտակրթամշակութային բազմաթիվ ծրագրեր: Առնձնահատուկ ցանկանում եմ առանձնացնել 17-րդ և 19-րդ դարերի արխիվային փաստաթղթերի շարքը, հատկապես 1607 թ. Շահ Աբբասի կողմից Քաշաթաղի հայ մելիքներին հողային արտոնություններ տրամադրելու մասին պարսկերեն, արաբատառ հրովարտակը, որը ՀՀ ազգային արխիվում պահվող ամենահին և հազվագյուտ փաստաթղթերից մեկն է:

Հարգելի գործընկերներ հանդիսավոր նիստի ավարտից հետո սիրով հրավիրում եմ բոլորիդ առաջին հարկի ճեմարահ, որտեղ մեր աշխատակիցները ավելի հանգամանորեն կներկայացնեն ՀՀ ազգային արխիվի կողմից ներկայացված ամբողջական ցուցադրությունը: Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ՀՀ և ԻԻՀ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ, գիտաժողովին մաղթում եմ արգասաբեր և արդյունավետ ընթացք:

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ
ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ



Հարգելի՛ ներկաներ, ես մի կարևոր հանգամանքի վրա կցանկանայի հրավիրել բոլորիդ ուշադրությունը: Մենք խոսում ենք հայ-իրանական հարաբերությունների վերջին երեսուն տասնամյակի մասին, որպես դիվանագիտական հարաբերությունների հաստատման երեսունամյա հոբելյանի մասին: Բայց մենք վստահաբար կարող ենք խոսել վաղնջական ժամանակներից հայ-իրանական միջպետական հարաբերությունների մասին, որոնք ևս կարելի է կոչել հոբելյանական, քանի որ լրանում է առնվազն երեքհազարամյա պատմության հոբելյանը: Շատ հետաքրքրական է, որ ի տարբերություն մեր հարևան աշխարհակալ այլ տերությունների, Իրանը ժամանակ առ ժամանակ հայոց պետականության նկատմամբ ընդգծված բարյացակամ վերաբերմունք է ունեցել: Չխոսվեց այն մասին, թե ինչպես 1724 թվականին Սյունիքում Դավիթ Բեկի իշխանությունը ճանաչվեց Թահմասպ 3-րդի կողմից և ստեղծվեց ընդհանուր հայ-իրանական հակաթուրքական ճակատ: Այդ նույն ավանդույթը շարունակվեց, երբ Նադիր շահը ստեղծեց Խամսայի մելիքություններն Արցախում և հետաքրքրական է, որ Սյունիքի, Արցախի, Գեղարքունիքի, Արարատյան դաշտի այդ մելիքությունների անունը տրվում էր «մելիք», այսինքն թագավոր ճանաչվում էր Պարսից արքունիքի կողմից հայկական ինքնիշխան կազմավորումներն որպես թագավորություններ: Պատահական չէր նաև, որ երբ 1918 թվականի մայիսի 28-ին կյանքի կոչվեց Հայաստանի առաջին հանրապետությունը և պետականությունը վերականգնվեց, Իրանը եղավ

հանրապետության առաջին ճանաչողներից մեկը և Իրանի շնորհիվ էր, որ պետական այրերը, մտավորականությունը փրկվեցին՝ կարողանալով անցնել Արաքս գետը և հանգրվանեցին Պարսկաստանում, հակառակ այն բանին, որ Բոլշևիկյան իշխանությունները քանզիցս պահանջում էին Իրանից, որ հանձներին հանրապետության ղեկավարներին, պետական գործիչներին, որոնք ապաստանել էին Թավրիզում և Թեհրանում:

Այնպես որ, ես հատուկ ընդգծեցի Սյունիքի հանգամանքը, հիշեցնելու համար, որ այսօր ևս մեր պետականության այս կարևորագույն ողնաշարը կազմող Սյունիքի հարցում, Իրանն ունի ընդգծված հայամետ դիրքորոշում, որը մեզ համար ուրախալի և ողջունելի է:

Շնորհակալություն:



Հանուն Աստծո

Հարգարժան հյուրեր, պատվավոր դեսպաններ, թանկագին համալսարականներ և գիտաշխատողներ, թույլ տվեք հայտնել իմ երախտիքն ու գոհունակությունն այս կարևոր ու նշանակալից միջոցառման անցկացման առթիվ, որը նվիրված է հայ-իրանական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին: Իրանի և Հայաստանի հինավուրց ժողովուրդների համար, որոնք միշտ հպարտանում են իրենց հնագույն հարուստ մշակույթով, արվեստով և գրականությամբ, արվեստի, մշակույթի և գրական կապերի ամրապնդումն ու զարգացումը միշտ իր կարևոր և ուրույն տեղն է զբաղեցրել երկկողմ հարաբերությունների համակարգում: Իրանի կողմից Հայաստանի անկախացման պաշտոնական ճանաչումից և երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր՝ անցած 30 տարիների ընթացքում, Իրանի և Հայաստանի մշակութային կապերի զարգացմանը միտված տարբեր բնագավառների աշխատակիցների կամքի և ջանքերի շնորհիվ բազմաթիվ տարատեսակ մշակութային ծրագրեր են իրականացվել, որի արդյունքում հնարավորինս բարձրացել է քաղաքակրթության, մշակույթի, արվեստի և գրականության առկա կապիտալի և չիրացված ներուժի երկուստեք ճանաչելիության մակարդակը: Իրանցիներն ու հայերը ունեն մշակութային, լեզվական, ծիսակենցաղային և գրական պատմական խոր արմատներ ունեցող բազում ընդհանրություններ: Առկա են տարբեր բնագավառներում երկուստեք

ճանաչելիության մակարդակի բարձրացման լայն հնարավորություններ: Այսօրվա գլոբալիզացման ձգտող աշխարհում, ուր վտանգված է հին ավանդական հասարակությունների ու ազգերի անխաթար կենսաձևն ու հինավուրց ու ավանդական ազգերի ազգային իրական էությունը, իրանցիներն ու հայերը՝ իբրև հինավուրց ու հարուստ մշակույթի, քաղաքակրթության ու ավանդույթների կրող ազգեր, իրական արժեքների և ավանդույթների վերասահմանման հարցում նոր խոսքի և ուղղությունն ցույց տալու պարտավորություն ունենք: Բարեբախտաբար կրոնական երկխոսություն ձևավորելու հարցում ևս, ինչպես հարգարժան հոգևորական Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը նշեց, մենք ժառանգել ենք լավ ձևավորված ու կայացած, աշխարհի համար էտալոն հանդիսացող կրոնական երկխոսության լավ մոդել, որի ընդլայնման ու զարգացման համար ապագայում ևս երկուստեք շարունակական քայլեր կձեռնարկենք: Համալսարանական և գիտակրթական համագործակցությանը անդրադառնալով՝ հարկ է նշել այս տարիներին երկկողմ համագործակցության հուշագրերի կնքումը, որոնք մեծ ներդրում են ունեցել գիտակրթական և համալսարանական համագործակցության կայացման հարցում: Ուրախալին այն է, որ այս երևույթը կրել է շարունակական բնույթ և այսօր էլ կա: Նոր համագործակցության հուշագրեր են կնքվում, իսկ շատերն էլ գտնվում են համաձայնեցման վերջնական փուլում, և լիահույս ենք, որ դրանց կնքմամբ և հին համաձայնագրերի վերաակտիվացմամբ կունենանք երկու երկրների համալսարանական համագործակցության կայացած ու զարգացած մոդել, որն էլ կնպաստի երկուստեք գիտակրթական ու ակադեմիական ճանաչելիության տիրույթի սահմանների ընդլայնմանը: Գրականության բնագավառում

նս, բարեբախտաբար, առկա են դարերի խորքից եկող շատ ընդհանրություններ, իսկ գրողների ու բանաստեղծների շրջանում էլ նկատելի է փոխադարձ ազդեցություն: Թարգմանչական կայացած շարժման շնորհիվ, որի սկիզբը դրվել է շատ տարիներ առաջ, նպաստել է հայ և պարսից գրական գոհարների թարգմանությանը և երկու ժողովուրդների միմյանց մշակույթին, գրականությանը ավելի լավ հաղորդակից լինելուն: Մենք լիահույս ենք, որ այս թարգմանչական շարժման շարունակական, թիրախավորված, նպատակային ու սահուն ընթացքը շարունակելով՝ կհաջողենք թարգմանչական դպրոցի կայացման և գրական կապերի ամրապնդման ու զարգացման հարցում:

Վերջում իմ պարտքն եմ համարում շնորհակալություն հայտնել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտին, ԵՊՀ իրանագիտության ամբիոնին, ՀՀ ազգային արխիվին այս կարևոր միջոցառման կազմակերպմանը մասնակցելու և դրա կայացմանը աջակցելու համար: Խոսքիս ավարտին թույլ տվեք ընթերցել Իսլամական մշակույթի և հաղորդակցության կազմակերպության ղեկավար Մեհդի Իմանիփուրի ողջույնի ուղերձը:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՄԵՀԴԻ ԻՄԱՆԻՓՈՒՐԻ ՈՒՂԵՐՁԸ



Հանուն հոգու և մտքի Աստծո

Հանուն Նրա անհուն իմաստության, որ հասու չէ մտքին մարդկային,

Իրանի և Հայաստանի՝ երկու երկրների ժողովուրդների բարեկամության պտղաբեր ծառը, որն արմատներով խորանում է այս երկու ժողովուրդների համապարփակ հարաբերությունների երկարամյա պատմության մեջ և իր դրսևորվումն է գտել իրանցիների և հայերի մշակութային, արվեստի, լեզվական, կենցաղավարության, ավանդույթների ու բարոյական արժեքների բազմաթիվ ընդհանրություններում:

Հայաստանի Հանրապետության անկախացումից ու Կոմունիստական համակարգի յոթանասունամյա բարձր պարիսպների քանդվելուց՝ այդ հարաբերությունները նոր շունչ ստացան և երեսուն տարի առաջ այսպիսի մի օր, երկու երկրների միջև պաշտոնական դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր, այդ բարեկամության ծառը երկու ժողովուրդների ընդհանրությունների ընդլայնման տիրույթում ավելի շատ պտուղներ տալու ու բողբոջելու ավետիսը մեզ տվեց:

Իրանի Իսլամական Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունն այս երեսուն տարիների ընթացքում մեծ ու արժեքավոր փորձ են կուտակել, և երկու ժողովուրդներն այս տարիների իրադարձությունների հնոցում կոփվելով՝ հասել են այնպիսի հասունության ու փորձառության, որ ոչ մի չարակամություն ի գորու չէ պատմության երկայնքով ձգվող

երկու ազգերի բարեկամության կամրջի վրա խոչընդոտ կամ արգելք հանդիսանալ:

Այս երեսուն տարիների ընթացքում բարեկամ երկու ժողովուրդների ու հարևան երկրների միջև մշակութային, գեղարվեստական, գիտական և կրոնական կապերի ընդլայնումը՝ մյուս ոլորտներին զուգահեռ, ինչպես նաև այլ ոլորտների հանդեպ մշակութային որոշ բնագավառների առավել կայացած և զարգացած համագործակցությունը, նախանշել է մշակութային ասպարեզում համագործակցության առավել բարեկեցիկ ապագայի պայծառ ու հուսադրող տեսլական:

Ապագան՝ Իրանում հայ հայրենակիցների խաղաղ գոյակցության ֆոնին, որն աշխարհի համար լավագույն համակեցության յուրօրինակ էտալոնի է վերածվել, տարածաշրջանի ժողովուրդների խաղաղության, բարեկամության և փոխադարձ հարգանքի լավագույն ավետաբերը կդառնա:

Իսլամական մշակույթի և հաղորդակցության կազմակերպությունը՝ որպես արտերկրում Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային գործունեության պատասխանատու բարձրագույն մարմին, այսօր էլ, ինչպես և նախորդ տարիներին, բարեկամ և հարևան Հայաստանի հետ մշակութային համագործակցության համակողմանի զարգացումն իր աշխատանքային առաջնահերթությունների օրակարգում է գետեղել և Հայաստանի մշակութային, գիտական, արվեստի ու կրոնական կենտրոնների օգնությամբ իր կառավարման այս պատմական նոր շրջափուլում, որը փոփոխությունների միտված մոտեցմամբ ձգտում է նոր ասպարեզներ բացել միջազգային մշակութային համագործակցության տարբեր բնագավառներում՝ նպաստելով երկու երկրների մշակութային հարաբերությունների մակարդակի ավելի բարձրացմանը:

Շնորհավորելով Իրանի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ՝ միաժամանակ շնորհակալություն հայտնելով «Հայաստան-Իրան. պատմական անցյալը և ներկան» միջազգային գիտաժողովի կազմակերպիչներին՝ ամենակարող Աստծուց հայցում եմ առողջություն և հաջողություն այս կարևոր գիտական միջոցառման մասնակիցների համար և ցանկանում եմ, որ այս համաժողովն ու նրա մասնակիցները հասնեն համաժողովի թիրախավորված գործնական նպատակներին, որոնք միանշանակ ուղղված են երկու երկրների համապարփակ հարաբերությունների ամրապնդմանն ու խորացմանը:

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԻՐԱՆԻ ԲԱՇՆԻ ՎԱՐԻՉ
ԳՈՂԱՐ ԻՄԿԱՆԴԱՐՅԱՆ



Մեծարգո դեսպաններ, սրբազան հայր, գիտաժողովի հարգարժան մասնակիցներ

Այսօր մեծ պատիվ է ինձ համար, քանզի գրեթե մեկ տարի առաջ Արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժինը նախաձեռնեց կազմակարգել այս գիտաժողովը, որն ըստ էության՝ հարգանքի տուրք է Հայաստան-Իրան դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, զարգացմանը նպաստած բոլոր գործիչներին: Առաջարկը բավական մեծ ոգևորությամբ ընդունվեց, թե՛ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի կողմից, թե՛ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի կողմից: Անխոս ճանապարհը դժվար էր, սակայն արդյունքը խիստ բերկրալի է:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ գիտաժողովին կարողացանք ներգրավել նաև նախկին դեսպաններին: Այսպիսի գիտաժողովների կազմակերպումը լավագույն ձևերից մեկն է նրանց գիտելիքները, փորձը նոր սերունդներին փոխանցելու համար: Անշուշտ, հայ-իրանական հարաբերությունների պատմությունը այսպիսով կդրվի ինստիտուցիոնալ մակարդակի վրա, ինչը, հաստատապես կօգտագործվի հաջորդ սերունդների կողմից:

Հարգելի հյուրեր ցանկանում եմ այս ելույթով երախտագիտությունս հայտնել հայ և իրանցի բոլոր մեր դիվանագետներին, քաղաքական գործիչներին ում համառ ու աննկուն ջանքերով երբեմն լուծվել են անլուծելի թվացող խնդիրներ:

Դրանց վառ օրինակներն են Մեդրու կամուրջի կառուցումը, Հայաստան-Իրան գազատարի կառուցումը, Հայաստան-Իրան էլեկտրահաղորդման գծերի կառուցումը, առևտրաշրջանառության ծավալների աստիճանական մեծացումը, տարածաշրջանային խնդիրների նկատմամբ հիմնականում նույնական մոտեցումների ցուցաբերումը, այս ամենը մեր երկու երկրների դիվանագետների ամենօրյա աշխատանքի շնորհիվ է իրականացվում:

Այսօր Հայաստան-Իրան հարաբերությունները կանգնած են նոր մարտահրավերների առջև տարածաշրջանային փոփոխված քաղաքականության պատճառով: Այսօր Հայաստանը նույնքան ունի Իրանի աջակցության կարիքը, որքան 1990-ական թվականներին, այսօր Հայաստանը նույնքան կարևոր է Իրանի համար, որքան անկախության առաջին տարիներին, քանզի Հայաստանը հանդիսանում է ոչ թուրքական աշխարհով անցնող միակ ցամաքային ելքը Իրանի համար:

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ շնորհակալ եմ ամենքիցդ ձեր ներդրած ջանքերի համար, առանց որի այս գիտաժողովը կյանքի չէր կոչվի: Շնորհակալ եմ նախկին, ներկա և ապագա բոլոր հայրենանվեր քաղաքական գործիչներին, ովքեր զօր ու գիշեր կաշխատեն ի փառս Հայաստանի Հանրապետության, իսկ մենք՝ գիտնականներս պատրաստ ենք ծառայեցնելու այդ գործին մեր գիտելիքները, հետազոտությունները, աշխատանքները:

ԻԻՀ-ՈՒՍ ՀՀ ԵՎ ՀՀ-ՈՒՍ ԻԻՀ ՏԱՐԲԵՐ ՏԱՐԻՆԵՐԻ
ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒԴՅԱՆ
(1994-1998 թթ.)



Հայաստան-Իրան հարաբերությունները 1992-1998 թվականներին. Հայացք երեք տասնյակ տարիների հեռավորությունից:

Գիտաժողովի մեծարգո մասնակիցներ, հարգարժան ներկաներ, նախ ցանկանում եմ ջերմորեն ողջունել ձեզ և գիտաժողովի աշխատանքներին մաղթել արդյունավետ ընթացք և մեծ հաջողություն: Համոզված եմ, որ կարդացվելիք էլույթները ոչ միայն գիտական և քաղաքական բարձր մակարդակով կներկայացնեն Հայաստան-Իրան խաղաղ հարևանության ու համագործակցության անցած ճանապարհը, այլև կուրվագծեն զարգացման ապագա տեսլականը: Մեր խորին համոզմամբ այս գիտաժողովը բացի քաղաքական հնչեղությունից ունի նաև քաղաքական խորը իմաստ, քանի որ դարավոր հարևան ու բարեկամ մեր երկու ժողովուրդները թեև խոսում են տարբեր լեզուներով, դավանում են տարբեր կրոններ, նրանցից յուրաքանչյուրը ստեղծել է իր ուրույն մշակույթը և սեփական արժեքային համակարգը, սակայն այդ բոլորով հանդերձ նրանց միավորում է այն հանգամանքը, որ նրանք երկուսն էլ դարեր շարունակ ապրել են նույն մշակութային-պատմական միջավայրում, ունեն հոգեկան կերտվածքի նմանություններ և բնավորության ու խառնվածքի բազում ընդհանրություններ:

Հիրավի, պատմականորեն ոչ մի երկիր և ոչ մի ժողովուրդ աշխարհագրական հոգևոր-մշակութային և այլ առումներով այնքան մոտ չի եղել հայ ժողովրդին, որքան Իրանն ու իրանական ժողովուրդը:

Հայաստանը Իրանի միակ սահմանակից քրիստոնյա պետությունն է: Հետևաբար երկու երկրների հարաբերություններն ունեն ոչ միայն պետական-քաղաքական նշանակություն, այլև գաղափարական, արժեքային ու քաղաքակրթական խորը իմաստ: Մասնավորապես այդ հանգամանքը կարող է տարբեր կրոնների և քաղաքակրթությունների միջև երկխոսության յուրօրինակ հարթակ ծառայել և լինել քրիստոնյա և իսլամադավան ժողովուրդների խաղաղ գոյակցության օրինակելի նմուշ: 20-րդ դարում, հազարամյակների պատմական ճանապարհ անցած մեր երկու ժողովուրդներն անցել են բախտորոշ և շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձությունների բովով: Սակայն երբեք չեն կորցրել հավատը իրենց կենսունակության և ապագայի նկատմամբ:

1991 թվականի սեպտեմբերի 21-ին հայ ժողովրդի հավաքական կամքով ծնունդ առավ Հայաստանի երրորդ հանրապետությունը: Այդ իրադարձությունը մեր երկրի համար առաջին հերթին կարևորվում էր նրանով, որ Հայաստանը հնարավորություն էր ստանում վարելու անկախ արտաքին քաղաքականություն՝ ելնելով իր ազգային շահերից: Հիրավի, անկախության ձեռք բերումից հետո հայ ժողովրդի առջև ծառայած էր մի սեմ նպատակ՝ սեփական և լիարժեք կյանքի կառուցումը: Այսուհետև Հայաստանը հնարավորություն էր ստանում ընդգրկվելու տարածաշրջանային և միջազգային քաղաքական կյանքի մեջ՝ որպես հարավկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական համակարգի անդամ:

Հայ ժողովուրդը խորությամբ գիտակցել է, ոչ անկախության կերտման ճանապարհին իրանական պետության և ժողովրդի բարյացակամ վերաբերմունքն ունի չափազանց կարևոր նշանակություն: Իրանի Իսլամական Հանրապետությունը առաջին պետություններից մեկն էր, որ 1991 թ. դեկտեմբերի 25-ին ճանաչեց Հայաստանի անկախությունը և 1992 թվականի փետրվարին 9-ին ստորագրեց հռչակագիր Հայաստանի և Իրանի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ: Հիրավի երեք տասնյակ տարի առաջ բեկվեց հայ և իրանական ժողովուրդների ընդհանուր ճակատագիրը: Նրանց սահմանները որոշող Արաքս գետը այսուհետև դառնում էր ոչ թե նրանց բաժանող, այլ միացնող գետ, իսկ հայ-իրանական սահմանը վերածվում էր խաղաղության և բարեկամության սահմանի: Անկախության ձեռքբերումով Հայաստանն Իրանի հետ հայտնվեց նույն տարածաշրջանում, անմիջականորեն ընդգրկելով տարածաշրջանային քաղաքական կյանքի մեջ:

Անվիճելի իրողություն է, որ Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու օրվանից Թեհրանը նրա հետ միջպետական հարաբերություններին տվել է առաջնություն և մեծ կարևորություն:

1991 թ. փետրվարի 9-ին Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ստորագրվեց հարաբերությունների սկզբունքների և նպատակների վերաբերյալ հռչակագիր, որով կողմերը հավաստում էին բարիդրացիական հարաբերություններ հաստատելու իրենց մտադրությունը՝ որպես գործունեության ելակետ ընդունելով փոխադարձ տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքի և միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքները:

Քիչ ժամանակ անց կողմերը ստորագրեցին նաև «Հռչակագիր հարաբերությունների սկզբունքների և նպատակների վերաբերյալ», որը 21 հոդվածից բաղկացած համապարփակ փաստաթուղթ էր՝ նախատեսված տևական ժամանակների համար: Այն շոշափում էր հարաբերությունների բազմաթիվ և բազմապիսի բնագավառներ: Առանց չափազանցության կարելի է ասել, որ անցած երեք տասնյակ տարիների ընթացքում մեր երկու երկրների հարաբերությունները գլխավորապես խարսխվում էին այդ փաստաթղթի վրա:

Այնուհետև, 1992 թ. մայիսի 7-ին Թեհրանում ՀՀ և ԻԻՀ նախագահները ստորագրեցին համատեղ հայտարարություն «Համագործակցության, բարեկամության և բարիդրացիության» վերաբերյալ, որը դարձավ երկու երկրների միջպետական հարաբերությունների հիմքում ընկած կարևորագույն փաստաթուղթը: Դրանով երկկողմ հարաբերությունները դրվում էին պետական բարձր մակարդակի վրա:

Կարևոր է հատուկ շեշտել, որ երկկողմ համագործակցություն հաստատելիս և՛ Երևանում, և՛ Թեհրանում հստակորեն գիտակցում էին, որ այդ համագործակցության մեջ յուրաքանչյուր մասնակից պետություն ունի իր յուրահատուկ շահն ու տնտեսական, քաղաքական և ռազմավարական հետաքրքրությունները:

Այսպիսով, տարածաշրջանի իրողությունների համատեքստում ծնունդ էր առնում մի այնպիսի իրավիճակ, երբ լայն հնարավորություններ էին բացվում հայ-իրանական տնտեսաքաղաքական, քաղաքական և մշակութային հարաբերությունների ծավալուն ու անկաշկանդ զարգացման համար: Այսուհետև շատ հարցերում հայ և իրանական ժողովուրդներն ունենալու էին ընդհանուր կամ իրար չափազանց մոտ երկրա-

քաղաքական և ռազմավարական շահեր, բազմաթիվ համանման խնդիրներ, տարբեր տեսակի ընդհանրություններ, իսկ առանձին դեպքում նաև նպատակների միասնություն:

Նկատի ունենալով Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասի տարածաշրջանում ստեղծված երկքաղաքական բարդ իրադրությունը, երբ հիմնովին խախտվել էին հարևան պետությունների միջև նախկինում եղած տնտեսական և տրանսպորտային կապերը, երբ Հայաստանի Հանրապետությունը շրջափակման օղակի մեջ էր առնվել Ադրբեջանի և Թուրքիայի կողմից, Ղարաբաղում ընթանում էր ծանր պատերազմ, իսկ հյուսիսային հարևան Վրաստանում տիրում էր անկայուն վիճակ, բնականաբար Հայաստանի համար իմպերատիվներից մեկն էր Իրանի հետ հարաբերությունների կայուն զարգացումը: Դա նրա համար ոչ միայն կենսական անհրաժեշտություն էր, այլև բնական պահանջ պատմաաշխարհագրական պարտադրված իրողություն: Ընդ որում, Իրանի Իսլամական Հանրապետության հետ միջպետական քաղաքականությունը կառուցելիս նկատի էր առնվում այն հանգամանքը, որ այդ հարաբերությունների համար առկա էր լավ պատմական հիմք, երկու երկրների միջև գոյություն չունեին տարածքային վեճեր, տարբեր բնույթի վիճահարույց խնդիրներ և առհասարակ կողմերի հարաբերությունները մթազնոդ այլևայլ գործոններ: Երևանում պարզորոշ կերպով գիտակցվում էր այն իրողությունը, որ Իրանը նախ և առաջ պատուհան է Հայաստանի համար բացված դեպի արտաքին աշխարհը, քանի որ այդ երկիրն իր առանձնահատուկ դիրքով, հսկայական տարածքով, համաաշխարհային նշանակություն ունեցող կոմունիկացիաներով և այլն մի յուրահատուկ կապող օղակ է ոչ միայն իր սահմանակից պետությունների, այլև ողջ

տարածաշրջանների՝ Կովկասի, Կենտրոնական Ասիայի, Հնդկական թերակղզու արաբական աշխարհի հետ:

Հիրավի, Իրանը համաաշխարհային մասշտաբով տարանցիկ կամուրջ է, աշխարհի կարևորագույն ռազմավարական շրջաններից մեկը: Այդ երկիրը նաև Պարսից ծոցի գոտում առանցքային նշանակություն ունեցող պետություններից մեկն է, որի քաղաքականությունից է նշանակալից չափով կախված իրադրությունը ոչ միայն այդ տարածաշրջանում, այլև ամբողջությամբ վերցրած Մերձավոր և Միջին Արևելքում: Անժխտելի է նաև իրանական գործոնի ազդեցությունը միջազգային հարաբերությունների արդի համակարգի վրա: Մասնավորապես այդ երկիրը հանդիսանում է Մերձավոր և Միջին Արևելքում ռազմաքաղաքական հարաբերակցությունը հավասարակշռող ազդու ուժ, տարածաշրջանը կայունացնող կարևոր գործոն, ինչպես նաև արևմտասիական տարածաշրջանային քաղաքականության վճռական գործոն:

Կարևոր է հատուկ շեշտել, որ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև միջպետական հարաբերությունների հաստատումը իրանական ժողովրդի և պետության կողմից ևս ի սկզբանե ընկալվեց որպես ինքնըստինքյան հասկանալի և բնականոն մի իրողություն: Իրանական կառավարությունը Հայաստանի հետ միջպետական հարաբերություններին տվեց մեծ կարևորություն, Հայաստանին համարելով կարևոր գործընկեր:

Բնավ պատահական չէ, որ անցած երեք տասնյակ տարիների ընթացքում հայ-իրանական հարաբերությունները զարգացել են վերընթաց գծով, առանց խափանումների: Նշված ողջ ժամանակաշրջանի ընթացքում կողմերը միմյանց նկատմամբ վարել են կառուցողական, բարիդրացիական և լայն համա-

գործակցության քաղաքականություն, որն իրավացիորեն ստացել է «թավշյա քաղաքականություն» անվանումը: Հայաստանը թերևս Հարավային Կովկասի միակ պետությունն է, որը կարևորում է Իրանի ներգրավածությունը Կովկասում և համարում է, որ տարածաշրջանում կայունության որևէ համակարգի ստեղծումը ամբողջական չի լինի առանց Իրանի մասնակցության և նրա շահերը հաշվի առնելու:

1992 թ. դեկտեմբերի 22-ին Թեհրանում բացվեց Հայաստանի Հանրապետության դեսպանությունը: Այդ հիշարժան օրը դեսպանատան շենքի կատարին ծածանվեց հայ ժողովրդի իդձերի, նրա ինքնության ու ազատության դրոշը: Ինձ համար մեծ պատիվ էր, որ ես Իրանի Իսլամական Հանրապետությունում վեց տարի շարունակ ներկայացնելու էի նորանկախ Հայաստանի պետական շահերը:

Դեսպանությունը բառացիորեն իր գործունեությունը սկսում էր գրոյից: Անհրաժեշտ էր ձևավորել դեսպանության դիվանագիտական կազմը, մշակել գործունեության ծրագրեր, հաստատել կայուն համագործակցություն Իրանի արտաքին գործող նախարարության, պետական-պաշտոնական կառույցների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, գիտության, մշակույթի, գործարար շրջանների ներկայացուցիչների հետ: Հույժ կարևոր խնդիր էր նաև Իրանը Հայաստանի հետ կապող կամրջի ստեղծման հարցը: 1992 թ. մայիսին Մեդրի քաղաքի Ագարակ ավանի դիմաց բացվեց ժամանակավոր զինվորական նավակամուրջ (պոնտոնային կամուրջ): Այն անմիջապես դարձավ մի տեսակ արյունատար անոթ, որը կոչված էր սնելու շրջափակման և պատերազմական վիճակի մեջ գտնվող Հայաստանի Հանրապետությանը: Հայ ժողովուրդը այդ կամուրջն անվանեց «հույսի կամուրջ»:

«փրկության ճանապարհ»: Այդ ժամանակավոր կամրջի օգնությամբ մեր մանուկ հանրապետությունը հնարավորություն ստացավ երկրի հարավային կողմից ճեղքել շրջափակման օղակը և դուրս գալ լայն աշխարհ:

1992 թ. Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ստորագրվեց միջպետական համաձայնագիր Արաքս գետի վրա համատեղ մշտական կամրջի նախագծման ու կառուցման համար: 1996 թ. հունվարի 9-ին տեղի ունեցավ այդ կամրջի պաշտոնական բացումը: Կամրջի բացման առթիվ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը նշել է. «Կյանքը ստիպեց մեզ ապրելու համար տարբերակներ փնտրել և գտանք այդպիսիք, ես նկատի ունեմ հարաբերությունները Իրանի հետ: Մենք սկսեցինք գրոյից, իսկ այսօր Իրանը մեր առաջին տնտեսական գործընկերն է: Եվ եթե այսօր սահմանային կամուրջը փակվի, մեկ շաբաթ անց Հայաստանում ապրանքների գները կկրկնապատկվեն»:

Մշտական կամրջի շահագործումը հնարավորություն տվեց նաև տարանցիկ բեռների փոխադրումը Հայաստան: Սկսեց գործել նաև Պարսից ծոց-Իրան-Հայաստան տրանսպորտային սխեման: Ծայր առավ նաև Հայաստանի տարածքով իրանական բեռնատար մեքենաների տարանցիկ անցումը դեպի Սև ծով և հակառակ ուղղությամբ: Մեդրիի շրջանում բացված սահմանային կետը վերածվեց միջազգային անցումային կետի: 1997 թվականին 1994 թվականի համեմատությամբ Հայաստանի ապրանքաշրջանառությունը Իրանի հետ ավելացավ մոտ երեք անգամ: Իրանը Հայաստանի արտաքին առևտրի մեջ գրավեց առաջին տեղը:

ԻԻՀ-ի հետ տնտեսական համագործակցությունը կայուն հիմքերի վրա դնելու նպատակով 1992 թ. ստեղծվեց «Հայ-իրա-

նական հարաբերությունները համակարգող պետական հանձնախումբ»: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Իրանում Հայաստանի դեսպանությունը չունի առևտրական բաժին, երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները խթանելու նպատակով Թեհրանում ՀՀ դեսպանության անմիջական նախաձեռնությամբ ստեղծվեց «Իրան-Հայաստան առևտրական պալատ», որի մեջ ընդգրկվեցին ինչպես հայ, այնպես էլ իրանցի աչքի ընկնող գործարարներ: Իրանական կառավարության կողմից պալատը ստացավ պաշտոնական գրանցում:

Երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների մեջ նորը նաև այն էր, որ Իրանի մի շարք նահանգների, մասնավորապես Արևելյան Ադրբեջանի, Արդեբիլի, Գիլանի, Քերմանի և այլ գործարար շրջանները ուղիղ և չմիջնորդված կապերի մեջ մտան Հայաստանի հետ: Իր առաջին քայլերը սկսեց նաև կատարել սահմանային առևտուրը:

Վերընթաց գծով զարգացող առևտրատնտեսական հարաբերությունները օրակարգի անհետաձգելի հարց դարձրին նաև բանկային համակարգի բնագավառում համագործակցության խնդիրը: Ուստի 1995 թ. հունվարին Երևանում բացվեց իրանական հայտնի բանկերից մեկի՝ «Բանքե Մելլաթի» մասնաճյուղը: Երևանում, Թեհրանում և Թավրիզում պարբերաբար սկսեցին կազմակերպվել առևտրատնտեսական ապրանքների ցուցահանդեսներ:

Արդյունավետ կերպով սկսեց գործել Հայաստան-Իրան-Թուրքմենստան եռակողմ տնտեսական համագործակցությունը: Հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունները որակական նոր աստիճանի հասցնելու համար անհրա-

ժեշտ էր մշտապես զարգացնել և կատարելագործել իրավապայմանագրային դաշտը:

Խոշոր ձեռքբերումներ գրանցվեցին կապի բնագավառում: Հաստատվեց կանոնավոր օդային կապը Երևանի և Թեհրանի միջև, դրան հետևեց նաև ցամաքային ավտոբուսային կապի ստեղծումը երկու մայրաքաղաքների միջև: 1992 թվականից սկսած սկսեց գործել Իրան-Հայաստան ավտոմատ հեռախոսային կապը: Նախագծեր մշակվեցին Հայաստանին օպտիկաթելքային հեռախոսային գծով Իրանի տարածքի վրայով կապվելու Եվրոպայի և Ասիայի հետ: 1995 թ. երկու երկրների միջև կնքվեց հոշակազիր թվային ռադիոտելեֆային միջազգային հեռախոսակապ հիմնելու վերաբերյալ:

Մեծ կարևորություն ձեռքբերեցին և հեռանկարային դարձան հայ-իրանական համագործակցության ծրագրերն էներգետիկայի բնագավառում: 1995 թ. կնքվեց առաջին համաձայնագիրը Իրան-Հայաստան գազամուղ կառուցելու վերաբերյալ: Ստորագրվեցին համաձայնագրեր Իրան-Հայաստան բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի կառուցման, Արաքս գետի վրա համատեղ ջրամբարտակի և հիդրոէլեկտրակայանի կառուցման, Սիսիանում նավթավերամշակման գործարան կառուցելու վերաբերյալ և այլն: Ի դեպ, 1997 թվականին շահագործման հանձնվեց բարձրավոլտ էլեկտրահաղորդման առաջին գիծը:

Մինչև 1998 թ. ընկած շրջանում ստեղծվեցին բազմաթիվ հայ-իրանական համատեղ ձեռնարկություններ: Երևանում սկսեց գործել իրանական ապրանքների բաշխման տերմինալ: Պայմանավորվածություններ ձեռք բերվեցին գիտության, մշակույթի, կրթության բժշկության, զբոսաշրջության, գյուղատնտեսության, սեյսմոլոգիայի և բազմաթիվ այլ բնագավառներում:

րում համագործակցության վերաբերյալ: Կողմերի միջև համաձայնագրեր ստորագրվեցին հանցագործությունների, ահաբեկչության, թմրադեղերի, մաքսանենգության, օդանավերի առևանգման, մշակութային արժեք ներկայացնող իրերի ապօրինի դուրս բերման հարցերում համագործակցության վերաբերյալ:

Կնքվեցին համաձայնագրեր նաև հյուպատոսական համագործակցության, երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև շփումների վերաբերյալ և այլն:

Հաջողությամբ զարգանում էին նաև երկրների միջև քաղաքական հարաբերությունները 1994 թ. կողմերի միջև դիվանագիտական հարաբերությունների մակարդակը հավասարմատարի աստիճանից բարձրացվեց դեսպանի աստիճանի: Նույն թվականին Հայաստանի և Իրանի խորհրդարաններում ստեղծվեցին խորհրդարանական պատգամավորական խմբեր: Հաճախ դարձան երկու երկրների բարձրաստիճան ղեկավարների պարբերական փոխայցելություններն ու հանդիպումները:

Հայ-իրանական քաղաքական հարաբերությունների բնագավառում նշանավոր իրադարձություն էր 1997 թ. դեկտեմբերի Հայաստանի, Հունաստանի և Իրանի արտաքին գործերի նախարարների կողմից ստորագրված փոխըմբռնման հուշագիրը եռակողմ համագործակցության վերաբերյալ: Նշանավոր իրադարձություն էր նաև 1995 թվականին Թեհրանի հետ կնքված համաձայնագիրը Երևանում «Կապույտ մզկիթի» վերականգնման և վերակառուցման վերաբերյալ:

Անշուշտ դժվար է, եթե ոչ անհնարին, մեկ զեկուցման շրջանակներում թվարկել այն բոլոր ձեռքբերումները, որը կյանքի են կոչվել 1992-1998 թվականների ընթացքում:

Ավարտելով իմ զեկուցումը, ես իմ պարտքն եմ համարում նաև շեշտելու հետևյալը. Իրանը մեզ համար արժևորվում է նաև նրանով, որ այն սփյուռքահայ խոշորագույն համայնքներից մեկի՝ իրանահայության հայրենիքն է: Իսկ իրանահայությունը մեր սփյուռքի ավելի վաղ ազգային հայեցի նկարագիր ունեցող հատվածներից մեկն է: Հայ համայնքի հանդեպ իրանական պետության և ժողովրդի վերաբերմունքը շեշտված բարյացակամ է: Իրանական ժողովուրդը չափազանց բարձր է գնահատում իրանահայության ավանդը երկրի տնտեսության, լուսավորության, մշակույթի զարգացման գործում: Իրան-իրաքյան պարտադրված պատերազմի ժամանակ իրանահայությունը իր ակտիվ մասնակցությամբ մեկ անգամ ևս ապացուցեց, որ հայերը իրանական հողի հարազատ զավակներն են և պատրաստ են կրծքով պաշտպանել Իրանն ու իրանական ժողովրդին:

Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական ղեկավարությունը պատշաճ կերպով գնահատանքի է արժանացնում Իրանի հայության նվիրվածությունը իրանական հայրենիքին, որի հյուրընկալ հողի վրա հայերն ապրել են դարեր ի վեր, անխաթար կերպով պահպանելով իրենց լեզուն, մշակույթը, դավանանքը, իրենց ողջ արժեքային համակարգը:

Մի խոսքով 500 տարի շարունակ հոգով ու սրտով կապված լինելով իր նախնիների հայրենիքին՝ Հայաստանի հետ, իրանահայը եղել է Իրանի լիարժեք քաղաքացին, հավատարիմ քաղաքացին: Անժխտելի իրողություն է նաև, որ ողջ հայությունը թե՛ Հայաստանում, և թե՛ ի սփյուռս աշխարհի, ջերմ զգացումներ է տածում դեպի Իրանն ու իրանական ժողովուրդը և նրա պետականությանը:

Բնավ պատահական չէ, որ ՀՀ կառավարությունը, հայաստանաբնակ հայությունը, սփյուռքահայությունը, հայ գիտական և քաղաքական միտքը, զանգվածային լրատվական միջոցները և այլն մշտապես աշխատել են միջազգային հանրության շրջանում ամեն կերպ նպաստել իրանական պատմության իմիջի և պետական հեղինակությունը բարձրացնելու գործին: Կասկածից վեր է, որ անցած երեք տասնամյակների ընթացքում Իրանը մշտապես եղել և մնում է հայ ժողովրդի իրական բարեկամների շարքում: Դրա լավագույն ապացույցն ու առհավատչյան նշված ժամանակաշրջանում գնալով ամբարանդվող հարաբերություններն են, որոնք զարգանում են կայուն և հավասարակշռված հիմքի վրա, բարեկամության, համագործակցության, անկեղծության, վստահության և կառուցողական ոգով: Հազարամյակների պատմությամբ շաղկապված մեր երկու երկրների ժողովուրդների առավել խորը փոխըմբռնման և փոխճանաչման անհրաժեշտությունը ապագայում գնալով ավելի է հրամայական դառնալու:

Այսօր, երբ աշխարհն ապրում է իր շրջադարձային պահը, երբ այն տարածաշրջանը, որի մեջ ընդգրկված են Հայաստանն ու Իրանը, բառիս բուն իմաստով փոթորկված է, կանգնած լինելով անկանխատեսելի մարտահրավերների առջև, մեր խորին համոզմամբ հայ և իրանական ժողովուրդների երթը բարեկամության և համագործակցության ուղիով ոչ մի ուժի կողմից չի կարող խափանվել: Այն շարունակելու է ընթանալ ճիշտ՝ հուսալի ճանապարհով, որի հիմքը դրվել է ուղիղ երեսուն տարի առաջ:

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև բարեկամությունն ու փոխշահավետ համագործակցությունը անխախտ է, այն բխում է երկու հա-

րևանների կենսական շահերից: Քաղաքական այս եզրահանգումն անցել է պատմական փորձաքննության երեք տասնյակ տարիներ ընդգրկող շրջան և ունի իր համոզիչ ու կուռ տրամաբանությունը:



Հանուն իմաստության և հոգու արարիչ Աստծո

Օգտվելով ընձեռված լավ առիթից՝ ամբողջ սրտով ամենամտերիմ ողջույններն ու շնորհավորանքներն եմ հղում Հայաստանի Հանրապետությանը և մեծ ու հզոր հայ ազգին: Շատ շնորհակալ եմ, որ ինձ հրավիրել էք ուղերձով հանդես գալու և այս կարևոր գիտաժողովի շրջանակներում կիսվելու Հայաստանում իմ պաշտոնավարման տարիներին առկա կարևորագույն խնդիրների և ձեռքբերումների մասին:

Իրանի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր՝ դժվարությունները ետևում թողած ու անկախացման ցնծության հրճվանքից նորից ոտքի կանգնած հայ ժողովրդի ու Հայաստանի Հանրապետության անկախությունից ուղիղ երեսուն տարի է անցել:

Հայաստանը մի երկրի է, որի ժողովուրդը դեռևս պատմական անհիշելի ժամանակներից բարեկամության ուխտ է կնքել Իրանի ժողովրդի հետ: Մի անքակտելի կապ, որն իր պատմական անցյալից առավել՝ այսօր և ապագայում էլ ավելի ամուր, խորն ու հավերժ, բարեկամական, անխզելի, ազգակցական, սիրով ու գորովով լի պիտի լինի, և ես վստահ եմ, որ անկասկած հենց այդպես էլ կլինի:

Ես՝ որպես Իրանի Իսլամական Հանրապետության ներկայացուցիչ, բազմանդամ պատվիրակություն գլխավորած՝ Մոսկվայով Երևան եմ ժամանել ճիշտ Խորհրդային Միության փլուզման պաշտոնական հայտարարության տարածման վեր-

ջին օրերին: Մեր պատվիրակությանը Մոսկվայի օդանավակայանում հատուկ դիմավորելու համար Մոսկվա էր ժամանել Հայաստանի այն ժամանակվա ԱԳՆ մամուլի ծառայության ղեկավարը:

Այս ողջ նախապատմությունը հիշեցի, նշելու համար, որ ես Հայաստան եմ ժամանել դեռևս 1991 թվականի դեկտեմբերի երկրորդ կեսին, երբ Խորհրդային Միության պաշտոնական փլուզման մասին չէր հայտարարվել: Այդ օրերին իմ գլխավորած պատվիրակության արագ Երևան ժամանելը ոչ այլ ինչ էր, քան Հայաստանի անկախացումով իրանական կողմի շահագրգռված ու հետաքրքրված լինելու, նրա հետ կառուցողական և դրական հարաբերություններ կառուցելու տրամադրվածություն, այդ հարաբերությունների կայացմանը կարևորություն տալու լավագույն ապացույցն ու Իրանի ղեկավարների խոհեմության և իմաստության ցուցիչը:

Հայաստան կատարած առաջին այցի շրջանակներում արդեն իսկ տեղի ունեցան բազմաթիվ հանդիպումներ, և իրանական պատվիրակությունն արժանացավ ջերմ ընդունելության: ՀՀ այդ ժամանակվա նախագահի հետ հանդիպման շրջանակներում պարոն նախագահը ինձ հանձնելով Իրանի արտոգործնախարարի Երևան այցելելու գրավոր հրավեր՝ հորդորեց Իրանի արտոգործնախարարին որքան հնարավոր է շուտ այցելել Երևան:

Հաջորդիվ, Իրանի Իսլամական Հանրապետությունն շատ արագ քայլեր ձեռնարկեց Հայաստանի անկախությունը ճանաչելու համար: Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրմամբ Իրանի Իսլամական Հանրապետությունը մտահոգված էր իր հարևանությամբ գտնվող նորանկախ երկրների միջև լարվածության աճով, և չնայած ժամանակի դժվարին

պայմաններին, որոշեց Հայաստանի և Ադրբեջանի միջև միջ-նորդի դեր ստանձնել, ինչը երկու երկրների կողմից էլ ողջուն-վեց:

Նախքան Իրանի ԱԳ նախարարի այցը Երևան, ես տար-րինակ չվերթով կեսգիշերին ժամանեցի Երևան և ժամանումից անմիջապես հետո գնացի Հայաստանի արտաքին գործերի նախարար պարոն Բաֆֆի Հովհաննիսյանի հետ հանդիպման: Հանդիպման ավարտից մոտ երկու ժամ անց միայն նկատեցի, որ նոր առավոտյան ժամը 6-ն է:

Հաջորդ օրն արդեն Հայաստան ժամանեց Իրանի արտ-գործնախարարը: Այդ այցելությունը ջերմ ընդունելության ար-ժանացավ, և այցի շրջանակներում հասցրեցինք հանդիպել Հայաստանի բոլոր բարձրաստիճան պաշտոնյաների հետ, իսկ արդեն ժամը 16:00-ին Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարար դոկտոր Վելայաթին էլույթ ունեցավ Խոբիրդարանում:

Այդ նույն զգացմունքառատ ու չհայտարարված էլույթի շրջանակներում էլ Իրանի արտգործնախարարը հայտարա-րեց, որ վաղվանից Երևանում կբացվի Իրանի դեսպանատու-նը, իսկ նվաստիս ներկայացրեց իբրև ՀՀ-ում Իրանի Իսլամա-կան Հանրապետության դեսպան: Այս հայտարարությունն ու որոշումն ավելի մեծ ոգևորություն առաջացրեց ներկաների շրջանում:

Տեխնիկական և անձնական պատճառներով պայմանա-վորված՝ ես ստիպված էի այդ գիշեր Հայաստանի՝ այն ժամա-նակվա նախագահի կողմից Իրանի արտգործնախարարի պատվին տրված ընթրիքից հետո ԱԳ նախարարի հետ վերա-դառնալ Թեհրան, սակայն մի քանի օր անց կրկին հետ վերա-դարձա Երևան՝ չորս փորձագետների ու արտգործնախարա-

րության աշխատակիցների հետ միասին, և «Հրագրան» կառա-վարական հյուրանոցի հինգերորդ հարկում բացեցինք նորան-կախ ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության առաջին դեսպանատունն ու սկսեցինք մեր գործունեությունը:

ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպա-նատունն իր գործունեությունը փաստացի մեկնարկել էր դեռևս իրանական նոր տարվա՝ Նովրուզից օրեր առաջ, սա-կայն պաշտոնական բացման տոնակատարությունը տեղի ունեցավ մի փոքր ավելի ուշ, որին ներկա էին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, արտաքին գործերի նախարար Վա-հան Փափազյանը, հրավիրյալ բարձրաստիճան պաշտոնյա-ներ, քաղաքական ու մշակութային գործիչներ:

Հենց այդ տոնակատարության շրջանակներում էլ «Հրագ-րան» հյուրանոցի շենքի դիմաց ծածանվեց Իրանի Իսլամա-կան Հանրապետության դրոշը:

Այս արարողության շրջանակներում ես և ՀՀ նախագահը ընդգծեցինք, որ թեպետ երկու ժողովուրդների միջև առկա է մշակութային ընդհանուր կապեր, սակայն անհրաժեշտու-թյուն կա, առկա մշակութային հենքն օգտագործելով, հնարա-վորինս նպաստել խաղաղ համակեցության ու համագոյակ-ցության և բոլոր բնագավառներում համապարփակ համագոր-ծակցության զարգացմանը:

Ինչ-ինչ պատճառներով Հայաստանում իմ դիվանագի-տական առաքելությունը երկար չտևեց, բայց առաջին մի քանի ամիսներին դրվեցին հարաբերությունների անհրաժեշտ ու հիմնարար հիմքերը, որոնցից ամենակարևորները թերևս հետևյալն են.

- Դեսպանատան բացումն ու դիվանագիտական ակտիվ գործունեության մեկնարկը:

- Իրանի կողմից իրականացվող զինադադարի մշտադիտարկման վերահսկողության պատասխանատվության ստանձնումը, որի շրջանակներում բացի մեկ այլ բարձրաստիճան փորձագետից, որը գտնվում էր անմիջապես Ղարաբաղում, մենք Երևանում հնարավորինս լրջորեն հետամուտ էինք այդ հարցին և Իրանի արտգործնախարարի հետ միասին, ով շարունակ այցելում էր Հայաստան զինադադարի պահպանման ու խաղաղության հաստատման համար մեծ ջանքեր գործադրեցինք և այդ ուղղությամբ շոշափելի աշխատանք կատարեցինք:

- Արաքս գետի առկայությամբ պայմանավորված ցամաքային ճանապարհ չունենալու պատճառով՝ երկու երկրների միջև կապ և ճանապարհորդելու հնարավորություն ստեղծելու համար Իրանի այն ժամանակվա, այժմ երջանկահիշատակ նախագահ Այաթոլլահի Հաշեմի Ռաֆսանջանիի համառ և հետևողական աջակցությամբ անմիջապես տրվեց Արաքս գետի վրա ժամանակավոր կամուրջ կառուցելու թույլտվությունը, որից անմիջապես հետո Հայաստանի իշխանությունների միջոցներով 72 ժամում Արաքս գետի վրա ամուր օգտակար կամուրջ կառուցվեց՝ առաջին անգամ երկու երկրներին ցամաքային ճանապարհով կապելով իրար:

- Ինչպես գիտենք, մարդկանց ճանապարհորդության և երկու երկրների միջև արտահանման ու ներկրման, առևտրի, ապրանքաշրջանառության, երկրորդ անհրաժեշտ նախապայմանը մաքսատների առկայությունն է, ուստի հաջորդիվ անհապաղ քայլեր ձեռնարկվեցին դրանք հիմնելու համար և քանի որ մաքսատների համար հնարավոր չէր արագ շենքեր կառուցել, ուստի մաքսային անցակետի հարմարություններ

ստեղծելու համար պատրաստի, հավաքովի կոնստրուկցիաներով ժամանակավոր շենքեր կառուցվեցին:

- Հարթ կամուրջի կառուցմամբ կտրուկ աճեց առևտրական և բեռնափոխադրումների բեռնատարների հերթը:

Տեսնելով սահմանը հատելու համար երկար օրեր սահմանին անսպասելի կուտակված բեռնատարների թիվը՝ մաքսատների և մասնավոր հատվածի ջանքերով, Իրանի մաքսային ծառայությունները մեկ հերթափոխից հասան երեք հերթափոխի և գործնականում դարձան. շատ ակտիվ և կարելի է ասել շուրջօրյա...

- Այդ օրերին Հայաստանի տնտեսական վիճակը շատ ծանր էր, և Իրանի հետ Մեդրիի սահմանը վերածվեց հայ ժողովրդին անհրաժեշտ ապրանքներ և վառելիք ուղարկելու դարպասի:

- Արագ զարգացող բազմակողմանի համագործակցության անհրաժեշտությունից ելնելով՝ ձեռնարկված հետևողական քայլերի արդյունքում Երևան ժամանեց Իրանի էկոնոմիկայի նախարարության պատվիրակությունը, որին ուղեկցում էին ԻԻՀ մաքսային ծառայողները և «Մելլաթ» բանկի տեղակալը: Պատվիրակության հանդիպումների արդյունքում քննարկվեցին մաքսային խնդիրները հեշտացնելու և առավել արդյունավետ ու համակարգված բեռնափոխադրումներ կազմակերպելու հարցերը: Այս ճամփորդության ընթացքում «Մելլաթ» բանկի տնօրենի տեղակալը ձեռք բերեց պայմանավորվածություն՝ Երևանում հնարավորինս կարճ ժամկետում «Մելլաթ» բանկի մասնաճյուղ հիմնելու վերաբերյալ:

ԻԻՀ-ՈՒՄ ՀՀ ԴԵՄՊԱՆ
ԳԵՂԱՍ ՂԱՐԻԲՁԱՆՅԱՆ
(1999-2005 թթ.)



Միքելի՛ ներկաներ, ես շատ ուրախ եմ այսօրվա գիտածո-
ղովի համար, քանի որ յուրաքանչյուրս ունենք պարտավոր-
վածություններ երկկողմ հարաբերությունների համար: Շու-
տով ԻԻՀ 43-րդ տարեդարձն է, ես ճակատագրի բերումով,
հպարտությամբ կարող եմ ասել, որ ականատես եմ եղել և
ներկա Իրանի Իսլամական հեղափոխությանը, որովհետև այդ
տարիներին աշխատում էի Իրանում: Եվ տեսել եմ այն վերել-
քը, զարթոնքը դեպի ապագան, հավատը, որ ուներ և այսօր էլ
ունի Իրանի ժողովուրդը: Մեր 2 երկրներն ունեն նմանություն:
Երկուսն էլ ճակատագրի բերումով ունեցել են շրջափակում,
Իրանը տեսել է պատերազմ, մենք դեռ պատերազմի մեջ ենք,
բայց Իրանը դրանից դուրս եկավ շահեկան վիճակում՝ զար-
գացնելով ծանր արդյունաբերությունը և մինչ օրս առանց որևէ
երկմտանքի գնում է առաջ:

Երբ ես 1999 թվականին հանձնում էի իմ հավատարմա-
գրերը ԻԻՀ նախագահ պարոն Խաթամիին, շատ հետաքրքիր
զրույց ունեցանք մեր երկկողմ հարաբերությունների մասին և
ես իրեն ասացի, որ ունեմ հանձնարարականներ և ինձ համար
նաև հանձնարարական է Իմամ Խոմեյնու թևավոր խոսքը՝
«հյուսիս-հարավ», մեր հարաբերություններում դա պետք է
հիմնականը լինի և կյանքը ցույց տվեց, որ այսօր էլ այն հիմա-
կան ուղղությունն է Իրանի և ՀՀ-ի համար: Հազարամյակների
պատմության մեջ մենք հիշում ենք միայն Ավարայրի ճակա-
տամարտը: Երբ նախագահ Խաթամին 2004 թվականին այցե-
լեց ՀՀ, պատիվ ունեցա նրան ուղեկցելու Մայր Աթոռ Սուրբ

Էջմիածին և երբ Վեհափառ հայր Գարեգին Բ-ն ընդունեց նա-
խագահին և անցնում էինք վեհարանով, նախագահ Խաթամին
տեսավ գեղանկարիչներից մեկի «Ավարայրի ճակատամարտ» գե-
ղանկարը և հարցրեց վեհափառին.- «Մա ի՞նչ նկար է, ի՞նչ ճա-
կատամարտ է», Վեհափառն ասաց,- «Մա այն ճակատա-
մարտն է, որտեղ պարսիկները հաղթեցին հայերին և թույլ
տվեցին պահպանել մեր կրոնը»: Սրա մեջ շատ խորը իմաստ
կա, քանի որ պատմության ընթացքում մենք միշտ մնացել ենք
ու կանք բարեկամ երկրներ:

1999-2004 թվականներին, ավելի քան 6 տարի, աշխատել
եմ որպես ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, բոլոր դեսպան-
ները, իսկապես, շատ լավ աշխատել են, քանի որ դեսպանի
աշխատանքը ոչ միայն հանձնարարականներ կատարելը, այլ
մտահոգություններ փոխանցելն ու օգտակար լինելն է երկ-
կողմ հարաբերություններին և պիտի ասեմ, քաղաքական ա-
ռումով միշտ հարաբերությունները եղել են ամենաբարձր մա-
կարդակի վրա: Տնտեսականը, առ այսօր կաղում է և եթե ունե-
ցել ենք ձեռքբերումներ, ապա մեր երկկողմ ջանքերի շնորհիվ,
որտեղ պետք է կարևորեմ երկու հոգու՝ Արտաշես Թումանյա-
նին, և լուսահոգի էներգետիկայի նախարար Արմեն Մովսի-
սյանին:

Հիշում եմ, երբ 2004 թվականի մայիսին Երևանում ստո-
րագրվեց Բ. Զանգանեի և Ա. Մովսիսյանի միջև գազատարի
շինարարության պայմանագիրը, հետադարձ նայելով հիշում
եմ ինչ խոչընդոտներ ուներ Հայաստանը այլ երկրների կող-
մից, որպեսզի այն իրականություն չդառնա: Բայց հաջողվեց
հասնել նրան, որ թեկուզ 1400 մմ-ի փոխարեն կառուցվի 700
մմ գազատար: Ակնհայտ էր, որ տրանզիտ չի լինելու, բայց
կարծում եմ, ապագայում դա ևս կշտկվի: Այս տարիներին կար

Քաջարանի թունելի հրաշալի նախագիծը, որը վերջում Երևանում փոխեցին այլ ճանապարհով, որը որևէ օգուտ չտվեց, քանի որ իրանական բեռնատարները այդ ճանապարհից չեն օգտվում: Ասեմ, որ նաև Պուշկինի լեռնանցքում ստեղծեցինք այլընտրանքային էներգիայի կայան, որը աշխատում է մինչ օրս: Հիմա, ապագայի առումով մեր անելիքը մեկն է՝ պետական մտածողությունը մեր ժողովուրդների մեջ պետք է լինի առաջնայինը, առանց որի ուղերձներ, խոսքեր ասելով ոչնչի չենք հասնի:

Շնորհակալություն հրավելի համար:

ՀՀ-ՈՒՄ ԻԻՀ ԴԵՄՊԱՆ
ՍԵՅՅԵԴ ԱԼԻ ՍԱՂԱՅԻԱՆ
(2008-2012 թթ.)



Հանուն բարեգութ և ողորմած Աստծո

Ես՝ Սեյյեդ Ալի Սաղայիանս, 2008-2012 թվականներին հանդիսանալով ՀՀ-ում ԻԻՀ դեսպան՝ Իրանի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից 30 տարի անց՝ այս կարևոր պատմական իրադարձության առթիվ, շնորհավորում եմ երկու դարավոր բարեկամ ժողովուրդներին:

Նախ թույլ տվեք շնորհակալություն հայտնել այս կարևոր միջոցառման կազմակերպիչներին, քանի որ Իրանի և Հայաստանի համատեղ պատմության այս հատվածի հիշատակումը շատ կարևոր է:

Ինչպես գիտենք, Խորհրդային Միության փլուզումից հետո ԻԻՀ-ն առաջին պետությունն էր, որ ճանաչեց ՀՀ-ի անկախությունը և դրանից հետո էլ միշտ բոլոր դժվարությունների ու ուրախությունների պահերին շարունակեց մնալ բարեկամ Հայաստանի և իր հայ քույր ու եղբայրների կողքին:

Երկու երկրների հարաբերությունները շատ խորն են, քանի որ անկախ կրոնական տարբերություններից՝ հիմնված են պատմական, մշակութային, քաղաքակրթական ընդհանրությունների վրա:

Իրանն ու Հայաստանն այս 30 տարիների ընթացքում ձևավորել են շատ բարձր մակարդակ և ռազմավարական հարաբերություններ:

Իմ դիվանագիտական առաքելության տարիներին երկու երկրների նախագահները, կառավարության ղեկավարները, բարեկամական խմբերի ներկայացուցիչները, տնտեսական, մշակութային, մարզական, էներգետիկ և առևտրական ոլորտների պատասխանատուներն ու նախարարները ունեցան արդյունավետ փոխայցելություններ և ձեռք բերեցին կարևոր պայմանավորվածություններ, ինչի արդյունքում ակտիվացավ բազմակողմանի համագործակցությունը:

Իմ պաշտոնավարման ընթացքում Թեհրանում և Երևանում ամեն տարի կազմակերպել ենք համատեղ առևտրատնտեսական հանձնաժողով, չորս տարի շարունակ վերոնշյալ հանձնաժողովի կազմակերպումը, թերևս լավագույն ցուցիչն է առ այն, որ դրանց կազմակերպումը երկու հարևան երկրների կողմից ընկալվում էր իբրև հույժ կարևոր նախապայման ռազմավարական և արդյունավետ համագործակցություն ձևավորելու հարցում:

Հայաստանը, թեպետ առաջին հայացքից փոքր ու քիչ բնակչություն ունեցող երկիր է համարվում, սակայն չպետք է անտեսել Սիրիայում, Ֆրանսիայում, Եվրոպայում, ԱՄՆ-ում և այլուր հաջողություններ գրանցած սփյուռքահայության ներուժը, ովքեր երկրի տնտեսաքաղաքական հարցերում մեծ դերակատարություն ունեն, իսկ Իրանի հարաբերությունները սփյուռքի հայ համայնքների հետ ևս բարեկամական ու կայացած են:

Հայերն իրենց համարում են Իրանի քաղաքակրթության և մշակույթի մասնիկը, և սա լավագույն ցուցիչն է առ այն, որ իրանցիները միշտ հարգալից են վերաբերվել հայերին ու նրանց հետ տնտեսաքաղաքական հարցերում չեն մոռացել Հայաստանի անկախության մասին և աջակցել են այդ անկա-

խության կայացմանը, մի բան, ինչում մեծ դերակատարություն է ունեցել Իրանի հոգևոր առաջնորդի վերաբերմունքը:

Սադամ Հուսեյնի հարձակման արդյունքում Իրանին անարդարացիորեն պարտադրված պատերազմում, իրանահայ նահատակների մեծ թիվը ևս փաստում է հայրենիքը սեփական կյանքից առավել համարելու կրոնամշակութային աշխարհընկալման ընդհանրության և Իրանը սեփական հայրենիքը համարելու ու նրա համար կյանքը չինայելու իրանահայերի պատրաստակամության մասին: Միաժամանակ պետք է նշել, որ այս վերաբերմունքը եղել է փոխադարձ և Իրանը միշտ իրեն տեսել է Հայաստանի կողքին կանգնած թե՛ վշտի, և թե՛ ուրախության պահերին: 1987 թվականին Վրաստանի վրա Ռուսաստանի հարձակման ժամանակ այլուրի, ցորենի, վառելիքի փոխադրման տարանցիկ ճանապարհը վնասվեց և հանգեցրեց Սև ծովից դեպի Հայաստան այլուր, ցորեն ու վառելիք ներմուծելու մեծ խնդրի: Վերոնշյալ ապրանքների ներմուծման անհնարինության արդյունքում առաջացած խնդիրները հարթելու խնդրանքով՝ ՀՀ վարչապետը դիմեց ինձ, և ես առանց հապաղելու կապ հաստատեցի Իրանի նախագահի և արտգործնախարարի հետ և 48 ժամ չանցած՝ վառելիքի, և այլուրի առաջին բեռնատարները մտան Նորդուզի անցակետ: Հաջորդիվ, ՀՀ նախագահը մեկ շաբաթ անց, նախարարների մեծ պատվիրակությամբ մեկնեց Իրան՝ անձամբ շնորհակալություն հայտնելու ԻԻՀ-ը՝ ճիշտ ժամանակին ու առանց վարանելու ցուցաբերած աջակցության համար: Եվ սա լավագույն ցուցիչն է առ այն, որ Իրանը տարածաշրջանում շատ ազդեցիկ, բարեկամական տրամադրված և իր հարևաններին, այդ թվում՝ Հայաստանին, աջակցող երկիր է: Թեպետ առաջին հայացքից կարող է թվալ, որ մեր միջև առկա են կրո-

նամշակութային տարբերություններ, սակայն առկա ընդհանրություններն արժևորելու ու տարբերությունները հարգելու երկու երկրների կամքն այնքան մեծ է, որ Իրանի ու Հայաստանի հարաբերությունները աշխարհի համար վերածվել է կրոնների ու մշակույթների խաղաղ համագոյակցության լավագույն օրինակի:

Իմ պաշտոնավարման տարիներին փոխադարձ այցելություններ ու համագործակցություններ են ձևավորվել նաև արվեստի, մշակութային և սպորտային խմբերի միջև: Երկու երկրների ֆուտբոլի հավաքականները բարեկամական խաղ են անցկացրել Երևանում, իսկ Իրանի ըմբշամարտի ազգային հավաքականը Հայաստանի միջազգային մրցումներում առաջին տեղն է զբաղեցրել:

Երկու երկրների բանաստեղծների և գրողների միջև համագործակցության զարգացմանը միտված ծրագրերը նոր թափ հաղորդեցին թարգմանչական գրականությանը և հանգեցրեցին աննախադեպ ծավալներով չափածո և արձակ ստեղծագործությունների պարսկերեն և հայերեն թարգմանությանը:

Ինչպես գիտենք, Երևանի և մարզերի շատ դպրոցներում դասավանդվում է պարսկերեն, իսկ գրքերի հրատարակման և ուսուցիչների վարձատրման ծախսերը հոգում է ԻԻՀ-ն դեսպանատունը:

Փորձելով զարգացնել ապակենտրոնացված համագործակցություն՝ տարաբնույթ կապեր են ստեղծվել երկու երկրների տարբեր քաղաքների ու մարզերի միջև, և Իրանի հարավային ու կենտրոնական նահանգները, ինչպիսիք են Հորմոզգանն ու Յագղը, Գիլանը, Արաքն ու Մարքազին (Կենտրոնական) լավ կապեր են հաստատել Հայաստանի տարբեր

մարզերի հետ, ինչն էլ իր հերթին հանգեցրել է տնտեսական համագործակցության զարգացմանը:

Հարկ է նշել, որ միևնույն ժամանակ կրոնական երկխոսություն ձևավորելու նպատակով Էջմիածնի և Իրանի կրոնական երկխոսությունների կենտրոնների հետ համատեղ կազմակերպվել են քննարկումներ:

Իրանը միշտ հարգել և պաշտպանել է հայերի կրոնական իրավունքները: Հաղիպելով Ամենայն հայոց կաթողիկոսին՝ քննարկել են Իրանի հայ համայնքի հետ կապերը ամրապնդելու և Իրանի տարածքում գտնվող հայկական մշակույթին պատկանող պատմամշակութային կոթողների պահպանման հարցը:

Վերջում թերևս հարկ է նշել, որ 300-ից ավել պատմական եկեղեցի կա Իրանի տարածքում, որոնք գրանցված են ԻԻՀ մշակութային ժառանգության ազգային ցանկում:

Նվաստս ևս մեկ անգամ շնորհակալություն են հայտնում համաժողովի բոլոր կազմակերպիչներից ու հաջող ընթացք են մաղթում, և հուսով են՝ նորից կհանդիպենք Երևանում կամ Թեհրանում: Շնորհակալություն և Աստված պահապան:



Հայաստանի ու Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների երեսնամյա տարեդարձի մասին

Երբ երկկողմ հարաբերությունների մասին տեսակետ ենք արտահայտում, սովորաբար օգտագործում ենք հաճոյաբանական ճոռոմ խոսքեր ու ձևակերպումներ: Բայց, Իրանի հետ Հայաստանի հարաբերությունների մասին մեր օգտագործած ձևակերպումները դիվանագիտական հաճոյախոսությունների հետ որևէ կապ չունեն: Քանի որ, հայ-իրանական հարաբերությունների հեռանկարը պայմանավորված չէ տվյալ պահին կառավարման ղեկին տիրապետող անձերով և նրանց կամայականություններով, կամ էլ երկու երկրներում իշխող պետական կառավարման համակարգերի առանձնահատկություններով: Այս օրինաչափությունը եղել է նախկինում, և արդիական է այն և այսօր: Քանի որ, մեր ավանդական հարաբերությունների զարգացումը թե՛ Հայաստանի, և թե՛ Իրանի համար պայմանավորված է էական նշանակություն ունեցող աշխարհաքաղաքական գործոններով, պատմամշակութային կապերով, փոխադարձ տնտեսական շահերով և բազմաթիվ այլ ազդակներով:

Եվ երբ Խորհրդային Միության փլուզման հետևանքով 90-ականի սկզբներին Հայաստանը ձեռք բերեց իր անկախությունը, և մենք հնարավորություն ունեցանք չմիջնորդավորված ու մեր սեփական աչքերով նայել դեպի արտաքին աշխարհ, մեր

տեսադաշտում հայտնաբերեցինք առեղծվածային նկարագրով ու անհասանելի թվացող Իրանը:

Մենք շատ շուտով մեզ համար պարզեցինք, որ Իրանը թե՛ տարածքով, և թե՛ բնակչությամբ Հայաստանի ամենամեծ հարևանն է: Իրանը մեզ շրջապատող հարևան երկրների մեջ միակն է, որտեղ բնակվող հայերն ունեն իրենց ինքնությունը պահպանելու բացառիկ հնարավորություն: Հայաստանն Իրանի միակ քրիստոնեաբնակ և միևնույն ժամանակ իր տարածքով և ազգաբնակչության թվաքանակով ամենափոքր հարևանն է: Հայաստանի և Իրանի ընդհանուր սահմանը, թե՛ Հայաստանի և թե՛ Իրանի համար եղած բոլոր սահմաններից ամենափոքրն է:

Եվ մենք պատմության համար ակնթարթ թվացող կարճ ժամանակահատվածում կարողացանք մեր հարևան Իրանի հետ ստեղծել բազմաբնույթ հարաբերություններ, որոնց համար արդեն իսկ առկա էին պատմական և մշակութային ընդհանրությունների վրա հիմնված նախադրյալներ:

30 տարի առաջ հաստատված դիվանագիտական հարաբերություններից անմիջապես հետո, ժամանակ չկորցնելու հաստատակամությամբ, գործի անցանք, ու մեր հետագա անելիքները հստակեցնելու նպատակով, նախ կարգի բերեցինք մեր իրավապայմանագրային դաշտն ու, դրանով պայմաններ ստեղծեցինք մեր հեռանկարային աշխատանքները կյանքի կոչելու համար:

Հաստատ կարող եմ ասել, որ մեր իրավապայմանագրային դաշտն ապահովելու համար ստորագրված փաստաթղթերի անգամ պարզ թվարկման համար մի քանի ժամ կպահանջի:

թյան համար բացառիկ միջավայր: Իրանում ընթացող բոլոր քաղաքական իրադարձությունների կիզակետը թե՛ անցյալում, և թե՛ այսօր եղել և մնում է Թավրիզ քաղաքը:

Ի դեպ, Թավրիզում Հայաստանի հյուպատոսություն հիմնադրելով, Արևելյան Ատրպատականից բացի, հնարավոր կլինի նաև քննարկման նյութ դարձնել Հայաստանի հարակից այլ շրջանների, այդ թվում՝ Իրանի Արևմտյան Ատրպատական, Արդեբիլ, Գիլան ու Մազենդարան նահանգների հայկական հյուպատոսության սպասարկման տարածքի մեջ ներառելու հնարավորությունը:

Ներկայումս հյուպատոսական սպասարկման այդպիսի լայն տարածքում գործունեություն ծավալելու հնարավորություն ունեն ընդամենը երկու հյուպատոսական հիմնարկներ՝ Թուրքիայի ու Ադրբեջանի գլխավոր հյուպատոսությունները, որոնք 44-օրյա պատերազմի օրերին հակահայ մթնոլորտի շիկացման հարցում մեծ դերակատարում ունեցան:

Ուզում ենք հավատալ, որ արքայազնանիստ քաղաքի համբավ ունեցող Թավրիզում հայկական հյուպատոսական հիմնարկի վերագործարկմանն ուղղված քայլերը հեռավոր ապագայում լուծվելիք հարցերի շարքին չեն դասվի, քանի որ «ապագայի» կերտումը հիմնված է հենց այս պահի վրա:

ՀՀ-ՈՒՄ ԻԻՀ ԴԵՍՊԱՆ
ՄՈՀԱՄՄԱԴ ՌԱՅԻՄԻ
(2012-2015 ԹԹ.)



Հանուն Աստծո

Ջերմագին ողջույններ հղելով՝ նախ անհրաժեշտ եմ համարում ամբողջ սրտով շնորհավորել հայ-իրանական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի առթիվ, ինչպես նաև այս կարևոր կոնֆերանսի շրջանակներում ողջույնի խոսքով հանդես գալու հրավերքի համար շնորհակալություն հայտնել ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Աբբաս Բադախշան Ջոհուրիին և ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության Մշակույթի կենտրոնի խորհրդական Սեյյեդ Հոսեյն Թաբաթաբայիին և նորանոր հաջողություններ մաղթել նրանց՝ դարավոր բարեկամ երկրների հարաբերությունների զարգացմանը միտված իրենց բոլոր նախաձեռնություններում:

Երկու հարևան երկրները՝ Իրանն ու Հայաստանը, և նրանց ժողովուրդը դարավոր բարեկամական և եղբայրական կապեր ունեն, իսկ աշխարհագրական դիրքը և պատմամշակութային առնչությունների առատությունն էլ իր հերթին նպաստավոր մթնոլորտ է ստեղծել երկուստեք փոխվստահության ձևավորման համար:

Հայաստանը՝ իբրև Կովկասի կարևոր երկրներից մեկը, իր աշխարհագրական, մշակութային, հասարակական, քաղաքական և տնտեսական պայմանների շնորհիվ ԻԻՀ-ն հարևանների հետ արտաքին քաղաքականության օրակարգում իր ուրույն և կարևոր տեղն է գրավում և, անկասկած, պիտի փաստել, որ ՀՀ անկախացումից ի վեր հայ-իրանական երկկողմ

հարաբերությունները տարեցտարի զարգացնել, իսկ տարբեր բնագավառներում համագործակցությունները կտրուկ աճ են գրանցել, ուստի վստահորեն կարող ենք ասել, որ տարբեր ոլորտներում հայ-իրանական համագործակցության կայացած մոդելը տարածաշրջանի մակարդակով հաջող համագործակցություն ձևավորելու լավագույն նմուշն է:

Իմ դիվանագիտական առաքելության տարիներին Հայաստանի կառավարությունն Իրանի նկատմամբ իր բարի ու դրական մտադրություններն ապացուցելու համար ջանքեր չի խնայել, որ վերացնի բոլոր խանգարող խոչընդոտները, անգամ եթե դրանք շատ անձնական ու երկրի ներքին բաղաբաղանությունն են առնչվել: ՀՀ-ը միշտ սիրահոծար պաշտպանել է ԻԻՀ-ի դիրքորոշումները:

Տնտեսական հարաբերությունների առումով պետք է նշեմ, որ որոշ տնտեսական և տարածաշրջանային պահանջներն ու պայմանները ստիպում էին, որ հնարավորինս արագ ընթացք տրվի այնպիսի ռազմավարական նախագծերի, ինչպիսիք են երկու երկրներն իրար կապող տրանսպորտային և երկաթուղային ճանապարհի, Արաքս գետի հիդրոէլեկտրակայանի, էլեկտրահաղորդման երրորդ գծի, նավթամթերքի խողովակաշարի կառուցումը:

Ինչպես գիտենք, երկու երկրների քաղաքակրթության, պատմության, մշակույթի և տնտեսական ընդհանրություններն ու նրանց ձեռքբերումների պատմությունը երկուստեք առավել ճանաչելի դարձնելն այսօր առավել մեծ նշանակություն ունի:

Իմ դիվանագիտական առաքելության տարիներին, երբ ծանոթացա Ֆիրդուսու «Շահնամեի», Խայյամի, Հաֆեզի, Սաադիի ու Մոլանայի մասին գրված հայ մտավորականության

բարձրարժեք ստեղծագործություններին, ինչպես նաև ծանոթանալով հայ հարուստ գրականությանը՝ մեծ համակրանք սկսեցի տածել հատկապես 10-րդ դարի հոգևորական և միստիկ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու արժեքավոր գրական կոթողների հանդեպ և կարդալով նրա «Մատյան ողբերգության» գլուխգործոցը՝ հասկացա, որ այս միստիկ բանաստեղծը հայ գրականության կարևոր դեմքերից մեկն է:

«Մատյան ողբերգությունում» Նարեկացու ամենացայտուն և տարբերակիչ առանձնահատկությունը՝ ողբը նկարագրելու, ստեղծարար լուծումներ գտնելու, իր ուրույն գրական ոճը մատուցելու, մարդ արարածին բառսային աշխարհի կապանքներից ազատագրելու և դոգմատիզմի ու սխոլաստիկ քրիստոնեության շղթաները կոտրելու, միայն իրեն հատուկ տաղանդի մեջ է: Նարեկացին մարդ արարածին համարում է Աստծո էությունն ամբողջությամբ արտացոլող հայելի, ով սատանայական ու մարմնական դավադրությունների արդյունքում հեռացել է իր Արարչից:

Համեմատելով Նարեկացու ողբի թեմաների ընտրությունն ու ընդհանուր բովանդակությունն իսլամի տարածման առաջին դարից մեզ հասած կոթողների հետ, ինչպիսին է, օրինակ՝ «Նահջուլբալադեն», իսլամական կոթողներից նրա ազդեցություն կրելը ակնհայտ է դառնում:

Վերջում ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնելով՝ հուսով եմ, որ երկու դարավոր բարեկամ երկրները՝ Իրանն ու Հայաստանը, միշտ հպարտ ու գլուխները բարձր կշարունակեն իրենց՝ դարերից եկող և տարածաշրջանում էտալոնի վերածված բարեկամությունը:

Շնորհակալ եմ ցուցաբերված ուշադրության համար:



Հանուն Աստծո

Հայաստանի հերոսածին ժողովուրդ,

Ողջունում և շնորհավորում եմ Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև ջերմ և բարեկամական հարաբերությունների հաստատման 30-ամյակին նվիրված հանդիսության կապակցությամբ: Հարկ եմ համարում շնորհակալություն և երախտագիտություն հայտնել բոլոր նրանց, ովքեր քայլեր են ձեռնարկել երկու երկրների նպատակների իրագործման ուղղությամբ: Բարձրյալ Տիրոջից բոլորի համար հայցում եմ հաջողություն՝ երկու երկրների համագործակցության ընդլայնման գործում գործադրված ջանքերում:



Գիտաժողովի հարգելի մասնակիցներ,

Բազմադարյա պատմություն ունեցող հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախացմամբ և 30 տարի առաջ՝ 1992 թվականի փետրվարի 9-ին, դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ պատմության նոր փուլ թևակոխեցին:

Հայաստան-Իրան հարաբերությունները հիմնվում են փոխադարձ հարգանքի վրա, սակայն պետք է արձանագրել՝ դեռևս ամբողջովին չօգտագործված ներուժ են պարունակում:

Չնայած բազմադարյան պատմությանը՝ հայ և իրանցի ժողովուրդները միմյանց ճանաչելու, տարբեր ոլորտներում կապերի ամրապնդման կարիք ունեն:

Այդ կարևոր ոլորտների շարքում է գիտության, մշակույթի բնագավառը, և այսօրվա գիտաժողովը ևս մեկ քայլ է, որը նպաստում է համագործակցությանը և ճանաչողականությանը:

Հայացք նետելով անցած 30 տարիներին՝ աչքի են ընկնում բազմաթիվ ձեռքբերումներ ու հաջողություններ, քաղաքական ու տնտեսական կապերի ամրապնդում, համագործակցության նորանոր բնագավառների բացահայտում:

Կյանքի են կոչվել և ներկայումս իրականացվում են տարածաշրջանային նշանակություն ունեցող նախագծեր, ինչպես օրինակ՝ Պարսից ծոց-Սև ծով աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող նախագիծը, հյուսիս-հարավ առանցքի ձևա-

վորումը: Միաժամանակ ընդլայնվում է համագործակցություն Հայաստանի մարզերի և Իրանի նահանգների միջև:

ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության ողջ անձնակազմի և անձամբ իմ անունից թույլ տվեք ողջունել «Հայաստան-Իրան պատմական անցյալը և ներկան» միջազգային գիտաժողովի մասնակիցներին: Ակնհայտ է, որ Հայաստան-Իրան դիվանագիտական հարաբերությունների հաստատման երեսունամյակին նվիրված այս գիտաժողովը կարևոր միջոցառում է, և վստահ եմ, որ նման գիտաժողովներ պետք է ոչ միայն նվիրված լինեն հատուկ իրադարձությունների, այլ շարունակական բնույթ կրեն և պետք է օգտագործվի գիտական ներուժը, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկու պետությունների գիտական հաստատությունների, համալսարանների միջև համագործակցության բազմաթիվ համաձայնագրեր են ստորագրվել, այսինքն՝ առկա է գիտական բնագավառում համագործակցության իրավական բազա:

Մեկ անգամ ևս ողջունելով գիտաժողովի հարգելի մասնակիցներին՝ մաղթում եմ բեղմնավոր և արդյունավետ աշխատանք:

ՀՀ-ՈՒՄ ԻԻՀ ԴԵՍՊԱՆ
ԱԲԲԱՍ ԲԱԴԱԽՇԱՆ ԶՈՀՈՒՐԻ
(2020 Թ.-ԻՑ ԱՌ ԱՅՍՕՐ)



Հանուն Աստծո

Հարգելի դեսպաններ, հարգելի գործընկերներ, հարգելի գիտնականներ, տիկնայք և պարոնայք

Ուրախ եմ Ձեզ հետ ներկա գտնվելու՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին նվիրված համաժողովին:

Շնորհակալություն եմ հայտնում մեծարգո արտաքին գործերի նախարարներին այս համաժողովին ուղղված ուղերձ հղելու, կազմակերպիչների ջանքերի, ինչպես նաև համաժողովին ձեր ակտիվ մասնակցության համար:

Երեսուն տարի առաջ՝ 1992 թ. փետրվարի 9-ին, նոր էջ բացվեց Իրանի և Հայաստանի պատմական հարաբերությունների գրքում, և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունն ու նորանկախ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին, որոնք միշտ եղել են բարեկամական և հիմնված բարիդրացիության վրա:

Այս երեք տասնամյակների ընթացքում երկու ժողովուրդների միջև բարեկամության և բարիդրացիության վաղեմի ավանդույթը ամուր հիմք է հանդիսացել փոխըմբռնման, քաղաքական փոխգործակցության և, հետևաբար, երկկողմ հարաբերությունների ամրապնդման համար և օգնել մեզ հարթահարելու բազմաթիվ վայրիվերումներ: Այսօր մեր կառավա-

ությունները, օգտվելով երկու երկրների ժողովուրդների մշակութային կապերի արդյունք հանդիսացող այս արժեքավոր կապիտալից, ավելի հաստատակամ քայլերով մտածում են հարաբերությունները առավել խորացնելու և նոր ոլորտներում համագործակցություն հաստատելու մասին: Տարածաշրջանի վերջին զարգացումներն իրենց հերթին անխուսափելի են դարձրել այս ուղղությամբ երկու երկրների ջանքերի կրկնապատկումը և նոր հորիզոններ են բացել մեր առջև:

Մենք նաև գտնվում ենք Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակի տարեդարձի նախաշեմին: Քառասուններեք տարի առաջ այս օրերին Իրանի ժողովուրդը փառավոր հեղափոխության հաղթանակին ուղղված իր վերջին քայլերն էր ձեռնարկում, որն էլ բոլորի կողմից ընդունվում է, որպես քսաներորդ դարավերջի մեծ իրադարձություն:

Ուրբաթ օրը՝ փետրվարի 11-ին, նշելու ենք Իրանի Իսլամական հեղափոխության հաղթանակի 43-րդ տարեդարձը ավելի լավ ապագայի ակնկալիքով, Իրանի ողջ նվիրյալ ժողովրդի հանդեպ պատասխանատվության զգացումով և մեր պարտականությունները իրագործելու ուղղությամբ ավելի մեծ ջանքեր գործադրելու հանձնառությամբ, հատկապես Հայաստանի հետ հարաբերությունները ամրապնդելու գործում:

Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանի պաշտոնը ստանձնելու օրվանից անցել է շուրջ երկու տարի, և չնայած բազմաթիվ վայրիվերումներին, որոնց ականատեսը եղանք, այժմ, երկու կողմերի համատեղ ջանքերի լույսի ներքո ավելի քան երբևէ լիահույս եմ երկու երկրների հարաբերությունների ավելի լավ ապագայի հարցում:

Այժմ, համառոտ կներկայացնեմ իմ տեսակետները երեք ոլորտներում հարաբերությունների վիճակի և առաջիկա անհրաժեշտությունների մասին:

Քաղաքական հարթությունում երկու երկրներն էլ գտնում են, որ շատ լավ հարաբերություններ ունեն: Այս լավ քաղաքական հարաբերությունները պահպանելու համար անհրաժեշտ է, որպեսզի համատեղ ջանքեր գործադրվեն, հատկապես երկու երկրների ղեկավարների միջև շարունակական խորհրդակցությունների միջոցով: Վերջին տարիների զարգացումները պետք է մեզ հանգեցնեն այն եզրակացությանը, որ տարածաշրջանի և երկկողմ հարաբերությունների կարևոր հարցերի շուրջ շարունակական խորհրդակցություններն ու միակարծությունը արդյունավետ է և, իհարկե, անհրաժեշտ: Այս առումով, մասնավորապես երկու երկրների միջև ռազմավարական երկխոսությունների մեկնարկը, որի շուրջ արդեն իսկ պայմանավորվածություն է ձևավորվել, կլինի օգտակար և արդյունավետ:

Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը Կապանում գլխավոր հյուպատոսություն հիմնելու վերաբերյալ վերջերս կայացրած իր որոշումով, որի նախապատրաստական աշխատանքները վերջնական փուլում են, հստակորեն արտահայտել է իր տեսակետը տարբեր ոլորտներում Հայաստանի հետ հարաբերությունները ընդլայնելու կարևորության վերաբերյալ:

2018 թվականին Իրանը և Եվրասիական տնտեսական միությունը համաձայնության են եկել երկու կողմերի միջև արտոնյալ առևտրային համաձայնագրի շուրջ, որն ակնհայտ ազդեցություն է ունեցել առևտրի աճի վրա: Վերջին մեկ տարվա ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պաշտոնյաները, երկու երկրների միջև առևտրաշրջանառությունը տարեկան 1 միլիարդ դոլարի հասցնելու ջանքերը դիտարկել են, որպես իրագործելի

նպատակ: 2021 թվականին, 2020 թվականի համեմատ, ակա-
նատես եղանք երկկողմ առևտրի ծավալների զգալի աճի:

Այս աճը վկայում է այն մասին, որ առաջիկա տարիներին
ավելի մեծ ջանքեր գործադրելու դեպքում, կիրականացվի
առևտրաշրջանառության ծավալը տարեկան 1 մլրդ դոլարի
հասցնելու նպատակը, ինչն էլ նշանակում է, Հայաստանի ար-
տաքին առևտրում Իրան-Հայաստան առևտրի մասնաբաժինը
կհասնի շուրջ տասը տոկոսի:

Երկու կողմերի համագործակցությունը ենթակառուցված-
քային հարցերում, ինչպիսիք են էներգետիկան և տրանսպոր-
տը, ամուր հիմք են ստեղծում ոչ միայն երկու երկրների միջև
տնտեսական հարաբերությունների ընդլայնման, այլև տարա-
ծաշրջանում կայունության և անվտանգության պահպանման
համար, որին մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք: Այ-
սօր, Հայաստանի տարածքով անցնող հյուսիս-հարավ
տրանսպորտային նախագծի իրականացման արագացումը
դարձել է ընդհանուր նպատակ, կայուն և հուսալի տրանս-
պորտային ուղիների շահագործման միջոցով երկու երկրների
շահերը ապահովելու համար: Բացի այդ, տարածաշրջանային
և համաշխարհային մակարդակներում առևտրային փոխա-
նակումների առատ կարողությունները անխուսափելի են
դարձրել Պարսից ծոց-Սև ծով տարանցիկ միջանցքի հնարա-
վորինս արագ գործարկումը: Հայաստանի տարածքով անցնող
հյուսիս-հարավ ճանապարհը կարող է կարևոր օղակ հանդի-
սանալ ռազմավարական այս երթուղու համար: Այս ռազմա-
վարական նպատակի իրագործումը պահանջում է լուրջ
վճռականություն և ջանքերի գործադրում մեր կողմից: Հուսով
ենք, որ հայացք նետելով ապագային և ընդլայնելով գործա-

դրվող ջանքերը, ականատեսը կլինենք Հայաստանի դիրքերի
ամրապնդմանը այս տարանցիկ շղթայում:

Երրորդ և վերջին կարևոր խնդիրն է հասարակայնության
հետ կապերի, գիտության, տեխնոլոգիաների և մշակույթի
ուղորտներում համագործակցությունը, որի մասին, կարտա-
հայտվեմ օրեր առաջ հանդիպած մի հարգարժան հյուրի՝ խոս-
քերով: Նա գտնում էր, որ պետք է կոտրվեն այն սուբյեկտիվ
պատնեշները, որոնք անտեսանելի պատի պես խանգարում
են երկու երկրների ժողովուրդների, երկու երկրների մտավո-
րականների և գիտնականների միջև շփումներին: Այս պատը,
եթե այն կա, անիրական է և այն միայն մեր մտքում է: Մենք
պետք է բոլոր օգտակար և գործնական ուղորտներում ջանքեր
գործադրենք հարաբերությունների ընդլայնման ուղղությամբ:
Մեր ցամաքային և օդային սահմանները պետք է լինեն ավելի
ակտիվ և դյուրին: Երկու երկրների մտավորականները, գիտ-
նականները և մշակույթի գործիչները պետք է ավելի լավ ճա-
նաչեն մյուս երկրի հնարավորություններն և կարողություննե-
րը: Գործարարները պետք է ավելի լավ օգտագործեն առկա
հնարավորությունները: Երկու երկրների ժողովուրդները
պետք է ավելի շատ փոխայցեր կատարեն:

Իրանի և Հայաստանի ժողովուրդները մշտապես ապրել և
ապրելու են կողք կողքի: Անկախ ներքին և արտաքին տարբեր
խնդիրների վերաբերյալ մեր հայացքների և համոզմունքների
բազմազանությունից և տարբերություններից, Իրան-Հայաս-
տան հարաբերությունների ամրապնդմանն ուղղված ջանքերը
համարում եմ հայրենասիրական գործ:

Հաջողություն, բարգավաճում և բարօրություն եմ մաղ-
թում Իրանի և Հայաստանի ժողովուրդներին, իսկ երկու երկր-
ների հարաբերություններին՝ ավելի լուսավոր ապագա:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ, պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
Իրանի բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող,
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
իրանագիտության ամբիոնի դոցենտ
Էլ. փոստ՝ iskandaryan@sci.am
DOI: 10.56813/2953-786X-2022.2-95

ԻՐԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ
1991-2021 թթ¹.

Ներածություն

Սույն հոդվածը վերաբերում է Հայաստան-Իրան հարաբե-
րություններում տեղ գտած վայրիվերումներին և դրանց ազդե-
ցությանը Հայաստանի քաղաքացիների դիրքորոշումների
վրա: Աշխատանքը հնարավոր է եղել իրականացնել ի շնոր-
հիվ Հայաստանում գործող երկու կառույցների՝ Հետազոտա-
կան ռեսուրսների կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ) և Միջազ-
գային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) իրականացրած
բազմաթիվ սոցիալոգիաների: Այս հարցումները և հոդվածում
առկա վերլուծություններն ակնհայտորեն ցույց են տալիս մեր
հասարակությունում առկա սպասումները հարավային հա-
րևանի նկատմամբ և այդ սպասումների չիրականանալու ազ-
դեցության չափը ժողովրդի վրա: Ակնհայտ է, որ հանրությունն
ազդվում է հիմնականում տեղեկատվական հոսքերից ելնելով:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆի-
նանսական աջակցությամբ՝ 21T-5F218 ծածկագրով գիտական թեմայի շրջա-
նակներում:

Եթե 1990-ականներին այդ հոսքերը հիմնականում մատուցվում էին պետական լրատվամիջոցների կողմից, հարմարեցնելով պետական ինստիտուտների որդեգրած քաղաքականությանը, ապա տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և լրատվականների ու առավել ևս սոցիալական ցանցերի բազմազանեցման արդյունքում, տեղեկությունները ոչ միայն հնարավոր չէր վերահսկել, այլ նաև շատ հաճախ, հատկապես հայ-ադրբեջանական պատերազմական գործողությունների ժամանակ այդ տեղեկությունները խեղված էին ներկայացվում սոցիալական հարթակներում և ժողովրդի մոտ առաջացնում ոչ ճիշտ գնահատական: Հարկ է նաև արձանագրել, որ Խորհրդային Միության ժամանակաշրջանում խիստ սահմանափակ են եղել հարևան Իրանի հետ շփումները և մեր հասարակության մոտ ակնհայտորեն նկատվում էր, ոչ ամբողջական տեղեկատվություն հարևան երկրի, նրա շահերի ու նպատակների մասին:

Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանի անկախությունը ճանաչեց 1991 թ. դեկտեմբերի 25-ին: 1992 թ. փետրվարի 9-ին, Թեհրանում ստորագրվեց հռչակագիր Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ: Այդ պահից սկսած Իրանը լիարժեք իրավունք էր վերապահում իր ազդեցության տարածմանն ուղղված քայլեր իրականացնել Հայաստանում, ինչպես դա գուցահեռաբար անում էր նաև Կովկասի մյուս երկու հանրապետություններում: Պետք է արձանագրենք, որ նման մրցավազքի մեջ ներգրավվեց նաև Թուրքիան: Մերձավոր ու Միջին Արևելքի այս երկու խոշոր պետությունները բախման մեջ մտան ազդեցության տարածման նպատակով, որտեղ

Թուրքիան, ըստ էության, ներկայացնում էր նաև Արևմուտքի շահերը:

Իրանը, համեմատած Թուրքիայի, չունեի ֆինանսական մեծ միջոցներ, քանի որ փորձում էր վերականգնել 1980-1988 թթ. իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները՝ միևնույն ժամանակ գտնվելով ԱՄՆ-ի, հետագայում նաև ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի պատժամիջոցների տակ: Թուրքիան չէր ենթարկվել նմանատիպ ցնցումների և ուներ տնտեսական զարգացման համեմատաբար ավելի մեծ հնարավորություն, ինչը օգտագործեց մեծացնելու իր ազդեցությունը, ինչպես Կովկասում այնպես էլ Միջին Ասիայում: Հայաստանը և Թուրքիան ունեին մի շարք բարոյահոգեբանական և ռազմավարական խնդիրներ, ինչը դժվարեցնում էր Թուրքիայի ազդեցությունը Հայաստանում: Այսպիսով, Իրանի համագործակցությունը Կովկասում ստացվեց հիմնականում Հայաստանի հետ: Հայաստանը ու Իրանը, ըստ էության՝ դարձան բնական դաշնակիցներ, քանի որ տարածաշրջանում երկուսին էլ հուզող մի շարք խնդիրներ համընկնում էին: Հատկանշական է, որ Հայաստանի կառավարող էլիտան շատ արագ կողմնորոշվեց և հայ-իրանական հարաբերություններին տրվեց ամենաբարձր մակարդակը, ինչն ապացուցվում է ՀՀ արտգործնախարարի՝ Իրան կատարած առաջին այցելությամբ, և այն հանգամանքով, որ հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի նախագահի պաշտոնը վստահվեց ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանին: Այսինքն, հայ-իրանական հարաբերությունները գտնվում էին փոխնախագահի ամենօրյա ուշադրության տակ: Իրանական կողմից աշխատանքները համակարգում էր ԻԻՀ կենտրոնական բանկի նախագահը:

Հայ-իրանական ձևավորվող հարաբերություններին մեծ կարևորություն էր տալիս ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ով այդ մասին նշեց 1992 թ. մարտի 22-ին՝ Հայոց համագրային շարժման 4-րդ համագումարում. «Իրանի հետ հարաբերություններում որևէ բարդություն չի նկատվում: Ընդհակառակը, կողմերը ունեն նույնիսկ ընդհանուր քաղաքական շահեր, այն էլ՝ պատմական հակասությունների բացակայության պայմաններում, որը չափազանց նպաստավոր հանգամանք է հայ-իրանական հարաբերությունների զարգացման գործում: Գոհունակությամբ պետք է նշել, որ վերջին շրջանում Իրանի հետ հարաբերությունները զարգանում են բնականոն, արագացված ընթացքով և, վստահ եմ շուտով մենք կզգանք այդ հարաբերությունների իրական արդյունքները» (Տեր-Պետրոսյան, 2006, էջ 278-279):

1992 թ. փետրվարի 28-ին առաջին անգամ պաշտոնական այցով Երևան ժամանեց ԻԻՀ արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին: ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ հանդիպման ժամանակ Վելայաթին ներկայացրեց Իրանի պաշտոնական դիրքորոշումը, առ այն, որ Իրանը խոստանում է օժանդակել շրջափակման մեջ գտնվող Հայաստանին՝ իր տարածքով աշխարհի հետ հաղորդակցվելու համար: Իրանի արտաքին գերատեսչության ղեկավարը շեշտեց, որ Հայաստանին այլևս չեն սպառնա ցամաքային շրջափակումները (Բայրուդյան, 2004, էջ 37):

Բնականաբար, սա չէր կարող իր ազդեցությունը չունենալ նաև Հայաստանի բնակչության վրա, որն Իրանին ընդունում էր որպես բարեկամ երկիր: Արցախյան առաջին պատերազմի ընթացքում Իրանը հանդես եկավ միջնորդական առաքելությամբ և որոշակի հարցեր նրա մասնակցությամբ հնարավոր

եղավ լուծել: Դրանց շարքին էին դասվում Թեհրանի ջանքերով 1992 թ. մարտի 15-ին մի հայտարարագրի ստորագրումը, որով ժամանակավոր զինադադար էր հաստատվում, կատարվում էր գերիների փոխանակում և վերադարձվում էին զոհվածների աճյունները: Այդ զինադադարը երկարացնելու նպատակով մարտի 19-ին Իրանի արտգործնախարարը շտապեց Երևան, իսկ նրա տեղակալը՝ ԼՂՀ: Այնուհետև, նախարարը մեկնեց Ադրբեջան, ապա՝ կրկին Երևան: Սակայն պետք է արձանագրենք, որ ԻԻՀ իշխանությունները միշտ էլ պաշտոնապես պաշտպանել են Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարցը: Այդուհանդերձ, մի բան է պաշտոնական հայտարարությունը, մեկ այլ բան է, թե ինչն է բխել իրենց շահերից: Ակնհայտ էր, որ երբ Կովսականի և Ջրականի տարածքները հայկական ուժերի հսկողության տակ էին, Իրանն այդքան էլ շատ զինված ուժեր չէր պահում սահմանների այդ հատվածում: Սա խոսում է այն վստահության մասին, որ գրանցվել էր մեր երկու երկրների միջև:

Հայաստանը, Արցախյան առաջին պատերազմի ընթացքում գտնվելով Ադրբեջանի և Թուրքիայի շրջափակման մեջ, Իրանին դիտարկում էր իբրև փրկության մի ուղի, որով հնարավոր կլիներ շրջափակման մեջ հայտնված մի ողջ ժողովրդի հանել ծանր վիճակից: Առաջին հերթին Հայաստանին անհրաժեշտ էր հաց և վառելիք, որը փորձում էր ստանալ նաև Իրանից: 1993 թ. հայտնի դարձավ, որ ԻԻՀ կառավարությունը հայ համայնքի օժանդակությամբ ձեռք է բերել շուրջ 1000 հատ «Ալադին» վառարան և որոշակի քանակի նավթ, որը պետական օգնության անվան տակ պետք է փոխանցվեր Հայաստանին (Բսկանդարյան, 2016, էջ 26): Բնականաբար, այս տեղեկու-

թյունը շատ արագ տարածում գտավ հասարակության մեջ և ժողովուրդը սկսեց Իրանին դրական լույսի ներքո դիտարկել:

Առաջին պատերազմից հետո վերքերն ամոքելու, տնտեսական հարաբերությունների զարգացման շրջանն էր: Այս ընթացքում կառուցվեց Հայաստան-Իրան կապող ցամաքային կամուրջը, ինչը նպաստեց Հայաստանի և Իրանի քաղաքացիների իրար ճանաչելու գործընթացին, ակտիվացան Երևան-Թեհրան օդային կապի աշխատանքները, հայկական շուկայում հայտնվեցին իրանական առավել մատչելի ապրանքները, որով հայ հասարակության մեջ առաջացավ թյուր կարծիք իրանական ապրանքների նկատմամբ:

Թեպետ Հայաստան-Իրան առևտրաշրջանառությունը մեծացնելու բոլոր նախադրյալները կային, սակայն մինչ այժմ առևտրաշրջանառությունը, բոլոր ղեկավարների կողմից որակվել է որպես ոչ բավարար: Ըստ էության, Իրանի բարդ օրենսդրական դաշտը, հարկային համակարգը չեն նպաստում օտար արտադրանքի մուտքին իրանական շուկա: Ուսումնասիրելով ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության բաց նյութերը² (ՀՀ ԱՎՕ) ակնհայտ է դառնում, որ ՀՀ անկախության շրջանում Իրանը միշտ շատ ավելի ապրանքներ է կարողացել ներմուծել հայկական շուկա, քան Հայաստանը՝ 80 միլիոնանոց իրանական շուկա, այն դեպքում, որ Հայաստանը բազմաթիվ անուն ապրանքներ է արտահանում ՌԴ, ԱՄՆ, Եվրոպա և անգամ Չինաստան, սակայն Իրանի հետ մեր առևտրաշրջանառության առյուծի բաժինը կազմում է էներգետիկան: Այս մասի մատնանշել էր նաև ՀՀ երկրորդ նախագահ

² ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Արտաքին առևտրի տվյալների բազա, [http://www.armstat.am/am/index.php?nid=380&thid\[\]=364&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC&offset=5](http://www.armstat.am/am/index.php?nid=380&thid[]=364&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC&offset=5):

Ռ. Քոչարյանը. «Հայ-իրանական հարաբերություններում էներգետիկան հանդիսանում է այն շարժիչ ուժը, որ կարող է իր հետևից տանել մնացած բոլոր ոլորտները» (Հայաստանի Հանրապետության, 2002), բայց ցավոք այդպես չեղավ, մինչև այժմ էլ միևնույն է էներգետիկան է մնում հիմնական համագործակցության ոլորտը: Վերը նշած բոլոր փաստերը չէին կարող չազդել ՀՀ հասարակության վրա, որը այս ամենի մասին ստանում էր առաջնային տեղեկություն պաշտոնական հեռուստառադիոյի թողարկումներից:

Հայաստանի հասարակությունը 1990-ականներից և մինչև 2000-ականների վերջերին իր տնտեսական զարգացումը և անվտանգությունը կապում էր ՌԴ-ի և Իրանի հետ: Փաստենք, որ Հայաստանի քաղաքացիները նման վերաբերմունքի ինդեքսը գրանցվել է նաև Միջազգային հանրապետական ինստիտուտի հարցումների արդյունքում, որտեղ ի թիվս այլ հարցադրումների բնակչությանը տրվել է նաև մեկ հարց. «Ինչպե՞ս են վերաբերվում Հայաստան-Իրան հարաբերություններին»: Հարցախույզը իրականացվել է 2006 թ. մայիսին և հարցվածների 86 %-ը դրական է համարել Հայաստան-Իրան հարաբերությունները և միայն 9 %-ն են համարել անբավարար (IRI poll, 2006, p. 34): Հարցվածները դիտարկել են, որ ՌԴ-ից հետո հաջորդ բարեկամ երկիրը Իրանն է: Իրանի նկատմամբ հայ ժողովրդի մեծ համակրանքին էր անդրադարձել նաև իրանցի վերլուծաբան Վալի Խալեջին իր գիտական աշխատություններում, որտեղ նա նշում է, որ Հայաստանում կան անգամ հակառուսական տրամադրություններ, հակաամերիկյան, սակայն չկան հակաիրանական տրամադրություններ և դա համապատասխանում էր իրականությանը, ինչին նպաստում էր նաև Հայաստանում ձևավորված իրանագիտական դպրոցը ևս:

Սակայն 2016 թ. բռնկված քառօրյա պատերազմի ընթացքում Իրանի որդեգրած քաղաքականությունը, դրանից հետո տնտեսական մակարդակում զարգացում չապահովելը, տնտեսական մի շարք ծրագրերի թղթի վրա մնալը (Մեդրու ՀԷԿ), առևտրաշրջանառության ցածր մակարդակը, ազատ առևտրի գոտու ոչ ակտիվ գործակցումը, տարբեր հարցեր առաջացրեց Հայաստանի հասարակության շրջանում, որոնց ամեն անգամ առավել դժվարությամբ էին պատասխանում իրանագիտական դպրոցի ներկայացուցիչները:

2016 թ. ապրիլի 15-ին ՀՌԿԿ-ն հրապարակեց հետազոտության իր նյութերը, որտեղ մեր ուշադրությունը կրկին բևեռված էր Իրանի հետ համագործակցության խնդրին: Հարցախույզին մասնակցել էր 4114 քաղաքացի, ըստ որի՝ հարցվածներից 48%-ը գտել էր, որ իրանցի գործարարի հետ կարող է զբաղվել բիզնեսով, այսպիսով՝ իրանցիների հետ բիզնես անելու ցանկություն ունեցողները զբաղեցրել են 8-րդ հորիզոնականը (CRRC, 2016, p. 55):

2017 թ. ՀՌԿԿ-ն ևս իրականացրել էր հարցախույզ, որին մասնակցել էր 1648 չափահաս քաղաքացի: Նրանց 64 %-ը Հայաստանի թիվ մեկ բարեկամ երկիր էր համարել ՌԴ, չորրորդ տեղում էր հայտնվել Իրանը, վերջինիս օգտին խոսել էր քաղաքացիների 3 %-ը: Ի դեպ քաղաքացիների 3 %-ը նաև նշել էին, որ Հայաստանը բարեկամ չունի: Հարցվածներից 59 %-ը գտնում էր, որ իրանցի գործարարի հետ կարող է զբաղվել բիզնեսով, իրանցիները զբաղեցնում են 9-րդ տեղը այս հարցում (CRRC, 2017, p. 51):

Թե՛ Հայաստանի, թե՛ Իրանի հասարակություններում տարատեսակ հարցեր առաջացան 2018 թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո: Իրանական կող-

մում կային հարցեր, թե՛ որ ուղղությամբ է այսուհետ գնալու Հայաստանը: Իսկ Հայաստանի հասարակությունը ցանկանում էր տեսնել իրական տնտեսական համագործակցություն Իրանի հետ, ինչը կնպաստեր Հայաստանի տնտեսության աճին, որը սակայն կյանքի չէր կոչվում:

2018 թ. Նիկոլ Փաշինյանը թեպետ իր բոլոր հանրային ելույթներում խոսում էր Իրանի հետ հարաբերությունների սերտացման ծրագրերի մասին, այնուամենայնիվ երկրում գործընթացներ էին տեղի ունենում, որոնք երկու հանրություններում էլ երկակի կարծիք էին առաջացնում: Այս ընթացքում՝ Միջազգային հանրապետական ինստիտուտը 2018 թ. հուլիսի 23-ից օգոստոսի 15-ը իրականացրեց հարցախույզ, ըստ որի՝ Իրանի հետ համագործակցության դինամիկան կրկին նույն էր Հայաստանի հանրության շրջանում: Սակայն Իրանը բարեկամի իր պատվավոր 2-րդ տեղից իջել էր, գրանցելով 4-րդ հորիզոնականը (IRI poll, 2018, p.51), ի դեպ 2019 թ. ՀՌԿԿ-ի հարցումների հետ այս թիվը ևս համընկավ (CRRC, 2019, p. 51): Հարցվածների 87 %-ը Հայաստան-Իրան հարաբերությունները համարում էին դրական, 8 %-ը՝ բացասական: Բարեկամ երկրների շարքը գլխավորում էր Չինաստանը, Ֆրանսիան, Երևանը, 4-րդ տեղում էր Իրանը, 5-րդ տեղում ՌԴ-ն: ՄՀԻ-ի նույն հարցախույզի արդյունքում՝ Հայաստանի հասարակության 20 %-ը հավատում էր, որ Հայաստանի անվտանգության 20 %-ը հավատում էր, որ Հայաստանի անվտանգության 20 %-ը սպառնալիքի պարագայում Իրանը կաջակցի, հարցվածների 45 %-ն էլ գտնում էր, որ Իրանը կարող է տնտեսական լավ գործընկեր լինել (IRI poll, 2018, pp.52-53):

2018 թ. հոկտեմբերի 28-ին ՀՀ ժամանեց հակաիրանական խիստ հայացքներով հայտնի, ԱՄՆ-ի նախագահ Դ. Թրամփի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Բոլթոնը,

ինչը ոչ միանշանակ ընդունվեց Իրանում: Այդ այցից որոշ ժամանակ անց՝ ՀՀ վարչապետի պաշտոնակատար, վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանը ԱԺ-ում հնչեցրեց այն հայտարարությունը, թե «Հայ-իրանական սահմանը դե ֆակտո ամեն պահի կարող է փակվել՝ ԱՄՆ-ի և Իրանի միջև հարաբերությունների և աշխարհաքաղաքական իրավիճակի պատճառով» (Armeniasputnik.am, 2018)³:

Պետք է փաստենք, որ ՀՀ անկախությունից հետո բոլոր իշխանությունների վրա էլ եղել են արևմուտքի ճնշումները Իրանի հետ այդչափ սերտ հարաբերություններ ունենալու համար: Սակայն բոլոր մեր նախորդ իշխանություններին ակնհայտորեն հաջողվել է բացատրել, պարզաբանել, հատկապես ամերիկյան իսթեբլիշմենթին, Իրանի հետ ունեցած կապի կարևորությունը ՀՀ-ի համար, ինչպես նաև ԻԻՀ-ում հայ համայնքի առկայության հարցերը: Այս ամենի միջոցով ՀՀ իշխանությունները կարողացել են թե՛ ԱՄՆ-ի, թե՛ Իրանի հետ ունենալ դրական դինամիկայով հարաբերություններ:

2019 թ. փետրվարի 27-28-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը առաջին անգամ պաշտոնական այցով մեկնեց Իրան, հանդիպեց ԻԻՀ հոգևոր առաջնորդին, նախագահին, հայ համայնքի ներկայացուցիչներին: Քննարկվեց տնտեսական մի շարք ծրագրերի կյանքի կոչման անհրաժեշտությունը: Այցը լայնորեն լուսաբանվեց թե՛ Հայաստանում, թե՛ Իրանում: Միջազգային հանրապետական ինստիտուտի հաջորդ հարցախույզը տեղի ունեցավ 2019 թ. մայիսի 6-31-ը, որից պարզվեց, որ հարցվածների 89 %-ը գտնում էր, որ Իրանի հետ հարաբե-

³ Նիկոլ Փաշինյանը չի բացառում, որ Հայաստանի և Իրանի սահմանը կարող է փակվել, 1 նոյեմբերի 2018, <https://armeniasputnik.am/20181101/armenia-iran-sahman-15441453.html>:

րությունները լավ մակարդակում են, այսինքն՝ արձանագրվեց 2 % աճ, իսկ 3 %-ը հակառակ կարծիքն ունեին, այսինքն՝ այստեղ էլ 5 % նվազում գրանցվեց՝ նախորդ հարցախույզի համեմատությամբ: Հարցվածների 24 %-ը տեսնում էր Իրանին որպես քաղաքական գործընկեր, 2 %-ը՝ ոչ, 46 %-ը տեսնում էր որպես տնտեսական գործընկեր, 8 %-ը՝ ոչ (IRI poll, 2019 a, p. 50-52):

2019 թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ ժամանեց ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանին և փաստացի հայտարարվեց, որ Իրանը մտածում է անդամակցել ԵԱՏՄ-ին: Այդ առիթով նա մասնակցեց ԵԱՏՄ Բարձրագույն տնտեսական խորհրդի նիստին, և դրան զուգահեռ առանձին հանդիպում ունեցավ վարչապետի հետ, քննարկելով Հայաստան-Իրան հարաբերությունները: Հանդիպման ժամանակ քննարկվեց ԵԱՏՄ-Իրան ազատ առևտրի գոտի ստեղծելու, Հայ-իրանական տնտեսական համաժողովի, Մեդրին և Ազարակը Իրանի հաշվին գազիֆիկացնելու մասին հարցերը: Բնականաբար, ԵԱՏՄ նիստը մեծ իրադարձություն էր Հայաստանի համար, ինչը լուսաբանվեց գրեթե բոլոր ԶԼՄ-ներով: Հիշեցնենք, նաև, որ Հայաստանում այս շրջանում դեռ տիրում էր հետհեղափոխական էյֆորիան և յուրաքանչյուր նման միջոցառում դիտարկվում էր, որպես Հայաստանի զարգացմանը տանող իրական ճանապարհ:

Հենց այս շրջանում Միջազգային հանրապետական ինստիտուտը իրականացնում է իր հերթական հարցախույզը, որի արդյունքները թերևս կանխատեսելի էին. Հայաստանի և Իրանի հետ հարաբերությունների մակարդակը բարձր է գնահատում հարցվածների 93 %-ը, վատ՝ ընդամենը 1 %-ը. արձանագրենք, որ նման արդյունք, ըստ էության չէր գրանցվել Հայաստան-Իրան հարաբերությունների հիմնարկեթից ի վեր: Նույն

հարցվածների 51 %-ը Իրանին դիտարկել են որպես տնտեսական գործընկեր, 10 %-ը՝ ոչ (IRI poll, 2019 b, p. 76-78):

Սակայն Հայաստանի հասարակության վերաբերմունքում էական փոփոխություն գրանցվեց Արցախյան վերջին պատերազմի ժամանակ, Իրանի որդեգրած կրավորական քաղաքականության հետևանքով: Որքան էլ իրանագիտական դպրոցի ներկայացուցիչները փորձում էին բացատրել հանրությանը, որ Իրանը չունի որևէ լեգիտիմ իրավունք խառնվելու պատերազմին, հասարակությունը դժվարությամբ էր դա ընկալում, քանզի հասարակության մոտ ամրապնդված էր Իրանի բարեկամ երկիր լինելու հանգամանքը, և անգամ հարցախույզերի արդյուքները ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ Հայաստանի հասարակությունը ակնկալել է Իրանից ստանալ այնպիսի աջակցություն, ինչպես Թուրքիան էր աջակցում Ադրբեջանին: Եթե պատերազմի առաջին օրերին Հայաստանի համար նախատեսված զենքն ու զինամթերքը գալիս էր միայն Իրանով, քանի որ Վրաստանը ևս միացել էր թուրք-ադրբեջանական տանդեմի շրջափակման գործողությանը, ապա պատերազմի կեսերից սոցիալական հարթակներում լուրեր տարածվեց, որ Իրանը ևս փակում է իր ցամաքային սահմանը՝ տուրք տալով թուրք-ադրբեջանական ճնշումներն, նաև հաշվի առնելով Իրանի հյուսիսում բնակվող իր քաղաքացիների՝ ատրպատականցիների բողոքները (Jalilov, 2020): Միևնույն ժամանակ Իրանի բանակը, որը կանգնած էր անմիջական սահմանին, համալրվեց Իսլամական Հեղափոխության պա-

հապանների կորպուսի զորքերով և ծանր տեխնիկա մոտեցվեց սահմանին⁴:

Եթե Արցախյան առաջին պատերազմից հետո սոցիալական ցանցերը այնքան զարգացած չէին և հանրությունը հիմնական ինֆորմացիան ստանում էր հեռուստատեսությունից, ռադիոյից և մամուլից, որոնք, ըստ էության, որոշակի խմբագրում էին անցնում՝ հաշվի առնելով նաև երկրի արտաքին քաղաքական մարտահրավերները, ապա վերջին պատերազմից հետո, ակնհայտորեն հանրության մոտ եղած տրամադրություններն արագ փոփոխվեցին՝ սոցիալական ցանցերում հայտնված տարատեսակ նյութերից, հոդվածներից, տեսանյութերից հետո: Այդ տրամադրությունների վրա ազդող գործոններից մի քանիսը նշենք.

- 44 օրյա պատերազմի կեսերին հայտնի դարձավ, որ Հայաստանի սահմանները փակված են 4 կողմից էլ, դրա մասին խոսեց ՀՀ պաշտպանության այդ ժամանակվա նախարար Դավիթ Տոնոյանը:

- Թեպետ պատերազմի ընթացքում Իրանը խիստ անհանգստացած էր իր սահմանով մեկ ահաբեկչական խմբերի տեղակայմամբ, ինչի մասին իր ելույթում խոսեց նաև Հասան Ռոհանին⁵, սակայն պատերազմից հետո, նորընտիր նախագահ Էրրահիմ Ռայիսին՝ ի պատասխան Ալիևի շնորհավորանքին ԻԻՀ նախագահ ընտրվելու կապակցությամբ, Ալիևին

⁴ Iran Troops Deployed On Border Near Nagorno-Karabakh Conflict, <https://en.radiofarda.com/a/iran-troops-deployed-on-border-near-nagorno-karabakh-conflict/30911772.html>.

⁵ Dialogue Only Solution to Nagorno-Karabakh Dispute: President, 2020-10-10, <https://irangov.ir/detail/348820>.

շնորհավորեց «գրավյալ տարածքների ազատագրության»⁶, դրանք Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ վերադարձի և ընդհանուր սահմանի վերականգման կապակցությամբ: Ի դեպ 2022 թ. հուլիսի 19-ին ԻԻՀ հոգևոր առաջնորդը Թուրքիայի նախագահի հետ հանդիպման ժամանակ գոհունակություն հայտնեց «Ղարաբաղը Ադրբեջանի կազմ հետ վերադարձնելու կապակցությամբ», սակայն, միևնույն ժամանակ, արձանագրեց Իրան-Հայաստան սահմանի կարևորությունը Իրանի համար ու նշեց, որ «Իրանը չի հանդուրժի Հայաստան-Իրան հազարամյակներով առկա սահմանի փակմանն ուղղված որևէ գործողություն»⁷:

- Հայաստանում բավական վատ արձագանք գրանցվեց, երբ Իրանի դեսպանը ի թիվս 46 այլ դեսպանների այցելեց Շուշի:

- Ադրբեջանցի գեներալ Փոլադ Հաշիմովը, ով 2020 թ. հուլիսին տեղի ունեցած Տավուշյան մարտերի ժամանակ սպանվել էր, 2021 թ. ապրիլի 29-ին Իրանի իշխանությունների կողմից հետմահու պարգևատրվեց Ղասեմ Սոլեյմանիի շքանշանով⁸, ուշագրավ է, որ նրա ընտանիքը մի քանի օր անց

⁶ Raeisi sends message to Aliev, calls for boosting ties <https://en.mehrnews.com/news/176158/Raeisi-sends-message-to-Aliev-calls-for-boosting-ties>.

⁷ Military attack on northern Syria harmful to Turkey, region: Iran's Supreme Leader, 19 Jul, 2022 <https://en.isna.ir/news/1401042819309/Military-attack-on-northern-Syria-harmful-to-Turkey-region>.

⁸ Iranian envoy pays tribute to Azerbaijani martyr, Thursday, 29 April 2021, <https://iranpress.com/content/37834/iranian-envoy-pays-tribute-azerbaijani-martyr>.

հետ վերադարձրեց այդ շքանշանը Իրանին, նշելով, որ «Մեզ Իրանի տված շքանշանը հարկավոր չէ»⁹:

2021 թ. մայիսին Միջազգային հանրապետական ինստիտուտի հարցախույզի արդյունքում հանրության 62 %-ը Հայաստան-Իրան հարաբերությունները բնորոշեց լավ, 18 %-ը վատ (IRI poll, 2021a, p. 47): Հայ-իրանական հարաբերությունների հիմնարկերից ի վեր նման ցածր ցուցանիշ չէր արձանագրվել: Վստահ ենք, որ այս արդյունքների վրա ազդեցին պատերազմի ընթացքում և պատերազմից հետո Իրանի կողմից իրականացրած վերոհիշյալ գործողությունները: Հայաստանի հասարակությունը ցավագին էր ընդունում Իրանի կողմից արված նման յուրաքանչյուր քայլը:

Հրադադարի հաստատումից և փաստացի Հայաստանի պարտությունից հետո, Իրանում հստակ գիտակցեցին, որ այսուհետ Իրանի հյուսիսային սահմանները առավել պաշտպանելու խնդիր ունեն և, որ իրենք դուրս են մնում Կովկասում ընթացող զարգացումներից: Սրանով էր պայմանավորված Իրանի ակտիվացումը վերջին մեկ տարում, «Հյուսիս-հարավ» միջանցքի շուրջ քննարկումների մասով: Այս ծրագիրը, ըստ մեր կարծիքի, առավելապես պարունակում է քաղաքական ենթաշերտ և Հայաստանի համար նոր հնարավորությունների դուրս պետք է բացեր, որը Ադրբեջանն արհեստավարժ կերպով փորձում է խափանել Սյունիքի վրա իրականացրած հարձակումներով, որով խաթարում է այդ ծրագրի հաջող իրականացման համար այնքան անհրաժեշտ անվտանգությունը ու կայունությունը:

⁹ Iranın verdiyi mükafat bizə lazım deyil"-Polad Həşimovun anası Səmayə xanım, 03 May 2021, <https://moderator.az/cemiyyet/375878/iranin-verdiyi-mukafat-bize-lazim-deyil-polad-hesimovun-anasi-semaye-xanim/>.

2021 թ. կեսերին ԻԻՀ պաշտոնական որոշ հայտարարություններ առ այն, որ իրենք թույլ չեն տա Հայաստանի տարածքային ամբողջականության խախտում, պաշտոնական մակարդակով կարևորում էին Հայաստան Իրան ցամաքային սահմանը, ինչը որոշակի առումով շտկեց իրավիճակը, քանզի հասարակությունը այդ պահին նման էլույթների կարիք ուներ: 2021 թ. նոյեմբերին նույն կառույցը իրականացրեց հերթական հարցախույզը, որի արդյունքները հրապարակվեցին 2022 թ. հունվարին. Այսպիսով՝ հարցվածների 80 %-ը Հայաստան-Իրան հարաբերություններին վերաբերվել էին ընդհանուր առմամբ դրական և Իրանը զբաղեցրել է պատվավոր 2-րդ տեղը: Հարցվածների 23 %-ը գտնում է, որ Իրանը կարող է դառնալ Հայաստանի քաղաքական գործընկերը, նույն հարցվածների 40 %-ը գտնում է, որ Իրանը կարող է լինել տնտեսական գործընկեր, 31 %-ը գտնում է որ Իրանը կարող է Հայաստանի անվտանգությունը պահպանող գործընկեր լինել (IRI poll, 2021b, pp. 32-36): Հայաստանի անվտանգությունը պահպանող գործընկեր լինելու առումով Իրանը զիջում է միայն Ռուսաստանին և Ֆրանսիային: Հարցին, թե ո՞ր երկրների հետ պետք է լավացնել հարաբերությունները Հայաստանի զարգացման համար, հարցվածների 53 %-ը պատասխանել է ՌԴ, 35 %-ը՝ ԱՄՆ, 29 %-ը՝ Իրան:

Եզրակացություն

1. Հայաստանի հասարակության մեջ վերջին պատերազմից հետո աստիճանաբար թուլացան այն համոզմունքները, որ Իրանը ինչ-որ կերպ, անգամ իր շահերից ելնելով, կմիջամտի առկա խնդիրներին, այդ կասկածները բարձրաձայնվեցին

նաև հանրային հեռուստատեսությամբ՝ որոշ իրանագետների շուրթերով, և որոշակի մթնոլորտ ստեղծեց երկրում:

2. Իրանը Հայաստանի հետ կապված յուրաքանչյուր գործողություն առաջին հերթին քննարկում և իր դիրքորոշումները համաձայնեցնում է ՌԴ-ի հետ: Այսինքն՝ ակնհայտ է, որ Իրանը գտնում է, որ որոշումների կայացումը տեղի է ունենում Մոսկվայում, իսկ Հայաստանի պարագայում հիմնականում ներկայացվում են համաձայնության եկածի արդյունքները:

3. Ցավոք, վերջին 30 տարիների ընթացքում բաց թողնվեց այն եզակի հնարավորությունը, որը տնտեսական փոխաջակցության պարագայում կնպաստեր Հայաստանի տնտեսության զարգացմանը, իսկ այն իր հերթին մեծ ներդրում կունենար գիտատեխնիկական ոլորտի զարգացմանը, որի աջակցությամբ հայկական գիտական միտքը կստեղծեր այնպիսի պայմաններ, որոնք առավել ամուր կպահեին ինչպես Հայաստանի, այնպես էլ Իրանի սահմանները:

GOHAR ISKANDARYAN, PhD,
ASSOCIATE PROFESSOR

Head of Department of Iranian Studies, Leading Researcher
Institute of Oriental Studies, NAS RA
e-mail: iskandaryan@sci.am

DYNAMICS OF CHANGE IN ARMENIAN SOCIETY'S ATTITUDE TOWARDS IRAN: 1991-2021¹⁰

This article refers to the upheavals in Armenia-Iran relations and their impact on Armenian citizens. The work was made possible thanks to

¹⁰ The work was supported by the Science Committee of MESCS RA, in the frames of the research project № 21T-5F218.

the numerous surveys conducted by two organizations operating in Armenia: the Caucasus Research Resource Center (CRRC) and the International Republican Institute (IRI). These surveys and the analyzes in the article clearly show the expectations in Armenian society towards the southern neighbor, as well as the extent of the impact of the failure of these expectations on the people. It is obvious that the public is influenced mainly by information flows. In the 1990s the state media was the main source of the information, and the state used to shape the news according to its policy priorities. Nowadays, due to the development of information technologies, the mushrooming of news media and especially the expansion of social networks, the information is not only impossible to control, but also very often social platforms are used to spread disinformation and cause an incorrect understanding among the public, like it happened during the Armenian-Azerbaijani war.

After the 2020 war, the confidence of the Armenian society that Iran would somehow, even out of its own interests, intervene in the existing problems gradually faded. There were few official statements from the high-ranking Iranian leadership in 2021-2022 stating that Iran will not allow any violation of the territorial integrity of Armenia and emphasizing the importance of the Armenia-Iran land border. This development caused some positive dynamics in the attitude of the Armenian public, at least on an emotional level.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բայբուրդյան, Վ., *Իսլամական Հեղափոխության քառորդ դարը: Քաղաքակրթությունների երկխոսություն՝ Հայաստան-Իրան*, Միհր, 2 (46), 2004:
2. Իսկանդարյան, Գ., *Հայաստան Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո*, Երևան, 2016:
3. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Արտաքին առևտրի տվյալների բազա, <http://www.armstat.am/am/index.php?nid=->

380&thid[]=364&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC&offset=5:

4. Հայաստանի Հանրապետության պաշտոնաթերթ, 11.07.2002 թ.:
5. Տեր-Պետրոսյան, Լ., Ընտրանի, Երևան, 2006 թ.:
6. CRRC, 2016, Public Perceptions on Political, Social, and Economic issues in the South Caucasus Countries Some findings from the CRRC 2015 data April 15, Yerevan, Caucasus Barometer, https://www.crrc.am/wp-content/themes/crrc/barometer_files/presentations-2015.pdf?fbclid=IwAR3BdJEiZE6xPbDkSTQskdDwdgoiKAxnAdb-8W17SNNbKEDnjQ1IzNDa-9U.
7. CRRC, 2017, Public Perceptions on Political, Social, and Economic issues in the South Caucasus Countries Some findings from the CRRC 2017 data December 19, Yerevan, Caucasus Barometer, https://www.crrc.am/wp-content/themes/crrc/barometer_files/presentations-2017.pdf?fbclid=IwAR0iLnxQXdn3d_oxgvbqNhmyUCOqPHBDG-A_KJlcOkA2KipqdBu8vvMI9ZgM.
8. IRI poll, 2006, Armenia National Voter Study, <https://www.iri.org/wp-content/uploads/2006/05/2006-05-23-Armanian-20poll20presentation.pdf>.
9. IRI poll, 2018, Public Opinion Survey: Residents of Armenia, July 23–August 15, 2018, https://www.iri.org/wp-content/uploads/legacy/-iri.org/2018.10.9_armenia_poll_presentation.pdf.
10. IRI poll, 2019a, Public Opinion Survey: Residents of Armenia, May 6-31, https://www.iri.org/wpcontent/uploads/legacy/iri.org/armenia_poll_may_2019_final.pdf
11. IRI poll, 2019b, Public Opinion Survey: Residents of Armenia, September–October https://www.iri.org/wp-content/uploads/legacy/-iri.org/wysiwyg/iri_poll_armenia_september-october_2019.pdf.
12. IRI poll, 2021a, Public Opinion Survey: Residents of Armenia, May, https://www.iri.org/wp-content/uploads/2021/05/armenia_ppt_fina-

l.pdf?fbclid=IwAR2cHPJrVUUBWU2phXMYSV0sU-mYciyDQAoOMLf-HVm9jqk5bHfreW_R1KH0.

13. IRI poll, 2021b, Public Opinion Survey: Residents of Armenia, December, https://www.iri.org/wp-content/uploads/2022/01/Armenia-Final-PPT_31.01.2022_Eng.pdf.

14. Jalilov, O., Protestors In Northern Iran Demand Closure Of Border With Armenia Over Arms Transfer To Yerevan, October 3, 2020, <https://caspiannews.com/news-detail/protestors-in-northern-iran-demand-closure-of-border-with-armenia-over-arms-transfer-to-yerevan-2020-10-3-0/>.

ԱՐՄԵՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ, Բ.Գ.Ք.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,

Իրանի բաժնի գիտաշխատող

էլ. փոստ՝ armen.israyelian@gmail.com

DOI: 10.56813/2953-786X-2022.2-115

ԼՐԱՏՎԱՍԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐՈ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ներածություն

Վերջին տասնամյակում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ու «նոր մեդիայի» ի հայտ գալը զգալիորեն մեծացրել են լրատվամիջոցների դերը պետությունների հարաբերությունների ձևավորման և զարգացման գործում: Նոր մեդիայի դարում տեղեկատվական քաղաքականությունը երկրների արտաքին քաղաքականության առաջնահերթություններից է: Այն երկրները, որոնց հաջողվում է գործընկեր պետությունների նկատմամբ համակարգված տեղեկատվական քաղաքականություն մշակել և իրականացնել, ապա այդ երկրները հանրային դիվանագիտության միջոցով շոշափելի արդյունքներ են արձանագրում և նրանց նկատմամբ սովորաբար «տեղեկատվական գրոհ» կազմակերպելը բավական բարդ է լինում:

Ապատեղեկատվությունը, կամ «Fake news»-ն այսօր պետություններին սպառնացող մարտահրավերներից մեկն է: Խնդիրն այն է, որ բացի հասարակության շրջանում մեդիագրագիտության մակարդակի բարձրացումից, արդյունավետ

այլ գործիք գոյություն չունի պայթարելու 21-րդ դարի այդ սպառնալիքի չեզոքացման համար:

Հոդվածում Հայաստանի և Իրանի օրինակով ներկայացվում են երկու երկրների հարաբերություններում տեղեկատվության ոլորտում առկա խնդիրները, առաջարկվում՝ արդյունավետ համագործակցություն ձևավորելուն, ինչպես նաև ապատեղեկատվության տարածումը կանխելուն միտված համապատասխան գործողությունները:

Տեղեկատվության ոլորտում առկա խնդիրները

Հետխորհրդային շրջանում Հայաստանի և Իրանի միջև ձևավորված սերտ համագործակցությունը, փոխայցերի ընթացքում տարբեր ոլորտների ներկայացուցիչների միջև տեղի ունեցած ակտիվ շփումները, միջկառավարական հանձնաժողովների աշխատանքների արդյունքներով ձևավորված իրավապայմանագրային բազան միջպետական հարաբերությունների ձևավորման գործում շոշափելի արդյունք է տվել [Իսկանդարյան, 2015: 96]: Սակայն, պետք է արձանագրել, որ երկու երկրների հասարակությունների փոխճանաչման մակարդակի բարձրացմանն ուղղված բավարար քայլեր չեն կատարվել: Քանի որ Հայաստանի և Իրանի միջև տեղեկատվության ոլորտում համագործակցությունը բավականին թույլ է, անցնող տասնամյակների ընթացքում լրատվամիջոցներին ոչ միայն չի հաջողվել հանրային դիվանագիտության գործիքների օգտագործմամբ բարձրացնել փոխադարձ ճանաչողության մակարդակը, այլև հայ և իրանցի լրագրողների միջև համակարգված համագործակցության բացակայությունը նոր խնդիրներ է ստեղծել:

1. Հայաստանի ու Իրանի հասարակությունները հիմնականում միմյանց հետ շփվում են միջնորդավորված՝ այլ երկրների լրատվամիջոցների միջոցով: Հայաստանյան լրատվամիջոցներն Իրանի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում ստանում են արևմտյան և ռուսական աղբյուրներից, իսկ իրանական լրատվամիջոցները Հայաստանի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում ստանում են միջազգային մամուլից, իսկ հայ-աղբյուրաչափական հակամարտությանն առնչվող տեղեկատվությունը՝ աղբյուրաչափական մամուլից [Anaj.ir, 2021 (1)]: Բնականաբար, այդպիսի իրողության պայմաններում Արցախյան հիմնախնդրի, կամ միջուկային ծրագրի վերաբերյալ երրորդ կողմի աղբյուրները վերոնշյալ հարցերի վերաբերյալ համապարփակ օբյեկտիվ պատկեր չեն տալիս՝ թյուրիմացություն առաջացնելով հայ և իրանցի ընթերցողների շրջանում:

2. Չհամակարգված համագործակցության պայմաններում հայ և իրանցի լրագրողները տեղեկատվության իսկությունը ճշտելու հնարավորություն չեն ունենում: Այդ համատեքստում թերևս արժե ընդգծել հայ և իրանցի լրագրողների՝ համապատասխանաբար պարսկերեն և հայերեն լեզուների բավարար չափով չտիրապետելու հանգամանքը: Լրագրողները երբեմն ոչ դիտավորությամբ այնպիսի նյութեր են հրատարակում [Irna.ir (1), 2022], որոնք երկու երկրների հասարակություններին շրջանում անվստահության մթնոլորտ են ձևավորում: Նմանատիպ նյութերը խիստ սուբյեկտիվ մեկնաբանությամբ հայտնվում են նաև երրորդ կողմի մամուլում, դառնում՝ տվյալ երկրների փորձագետների շահարկման առարկա՝ վնասելով ինչպես Հայաստանի, այնպես էլ Իրանի շահերը:

3. Վերոնշյալ խնդիրների առկայությունը Հայաստանի և Իրանի հարաբերությունների խաթարմամբ շահագրգիռ երկրների և ուժերի առջև ապատեղեկատվություն տարածելու լայն դաշտ է բացում: Բացի Հայաստանի և Իրանի հասարակությունների շրջանում անվստահության մթնոլորտի ձևավորումից՝ «Fake news»-երի տարածման արդյունքում ձևավորվում է կեղծ օրակարգ, որի շուրջ երկու երկրների հասարակական-քաղաքական շրջանակները սկսում են դիսկուրս ծավալել: Այնուհետև լրատվամիջոցները լուսաբանում են այդ կեղծ օրակարգի շուրջ ծավալվող քննարկումները՝ ակամա նպաստելով ապատեղեկատվության տարածմանը [Anaj.ir, 2022 (2)]: Հայաստանի և Իրանի հարաբերությունների դեմ պարբերաբար կազմակերպվող «տեղեկատվական գրոհների» արդյունքում այնպիսի ընկալում է ձևավորվում, կարծես Հայաստանի և Իրանի միջև լուրջ խնդիրներ կան: Այդ հանգամանքը վտանգավոր է այն առումով, որ նման ընկալումները կարող են բացասական ազդեցություն թողնել որոշումների կայացման վրա [5]:

Տեղեկատվության ոլորտում առկա խնդիրները լուծելու ուղիները

Հայաստանի և Իրանի հասարակությունների մեծամասնությունը միմյանց նկատմամբ դրական են տրամադրված: Այդ հանգամանքը տեղեկատվության ոլորտում փոխվստահության մթնոլորտում արդյունավետ համագործակցության լավ նախապայման է:

Ժամանակակից տեխնոլոգիաները մի կողմից հայկական և իրանական լրատվամիջոցներին լայն հնարավորություն են տալիս նպաստելու պետությունների հարաբերությունների

զարգացմանը, մյուս կողմից՝ էլեկտրոնային լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի բազմազանությունը մի շարք խնդիրներ են առաջացնում: Այդ խնդիրները լուծելու և առկա մարտահրավերներից բխող սպառնալիքները կառավարելու նպատակով անհրաժեշտ է Հայաստանի և Իրանի լրատվամիջոցների միջև փոխգործակցության դաշտ ձևավորել: Այն կարող է ենթադրել համագործակցության մասին հուշագրերի ստորագրում, համատեղ կոնֆերանսների, ցուցահանդեսների անցկացում, համագործակցության հարթակների ձևավորում, և այլն:

Երկրների պաշտոնական քաղաքականությունը ներկայացնելու գործում պետական լրատվական գործակալություններին կարևոր առաքելություն է վերապահված: Նրանց ճիշտ քաղաքականությունը կարող է ուղենիշ լինել էլեկտրոնային մյուս կայքերի, ընդհանրապես նոր մեդիայի համար: Հետևաբար ցանկալի արդյունք ունենալու համար պետական լրատվականների թույլ տված վրիպումները պետք է հասցնել նվազագույնի:

Հայաստանի պետական «Armenpress» և Իրանի պետական «IRNA» լրատվական գործակալությունների միջև ստորագրված համագործակցության մասին հուշագրի համաձայն՝ նախատեսվում էր գրասենյակներ բացել համապատասխանաբար Թեհրանում և Երևանում [3 (2)]: Սակայն, մինչ օրս ձեռք բերված պայմանավորվածությունների մի մասը կյանքի չի կոչվել, և արդի հիմնախնդիրների ֆոնին հետագա համագործակցության վերաբերյալ քննարկումներ անցկացնելու անհրաժեշտություն կա:

Պետական երկու լրատվական գործակալությունների միջև համագործակցությունը կարող է դրսևորվել հետևյալ ոլորտներում.

- կառավարությունների գործունեության վերաբերյալ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության փոխանակում և լուսաբանում,

- պաշտոնյաների, փորձագետների, մշակութային գործիչների մասնակցությամբ հարցազրույցների կազմակերպում,

- Հայաստանում և Իրանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ կարճամետրաժ տեսանյութերի պատրաստում՝ ամսական կտրվածքով,

- զբոսաշրջային վայրերի և կրթական հաստատությունների վերաբերյալ ռեպորտաժների պատրաստում:

Ինչպես հայկական, այնպես էլ իրանական ոչ պաշտոնական էլեկտրոնային լրատվամիջոցների, օրաթերթերի, դրանց սպասարկող սոցցանցային ռեսուրսների մեծամասնությունը վերջին տարիներին հայաստանյան իրանագետների ջանքերի շնորհիվ [2, 2016: 57] Հայաստան-Իրան հարաբերությունները լուսաբանում է դրական լույսի ներքո: Այդ լրատվականների ուշադրության կենտրոնում են գտնվում երկու երկրներում տեղի ունեցող զարգացումները: Մա շատ կարևոր նախապայման է. այն վկայում է, որ համակարգված աշխատանք տանելու դեպքում հնարավոր կլինի հասնել լավ արդյունքի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լրատվամիջոցներն անկախ են և իրենք են մշակում տեղեկատվական քաղաքականությունը, այս ոլորտում բնականաբար պետական վերահսկողական գործիքների (*խոսքը գրաքննությանը չի վերաբերում*) կիրառումը սահմանափակ է: Այստեղ պետության դերն այն է, որ գիտաժողովների, ցուցահանդեսների կազմա-

կերպմամբ կարողանա երկու երկրների ԶԼՄ-ների ներկայացուցիչներին ծանոթացնել միմյանց հետ, որոնք որևէ հարցի շուրջ երկմտելիս, մինչև նյութի հրապարակումը կխորհրդակցեն գործընկերների հետ:

Սոցիալական ցանցերն արդի շրջանում լրատվության տարածման ամենաարդյունավետ հարթակն են: Սակայն, դրանք միևնույն ժամանակ լուրջ խնդիրներ են առաջացնում: Սոցցանցերի առանձնահատկությամբ պայմանավորված ոլորտում իրավիճակը կառավարելն անհնար է: Եթե էլեկտրոնային լրատվամիջոցների դեպքում հնարավոր է խմբագրության հետ ծագած խնդիրները հարթել, ապա սոցցանցերի դեպքում այն անհնար է: Որովհետև պարզ չէ, թե տվյալ ռեսուրսը որ երկրից, որ ուժի կողմից և ինչ նպատակով է օգտագործվում:

Խնդիրն այն է, որ երբեմն հեղինակավոր լրատվամիջոցներն ու փորձագետներն են ընկնում սոցցանցերի լարած ծուղակը [Armenpress.am, 2022] և վերաթողարկում՝ այնպիսի հրապարակումներ, որոնք մեղմ ասած չեն համապատասխանում իրականությանը [8 (2)]՝ կրկին անվստահության մթնոլորտ ձևավորելով հասարակությունների շրջանում:

Եզրակացություն

Վերջին մեկ տասնամյակում հայկական և իրանական լրատվամիջոցներում մեր կողմից կատարված մշտադիտարկումը, տեղեկատվության մշակումն ու վերլուծությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ տեղեկատվական դաշտում սոցիալական ցանցերի դերակատարության մեծացմամբ ապատեղեկատվության տարածման ռիսկը գնալով մեծանում է: Այսպիսի իրողության պայմաններում պետական լրատվա-

կան գործակալությունների դերն ավելի է արժևորվում: Սակայն, այնուամենայնիվ, թեև պետական գործիքների կիրառմամբ տեղեկատվական դաշտում կարելի է հաստատել կողմերի համար ընդունելի խաղի կանոններ, բայց միևնույն է, տեղեկատվական ոլորտում խնդիրների լուծման ամենաարդյունավետ միջոցը դա մեդիագրագիտության մակարդակի բարձրացումը, համագործակցության հարթակների ձևավորումն ու լրատվամիջոցների միջև համակարգված շարունակական համագործակցությունն են:

ARMEN ISRAYELIAN, Ph. D

Institute of Oriental Studies, NAS RA, Researcher

Department of Iranian Studies, YSU, Assistant

e-mail: armen.israyelian@gmail.com

THE ROLE OF THE MEDIA IN ARMENIA-IRAN RELATIONS

The article discusses the existing problems in the field of information in the relations between Armenia and Iran. The first part refers to the activities of state news agencies, electronic media, newspapers and social networks. The second part of the article presents the mechanisms for establishing mutually beneficial cooperation. The steps taken to prevent the spread of fake news are presented. The monitoring of Armenian and Iranian media content in the last decade shows, that the risk of spreading fake news increases with the increasing role of social media. So, the state media play an important role in increasing of public awareness and collect the views, information and attitudes toward certain issue. In any case, the most effective way to solve problems in the information sector are cooperation between the media and to increase the level of media literacy.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Իսկանդարյան 2015, Հայաստան-Իրան մշակութային հարաբերությունները (1991-2013 թթ.), Ժամանակակից Եվրասիա, հ. 4, էջ 96-108:

2. Տոնոյան 2016, Հայաստան-Իրան հարաբերությունների մեկնաբանումը երկու երկրների ԶԼՄ-ներում, Իրան-Հայաստան-Վրաստան. Խաղաղ հարևանության և զարգացման տեսլականներ, էջ 56-60:

3. Armenpress to open office in Iran 2017: Available at: <https://www.irna.ir/news/82707342/>, accessed Jun 07, 2022. (2).

4. Ayatollah Seyed Hassan Ameli: Nagorno Karabakh is the main base of the PKK and PJAK forces 2019: Available at: <https://www.irna.ir/news/83512647/>, accessed Jun 10, 2022. (1).

5. Armenia carried out this military operation to divert public opinion 2020: Available at: <https://bit.ly/3mMDZpm>, accessed Jun 14, 2022.

6. Armenia is provoking a war in Nagorno Karabakh 2021: Available at: <http://www.anaj.ir/?p=14221>, accessed Jun 14, 2022. (1).

7. Armenian provocative statement on Nagorno-Karabakh 2022: Available at: <http://www.anaj.ir/?p=28571>, accessed Jun 14, 2022. (2).

8. Israel provided information on Azerbaijani UAV to Armenia 2020: Available at: <https://bit.ly/399w1C4>, accessed Jun 9, 2022.

9. Iranian Foreign Ministry says widely circulated tweet falsely attributed to former envoy 2022: Available at: <https://armenpress.am/eng/news/1090161/>, accessed Aug 12, 2022.

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ, պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, գիտաշխատող

էլ. փոստ՝ K86Mkrtchyan@gmail.com

DOI: 10.56813/2953-786X-2022.2-124

**ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ԻՐՀ
ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվել ներկայացնել Իրանի հայ համայնքի մասնակցությունը ՀՀ-ԻՐՀ միջպետական հարաբերությունների հաստատման և զարգացման գործընթացում: Հիրավի, համայնքի մասնակցությունը միջպետական հարաբերություններին չի սահմանափակվում մեկ բնագավառով, այն լայնորեն տարածվում և իր մեջ ներառում է համագործակցության բազմաթիվ ոլորտներ՝ սկսած քաղաքական հարաբերություններից մինչև տնտեսական ու մշակութային կապեր:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Այսրկովկասի երեք հանրապետությունները թույլ էին և ի վիճակի չէին լրացնել, այսպես կոչված, քաղաքական դատարկությունը: Նոր քաղաքական իրավիճակում բացահայտ պայքար սկսվեց ՌԴ-ի, Թուրքիայի և ԻՐՀ-ի միջև՝ Այսրկովկասում տիրապետող դիրքեր գրավելու (Հովհաննիսյան, 1999, 18): Այդ պայմաններում հայկական գործոնի դերը կարևորվում է ԻՐՀ-ի քաղաքականության մեջ (Հովհաննիսյան, 1999, 20): Հարկ է նկատել, որ պաշտոնական Թեհրանը հայկական գործոնի մեջ, ըստ էության, ՀՀ-ԻՐՀ հարաբերությունների հաստատման և զարգացման գործընթացում ի սկզբանե ներառեց նաև իրանահայ համայնքը: ՀՀ-ԻՐՀ

հարաբերություններում Իրանի հայ համայնքի ունեցած մասնակցության մասին պատկերացում կազմելու համար որոշակի կարևորություն ունի ՀՀ որոշ պետական այն գործիչների կարծիքները, որոնք անձամբ որոշակի նպաստ են ունեցել երկկողմ հարաբերությունների զարգացման գործընթացում: Այլ կերպ ասած՝ դրանք ունեն ոչ միայն և ոչ այնքան տեսական, որքան հատկապես, կիրառական ու գործնական նշանակություն:

Այսպես, 1993-1996 թթ. ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանի խոսքով՝ Հայաստանը և Իրանը՝ որպես պետություններ, համաձայնության են գալիս իրանահայ համայնքի կողմից ՀՀ կատարվելիք օգնությունների չափի շուրջ, և համայնքը կարող է այդ համատեքստում տարվա ընթացքում կատարել իր ներդրումները: Հիշարժան է, որ Ղարաբաղի պատերազմի ժամանակ նրանք սատարեցին մեր բնակչությանը սննդամթերքով, հագուստով և այլն: Իսկ 1998-2008 թթ. ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի խոսքով՝ հայ համայնքը լավ կամուրջ է Իրանի և Հայաստանի հարաբերությունների հետագա զարգացումների առումով: Առկա է տնտեսական ներուժը, որը կարող է Հայաստանի տնտեսության մեջ խոշոր ներդրումներ կատարել: Ակնհայտ է նաև Իրանի բարյացակամ վերաբերմունքը համայնքի նկատմամբ (Իսկանդարյան, 2016, 302, 318):

1992-1998 թթ. ԻՐՀ-ում ՀՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպան Վ. Բայբուրդյանի խոսքով՝ ԻՐՀ-ում ՀՀ դեսպանությունն իր առջև դրած ամենակարևոր խնդիրներից մեկն էր համարում իրանահայ համայնքի համախմբումը հայրենիքի՝ նորակերտ ՀՀ շուրջը, երբեք չմոռանալով սակայն, որ լինելով իրանահայեր, նրանք հանդիսանում են ԻՐՀ քաղաքացիներ: Իրանահայ մեր հայրենակիցները ջանք ու եռանդ չէին խնա-

յում հայրենիքին օգտակար լինելու համար (Իսկանդարյան, 2016, 337):

1999-2005 թթ. ԻԻՀ-ում ՀՀ դեսպան Գ. Ղարիբջանյանն էլ կարծում է, որ հայ համայնքի ակտիվությունը պայմանավորված է կրոնական փոքրամասնությունների նկատմամբ Իրանի հանդուրժողական քաղաքականությամբ: 2005-2009 թթ. ԻԻՀ-ում ՀՀ դեսպան Կ. Նազարյանի խոսքով՝ առաջին իսկ օրվանից իրանահայությունը յուրահատուկ կամրջի դեր է խաղացել երկկողմ հարաբերությունների հաստատման գործում: Ավելին՝ 2009-2014 թթ. ԻԻՀ-ում ՀՀ դեսպան Գ. Առաքելյանի համոզմամբ էլ՝ ՀՀ անկախությունից հետո, երբ Իրանը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց ՀՀ-ի հետ, ի դեմս իրանահայության, պատկերացում կազմեց Հայաստանի մասին (Իսկանդարյան, 2016, 351, 361, 367):

Ուշագրավ տեսակետ է հայտնել 2012-2015 թթ. ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Մոհամմադ Ռեյխսին: Ըստ նրա՝ իրանական արմատներով շատ հայեր ապրում են Ֆրանսիայում և ԱՄՆ-ում և կարող են մեծ դեր ունենալ երկրների հարաբերությունների գործում (Իսկանդարյան, 2016, 374): Խոսքը վերաբերում է լոբբինգին, քանի որ միջազգային աստիճաններում ևս Իրանը և Հայաստանը սերտորեն համագործակցում են:

Այսպիսով, վերոնշյալ պաշտոնատար անձինք միակարծիք են այն հարցում, որ հայ համայնքը զգալի դեր ունի ՀՀ-ԻԻՀ միջպետական հարաբերությունների հաստատման և զարգացման գործընթացում:

Հարկ է նշել, որ դեռևս 1992 թ. հունիսի 14-22-ը ԻԻՀ այցելած ՀՀ ԱԳՆ մամուլի կենտրոնի ղեկավար Գ. Բադալյանը հանդիպումներ է ունենում Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Արտակ արք. Մանուկյանի, «Ալիք» օրաթերթի արտոնատեր

Ալբերտ Աճեմյանի, գլխավոր խմբագիր Նորայր Էլսայանի, տնօրեն Վարուժան Հովհաննիսյանի և Իսլամական խորհրդարանի պատգամավոր Արտավազ Բաղումյանի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվում է ՀՀ դեսպանության բացումից հետո հայ համայնքի օգնության հնարավորությունները (ՀԱԱ ֆ. 326, ց. 9, գ. 171, թթ. 1-5): Նշելի է, որ «Ալիք» օրաթերթը պատրաստակամություն է հայտնում դեսպանության հետ ամենօրյա օգնություն ցուցաբերել տեղական մամուլում տպված նյութերը հայերեն թարգմանելու, դեսպանության տրված հայտարարությունները թարգմանելու և տարածելու, անհրաժեշտ գրենական պիտույքներ հայթայթելու, տպագրական կարիքները հոգալու և թերթի ֆաբրիկայում հեռախոսներից օգտվելու ուղղությամբ:

Հիրավի, ՀՀ-ԻԻՀ տնտեսական կապերի սկզբնավորման գործում իրենց ավանդն ունեցան իրանահայերը: 1991 թ. մարտ ամսին Երևանում իրանական «Մաթի» բեռնափոխադրումների ընկերության տնօրեն Լ. Ահարոնյանը հանդիպում է ՀՀ վարչապետ Վ. Մանուկյանին և քննարկում Մեղրու կամուրջի բացման հարցը: Վ. Մանուկյանը Լ. Ահարոնյանի հետ 7 հոգուց բաղկացած պատվիրակություն է ուղարկում Մեղրի՝ տեղում ուսումնասիրելու վիճակը: Դրանից հետո Լ. Ահարոնյանը զեկույց պատրաստեց ԻԻՀ-ի Տրանսպորտի և Արտաքին գործերի նախարարությունների, Առևտրի պալատի և «Մոսթաֆան» հաստատության համար: Ըստ Լ. Ահարոնյանի՝ թազաֆան» հաստատության համար: Ըստ Լ. Ահարոնյանի՝ երկկողմ համագործակցության վրա պատերազմական վիճակը չէր ազդի, որովհետև «մեր նախագահը և Արտաքին գործերի նախարարը ճշմարիտ քաղաքականություն են վարում՝ հայտարարելով, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտություն

նը կրոնական չէ, այլ աշխարհագրական ու պատմական խնդիր է» («Ազգ», 28.07.1992):

Անկասկած, երկկողմ տնտեսական կապերում ակնառու է իրանահայ անվանի գործարար և բարերար, համայնքային գործիչ Լևոն Ահարոնյանի (1930-2020) դերը: Դեռևս 2012 թ. նա որպես Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահ, վկայում է. «... ՀՀ անկախության հռչակումից անմիջապես հետո Իրանում մեր իրավաբանների աջակցությամբ որոշեցինք հիմնադրել Իրան-Հայաստան առևտրի պալատը: 40 իրանահայերի ջանքերով հիմնեցինք պալատը: Ամեն տարի առևտրական ֆորում էինք կազմակերպում, առաջին տարին այն գրանցեց 10 հազար դոլարի առևտուր, իսկ այժմ՝ (2012 թ. - Կ. Մ.) 300 մլն դոլարից ավելի առևտուր ունենք: ... Մի բան հստակ է, մինչև այժմ ՀՀ ղեսպանատունը չունի առևտրական և տնտեսական բաժին, այդ գործերը մենք ենք անում անշահախնդիր կերպով» (Իսկանդարյան, 2016, 397): Փաստորեն այդ կառույցը Լ. Ահարոնյանի գլխավորությամբ կատարել է տնտեսական կարևոր գործառույթներ:

Հիշարժան է, որ 1992 թ. մայիսի 5-ին՝ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի՝ նախքան Թեհրան ժամանումը, իրանցի գործարար Սեյյեդ Աբդոլլահ Դասթղեյբի խնդրանքով Լևոն Ահարոնյանը պարսկերենով համառոտ զեկույց է պատրաստում Հայաստանի պատմաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին, որը հանձնվում է ԻԻՀ նախագահ Հ. Ռաֆսանջանիին (Ահարոնեան, 2010, 940):

Հաջորդ կարևոր առաքելությունն այն էր, որ ՀՀ նախագահի՝ Թեհրան կատարած այցելությունից հետո, ԻԻՀ ԱԳ նախարարությունը Լ. Ահարոնյանին, որպես միջնորդ և վստահելի թարգմանիչ, հանձնարարում է բանակցություններ վարելու

համար կապ հաստատել ՀՀ նախագահի խորհրդական Վահան Փափազյանի հետ: Եվ ահա Լ. Ահարոնյանի և Վ. Փափազյանի հանդիպումների ընթացքում որոշվում է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի և ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի անունից գրել երկու նամակ՝ մեկը ԻԻՀ առաջնորդ Խամենեին, մյուսը՝ ԻԻՀ նախագահ Ռաֆսանջանիին: Նշելի է, որ Երևանից Թեհրան Դասթղեյբին, ինչպես նաև ՀՀ-ում ԻԻՀ գործերի հավատարմատարին ուղեկցում է Լ. Ահարոնյանը (Ահարոնեան, 2010, 943-944): Նրանց հետ էր նաև ՀՀ պատվիրակությունը՝ Վ. Փափազյանը և պրոֆ. Հ. Փափազյանը նշված նամակները հանձնելու համար: Ինչ վերաբերում է նամակներին, ապա Շուշիի ազատագրումից հետո դրանք ունեցան կարևոր նշանակություն հայ-իրանական միջպետական հարաբերությունների պահպանման և ամրապնդման տեսակետից:

Հարկ է նշել, որ բազմաթիվ միջպետական այցելությունների և հանդիպումների ընթացքում Լ. Ահարոնյանը հանդես է եկել որպես միջնորդ և վստահելի թարգմանիչ, երբեմն էլ իրանական կողմի խնդրանքով կապ հաստատել ՀՀ ղեկավարության հետ և հակառակը՝ հայկական կողմի խնդրանքով ԻԻՀ ղեկավարության հետ, որոնց վերաբերյալ ստորև ներկայացնում ենք օրինակներով.

Այդպիսիք են՝ ԻԻՀ ԱԳՆ Կովկասի բաժնի պետի տեղակալ Հ. Նարադյանի խնդրանքով Լ. Ահարոնյանի կողմից, ՀՀ-ում ԻԻՀ ղեսպան Նիքթար Էսֆահանիի՝ «Հրադղանմեքենա» արտադրության տնօրեն Թելման Տեր-Պետրոսյանի, ՀՀ արդյուտաբերության նախարար Աշոտ Սաֆարյանի և ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանի հետ հանդիպումների կազմակերպումը (Ահարոնեան, 2010, 1065-1066, 1068):

Նշելի է նաև Լ. Ահարոնյանի կողմից, ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանի խնդրանքով էլ տեղի է ունեցել 1995 թ. մայիսի 3-6-ին Իրան այցելած ՀՀ վարչապետ Հրանտ Բազրատյանի և իրանահայ գործարարների միջև հանդիպման կազմակերպումն Իրանի առևտրաարդյունաբերական և հանրային պալատի դահլիճում: Ընդունելությանը մասնակցել է 500 հոգի (Ահարոնեան, 2010, 1525):

Որոշակի կարևորություն ունեին Լ. Ահարոնյանի կողմից Թեհրանում 1996 թ. նոյեմբերի 7-ին և 1997 թ. հոկտեմբերի 24-ին իր գրասենյակում ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Շահեն Կարամանուկյանի և ԻԻՀ ԱԳ նախարարության Կովկասի բաժնի ղեկավարի հետ երկու հանդիպումների կազմակերպումը (Ահարոնեան, 2010, 1583, 1597): Խնդիրն այն էր, որ կողմերի միջև առաջացել էին որոշ հարցեր, և որպես միջնորդ դրանք հաջողությամբ համակարգում էր Լ. Ահարոնյանը:

Իրանի հայ համայնքի աջակցությունը կարևոր էր տնտեսական ոլորտում: 1991 թ. ՀՀ անկախության հռչակումից անմիջապես հետո ստեղծվեց Հայ գործարարների միջազգային համագումարը, որը կրում էր «Հայ գործարարների ֆորում» անվանումը: Ֆորումն ուներ իր ներկայացուցիչներն ԻԻՀ-ում, որոնք թվով՝ 54 հոգի, ծավալել էին եռանդուն գործունեություն ի շահ ՀՀ-ի: Ֆորումի փոխնախագահն էր Լ. Ահարոնյանը: Ֆորումի գործունեության շնորհիվ 1991 թ. սկսած ՀՀ-ն կարողացավ օգտվել Պարսից ծոցի և Կասպից ծովի իրանական նավահանգիստներից (Բայբուրդյան, 2013, 148-149):

1995 թ. վարչական խորհրդի նիստը տեղի ունեցավ Փարիզում, որտեղ որոշվում է ստեղծել «Հայ գործարարների միությունը»: Իրանի 55 գործարարներ գնում են մասնաբաժիններ

դառնալով ամենամեծ բաժնետերերը: Ընկերության բանկային հաշվում կուտակվել էր 430 հազար դոլար, որը տվյալ պահին մեծ գումար էր: Տարեկան 40-50 իրանահայ գործարարներ էին մեկնում Երևան՝ համագումարի աշխատանքներին մասնակցելու (Ահարոնեան, 2010, 999-1000, 1005):

1992 թ. նոյեմբերին ստեղծվեց Իրան-Հայաստան առևտրական պալատը, որի նախագահն էր Լ. Ահարոնյանը: Պալատում ընդգրկվեցին իրանահայ և իրանցի գործարարներ (Բայբուրդյան, 1999, 309): Իրանահայ գործարարները Իրան-Հայաստան առևտրական պալատի հիմնադիրներից կամ անդամներից էին, որոնք ոգևորությամբ ընդառաջում են ֆորումի ժողովներին մասնակցելու առաջարկը: Ահա թե ինչու իրանահայ ժողովականների թիվը հասավ 54-ի (Ահարոնեան, 2010, 1013): Իրանահայ ձեռնարկատերերից էին Սեպուհ, Նժդեհ և Վիգեն Ասլանյանները, Լևոն, Ժորժիկ և Հենրիկ Ահարոնյանները, Շահբազյան եղբայրները, Ալբերտ Բաբայանը (Բայբուրդյան, 1999, 296):

Վերոնշյալ գործարարներն ամենօրյա կապի մեջ էին Թեհրանում ՀՀ դեսպանության հետ: Այդ մասին է վկայում 1994 թ. ապրիլի 20-ին ՀՀ դեսպանությունում տեղի ունեցած հանդիպումը, որի ընթացքում քննարկվում է դեսպանություն-պալատ հետագա համագործակցության ձևերը: Պալատին անդալատ հետագա համագործակցության ձևերը: Պալատին անդամագրվել էին շուրջ 60 հոգի: Ղեկավար մարմինը բաղկացած էր 9 հոգուց, որից 4-ը ազգությամբ հայ էին: Պալատի աշխատանքներին նպաստում էր ՀՀ-ում ԻԻՀ-ի դեսպանության հրատարակած տեղեկագիրը (ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 285, թթ. 57-58):

1992 և 1993 թթ. նորանկախ Հայաստանի ամենաձանր տարիներին հայրենիքին աջակցել են իրանահայ տարբեր գործիչներ, անշուշտ, իրանական պետության թույլտվությամբ

և որոշ հարցերում հույժ կարևոր արտոնագրերի տրամադրմամբ: Դրանց թվում են՝ «Ալիք» օրաթերթի խմբագրական կազմի անդամ Նորայր Էլսայանի միջնորդությամբ ավստրալահայության և Ռաֆիկ Յաղուբյանի միջոցով ավստրիահայության հատկացրած գումարը սննդամթերք գնելու և ՀՀ ուղարկելու նպատակով: Երկու դեպքում էլ նրանց բեռների գնման և փոխադրման հարցերում աջակցել է Լ. Ահարոնյանը: 1992 թ. վերջերին ՀՀ Գորիսի և Մեղրիի շրջանները 500 տոննա ալյուրի շուտափույթ կարիք ունեին: Հացահատիկի ջրաղացի սեփականատեր Վարուժան Առաքելյանի ջանքերով լուծվում է այդ խնդիրը, քանի որ Իրանի կառավարությունն ալյուրի արտահանման բացառիկ իրավունք է տալիս (Ահարոնեան, 2010, 970-973):

Բացի դրանից Լ. Ահարոնյանը և Վ. Առաքելյանը սեփական միջոցներով 270 հատ նավթավառ են գնում և ուղարկում Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախմբի անդամներին: Գնահատելի է նաև Ահարոնյանի նախաձեռնությամբ 1000 կգ քաղցրավենիքի գնումը և Արցախի մանուկներին ուղարկումը: Իրանական պետության հումանիտար աջակցության համատեքստում կարելի է դիտարկել նաև 1993 թ. Լ. Ահարոնյանի օգնությամբ ՀՅԴ ներկայացուցիչ Ռաֆիկ Գասպարյանի նյութական աջակցության տրամադրումն Արցախին (Ահարոնեան, 2010, 974, 1060):

Հարկ է նշել, որ հայ համայնքը որոշակի ներգրավվածություն ունեցավ նաև Թեհրան-Երևան օդային կապի հաստատման չափազանց կարևոր գործում: Այդ մասին են վկայում 1991 թ. նոյեմբերի 24-ին «Իրան էյր թուրզ»-ի գրասենյակում Մեյլեդ Մեհդի Ղաֆֆարիի գլխավորությամբ տեղի ունեցած բանակցությունները, որոնց Թեհրանի հայոց Թեմական խորհրդի

կողմից ստեղծված հանձնախմբից մասնակցում են Լևոն Ահարոնյանը, Սերոժ Սուքիասյանը, իսկ «Իրան էյր թուրզ»-ից Մոհամմադադային և Հայրո Հովհաննիսյանը: Արդյունքում ստորագրվեց 2 միջպետական պայմանագիր, որոնցից մեկն առնչվում էր զբոսաշրջությանը, իսկ մյուսն՝ օդագնացությանը:

Նկատենք, որ Թեմական խորհրդի կողմից ստեղծված վեոնշյալ հանձնախումբն, ըստ Հայ Առաքելական եկեղեցու կանոնադրության, որևէ առևտրական պայմանագիր կնքելու իրավունք չունի: Փաստորեն այդ հանձնախումբն ուներ միջնորդի առաքելություն: Սակայն հանձնախմբի կատարած երկարատև աշխատանքների շնորհիվ բացվեց Երևան-Թեհրան ուղիղ չվերթը: 1992 թ. հունվարի 30-ին առաջին անգամ ՀՀ-ից օդանավը վայրէջք կատարեց Թեհրանի օդանավակայան՝ ուղևորներին Երևան տեղափոխելու համար: Նշելի է, որ այդ ուղևորության միակ պարսիկ ուղևորը եղել է իրանցի գործարար Դասթղեյբը, մյուսները՝ իրանահայ գործիչներ են եղել: Դասթղեյբի խնդրանքով Լ. Ահարոնյանը նրան ծանոթացնում է ՀՀ արդյունաբերության նախարար Ա. Սաֆարյանի հետ (Ահարոնեան, 2010, 1486, 1488):

Ի վերջո, Երևան-Թեհրան ուղիղ չվերթի կազմակերպման գործը հանձնվում է Թեհրանում երկարամյա գործունեություն ծավալած փոխադրական ընկերության տնօրեն Էդվարդ Բաղդասարյանին, որը մոտ 2 տարի լավագույնս կատարում է այդ առաքելությունը (Ահարոնեան, 2010, 1490):

Փաստորեն, ի սկզբանե Իրանի հայ համայնքը վճռական էր տրամադրված ՀՀ-ի հետ տնտեսական համագործակցություն ծավալելու և ԻԻՀ պետական կառույցներին ներգրավելու այդ գործընթացում, անշուշտ, իրանական պետության թույլտվությամբ և համաձայնությամբ:

Տնտեսական գործակցությունից զատ կարևոր նշանակություն ունեին Իրանի հայ համայնքի մասնավոր նվիրատվությունները հայրենիքին: Դեռևս Սպիտակի երկրաշարժից տուժածներին օգնության նպատակով 1988 թ. դեկտեմբերի 15-ին Երևան ուղևորվեց բեռնավորված օդանավը, և նույն թոփքով Երևան մեկնեց Ա. Բաղումյանը, իսկ դեկտեմբերի 21-ին Վ. Վարդանյանը անձամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին հանձնեց 100 հազար դոլարի չեկ («Լոյս», N15, 2000, 5: Տե՛ս նույնը նաև «Ալիք», 15 և 22.12.1988):

Հավելենք, որ Թեհրանում ստեղծված Իրան-Հայաստան առևտրական պալատի կանոնադրությունն անշահախնդիր կազմել են համայնքի հայտնի իրավաբաններ դոկտոր Ալբերտ Բեռնարդին և Օնիկ Սահակյանը: Պալատն աշխատում է ԻԻՀ-ի առևտրի և հանքարդյունաբերության պալատին կից: Պալատի կանոնադրության կարգավորման և գրանցման մեջ 1992 թ. մեծ ներդրում է ունեցել Ժան Աբրահամյանը, որը 1957-1993 թթ. Իրանի հանքերի, առևտրի, և արդյունաբերության պալատում ղեկավարել է արտաքին կապերի բաժինը (Իրանահայոց հանրագիտարան, 2012, 423):

Իրան-Հայաստան առևտրական պալատը կազմակերպել է բազմաթիվ միջոցառումներ: Նշենք դրանցից մի քանիսը.

- 1997 թ. իրանական արտադրանքների ցուցահանդեսի կազմակերպումը Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, որին մասնակցել են 110 ընկերություններ (Ահարոնեան, 2010, 1497),

- 2000 թ. իրանական 7-րդ ցուցահանդեսի կազմակերպումը Երևանում: Վերջինիս գործադիր շտաբի կազմում էին Լ. Ահարոնյանը, Ֆերեյդուն Ասքարյանը, Վարուժ Սուրենյանը,

Սողոմոն Բարսեղյանը և Միրան Փիրումյանը (Ահարոնեան, 2010, 1512-1513),

- Հիշարժան է 2000 թ. հոկտեմբերի 26-ից նոյեմբերի 4-ը իրանական 8-րդ ցուցահանդեսի կազմակերպումը Երևանում, որի համար ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարությունն անձամբ Լ. Ահարոնյանին և Իրան-Հայաստան առևտրական պալատին հայտնեց շնորհակալություն՝ կատարված կարևոր աշխատանքի համար (Ահարոնեան, 2010, 1517),

- 2003 թ. իրանական 9-րդ ցուցահանդեսի կազմակերպումը Երևանում, որի ընթացքում ցուցադրվել են իրանական շինանյութերի տեսակները: Ցուցահանդեսին մասնակցել է 35 իրանցի արտադրող և այլն (Ահարոնեան, 2010, 1519): Այդ որոշումը կապված էր ՀՀ-ում շինաշխատանքների ծավալմամբ, քանի որ կառուցվում էր Երևանում Հյուսիսային պողոտան: Բացի դրանից մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում շինաշխատանքներում ներգրավված էին նաև իրանահայ ճարտարապետներ Սերոժ Սուրիասյանը և Ալբերտ Աճեմյանը: Ամենաշատ գնորդները և վերակառուցողներն իրանահայերն էին, որի համար էլ շինանյութերի գնումն ու սպառումը մեծ աճ ունեցավ ՀՀ-ում:

9-րդ ցուցահանդեսն ունեցել է մեծ հաջողություն: Հենց այս ցուցահանդեսի ընթացքում հայաստանցի ճարտարապետները և մասնագետները լիովին պատկերացում կազմեցին Իրանում արտադրվող շինանյութերի մասին: Ահա թե ինչու ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Մոհամմադ Քոլեյնին Իրանի և Հայաստանի միջև եղած կապերի զարգացման և ամրապնդման գործում բարձր է գնահատել Լ. Ահարոնյանի կրած նեղությունները

տասնամյակի ընթացքում՝ 1993-2003 թթ. (Ահարոնեան, 2010, 1520):

Նկատենք, որ 1995-2002 թթ. Իրանը Հայաստանում կազմակերպել է 7 ցուցահանդես, որից հինգը կազմակերպել է Իրան-Հայաստան առևտրի պալատը («Լույս», N 57-60, 2002, 17): 1998 թ. նոյեմբերի 19-25-ը Երևանում տեղի ունեցավ հայիրանական գործարար համաժողով: Համաժողովի անցկացմանը զուգահեռ կազմակերպվեց իրանական 50 ընկերությունների ապրանքների ցուցահանդես: Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Ա. Վարդանյանը և Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահ Լ. Ահարոնյանը ստորագրեցին համագործակցության և գործընկերության մասին պայմանագիր, որով հիմք դրվեց այդ կառույցների երկարաժամկետ փոխհարաբերությանը (ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 11, գ. 182, թ. 10):

Միջպետական հարաբերությունների տարեգրության մեջ առանձնանում է 1996 թ. դեկտեմբերին ԻԻՀ փոխնախագահ Հ. Հաբիբիի այցելությունը Երևան: Նրա գլխավորած 120-հոգանոց պատվիրակության կազմում են եղել Իրան-Հայաստան առևտրական պալատի նախագահ Լևոն Ահարոնյանը, Մելինե Փիրումյանը և Ռազմիկ Թովմասը (Ահարոնեան, 2010, 1609): Ի դեպ, անկախության ձեռքբերումից հետո դա իրանական առաջին բարձրաստիճան պաշտոնյայի այցելությունն էր ՀՀ:

Իրանական պատվիրակության ղեկավարի հետ հանդիպումից հետո ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Լ. Ահարոնյանի հետ զրույցի ընթացքում ազգային և հայրենասիրական ծառայությունների համար նրան արժանացնում է բարձր գնահատանքի (Ահարոնեան, 2010, 1610): Իր հերթին Իրանի Արդյունաբերության նախարարությունը 2001 թ. ապրիլին բարձր է

գնահատել Իրան-Հայաստան առևտրի պալատի և նրա նախագահ Լ. Ահարոնյանի գործունեությունը («Լույս», N 25-26, 2001, 10): Ի դեպ, Ահարոնյանն անմիջական ներգրավվածություն է ունեցել Իրան-Հայաստան հիմնական կամուրջի կառուցման գործին (Բաղայան, 2011, 51):

Այսպիսով, առևտրական պալատը, որի կազմում են գտնվել հայ համայնքի գործիչները, զգալի նպաստ է ունեցել երկկողմ տնտեսական կապերի հիմնադրման և զարգացման գործում:

Ցավոք, հայ համայնքի մասնակցությունը ՀՀ-ԻԻՀ միջպետական հարաբերությունների գործընթացին տևական դադարով ընդմիջվեց, երբ ՀՀ-ում սկսվեցին ներքաղաքական խնդիրներ ՀՅԴ կուսակցության հետ: Այդ մասին արժեքավոր է Վ. Բայբուրդյանի հետևյալ վկայությունը. «1993 թ. սկսած՝ իրավիճակը կտրուկ փոփոխության ենթարկվեց: Ինչպես հայտնի է, ՀՀ բարձրագույն ղեկավարության և ԻԻՀ-ում գործող և ազգային-համայնքային մարմինների մեծ մասը իր հսկողության տակ պահող ՀՅԴ կուսակցության միջև սկսվեց խոր առճակատում, որը բնականաբար չէր կարող իր բացասական ազդեցությունը չթողնել դեսպանատան աշխատանքների վրա: Ըստ էության Իրանի հայ գաղթօջախը պառակտվեց: Դեսպանության գործունեությունը ենթարկվում էր բոլորովին: ... Համայնքի մի մասը պաշտպանում էր ՀՀ իշխանություններին, իսկ մյուս մասը դեմ էր» (Իսկանդարյան, 2016, 336-339):

Նշված հարցին հանգամանորեն անդրադարձել է նաև Լ. Ահարոնյանը. «Ազգային Իշխանութեան ընդդիմադիր կեց-լածքը առանել ցայտուն դրսևտրևեց Հայաստանի այդ ժամանակույ վարչապետ Հրանտ Բազրատեանի Իրան կատարած այցի ժամանակ: ... Ցաւօք, այդ հանդիպմանը Ազգային Իշխա-

նութիւնից եւ նրա պատկան մարմինների անդամներից որեւէ մէկը չներկայացաւ» (Ահարոնեան, 2010, 956-962):

Այսպիսով, թուլացավ համայնքի 1990-ական թթ. սկզբին մեկնարկած աշխույժ մասնակցությունը ՀՀ-ԻԻՀ միջպետական հարաբերություններում, թեև շարունակվեց որոշ մասնավոր մարդկանց կողմից գործակցությունը, ինչպիսին է Լևոն Ահարոնյանը և այլոք:

1998 թ. իշխանավոխությունից հետո, երբ ՀՅԴ կուսակցության գործունեությունն, ըստ էության, վերականգնվեց ՀՀ-ում, համայնքային կառույցները ևս վերսկսեցին իրենց համագործակցությունը հայրենիքի հետ:

Ինչ վերաբերում է մշակութային կապերին, ապա դրա զարգացման գործում ևս իրենց ներդրումն են ունեցել իրանահայ որոշ մտավորականներ, որոնք ներգրավված են տարբեր նախաձեռնություններին և՛ անհատական, և՛ միջպետական կամ համայնքային կառույցների ծրագրերի շրջանակներում:

Ըստ այդմ՝ կարող ենք առանձնացնել մի քանի բնագավառ, ինչպիսիք են՝ պատմագիտական երկերի թարգմանություն, երկկողմ գրական կապերի զարգացում և մշակութային համատեղ այլ ծրագրերի իրականացում:

Ա. Հովասափյանը (1921-1997) «Մ. Խորենացի» (պարսկերենով), «Ալիգուդարգի հայկական գյուղերը», «Սուրբ պատմություն» եռահատորյակի, «Իրանի հայ Ավետարանական եկեղեցու 100 տարվա պատմությունը» և այլ գրքերի հեղինակ է (Իրանահայոց հանրագիտարան, 2012, 96):

Հիրավի, պատմագիտական արժեքավոր գրականություն է թարգմանվել հայերենից պարսկերեն: 2000 թ. Լևոն Գ. Մինսայանը Հ. Հովանյանցի (1828-1871) գրաբարով գրված «Նոր Ջուղայի պատմություն» գիրքը թարգմանել է պարսկերեն, որտեղ

գրի է առնված Սպահանի հայության 1605-1863 թթ. պատմությունը (Իրանահայոց հանրագիտարան, 2012, 96): Գարուն Սարգսյանը հայերենից պարսկերեն է թարգմանել և տպագրել Ագաթանգեղոսի «Հայոց Պատմությունը»՝ 2001 թ., Կորյունի «Վարք Մաշտոցին»՝ 2002 թ., Փավստոս Բուզանդի «Հայոց Պատմությունը»՝ 2004 թ., Ժ. Էլչիբեկյանի «Հայաստանը և Սելևկյանները»՝ 2003 թ. (Իրանահայոց հանրագիտարան, 2012, 210), Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն և Թուղթ Վահան Մամիկոնեանին»՝ 2021 թ. և այլ երկերը:

Նշված հայկական աղբյուրներն ունեն կարևոր նշանակություն Իրանի պատմության ուսումնասիրության համար: Դրանց միջոցով լրացվում է որոշ պատմափուլերի վերաբերյալ պարսկական աղբյուրներում առկա սակավ տեղեկատվությունը:

Հայ-իրանական պատմական, հասարակական, մշակութային բազմապիսի հարցերին է նվիրված պատմագիտության դոկտոր Լ. Մելքոնյանի՝ պարսկերեն և անգլերեն յոթհատորանոց «Հայ-իրանական մշակութային ընդհանրություններն ու հարաբերությունները վաղ ժամանակներից մինչև մեր օրերը» վերնագրով գիրքը, որն իրանագետներ Գ. Ասատրյանի և Գ. Մելիքյանի հետ համատեղ կատարած աշխատանքն է (Իրանահայոց հանրագիտարան, 2012, 118):

Ժ. Լազարյանի կազմած «Իրանցի հայերի հանրագիտարան»-ի պարսկալեզու ընթերցողն առաջին անգամ հնարավորություն ստացավ ծանոթանալու հասարակական տարբեր ոլորտներում, այդ թվում՝ ՀՀ-ԻԻՀ միջպետական հարաբերություններում գործունեություն ծավալած իրանահայերի հետ: Կարևոր է այն հանգամանքը, որ հանրագիտարանը տպագրվել է ԻԻՀ-ի քաղաքակրթությունների երկխոսության կենտ-

«Հազկերտի մահը» ընտրանու՝ 1996 թ., հայերեն թարգմանությունները (Daneshname-e Iranian Armani, 2009, 251):

Մեծ է իրանահայ հայաստանցի գրող Էդ. Հախվերդյանի ավանդը պարսից գրականությունը հայ ընթերցողին ներկայացնելու գործում: Նա հայերեն է թարգմանել Ս. Հեղայաթի, Ս. Չուբաքի, Հ. Գուլշիրի ստեղծագործությունները, որոնք տպագրվել են 1992 թ. «Քոռ բու» ժողովածուում: 1996 թ. տպագրել է Ֆ. Ֆարոխզադեի «Մեկ այլ ծնունդ», իսկ 2000 թ. Ս. Սեփեհրիի «Կանաչ ծավալ» բանաստեղծություններից թարգմանություններ (Իրանահայոց հանրագիտարան, 2012, 441): Կրոնագիտական հայալեզու գրականության հարստացման գործում կրկին մեծ է Հախվերդյանի ներդրումը: Նա հայերեն է թարգմանել Իսլամի սուրբ գիրքը՝ «Ղուրանը»:

Հայ-իրանական մշակութային հարաբերություններում ևս որոշակի ներդրում է ունեցել Լ. Ահարոնյանը: Բազմաթիվ նվիրատվություններ է կատարել ՀՀ դպրոցներին, մշակութային օջախներին: Նրա մեկենասությամբ Իրանում և Հայաստանում տպագրվել են բազմաթիվ գրքեր (Բաղայան, 2011, 51): Հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ հիշարժան դիպվածին, որը տեղի է ունեցել 1995 թ. հունվարի 14-ին իրանական «Մելլաթ» բանկի երևանյան մասնաճյուղի բացման առիթով: Այդ օրը Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և զլխավոր դիրիժոր Լորիս Ճգնավորյանը համաձայնում է ԻԻՀ պատվիրակության պատվին բացառիկ ելույթ ունենալ: Ահարոնյանի հետ խորհրդակցելուց հետո որոշվում է ներկայացնել մատերոյի հայտնի ստեղծագործությունը՝ «Ռուստամ և Ջոհրաբ» օպերան (Ահարոնեան, 2010, 979): ԻԻՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարար Մոհամմադխանը մեծ բավականություն ստանալով՝ Ճգնավորյանին

հրավիրում է Թեհրան, որտեղ էլ «Վահդաթ» դահլիճում օրեր շարունակ հազարավոր հանդիսատեսներ վայելում են նշված օպերան (Ահարոնեան, 2010, 989): Հարկ է նշել, որ 2002 թ. օգոստոսի 22-ին ևս Թեհրանի միջազգային ցուցահանդեսների «Միլադ» սրահում Ճգնավորյանի դիրիժորությամբ բեմադրվել է նշված օպերան («Լույս», N 57-60, 2002, 2):

Այսպիսով, Լևոն Աբրահամյան-Լորիս Ճգնավորյան համագործակցությունը տալիս է իր արդյունքները՝ իրանցի հանդիսատեսին հնարավորություն ընձեռելով վայելել բարձրարժեք արվեստը:

Միջմշակութային բարեկամության գործում իրենց ներդրումն են ունեցել իրանահայ այլ գործիչներ ևս: Անդրադառնանք նրանցից մի քանիսին օրինակներով:

Իրանահայ (հետագայում այլ երկրներում, ի վերջո՝ ՀՀ-ում) բնակություն հաստատած և իր գործունեությունը ծավալած) գեղանկարիչ-արվեստագետ Մարկոս Գրիգորյանի (1925-2007) զեղանկարիչ-արվեստագետ Մարկոս Գրիգորյանի (1925-2007) զանքերով 1993 թ. հիմնվեց Երևանի Միջին Արևելքի թանգարանը, որը գործում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին կից: Թանգարանում ներկայացված են Իրանի պատմության տարբեր դարաշրջանների վերաբերյալ ավելի քան 2000 ցուցանմուշներ (Թադևոսյան, 2005, 56): Նրա Գառնի գյուղում հիմնած գորգագործական արհեստանոցում վերականգնում էին հնամաշ գորգեր և գործում նորերը: Վերջիններիս էսքիզները նկարում էր Մ. Գրիգորյանը ուրարտական նախշերով (Daneshname-e Iranian Armani, 2009, 370):

Հաջորդ իրանահայ գործիչը նկարիչ Արմոնդ Այվազյանն (1964-2009) է, որի գործերը ներկայացված էին 2004 թ. հունիսի 12-ին Իրանի արվեստագետների «Երեք սերունդ» ցուցահանդեսում: Հարկ է նշել, որ Թեհրանի ժամանակակից արվեստնե-

րի թանգարանն ընտրեց նրա գործերը Հայաստանի ազգային պատկերասրահում ցուցադրելու համար: Այվազյանի «Խորհրդավոր ընթրիք» կտավը տեղափոխվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարան (Daneshname-e Iranian Armani, 2009, 384):

«Երեք սերունդ» ցուցահանդեսում ներկայացված 14 տղամարդ և 7 կին նորարար ստեղծագործողների աշխատանքների թվում են եղել ավագ սերնդի իրանահայ արվեստագետներ Մարկո Գրիգորյանի, Էդման Այվազյանի և Սիրաք Մելքոնյանի, իսկ երիտասարդ արվեստագետների բաժնում՝ Արմոնդ Այվազյանի և Արմինե Թեյմուրյանի աշխատանքները: Ընդ որում՝ ցուցահանդեսի կազմակերպիչն է եղել իրանահայ լրագրող, արվեստագետ, «Լազար» արտ-մոդեռն թանգարան ցուցահանդեսի հիմնադիր Ժանետ Տիգրանուհի Լազարյանը (1931-2014) («Ալիք», 18.07.2004):

Հիրավի, հայ-իրանական մշակութային կապերի տարեգրության մեջ իր ուրույն տեղն ունի նաև Ժ. Լազարյանը: Այդ մասին են վկայում նրա ջանքերով 2001 թ. Իրանի Ժամանակակից արվեստի թանգարանում Հայաստանի մերօրյա նկարիչների գործերի, ինչպես նաև վերոնշյալ 2004 թ. և 2008 թ. Ղաջարական ժամանակաշրջանի գեղանկարչության ցուցահանդեսների կազմակերպումը Հայաստանի ազգային պատկերասրահում («Լույս», N 190, 2014, 1):

Գիտական համագործակցության բնագավառում կարելի է ներառել իրանահայ ճարտարագետ Աբրահամ Այվազյանին: Նրա նախագծով 2002 թ. նոյեմբերի 25-ին իր աշխատանքն սկսեց Իրանում կառուցված առաջին հողմաէներգետիկ կայանը՝ «KAMI-600» անվանումով՝ Իրանի Մանջիլ քաղաքից հարավ՝ Բաբայիան գյուղի բարձունքներում: Կայանի պաշտոնա-

կան բացումը տեղի է ունեցել 2003 թ. հունվարի 27-ին Էներգետիկայի նախարար Բիթարաֆի ներկայությամբ («Ալիք», 15.02.2004): Հարկ է նշել, որ 2002 թ. ՀՀ կառավարական պատվիրակության Թեհրանում գտնված ժամանակ իրանական կողմի հետ համաձայնություն է ձեռք բերվել Այվազյանի նախաձեռնությունը ՀՀ-ում օգտագործելու նպատակով, որը դրական հեռանկարներ բացեց այդ ծրագրի համար: Ի դեպ, «KAMI-600»-ը Իրանում կառուցված ամենահզոր հողմաէլեկտրակայանն է, որը արտադրելով 600 կիլովատ էներգիա՝ փոխանցում է էներգացանցին:

Այսպիսով, միջբարդաբարձրական և միջմշակութային համագործակցության շրջանակներում ակնհայտ է Իրանի հայ համայնքի՝ որպես կամուրջի, կապող օղակի նշանակությունը և մասնակցությունը տարբեր նախաձեռնություններում: Մյուս կողմից նշելի է, որ միջպետական հարաբերությունների մակարդակով աշխուժորեն ներգրավված իրանահայ համայնքին և նրա մտավորականությանը հնարավորություն է ընձեռված իր գործունեությունը ծավալել նաև հայրենիքում, անմիջական կապեր հաստատել մշակույթի, գիտության, արվեստի հայաստանաբնակ գործիչների հետ, կատարել փորձի փոխանակում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ 1990-ական թթ. սկզբներին ձևավորված և զարգացման ուղին բռնած ՀՀ-ԻԻՀ միջպետական, քաղաքական-դիվանագիտական, առևտրատնտեսական և գիտամշակութային հարաբերություններում զգալի ներդրում է ունեցել Իրանի հայ համայնքը: Այսօր էլ Իրանի հայ համայնքը ներգրավված է իր առօրյա կյանքի մի մասը դարձած ՀՀ-ԻԻՀ միջպետական հարաբերությունների գործընթացում:

Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվել ներկայացնել Իրանի հայ համայնքի մասնակցությունը ՀՀ-ԻԻՀ միջպետական հարաբերությունների հաստատման և զարգացման գործընթացում: Հիրավի, համայնքի մասնակցությունը միջպետական հարաբերություններին չի սահմանափակվում մեկ բնագավառով, այն լայնորեն տարածվում և իր մեջ ներառում է համագործակցության բազմաթիվ ոլորտներ՝ սկսած քաղաքական հարաբերություններից մինչև տնտեսական ու մշակութային կապեր:

Անկասկած, երկկողմ տնտեսական կապերում ակնառու է իրանահայ անվանի գործարար և բարերար, համայնքային գործիչ Լևոն Ահարոնյանի (1930-2020) դերը: 1992 թ. նոյեմբերին ստեղծվեց Իրան-Հայաստան առևտրական պալատը, որի նախագահն էր Լ. Ահարոնյանը: 1992 և 1993 թթ. նորանկախ Հայաստանի ամենաճանր տարիներին հայրենիքին աջակցել են իրանահայ տարբեր գործիչներ, անշուշտ, իրանական պետության թույլտվությամբ և որոշ հարցերում հույժ կարևոր արտոնագրերի տրամադրմամբ:

Այսպիսով, միջքաղաքակրթական և միջմշակութային համագործակցության շրջանակներում ակնհայտ է Իրանի հայ համայնքի՝ որպես կամուրջի, կապող օղակի նշանակությունը և մասնակցությունը տարբեր նախաձեռնություններում:

KAREN MKRTCHYAN, PhD
Institute of History of the NAS RA
e-mail: K86Mkrtchyan@gmail.com

PARTICIPATION OF THE ARMENIAN COMMUNITY OF IRAN IN THE PROCESS OF ESTABLISHMENT AND DEVELOPMENT OF INTERSTATE RELATIONS RA-IRI

In the framework of this article, an attempt has been made to present the participation of the Armenian community of Iran in the process of establishment and development of RA-IRI interstate relations. Indeed, community participation in interstate relations is not limited to one area; it is widespread, and it encompasses many areas of cooperation, from political relations to economic and cultural ties.

Undoubtedly, the role of the well-known Iranian-Armenian businessman-philanthropist, community figure Levon Aharonyan (1930-2020) is obvious in bilateral economic ties. The Iran-Armenia Chamber of Commerce was established in November 1992, chaired by L. Aharonyan. In 1992-1993 during the most difficult years of newly independent Armenia, the homeland was supported by various Iranian-Armenian figures, of course, with the permission of the Iranian state, with the issuance of very strong visas in some issues.

Thus, within the framework of intercivilizational, intercultural cooperation, the importance of the Armenian community of Iran as a bridge, the participation in various initiatives is obvious.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 171, թթ. 1-5: ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 285, թթ. 57-58 և ց. 11, գ. 182, թ. 10:
2. Ահարոնյան Լ., *Փոթորկոտ կեանքիս օրերը (հասարակական և քաղաքական յուշեր)*, գիրք Բ, Թեհրան, «Մալես» հրատ., 2010:

3. Բաղալյան Գ., *Իրան. Հանրագիտարան*, Եր., «Հեղինակային» հրատ., 2011:
4. Բայբուրդյան Վ., *Իրանն այսօր*, (տեղեկատու), Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1999:
5. Բայբուրդյան Վ., *Իրանի պատմություն*, Եր., «Ջանգակ-97», հրատ., 2005:
6. Բայբուրդյան Վ., *Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ*, Եր., «Լուսակն», 2013:
7. Թաղևոսյան Ռ., *Իրան*, Եր., «Հեղինակային» հրատ., 2005:
8. Իսկանդարյան Գ., *Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո*, Եր., 2016:
9. *Իրանահայոց հանրագիտարան*, Կազմող՝ Ժանետ Տ. Լազարյան, Եր., «ՎՄՎ-Պրինտ», 2012:
10. Հովհաննիսյան Ն., *Հայաստանը անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի գործոն*, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVIII, Եր., 1999, էջ 16-37:
11. *Daneshname-e Iranian Armani*, be qushesh: Zhanet d. Lazarian, Sharhale moshahire Armani, Hirmand, Tehran, 2009.
12. «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, Երևան, 10.06.2003:
13. «Ազգ» օրաթերթ, Երևան, 28.07.1992:
14. «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 15.12.1988, 22.12.1988, 15.02.2004, 18.07.2004:
15. «Լույս» ամսագիր, Թեհրան, N15, 2000 թ., N 25-26, 2001 թ, N 57-60, 2002, N 190, 2014:
16. Թեհրանում տեղի է ունեցել «Իրանահայոց հանրագիտարան»-ի շնորհանդեսը <https://armenpress.am/arm/news/717698/tehranum-texi-e-unecel-iranahayoc-hanragitaran-i-shnorhandesy.html> դիտումը՝ 21.01.2022:

ԵՂԻԱ ԹԱՇՃԵԱՆ

Լիբանան, Պեյրութի Ամերիկեան Համալսարանի
«Իսամ Ֆարես» Հանրային Քաղաքականության և
Միջազգային Յարաբերություններու Բնաստիտութ
էլ. փոստ՝ yeghia.tash@gmail.com
DOI: 10.56813/2953-786X-2022.2-149

ԻՐԱՆԻ ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ներածություն

Շատ իրանցի փորձագետներ և վերլուծաբաններ կարծում են, որ ԱՄՆ-ի ազդեցությունը որոշ տարածաշրջաններում քայքայվում է: Այս տեսակետն արդարացված է Աֆղանստանից, Իրաքից և Մերձավոր Արևելքի այլ շրջաններից ԱՄՆ ՋՈՍ դուրսբերմամբ: ԱՄՆ-ն այժմ ավելի մեծ սպառնալիք ունի, որով պետք է զբաղվի. այն Չինաստանն է, որի շրջանակում պետք է Պեկինին զսպի, հատկապես, Հարավային Ասիայում: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի ռազմական դուրսբերումը տարածաշրջաններից չի նշանակում, որ նրա ազդեցությունը կնվազի, քանի որ ամերիկացիներն իրենց քաղաքականությունը վարելու են իրենց վստահելի և դաշնակից երկրների միջոցով:

Այսինքն, ԱՄՆ-ն սաուդցիների, իսրայելցիների և թուրքերի միջոցով է փորձելու ապահովել իր շահերը տարածաշրջանում՝ զսպելով ռուսականը, իրանականն ու չինականը: Իրանցիները՝ հատկապես, պահպանողականները, տարածաշրջանային աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական զարգացումները դիտարկում են այս (հակա-իսրայելական և հա-

կա-ամերիկյան) պրիզմայով: Ահա դա է պատճառը, որ Իրանն ուղղակիորեն միջամտեց Սիրիայում և Իրաքում ընթացող գործընթացներին, քանի որ «սուննի-իսլամիստական ջիհադիզմը» դիտարկել են որպես «ամերիկա-սիոնիստական-դավադրություն»՝ տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը փոխելու և Իրանն ապակայունացնելու համար:

Թեհրանը Հարավային Կովկասը դիտարկում է միննույն պրիզմայով: Թեև Թեհրանը դիվանագիտորեն և ռազմական առումով այնքան ակտիվ չէր իր քաղաքականությամբ, ինչպես Մերձավոր Արևելքում, այնուամենայնիվ, այս ուսումնասիրությամբ:

- ընդգծվելու են Իրանի սահմանափակումներն ու «կարմիր գծերը» տարածաշրջանում,

- պատասխան կտրվի հարցադրմանը, թե ինչու Իրանը պասիվ դիվանագիտությունից անցավ «պարտադրողական» դիվանագիտության,

- կներակայացվի մի քանի առաջարկություններ՝ հայ-իրանական հարաբերություններն ամրապնդելու ուղղությամբ:

Իրանի քաղաքականությունը Հայաստանի և Արցախի ուղղությամբ

Խորհրդային Միության փլուզումից հետո Իրանը համբերատար զգույշ հետևում էր Հարավային Կովկասի զարգացումներին: Թեհրանի գլխավոր ռազմավարական նպատակն էր կանխել ԱՄՆ-ի սրայելական ներթափանցումը տարածաշրջան, և Ռուսաստանի ռազմաքաղաքական ազդեցության տարածումը տարածաշրջանում, մասնավորապես՝ Հայաստանը դիտարկում էր որպես բուֆերային գոտի՝ ընդդեմ արև-

մտյան և նույնիսկ թուրքական էքսպանսիոնիստական գործողությունների դեմ:

Սակայն 2018 թ.-ից հետո իրանցիները Հայաստանում զարգացումները դիտարկեցին «Արևմուտքի կողմից ֆինանսավորվող գունավոր հեղափոխությունների» պրիզմայով, որի վերաբերյալ հրապարակումներն ընդգծվել են իրանական ԶԼՄ-ներում:

Մինչդեռ Թուրքիան սկսեց վարել անկախ արտաքին քաղաքականություն և հասավ այն կարգավիճակի, որ Ռուսաստանի հետ սկսեց կիսել ազդեցությունը Հյուսիսային Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում և Կովկասում: Իրանցի քաղաքական գործիչները կարծում էին, որ Թուրքիան, համագործակցելով Ռուսաստանի հետ, կնվազեցնի արևմտյան ազդեցությունը տարածաշրջանում և կհրաժարվի իր պանթյուրքական և նեո-օսմանյան հավակնություններից¹:

Սակայն, Արցախյան 2-րդ պատերազմից հետո տարածաշրջանային զարգացումները ցույց տվեցին, որ Անկարան մղում է տարածաշրջանում հարկադրողական պանթյուրքական արտաքին քաղաքականություն: 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից և 2021 թ. հունիսի 15-ի «Շուշիի հռչակագրից» հետո պարզ դարձավ, որ Թուրքիայի հավակնությունները դուրս են եկել Կովկասից, իսկ Իրանն ավելի է մարզինալացվել:

Վերջին պատերազմի ժամանակ Իրանի քաղաքականությունը պարզ էր, որտեղ կոչ էր անում Հայաստանին ստորաբաժանումները դուրս բերել Լեռնային Ղարաբաղի հարակից

¹ Հարցազրույց քաղաքական վերլուծաբան Սեյիտ Մոսթաֆա Խոջեսըմի հետ, հոկտեմբեր 2021:

տարածքներից և հակամարտությունը լուծել խաղաղ ճանապարհով: Իրանը նույնիսկ փորձել է միջնորդ լինել երկու կողմերի միջև:

Իրանցի քաղաքական վերլուծաբան Սեյեդ Մոհամմադ Մարանդիի հետ հարցազրույցում վերջինս պնդում էր, որ Իրանի դիրքորոշումն ի սկզբանե հիմնված է եղել միջազգային իրավունքի պահպանման վրա, հետևաբար «օկուպացված տարածքները, որոնք օրենքով ադրբեջանական էին, պետք է վերադարձվեն Ադրբեջանին, և այն տարածքները, որոնք պատկանում էին Հայաստանին, պետք է կազմեն Հայաստանի մաս»²: Այսպիսով, պատերազմի ժամանակ «Իրանն ընդունել և աջակցել Ադրբեջանի ինքնիշխանությանը, իսկ այսօր Իրանն աջակցում է Հայաստանի ինքնիշխանությանը և թույլ չի տա թուրքական կամ տարածաշրջանային այլ ուժերին թուլացնել Հայաստանի տարածքային ամբողջականությունը», - հարցազրույցում նշել է դոկտոր Մարանդին³:

Ավելին, մյուս իրանցի փորձագետները, որոնց հետ իրականացրել ենք հարցազրույցների շարք, շատ զգուշավոր են եղել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի առումով, չնայած այն հանգամանքին, որ նրանք կտրականապես դեմ էին 1988 թ. ԼՂԻՄ սահմանների հարակից տարածքների նկատմամբ հայկական վերահսկողությանը, սակայն միաժամանակ նրանք հստակ կարծիք չունեին այդ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի ապագայի վերաբերյալ: Դրանով նրանք ցույց տվեցին իրենց անվստահությունն Ադրբեջանի նկատմամբ, նրանք որևէ կարծիք չեն արտահայտել մինչ 2020 թ. «ստատուս

² Հարցազրույց քաղաքագետ Սեյիտ Մոհամմադ Մարանդիի հետ, հոկտեմբեր 2021:

³ Նույն տեղում:

քվոյի» վերաբերյալ, սակայն կողմ են փոխզիջումային տարբերակով հարցի լուծմանը, որպեսզի տարածաշրջանը չներքաշվի մեկ այլ պատերազմի մեջ, որը ճանապարհ կարող է հարթել Թուրքիայի, ՆԱՏՕ-ի կամ Իսրայելի ազդեցության տարածման միջամտությունների համար:

Հետևաբար, իրանցի վերլուծաբաններից շատերը քննադատում էին Հայաստանի «անզիջումային դիրքորոշումը» Լեռնային Ղարաբաղի հարցում: Նրանք վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախապատերազմական հայտարարությունները և բանակցությունների ձևաչափի փոփոխությունը դիտարկեցին որպես պատերազմ հրահրելու և դրա համար ճանապարհ հարթելու և տարածաշրջանում արտաքին (*հիմնականում թուրքական և արևմտյան*) միջամտություն հրավիրելու միջոց:

Իրանի կողմից Հարավային Կովկասում սահմանափակումներն ու «կարմիր գծերը»

Ավանդաբար Իրանն ուներ երկու «կարմիր գիծ» Հարավային Կովկասում, 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո նրա ցուցակում ավելացավ ևս մեկ «կարմիր գիծ»: Այս կարմիր գծերը երբեմն կախված են տարածաշրջանում Իրանի արտաքին քաղաքականության սահմանափակումների փոփոխություններից:

Որո՞նք են այդ սահմանափակումները:

Թեհրանի սահմանափակումները կապված են տարածաշրջանում աշխարհատնտեսական նախագծերի հետ, ինչով էլ բացատրում է, թե ինչու Իրանը չի միջամտել պատերազմին:

1- **Հիմնական գործոնը**, որը դրդել է Իրանին պասիվ դիրքորոշում ունենալ Թուրքիայի նկատմամբ, Անկարայի քաղաքական և տնտեսական տարանցիկ դերն էր տարածաշրջա-

նում: Թուրքիան կարևոր առևտրային գործընկեր և տարանցիկ միջանցք է իրանական գազն ու նավթը եվրոպական շուկաներ տեղափոխելու համար: Ե՛վ Անկարան, և՛ Թեհրանը համագործակցում են նաև տարածաշրջանում քրդական շարժումների դեմ: Նրանք երկուսն էլ դիմակայում էին նույն տարածաշրջանային հակառակորդներին՝ Արաբական Միացյալ Էմիրություններին և Սաուդյան Արաբիային⁴: Թուրքիան նաև արդյունավետ խողովակ է ԱՄՆ-ի միակողմանի պատժամիջոցների հետևանքները հնարավոր մեղմելու համար: Այն ժամանակ, երբ Իրանը գտնվում էր ԱՄՆ նախագահ Դ. Թրամփի վարչակազմի «առավելագույն ճնշում» պատժամիջոցների արշավի տակ և տարածաշրջանային լայնածավալ մրցակցությունների պատճառով, Իրանը դժվար թե իրեն թույլ տար իրենից հեռացնել Թուրքիային⁵:

2- Իսրայելի և Ադրբեջանի ռազմատեխնիկական-հետախուզական գործընկերությունը, որն ակտիվորեն և մշտապես զարգանում ու ամրապնդվում է տարածաշրջանում, տազնապ է առաջացրել Իրանում: Սակայն Ադրբեջանը Հարավային Կովկասում միակ երկիրը չէ, որին ակտիվորեն աջակցում է Իսրայելը, կա նաև Վրաստանը: Իրանը Վրաստանին դիտարկում է որպես ՆԱՏՕ-ի և, հատկապես, ԱՄՆ որոշումներ իրականացնողի: Այդ իսկ պատճառով, 2008 թ. ռուս-վրացական պատերազմի ժամանակ Իրանն Աբխազիայի և Հարավային

Օսիայի խնդիրներով ոչ քննադատել և ոչ էլ բացահայտորեն աջակցել է Ռուսաստանին: Այնուամենայնիվ, Իրանի համար Վրաստանն ու Ադրբեջանը (*հաշվի առնելով Հայաստանի թեր-զագացած հեռահաղորդակցությունների ենթակառուցվածքային դերը*) կարևոր տարանցիկ հանգույցներ են եվրոպական և ռուսական շուկաների հետ առևտրի համար: Այդ է պատճառը, որ Իրանը չէր կարող ուղղակիորեն միայնակ զսպել կամ մարտահրավեր նետել ամերիկյան և իսրայելական ազդեցությանն այս տարածաշրջանում: Հետևաբար, ի տարբերություն Մերձավոր Արևելքի, որտեղ Իրանն ունի վստահելի գործընկերներ և դաշնակիցներ (*Միջին, Հիզբոլլահ, Իրաքում ու Եմենում աշխարհագրայիններ*), որտեղ նրանք զսպում են Թեհրանի թշնամիներին, Իրանը չունի այդպիսի դաշնակիցներ Հարավային Կովկասում և չի կարող ուղիղ առձակատման գնալ հակառակորդների դեմ⁶:

Այնուամենայնիվ, 2021 թ. օգոստոսից հետո, երբ Իրանի ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներն ուժեղացան, Թեհրանի նոր կառավարությունը վերանայեց իր «կարմիր գծերը» Հարավային Կովկասում և իր պասիվ դիվանագիտությունը փոխարինեց գերակտիվ արտաքին քաղաքականությամբ:

Իրանցի քաղաքական վերլուծաբան, դոկտոր Սեյեդ Մոստաֆա Խոշեյեմի խոսքով, Իրանի ներկայիս կառավարությունը վերանայում է նախկին նախագահ Հասան Ռոհանիի քա-

⁴ Alex Vatanka, "Iran's strong hand in the Arab world is missing in the Caucasus", *Middle East Institute*, November 19, 2020, <https://www.mei.edu/publications/irans-strong-hand-arab-world-missing-caucasus?fbclid=IwAR2ERIGikSJQyxem-f1HHGIPAou0ddDYCogkyEDrPIZPvLZPJ1zBTrnELl4>, accessed 10/10/2021.

⁵ Joshua Kucera, "Bolton visits Caucasus amid anti-Iran campaign", *Eurasianet*, October 23, 2018, <https://eurasianet.org/bolton-visits-caucasus-amid-anti-iran-campaign>, accessed 10/10/2021.

⁶ Yeghia Tashjian and Mona Issa, "The axis of instability: The Azerbaijani-Israeli alliance", *Nour News*, October 4, 2020, <https://nournews.ir/En/News/54444/The-axis-of-instability-The-Azerbaijani-Israeli-alliance>, accessed 18/11/2021.

ղաքականությունը Հարավային Կովկասում⁷: Վերլուծաբանը պնդում է, որ նախկին նախագահը և նրա ԱԳ նախարար Մոհամմադ Ջարիֆը պասիվ դիրքորոշում են ցուցաբերել պատերազմի նկատմամբ, քանի որ կարծում էին, որ Իրանին անհրաժեշտ է Թուրքիան՝ միջուկային բանակցություններն առաջ մղելու համար⁸: Իրանն ավելի շատ էր գնահատում իր առևտուրը Անկարայի հետ, քան Երևանի հետ հարաբերությունները: Սակայն պահպանողականների իշխանության գալով Իրանի նոր կառավարությունը հասկացել է, որ վտանգված են իր աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերը տարածաշրջանում:

Առաջինը. ինչպես նշվեց, իրանցի փորձագետների մեծ մասը, որոնց հետ հարցազրույցների շարք ենք ունեցել, դիտարկել են տարածաշրջանային դինամիկան հակա-իսրայելական պրիզմայից: Վերջին տարիներին Ադրբեջանի և Իսրայելի միջև եղել են բարձրաստիճան պաշտոնական հանդիպումներ, երկուստեք ստորագրվել են տնտեսական, անվտանգության և ռազմական համաձայնագրեր: Ավելին՝ Իսրայելն օգտագործում էր Ադրբեջանը որպես հետախուզական բազա՝ Հյուսիսային Իրանում Իրանի ռազմական գործողությունները լրտեսելու համար: Վերլուծաբան Խոջեշմի խոսքերով, Մոսադն Ադրբեջանի սահմանից մարդասպաններ և գործակալներ է ուղարկել Իրան՝ սպանելու իրանցի միջուկային գիտնականներին⁹:

⁷ Հարցազրույց քաղաքական վերլուծաբան Սեյիտ Մոսթաֆա Խոջեշմի հետ, հոկտեմբեր 2021:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

Երկրորդը. Թուրքիայի աճող ազդեցությունը Հարավային Կովկասում Իրանի համար ևս մեկ «կարմիր գիծ» է, որը Անկարան հատել էր Երկրորդ արցախյան պատերազմից հետո: Իրանը մտավախություն ուներ, որ այս հակամարտությունը կհանգեցնի Ադրբեջանին աջակցելու Թուրքիայի նախաձեռնողական քաղաքականությանը, և դա Անկարային ավելի մեծ բաժնեմաս կտա Հարավային Կովկասի ապագայում: Քանի որ պատերազմն ավարտվեց Ադրբեջանի ռազմական հաղթանակով, պարզ էր, որ Բաքու-Անկարա դաշինքն արմատապես ամրապնդվել է, և Թուրքիան պատրաստվում է մնալ Ադրբեջանում:

Հարկ է նշել, որ 2020 թ. սեպտեմբերի վերջին պատերազմի բռնկման հետ մեկտեղ Իրանի թյուրքախոս բնակավայրերում (Իրանի թյուրքախոս բնակչությունը կազմում է 25 %) ցույցեր բռնկվեցին՝ պահանջելով ակտիվ աջակցություն սահմանի մյուս կողմում գտնվող իրենց էթնիկ ազգակիցներին: Պատեմյուս կողմում գտնվող իրենց էթնիկ ազգակիցներին: Պատերազմն այդպիսով բորբոքեց նաև ադրբեջանական ազգայնականության զգացումը Հյուսիսային Իրանի ներսում: Թեհրանը մտավախություն ուներ, որ իրեն կներքաշեն հայ-ադրբեջանական պատերազմի մեջ: Դրան հաջորդեց նախագահ Ռ. Էրդոհանի խոսքերը՝ մեջբերելով վիճահարույց բանաստեղծությունը Բաքվում (10 դեկտեմբերի, 2020 թ.) տեղի ունեցած զորահանդեսի ժամանակ՝ այսպիսով էլ ավելի թշնամացնելով իրանցիներին¹⁰: Շատ իրանցիներ կարծում էին, որ Թուրքիան Իսրայելի և Ադրբեջանի գործակալների օգնությամբ պատրաստվում է ապակայունացնել Հյուսիսային Իրանը:

¹⁰ “Iran protests to Turkey over ‘meddling’ poem recited by Erdogan”, *Aljazeera*, December 11, 2020, <https://www.aljazeera.com/news/2020/12/11/iran-protests-to-turkey-over-meddling-poem-recited-by-erdogan>, accessed 15/10/2021.

Վերջապես, չնայած այն հանգամանքին, որ Թեհրանը ողջունել է ռազմական գործողությունների ավարտը, վերջին պատերազմում նրա պասիվ դիվանագիտությունը բերեց նրա՝ տարածաշրջանում իր կարևոր տարանցիկ դերի կորստին: Եռակողմ հայտարարության հիման վրա ադրբեջանական Նախիջևանի անկլավը կապնվելու է Ադրբեջանի հետ Հարավային Հայաստանով անցնող ճանապարհով, հնարավոր է, Մեդրիի շրջանով: Այժմ, երբ Թուրքիան ներթափանցել է տարածաշրջան, և Իսրայելը, այս պատերազմի միջոցով, կարողացել է քաղաքականապես մեկուսացնել Իրանը, Թեհրանը մտահոգված է նաև տնտեսապես մեկուսացված լինելուց:

2005 թ. Բաքվի և թուրքական Ջեյհան նավահանգստի միջև շուրջ 1700 կմ երկարությամբ խողովակաշարը սկսեց շահագործվել: Դեռևս պատժամիջոցների սահմանումից առաջ այդ խողովակաշարերն իրանական գազի արտահանումը փոխարինեցին ադրբեջանականով: Էներգետիկ անվտանգությունն ամրապնդել է թուրք-ադրբեջանական առևտրային հարաբերությունները, ինչպես նաև այդ երկու պետությունների կապերը Եվրոպայի հետ. այժմ Բաքվից նավթը Թուրքիայով առաքվում է Եվրոպական երկրներ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարով: Ինչպես նշել է SWP գերմանական վերլուծական կենտրոնից Համիդոեգա Ազիզին, նոր երթուղին կնվազեցնի Իրանի՝ տարածաշրջանային տարանցիկ լինելու իմիջը և Նախիջևանի վրա ունեցած լծակները¹¹: Մինչդեռ Թուրքիան, որը սահմանակից է Նախիջևանին, ձեռք է բերում ցամաքային

եւր դեպի ադրբեջանական կողմ՝ առանց Իրանի կամ Վրաստանի տարածքով անցնելու, այդպիսով ուղղակիորեն կապված լինելով Կենտրոնական Ասիայի շուկաներին: Այսպիսով Իրանը կկորցնի իր լծակները նաև Ադրբեջանի վրա:

Երբ Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային բախումներ սկսվեցին, և Ադրբեջանի նախագահը հայտարարեց Հայաստանից տարածքային պահանջների վերաբերյալ իր իրական մտադրությունները (10 դեկտեմբերի, 2020 թ.), իրանցիները սկսեցին վերանայել իրենց քաղաքականությունը՝ մտահոգվելով ՀՀ Սյունիքի մարզի վրա ադրբեջանական ազդեցության մեծացմամբ¹²: Իրանը Սյունիքի զարգացումներով ակտիվորեն մտահոգված տարածաշրջանային տերություններից է: Իրանի տեսանկյունից՝ Հայաստանի հետ միջազգայնորեն ճանաչված սահմանների հետ կապված ցանկացած փոփոխություն կամ Սյունիքի նկատմամբ Հայաստանի ինքնիշխանության փաստացի կորուստը կսպառնա Իրանի ազգային անվտանգությանը և Իրանին կղնի Թուրքիայի և Ադրբեջանի առևտրային տակ, հատկապես, երբ խոսքը վերաբերում է Թեհրանը Ռուսաստանին և Եվրոպային կապող առևտրային ուղիներին: Իրանը գնահատում է Հայաստանը իր հյուսիս-հարավ միջանցքի նախագծերի համար, և Հայաստանը կարող է վերածվել արժեքավոր աշխարհատնտեսական տարանցիկ

¹¹ Yeghia Tashjian, "Iran and the Second Artsakh War: Has Tehran lost its leverage over the South Caucasus?", *The Armenian Weekly*, January 27, 2021, <https://armenianweekly.com/2021/01/27/iran-and-the-second-artsakh-war-has-tehran-lost-its-leverage-over-the-south-caucasus/>, accessed 26/10/2021.

¹² Yeghia Tashjian, "Syunik and the Geo-Economic Future of the South Caucasus", *The Armenian Weekly*, May 21, 2021, <https://armenianweekly.com/2021/05/21/syunik-and-the-geo-economic-future-of-the-south-caucasus/>, accessed 4/8/2022.

հանգույցի միայն այն դեպքում, եթե ավարտի այս միջանցքը՝ այդպիսով Իրանը միացնելով Սև ծովին և դրանից դուրս¹³:

Հայ-իրանական հարաբերությունների ամրապնդմանն ուղղված առաջարկություններ

Իրանցի փորձագետների հետ հարցազրույցների և հանդիպումների արդյունքում, ելնելով նրանց քաղաքական դիրքորոշումներից, նրանք հետաքրքիր առաջարկներ են կատարել հայ-իրանական հարաբերություններն ամրապնդելու համար: Այս առաջարկներից մի քանիսն իրատեսական էին և պետք է ուշադիր դիտարկվեն Երևանի կողմից, մյուս առաջարկությունները կարող են իդեալիստական թվալ՝ հաշվի առնելով տարածաշրջանի բարդ աշխարհաքաղաքական համակարգը, բայց նաև ընդգծում են, թե որքան հեռու կարող են գնալ իրանցի պահպանողականները, եթե զգան, որ իրենց ազգային անվտանգությունը վտանգված է:

- Եթե ապագայում Իրանը միանա ԵԱՏՄ-ին, ավելի լավ էլք կունենա դեպի եվրասիական, ռուսական, ինչպես նաև եվրոպական շուկաներ: Այս միացումը նաև ԵԱՏՄ անդամ երկրներին կտրամադրի ավելի մեծ էլք դեպի Պարսից ծոց և կմեծացնի առևտուրը և երկու կողմերի համար (Իրանը և ԵԱՏՄ այլ անդամներ) ավելի ուժեղ խթան կհանդիսանա՝ հետապնդելու ընդհանուր շահեր երրորդ կողմ պետություններում, օրինակ՝ Լևանտում: Այսպիսով, Ռուսաստանն ու Իրանը ավելի ամուր համագործակցություն կունենան Լևանտում և այլ տարածաշրջաններում, հետևաբար նրանք կաշխատեն

¹³ Yeghia Tashjian, "Is Iran making a comeback to the South Caucasus?", *The Armenian Weekly*, October 20, 2021, <https://armenianweekly.com/2021/10/20/is-iran-making-a-comeback-to-the-south-caucasus/>, accessed 29/11/202.

պաշտպանել իրենց ընդհանուր տնտեսական շահերը: Հետևաբար, տարածաշրջանային առևտրային ուղիների ապաշրջափակմամբ, երկարաժամկետ հեռանկարում Հայաստանը մուտք կունենա դեպի Լևանտի շուկաներ և երկաթուղիներով կհասնի Արևելյան Միջերկրական ծով:

- Ե՛վ Հայաստանը, և՛ Իրանը կարող են արագ միասնական համագործակցություն սկսել համատեղ ձեռնարկատիրական ծրագրերի, ինչպես նաև Իրանի ներդրումների միջոցով Հայաստանի մայրուղիներում, հատկապես, Նորդուգ սահմանային անցակետից մինչև Երևան՝ «Հյուսիս-հարավ» միջանցքի թողունակությունն ընդլայնելու նպատակով: Իրանի տեսանկյունից դա ոչ միայն կընդլայնի հայ-իրանական և տարածաշրջանային առևտուրը, այլև կխթանի Իրանի աշխարհատնտեսական շահերը Հայաստանում: Նման քայլերը կարող են հետագայում ներգրավել հնդկական, չինական և եվրոպական ներդրումներ, որոնք կուժեղացնեն Հայաստանի անվտանգությունն ու կայունությունը:

- Ե՛վ Հայաստանը, և՛ Իրանը կարող են նաև ռազմական համագործակցություն ունենալ՝ հանուն տարածաշրջանային կայունության և ապահովելու, որ տարածաշրջանի երկրների կայունության և ապահովության սահմանները կմնան հաստատուն և անվնաս, հատկապես Հայաստանում, և որպեսզի Իսրայելի և ԱՄՆ-ի նման պետությունները չփորձեն քավության նոխազ դարձնել Հայաստանը՝ թուլացնելով ՀՀ-ին հանուն Կովկասում իրենց ծրագրերի: Այդ իսկ պատճառով, ինչպես Հայաստանում, այնպես էլ Իրանում պետք է ստեղծվի հետախուզական համագործակցության կենտրոն, որտեղ երկու կողմերը կարող են կիսվել, վերլուծել և գնահատել տարածաշրջանային սպառնալիքներն ու ահաբեկչական գործողությունները,

որոնք կարող են վտանգ ներկայացնել երկու երկրների և տարածաշրջանի համար: Այս գործընթացը հեշտացնելու համար երկու երկրների անվտանգության ծառայության հաստատությունների միջև պետք է ստեղծվեն ուղիղ կապուղիներ:

- Անհրաժեշտ է, Սյունիքում բացել Իրանի հյուպատոսություն ռազմական համակարգողի/կցորդի հետ: Սա ճանապարհ կհարթի այլ պետությունների համար նմանատիպ քայլեր ձեռնարկելու և Սյունիքի միջազգային աջակցությամբ Հայաստանի ինքնիշխանությունը պահպանելու համար¹⁴:

- Հայաստանի և Ռուսաստանի Դաշնության համաձայնությամբ Սյունիքում ռազմաբազայի ստեղծում (իրանական պահպանողական փորձագետի առաջարկով)՝ 700-1000 իրանական ուժերի ներկայությամբ:

- Ադրբեջանական կողմի վրա ճնշումը մեծացնելու համար իրանական կողմը կարող է բարձրացնել Իրանով Նախիջևան մեկնող ադրբեջանցի բեռնատարների վարորդների տարանցման վճարները:

- Հայաստանի և Իրանի, Իրաքի, Սիրիայի և Լիբանանի ավյուրքի համայնքների միջև հաղորդակցության ընդլայնումը՝ Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում Իրանի մտադրություններն ու քաղաքականությունը համեմատելու և գնահատելու նպատակով: Այս համայնքները կարող են հանդես գալ որպես երկրորդական դեսպանություններ՝ հեշտացնելու հաղորդակցությունը և տեղեկատվության փոխանակումը տարբեր իրանական ու իրանամետ կազմակերպությունների և ՀՀ-ի միջև:

¹⁴ It is important to note that Iran already took such a decision on December 2021. "Iran To Open Consulate In Strategic Armenian Region", *Azattyun*, December 29, 2021, <https://www.azattyun.am/a/31631830.html>, accessed 27/1/2022.

YEGHIA TASHJIAN

Lebanon, Associate Fellow at Issam Fares Institute for Public Policy and International Affairs at the American University of Beirut
e-mail: yeghia.tash@gmail.com

IRAN'S ASSERTIVE FOREIGN POLICY TOWARDS SOUTH CAUCASUS

Many Iranian experts and scholars believe that the influence of the US is eroding in the region. This argument is justified by the US withdrawal from Afghanistan, Iraq, and other parts of the Middle East. However, the US military withdrawal and redeployment from the region does not mean its influence will diminish since the Americans will pursue their policy through their proxies and allies. Hence, the Saudis, Israelis, and Turks will try to shape the US interest in the region by containing the Russian, Iranian and Chinese interests. Iranians, especially the conservatives, view the regional geopolitical and geo-economic developments through this (anti-Israeli and anti-American) prism. This is why Iranians directly intervened in Syria and Iraq since they saw the "Sunni-Islamist jihadism" as an "American-Zionist plot" to change the balance of power in the region and destabilize Iran.

Tehran looks to the South Caucasus through the same prism. Although Tehran, diplomatically and militarily was not pro-active as its presence in the Middle East, however, this paper will highlight Iran's limitations and "red lines" in the region, analyze them and ask why Iran shifted from passive to assertive diplomacy, and raise few recommendations to strengthen the Armenian-Iranian relations.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հարցազրույց քաղաքական վերլուծաբան Սեյիտ Մուսթաֆա Խոշեկարմի հետ, հոկտեմբեր 2021:
2. Alex Vatanka, "Iran's strong hand in the Arab world is missing in the Caucasus", *Middle East Institute*, November 19, 2020, <https://www.mei.edu/publications/irans-strong-hand-arab-world-missing->

caucasus?fbclid=IwAR2ER1GikSJQvxemf1HHGIPAou0ddDYCogkyEDrPI ZPvLZPJ1zBTrnELI4.

3. Iran protests to Turkey over 'meddling' poem recited by Erdogan", *Aljazeera*, December 11, 2020, <https://www.aljazeera.com/news/2020/12/11/iran-protests-to-turkey-over-meddling-poem-recited-by-erdogan>.

4. It is important to note that Iran already took such a decision on December 2021. "Iran To Open Consulate In Strategic Armenian Region", *Azatutyun*, December 29, 2021, <https://www.azatutyun.am/a/316318-30.html>.

5. Joshua Kucera, "Bolton visits Caucasus amid anti-Iran campaign", *Eurasianet*, October 23, 2018, <https://eurasianet.org/bolton-visits-caucasus-amid-anti-iran-campaign>.

6. Yeghia Tashjian and Mona Issa, "The axis of instability: The Azerbaijani-Israeli alliance", *Nour News*, October 4, 2020, <https://nournews.ir/En/News/54444/The-axis-of-instability-The-Azerbaijani-Israeli-alliance>.

7. Yeghia Tashjian, "Iran and the Second Artsakh War: Has Tehran lost its leverage over the South Caucasus?", *The Armenian Weekly*, January 27, 2021, <https://armenianweekly.com/2021/01/27/iran-and-the-second-artsakh-war-has-tehran-lost-its-leverage-over-the-south-caucasus/>.

8. Yeghia Tashjian, "Syunik and the Geo-Economic Future of the South Caucasus", *The Armenian Weekly*, May 21, 2021, <https://armenianweekly.com/2021/05/21/syunik-and-the-geo-economic-future-of-the-south-caucasus/>.

9. Yeghia Tashjian, "Is Iran making a comeback to the South Caucasus?", *The Armenian Weekly*, October 20, 2021, <https://armenianweekly.com/2021/10/20/is-iran-making-a-comeback-to-the-south-caucasus/>.

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
իրանագիտության ամբիոնի դասախոս

էլ. փոստ՝ lianapetrosyan@ysu.am

DOI: 10.56813/2953-786X-2022.2-165

**ՊԱՆԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԻՐԱՆԻ
ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2005-2013 ԹԹ.¹**

Պանթյուրքական² նկրտումները Իրանի պարագայում վերաբերում են հիմնականում այս երկրի՝ ներկայում թյուրքախոս պատմական Ատրպատական երկրամասին, որտեղ էլ ատրպատականցիների շրջանում հիմնականում արտաքին դերակատարների կողմից փորձ է կատարվում խթանել պանթյուրքական նկրտումները՝ որպես վերջնական նպատակ ունենալով Իրանից այս հինավուրց երկրամասի անջատումը: Ատրպատականցիները պատմականորեն համարվում են Իրանի ամենամեծ, բազմամարդ ու ակտիվ էթնիկ խմբերից մեկը, սակայն չնայած թյուրքախոսության հանգամանքին՝ տեղի բնակչության մեծամասնությունն իրեն չի նույնականացնում թյուրքալեզու այլ էթնիկ խմբերի, այդ թվում՝ Ադրբեջանական Հանրապետության, այսպես կոչված, «էթնիկ ադրբեջանցիների» և Թուրքիայի Հանրապետության թուրքերի հետ: Թյուրքա-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-5F218 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Պանթյուրքականությունը ազգային-շովինիստական գաղափարախոսություն է, ըստ որի թյուրքախոս բոլոր ժողովուրդները, ենթադրաբար, մեկ ազգ են և պետք է միավորվեն Թուրքիայի տիրապետության ներքո՝ դառնալով մեկ պետություն:

լեզու ատրպատականցիները, որոնք կազմում են Իրանի բնակչության մոտ 16 %-ը (Iran, 2012), հիմնականում շիաական իսլամի հետևորդներ են և մեծ մասամբ բնակվում են հյուսիսարևմտյան Իրանում՝ Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով և Թեհրանում:

Հարկ է նշել, որ այս խմբի էթնիկական գիտակցությունը հիմնականում որոշարկվում է ոչ թե լեզվական պատկանելության՝ թյուրքախոսության հանգամանքով, այլ դավանական պատկանելությամբ՝ շիա լինելու գործոնով: Դա էթնիկ ինքնագիտակցության առումով ունի կարևոր նշանակություն՝ ձևավորելով մի ինքնություն, որը կարելի է բնորոշել «թյուրքախոս իրանցի» եզրույթով: Հենց այս հանգամանքով է պայմանավորված նաև այն, որ արդեն Սեֆյան Իրանի կայացման ժամանակահատվածում (սկսած 16-րդ դարից) իրանական պետականությունը հիմնականում պարսկա-թյուրքական սիմբիոզի արդյունք է, որտեղ վճռորոշ դերակատարություն ունեն հենց շիական իսլամի առանցքը:

Արդեն 1991 թ.՝ անկախ Ադրբեջանի ստեղծումից հետո, պանթյուրքական նկրտումներ ունեցող ատրպատականցիների որոշ խմբեր սկսել էին ադրբեջանամետ դիրքորոշում ցուցաբերել այն դեպքում, երբ ակնհայտ էր ատրպատականցիների և Ադրբեջանական Հանրապետության բնակչության միջև առկա էթնիկ, մշակութային ու գաղափարական անջրպետը: Այնուամենայնիվ, 2000-ականների սկզբին Իրանում ի հայտ էր եկել աշխարհիկ ծայրահեղ ազգայնամոլական գաղափարներով տոգորված ատրպատականցիների մի խումբ, որը կենտրոնացված էր այնպիսի խոշոր քաղաքների արվարձաններում, ինչպիսիք են Թավրիզը, Ուրմիան ու Արդաբիլը: Այս խմբի ներկայացուցիչները կասկածի տակ էին առնում Իրանի

կազմում ատրպատականցիների կարգավիճակը՝ մատնանշելով Իրանի կազմից դուրս գալու և Ադրբեջանի կամ Թուրքիայի Հանրապետությանը միանալու անհրաժեշտությունը: Իրական և ըստ էության, կեղծ ինքնությունների այս բախման համատեքստում առաջանում էր Իրանի ներքին անվտանգությանը սպառնացող հնարավոր և առկա վտանգների բացահայտման ու գնահատման անհրաժեշտությունը:

2005-2013 թթ. Իրանում ատրպատականցիների շրջանում պանթյուրքական խմբավորումների նոր ակտիվության ամենակարևոր պատճառներից մեկը համաիրանական մակարդակում աստվածապետական պետությունից և կրոնական ինքնորոշումից որոշակի հեռացումն ու ամբողջ երկրում էթնիկական ազգայնականության ամրապնդումն էր: Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ 2005 թ. Մահմուդ Ահմադինեժադի կողմից նախագահի պարտականությունները ստանձնելուց ի վեր երկրի ներսում չէին դադարում միջէթնիկ հակասությունները, իսկ պանթյուրքաստական խմբերը դժգոհություններ էին հայտնում Թեհրանի վարչակարգի հետ կապված, որ իշատրպատականցիների մեծամասնությունը պնդում էր, որ իշատրպատականցիների մեծամասնությունը պնդում էր, որ իշատրպատականցիները իրենց շատ լավ են վերաբերվում, և իրենք առավել, քան մյուս էթնիկ խմբերը ավելի ինտեգրված են իրանական հասարակության, բիզնեսի, քաղաքականության մեջ:

Պանթյուրքական շրջանակների կողմից մինչ օրս էլ հաճախ շահարկվում են իրանական ԶԼՄ-ներում երբեմն տեղ գտնող անզգույշ ձևակերպումները, որոնք օգտագործվում են հակաիրանական տրամադրություններ սնուցելու և լրացուցիչ պանթյուրքական տեղեկատվական աղմուկ ապահովելու համար: Օրինակ՝ 2006 թ. մայիսին Ատրպատականի մի շարք քաղաքներում բողոքի ցույցեր էին սկսվել այն բանից հետո, երբ

«Իրան» պետական թերթում ծաղրանկար էր տպագրվել, որտեղ պատկերված խավարասերը «խոսում էր» ատրպատականյան թյուրքերենով (Iran newspaper, 2006): Համաձայն «Եվրասիա» լրատվական գործակալության տեղեկատվության՝ Իրանի թյուրքախոս ատրպատականցիներով բնակեցված մի շարք քաղաքներում ոտքի էին ելել մի քանի տասնյակ հազար ատրպատականցի (Իսկանդարյան, 2006): Իրանի անվտանգության ուժերը բռնի ուժ էին կիրառել ցուցարարների դեմ՝ սպանելով առնվազն չորս քաղաքացու (ատրպատականցի ազգայնականները պնդում էին, որ քսան գոհ է եղել), վիրավորելով քառասուն և բերման ենթարկվելով հարյուրավոր մարդկանց (Amnesty International, 2007):

Իսկ 2007 թ. մայիսին, իբր լեզվամշակութային իրավունքի պահանջներով հանդես եկող պանթյուրքիստ ակտիվիստներ էին ձերբակալվել՝ կապված մայրենի լեզվով կրթության պատրվակով կազմակերպած խժժությունների հետ (Te' dād-e dastgir, 2007): Ընդհանուր առմամբ 2000-ականների սկզբից ի վեր, չնայած Իրանի իշխանությունների կոշտ արձագանքներին, պանթյուրքական խմբերը պարբերաբար գանգվածային երթեր էին անցկացնում իրենց՝ իբր ազգային խորհրդանիշների՝ Սաբալան լեռան և Բազ բերդի մոտ: Արդեն 2009-2014 թթ. ընթացքում Թավրիզում այս շրջանակների կողմից գրեթե անթաքույց խոսվում էր Իրանի ֆեդերալիզացիայի և Ատրպատականի ինքնավարության ստեղծման անհրաժեշտության մասին, և ժամանակ առ ժամանակ կարելի էր լսել Ատրպատականը Իրանից անջատելու վերաբերյալ կարգախոսներ:

2006 թ. իրադարձությունները և դրանց արձագանքման գործողությունները նպաստում էին ատրպատականցիների որոշ խմբերի շրջանում ազգայնականության ամրապնդմանը

և աստվածապետական վարչակարգի նկատմամբ թշնամանքի սրմանը: Այդ թշնամությունը ակնհայտ էր դարձել 2009 թ. նախագահական ընտրությունների ժամանակ, երբ Կանաչ շարժման ընթացքում Իրանի հյուսիսարևմտյան մասն անցել էր ծագումով ատրպատականցի և բարեփոխիչ Մ. Շ. Մուսավիի կողմը: Նույնիսկ հետընտրական բողոքների ճնշումները չէին կարողացել հանդարտեցնել իրավիճակը Ատրպատականում: Օրինակ՝ 2010 թ. մոտ 2-3 հազար մարդ բողոքի ցույց էր անցկացրել Թավրիզում՝ պահանջելով կրթություն ստանալու իրավունք տալ ատրպատականյան թյուրքերենով, և դատապարտել իրենց եզրաբանությամբ՝ «Իրանում ադրբեջանական թյուրքերի նկատմամբ խտրականությունը» (Djavadi, 2010):

Իրանի Ուրմիա լճի էկոլոգիական վիճակին առնչվող խնդիրները պանթյուրքական երանգ ստացող հակակառավարական ցույցերի ևս մեկ առիթ են հանդիսացել: Լիճը սնուցող գետերից ջրի սպառման աճի և այդ հոսանքների վրա ամբարտակների կառուցման պատճառով դրա մակարդակը աստիճանաբար կրճատվել էր, և մտավախություններ կային, որ այն կարող էր ամբողջությամբ չորանալ: Այս տեղանքում սաստիկ քամիների հետևանքով աղը չորացած մակերևույթից տարածվում էր մի քանի մղոն այն կողմ՝ ոչնչացնելով, ինչպես բուսական և կենդանական աշխարհը, այնպես էլ վնաս հասցնելով մարդկանց առողջությանը (Iranian greens, 2011): Մ. Ահմադի-մարդկանց առողջությանը, փաստացի, ոչինչ չարեց լճի չունեժադի կառավարությունը, փաստացի, ոչինչ չարեց լճի չունեժադի կառավարությունը, որը անջատողականներին հնարացումը կասեցնելու համար, որը անջատողականներին հնարավորություն տվեց այս բնապահպանական խնդիրը օգտագործել հակակառավարական տրամադրություններ բորբոքելու համար: Ենթադրվում էր, որ լճի ավելի քան 60 տոկոսը չորացել էր, և շրջակա տարածքից շատ մարդիկ լքել էին շրջանը

առողջական բարդությունների և բերքի աճի հետ կապված խնդիրների պատճառով: Անգամ նշվում էր, որ շրջանի գրեթե հիսուն գյուղեր արդեն 2013 թ. դրությամբ ամբողջովին լքված էին (Nemāīyandeīy-e ūrmīy-e, 2013): Փաստորեն, տեղացիների շրջանում բողոքն այն էր, որ Թեհրանի կառավարությունը հետաքրքրված չէր այս խնդրի կարգավորմամբ, ուստի տեղի թյուրքախոս բնակչության շրջանում իրավիճակը սկսում էր դիտարկվել ազգայնական պրիզմայի միջոցով՝ խտրական վերաբերմունք զգալով իշխանությունների կողմից:

2010-2012 թթ. շրջանի թյուրքախոս բնակչության կողմից մի շարք բողոքի ցույցեր էին կազմակերպվում՝ փորձելով ուշադրություն հրավիրել էկոլոգիական խնդիրների վրա, որոնք կառավարական ուժերի կողմից ճնշվում էին, որին էլ ի պատասխան՝ աճում էին բողոքների քաղաքական և ազգայնական դրսևորումները (Iranian greens, 2011): Անգամ 2010 թ. ֆուտբոլային հանդիպումներից մեկի ժամանակ երկրպագուները միացել էին Ուրմիա լճի շուրջ ազգայնական բողոքների ակիթին՝ վանկարկելով «Արի արտասվիր և լցրու Ուրմիա լիճը քո արցունքներով» (Ormu.wmv, 2010): Ուրմիա լճի շուրջ մասշտաբային իրադարձություններից էր 2011 թ. բողոքի ակցիան, որի ընթացքում ցուցարարների և ոստիկանության միջև բախումներ տեղի ունեցան ոչ միայն Թավրիզում և Ուրմիայում, այլև հենց լճի ափին (Dying Lake, 2011): Ակնհայտ է, որ էկոլոգիական խնդիրներին առնչվող ակցիաները պանթյուրքական ուղղվածություն ունեին, քանի որ թիրախավորվում էր այն հանգամանքը, որ իրանական իշխանությունների՝ իբր անգործության հետևանքով թյուրքախոս զանգվածը ոչնչացման եզրին է հայտնվել:

Իրանում ատրպատականցիների բողոքի ակցիաներն ու հակակառավարական ընդվզումները մեծամասամբ հրահրվում էին Ադրբեջանի ու Թուրքիայի իշխանությունների կողմից: Այս երկրների հատուկ ծառայություններն անգամ ֆինանսական աջակցություն էին ցուցաբերում պանթյուրքական քաղաքական ու հասարակական այն կազմակերպություններին, որոնք ձգտում էին կամ Իրանի ներսում ինքնավարության հաստատմանը, կամ Ադրբեջանի հետ միավորվելուն, կամ էլ հանդես էին գալիս համաթյուրքականության գաղափարների պաշտպանությամբ: Վերոնշյալ պետությունների տարածքում անցկացվում էին անջատողական կազմակերպությունների հանդիպումներ և համաժողովներ, տարածվում էին նրանց գրականությունն ու կարգախոսները և այլն: Իրանում, թեև դժգոհություններ կային հարևան պետությունների գործողությունների հետ կապված, սակայն պաշտոնական Թեհրանը զերծ էր մնում այս երկրներին հակաիրանական քաղաքականության մեջ մեղադրելուց: Մասնավորապես, թե՛ Իրանի, և թե՛ Ադրբեջանի պաշտոնական հռետորաբանությունը շատ ավելի զուսպ էր, և կողմերը ցանկանում էին նշել պետությունների բարիդրացիական հարևանությունը:

Հարկ է ընդգծել, որ Իրանում պանթյուրքիստական խմբերի ակտիվացումը անմիջականորեն ազգում էր նաև իրանահայ համայնքի և Հայաստան-Իրան հարաբերությունների վրա: Իսկ առավել ուշագրավ է այն, որ Ցեղասպանության կամ Արցախյան գոյամարտին նվիրված ոգեկոչման կամ հաղթանակի տոները հաճախ չեն իրականացվում Ատրպատականում հենց այդ օրերին կամ իրականացվում են առանց ավելորդ աղմուկի, քանզի այդ օրերի մասին տեղյակ է նաև թյուրքախոս հանրությունը, որը հաճախ սադրանքներ և բռնարարքներ է իրա-

կանացնում: Մասնավորապես, ուշագրավ դեպք արձանագրվեց 2004 թ., երբ Թեհրանի սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի բացումից հետո մի խումբ սադրիչներ փորձեցին իրարանցում առաջացնել և տապալել հուշարձանի բացման արարողությունը (Իսկանդարյան, 2005, էջ 104): Տարատեսակ սադրիչ գործողություններից զատ պանթյուրքիստական գաղափարներով լեցուն ատրպատականցիների մի հատված հաճախ հակահայկական բողոքի ակցիաներ և ցույցեր է իրականացնում տարբեր պետական կառույցների դիմաց, ինչպես նաև փորձում խոչընդոտել իրանահայերի բնականոն կենսագործունեությանը: Ցավալիին այն է, որ թյուրքախոսների սադրանքների արդյունքում հաճախ տուժվում են հենց իրանահայերը, որոնք ոչ միայն մարմնական վնասվածքներ են կրում, այլև հասարակական կարգը խախտելու մեղադրանքով սադրիչներին հավասար հայտնվում են իրավապահների ուշադրության կենտրոնում և ձերբակալվում:

Թեպետ իրանական իշխանությունները ոչ մի կերպ չեն խոչընդոտում իրանահայերի մշակութային ու հիշատակի միջոցառումների անցկացմանը, համացանցային կամ լրատվական հրապարակումներին ու տարատեսակ ելույթներին, սակայն զգուշավոր են թյուրքախոս ատրպատականցիների հետ հնարավոր բախումների նկատմամբ: Թերևս այս նկատառումից ելնելով է, որ հաճախ իրանահայերը տարատեսակ միջոցառումներ ստիպված են լինում անցկացնել տարբեր օրերի և առավել համեստ պայմաններում՝ ավելորդ ուշադրություն չգրավելու և բախումներից խուսափելու համար:

Պետք է ընդգծել, որ իրանական կողմը բավական զգուշավոր էր Հայոց ցեղասպանության ճանաչման և Արցախյան հիմ-

նախնդրի կարգավորման հարցում իր հայտարարությունների և մոտեցումների մեջ, հաշվի առնելով երկրի թյուրքախոս ատրպատականցիների թվաքանակը և Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հարաբերությունները, սակայն դա չի խանգարում Հայաստան-Իրան տնտեսական, քաղաքական, մշակութային և գիտական կապերի ու հարաբերությունների հաստատմանն ու զարգացմանը:

Վերոնշյալի համատեքստում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ազգային ինքնագիտակցության բարձրացման ֆոնին սրվեցին նաև ատրպատականցիների և կենտրոնական իշխանությունների հարաբերությունները: Դրա ցայտուն օրինակներից էին հատկապես ֆուտբոլային Դրա ցայտուն օրինակներից էին հատկապես ֆուտբոլային հանդիպումների ընթացքում տեղի ունեցող բախումները, որոնք հրահրվում էին հիմնականում ատրպատականցիների կողմից: Հատկանշական է, որ մինչև վերջերս էլ ակնհայտ են իրանցիների դեմ ասելության դրսևորումները, որոնցից մեկը Թավրիզի «Տրակտորսազի» ֆուտբոլային ակումբի խաղի ժամանակ արյունալի միջադեպն էր, երբ ատրպատականցի երկրպագուները քարերով հարձակվեցին Թեհրանի թիմի ֆուտբոլիստների վրա՝ ընդգծելով իրենց թուրք լինելը (Dar bāzī-e Persepolis՝ 2022): Փաստորեն, պանթյուրքական գաղափարներով լեցուն ատրպատականցիների ասելության խոսքը տարածվում էր ոչ միայն հիմնականում հայերի, այլև, անգամ իրանցիների նկատմամբ, ինչն էլ հիմնականում ուղղորդվում էր արտաքին ուժերի կողմից:

Ամփոփելով անդրադառնանք այն հարցին, թե որոնք էին Իրանի ներքին անվտանգությանը սպառնացող հիմնական վտանգները.

➤ Նախ, հաշվի առնելով ատրպատականցիների մեծաքանակ լինելը՝ տրամաբանական է, որ այն պետք է զգալի դերակատարություն ունենար Իրանի քաղաքական կյանքում:

➤ Աճող պանթյուրքական, ֆեդերալիստական և ծայրահեղ դեպքերում, նույնիսկ անջատողական ձգտումները, որոնց նպատակն էր անկախ մարզի ստեղծումը, հետխորհրդային Ադրբեջանի Հանրապետությանը կամ էլ Թուրքիային միանալը՝ իրանական կառավարությանը ավելի ու ավելի էր ստիպում այս էթնիկական միավորի որոշ խմբեր դիտարկել որպես երկրի անվտանգության սպառնալիք և մեծ ուշադրություն դարձնել հետագա զարգացումներին:

➤ Վերոնշյալին զուգահեռ ատրպատականցիների մի ստվար զանգված հակադրվում էր անջատողական գաղափարներով տոգորված իր հայրենակիցներին և հավատարիմ էր մնում իրանական պետությանն ու տարածքային ամբողջականության պահպանմանը:

➤ Ըստ էության՝ դժգոհությունների կարևոր պատճառներից էին նաև սոցիալ-տնտեսական խնդիրները: Բանն այն է, որ իրանական միջուկային ծրագրի հետ կապված ՄԱԿ ԱԽ պատժամիջոցների ընդունումից հետո ինչպես երկրի մյուս բնակչության, այնպես էլ ատրպատականցիների սոցիալ-տնտեսական կենսապայմանները որոշակիորեն վատթարացել էին, ինչն էլ բողոքի ակիբների խթան էր դարձել:

Այս ամենով հանդերձ իրանական իշխանություններն ամբողջովին վերահսկում էին իրավիճակը. ճնշվում էին զանգվածային գործողությունների ու բողոքի ակցիաների փորձերը, ձերբակալվում էին ատրպատականցի ակտիվիստները, վերահսկվում էր հասարակական կազմակերպությունների դեկավարների սոցիալ-քաղաքական գործունեությունը: Ինչ վե-

րաբերում է հարևան պետություններին, ապա Իրանն ուներ ճնշման իր սեփական լծակները այդ երկրների ներքին իրավիճակի վրա, ինչպիսիք էին Ադրբեջանում շիայական գործոնը, այն է՝ Իսլամական հեղափոխության արտահանման սպառնալիքը և էթնիկ հակամարտությունները Թուրքիայում, որոնք Իրանին թույլ էին տալիս պահպանել ուժերի հավասարակշռությունը:

LIANA PETROSYAN

YSU Faculty of Oriental Studies

Lecturer of the Chair of Iranian Studies

e-mail: lianapetrosyan@ysu.am

THE ISSUE OF PAN-TURKISM IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN IN 2005-2013³

Ethnic nationalism is an important component of the internal political life of any country, given the need to strengthen the internal security of that country, and in the case of Iran, being also at the crossroads of civilizations and ethnic groups. The activities of ethnic nationalists in western and southwestern Iran, where the economic and religious situation is markedly different from other Iranian provinces, and the potential for provocations by foreign forces in those areas may be significant. The situation is exacerbated by the existence of so-called "irredentism". On the one hand, Iran has the opportunity to influence its neighbors, but on the other hand, its neighbors can incite their target ethnic group to inter-ethnic clashes in Iran.

³ The work was supported by the Science Committee of MESCS RA, in the frames of the research project № 21T-5F218.

In the context of the above, the issue of pan-Turkism in Iran is an important subject of discussion, which refers to the now Turkic-speaking historical Aturpatakan region, where activists try to promote pan-Turkic aspirations, mainly as foreign actors, with the ultimate goal of secession of this ancient land from Iran. It should be noted that the ethnic consciousness of this group is mainly determined not by the circumstance of linguistic affiliation, Turkish speaking, but by religious affiliation, the factor of being Shia. It is important in terms of ethnic self-awareness, forming an identity that can be defined by the term "Turkic-speaking Iranian".

However, it should be noted that the Iranian authorities are in full control of the situation. Attempts at mass actions and protests are suppressed, activists are arrested, and the socio-political activities of NGO leaders are monitored. As for the neighboring countries, Iran had its own levers of pressure on the internal situation of those countries, such as the Shiite factor in Azerbaijan, the threat of exporting the Islamic Revolution, and ethnic conflicts in Turkey, which allowed Iran to maintain the balance of power.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Իսկանդարյան Գ., Իրանի դիքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 24, Երևան, 2005, էջ 104:
2. Իսկանդարյան Գ., Հյուսիսային Իրանում վերջին զարգացումների շուրջ, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=536, (30. 06. 2006):
3. Amnesty International USA, Iran, <https://web.archive.org/web/20070713224215/http://www.amnestyusa.org/annualreport.php?id=ar&yr=2007&c=IRN>, (13.07.2007).

4. Djavadi A., Tabriz Demonstrators Demand Right to Education in Azeri, https://www.rferl.org/a/Tabriz_Demonstrators_Demand_Right_To_Education_In_Azeri_Turkish/2116559.htm, (02. 08. 2010).
5. Dying Lake Gives New Life To Iran's Antigovernment Protests, https://www.rferl.org/a/dying_lake_revives_iran_protests/24314925.html, (01.09.2011).
6. Iran, <https://web.archive.org/web/20120203093100/https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ir.html>, (11.01.2012).
7. Iran newspaper, <https://iranian.com/News/2006/May/Images/soosk.jpg>, (19.05.2006).
8. Iranian greens fear disaster as Lake Orumieh shrinks, <https://www.theguardian.com/world/2011/sep/05/iran-greens-lake-orumieh-shrinks>, (05.09.2011).
9. Ormu.wmv, <https://www.youtube.com/watch?v=wbqgwAjPR00>, (10.13.2010).
10. Dar bāzī-e Persepolis va Trāktorsāzī če roḥ dād (Ի՞նչ է տեղի ունեցել Պերսեպոլիս-Տրակտորսազի խաղի ժամանակ), <https://www.bbc.com/persian/sport-61537861>, (22.05.2022):
11. Nemāiyandeīy-e ūrmīy-e dar maḡles: 50 rüstāiy eṭerāf darīyāḷeīy-e ūrmīy-e taḥlīy-e šod-e ast (Խորհրդարանում Ուրմիայից ընտրված պատգամավոր: Ուրմիայի շրջակայքի 50 գյուղ դատարկվել է), Nemāiyandeīy-e ūrmīy-e dar maḡles: 50 rüstāiy eṭerāf darīyāḷeīy-e ūrmīy-e taḥlīy-e šod-e ast, (12.01.2013):
12. Te'dād-e dastgir šodegān-e Tabrīz biš az 15 nafar ast? (Թավրիզում ձերբակալվածների թիվը 15-ից ավելի՞ն է), https://www.radiofarda.com/a/o2_tabriz/394251.html, (24.05.2007):

ԱՀԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ,
իրանագիտության ամբիոնի դասախոս
Էլ. փոստ՝ aharon.vartanean@gmail.com
aharon.vardanian@ysu.am*

ԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ,
իրանագիտության ամբիոնի մագիստրոս
Էլ. փոստ՝ ani.margaryan3@ysumail.am
DOI: 10.56813/2953-786X-2022.2-178*

**ԱՐՅԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԻԻՀ
ՆԵՐՔԻՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ՝ ՔԱՌՕՐՅԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՍՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ (2016-2020 ԹԹ.)**

Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) պետական բարդ համակարգի պարագայում, որտեղ որոշումների կայացման գործընթացն աշխատում է «բարդ համակարգում կոնսենսուսի» սկզբունքով (Byman, 2001: 21), այդ նույն գործընթացի վրա ազդող գործոնները և տրամաբանությունը դժվար է հատկորոշել: Քաղաքականություն որոշող ինստիտուտների, ինչպես նաև քաղաքական տարբեր թևերի մոտեցումներն արտահայտվում են ներքին խոսույթում՝ դրանց հետ կապված անձանց տեսակետների ու մեղիա ռեսուրսների միջոցով:

Ներքին խոսույթում առկա տեսակետների, վերլուծությունների ու դիրքորոշումների միջոցով փորձել ենք բացահայտել ԻԻՀ՝ Արցախյան հակամարտությանն ուղղված մոտեցումների տրամաբանությունը: Դիտարկվել են հենց այդ ներքին քննարկումները՝ ներիրանական խոսույթը՝ հիմնականում

իմաստային (թեմատիկ) և քննախոսական (դիսկուրս) վերլուծության միջոցով:

• Ներքին քննարկումները 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի համատեքստում

Քառօրյա պատերազմի ընթացքում և դրանից անմիջապես հետո, բուն ռազմական գործողությունների՝ հիմնականում չեզոք լուսաբանումից անդին, իրանական մեղիայում քննարկումն ընթանում էր պատերազմի սանձազերծման պատճառների շուրջ: Այս ուղղությամբ վերլուծություններում ուրվագծվում են պատճառների մատնանշման երկու մակարդակներ. առաջինը՝ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների և առկա ներքին պատճառների, երկրորդը՝ արտաքին խաղացողների հարաբերությունների համատեքստում:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ պատերազմի՝ Ադրբեջանի կողմից սանձազերծված լինելը վերլուծություններում կասկածի տակ չի դրվում: Այսպես, օրինակ՝ ապրիլի 5-ին «Ղողս» օրաթերթի¹ կայքին տված հարցազրույցում միջազգային հարցերով փորձագետ Հասան Բեհեշթիփուրը բախումը համարում է «նավթի գնի անկման պատճառով Ադրբեջանում առաջ եկած տնտեսական և դրա արդյունքում՝ նաև քաղաքական» ճգնաժամի արդյունք, որի միջոցով «*Իլհամ Ալիևը ցանկանում է... Ադրբեջանի ժողովրդի զգացմունքներն ու համակարծությունը հրահրելով՝ ուշադրությունը շեղել մյուս խնդիրներից*» (Quds Online 2016): Կովկասի հարցերով զբաղվող մեկ

¹ «Ղողս» օրաթերթը տպագրվում է Թեհրանում ու Մաշհադում միաժամանակ և պատկանում է «Ասթան-ե Ղողս-ե Ռազավի» հիմնադրամին: Բոնիադներն Իրանում, ըստ էության, հոգևոր առաջնորդի կողմից վերահսկվող ֆինանսական ցանց են կազմում: Օրաթերթի անվանումը չպետք է շփոթել կապելով «Ղողս» ուժերի հետ:

այլ փորձագետ՝ Վալի-Քուզեզար Քալեջին (Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի² ավագ փորձագետ, «Իրաս»³-ի գիտական խորհրդի անդամ) նկատում է (4 ապրիլ, 2016 թ.) նաև, որ «Ադրբեջանի ռազմական գործողությունները կամ ռազմական արձագանքը կարելի է համարել Մինսկի խմբի մեխանիզմով հակամարտությունը խաղաղ կերպով լուծելու ուղղությամբ Ադրբեջանական Հանրապետության հիասթափության և անհուսության արդյունքը...» (Kāleji, 2016):

Մեր առանձնացրած երկրորդ՝ արտաքին խաղացողների հարաբերությունների համատեքստում ընթացող քննարկումն ու վերլուծությունները կարելի է դասակարգել մի քանի հիմնական թեմաների:

Ռուսաստան-Արևմուտք շահերի բախում: Այս խոսույթը, թերևս, լավագույնն է արտահայտում Ադրբեջանում ԻԻՀ նախկին դեսպան Աֆշար Սոլեյմանիի՝ «Դիփլոմասի-յե իրանի» կայքի համար գրված հոդվածը (6 ապրիլ, 2016 թ.), որտեղ նա նշում է, որ Ռուսաստանը «պարզապես օգտագործում է Հա-

յաստանին», որպեսզի խանգարի Ադրբեջանին՝ խորացնել ինտեգրումը դեպի Արևմուտք (Soleymani, 2016):

Թուրքիայի շահագրգռվածություն, Ռուսաստան-Թուրքիա անուղղակի առճակատում: Թեհրանի քաղաքապետարանի «Համշահրի» օրաթերթում 2016 թ. ապրիլի 3-ին հանդիպում ենք «Ղարաբաղի ճգնաժամի լուծման բանալին՝ Ռուսաստանի ձեռքում» վերտառությամբ հոդվածի, որի հեղինակ Բահրամ Ամիրահմադիանը (Եվրասիայի հարցերով փորձագետ, Թեհրանի համալսարան) պնդում է՝ «Ադրբեջանի և Հայաստանի միջև բախումը նշանակում է նաև Թուրքիայի և Ռուսաստանի անուղղակի առճակատում»՝ միտված Ադրբեջանին «դեպի Ռուսաստան թեքվել» ստիպելու (Amirahmadiān, 2016): Այսպիսի տեսակետից բացի՝ վերլուծական խոսույթում առավել հաճախադեպ են «մերձավորարևելյան ճակատի» հիշատակումները. «անհավանական չի թվում, որ [Թուրքիան] ցանկություն ունենա Ռուսաստանի համար նոր մի ճակատ բացելու պատվել Միրիայի ճգնաժամում առկա ճնշումից» (Noruzpur, 2016). «Խաբար Օնլայն» լրատվականի⁴ հետ հարցազրույցում (9 ապրիլի, 2016 թ.) նշում է Ռուսաստանի և Կենտրոնական Եվրասիայի հարցերով փորձագետ Ջահանգիր Քարամին: «Մերձավոր Արևելքից շեղելու» Թուրքիայի նպատակի մասին այսպիսի տեսակետները մեկ անգամ չէ, որ հանդիպում են. օրինակ՝ «Թուրքիայի ինտերվենցիոն քաղաքականության» համատեքստում այս մասին է խոսում նաև Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի՝ Ռուսաստանի ու Կովկասի քաղաքական հարցերով հետազոտող Ջոհրե Խան-Մոհամմա-

² Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (CSR) ռազմավարական հարցերով Իրանի առաջնակարգ «Think Tank»-երից էր (գործել է մինչև 2017 թ.), որը ԻԻՀ Համակարգի նպատակահարմարության խորհրդի հետազոտական թևն էր կազմում: 1992-2013 թթ. կենտրոնի նախագահն է եղել Հասան Ռոհանին: 1997 թ. որպես այս կենտրոնի համագործակից հիմնադրվել է նաև Նախագահին կից Ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնը (CSS):

³ «Իրաս»-ը կամ «Իրան-Եվրասիա» վերլուծական-հետազոտական կենտրոնը իրանական հեղինակավոր «Think Tank»-երից մեկն է, որը գործում է որպես ոչ կառավարական վերլուծական կենտրոն սկսած 2004 թվականից: Կենտրոնի ղեկավարը Մեհդի Մանային է, որը 2013-2019 թթ. զբաղեցնում էր Ռուսաստանում Իրանի արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնը, իսկ 2008-2013 թթ. եղել էր ԻԻՀ Խորհրդարանի պատգամավոր:

⁴ «Խաբար Օնլայն»-ը բարեփոխական ուղղվածությամբ լրատվամիջոց է, որի հիմնադիր Ալիոեզա Մոեզին ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանիի գրասենյակի հանրային կապերի և տեղեկատվության պատասխանատուն էր:

դին՝ «Դիփլոմասի-յե Իրան»-ում (Xān-Mohammadi, 2016), բարեփոխական «Շարդ» օրաթերթը (Ruznāme-ye Šarq, 2016), կամ, օրինակ՝ նույն Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հետազոտողներից Վալի Գոլ Մոհամմադին՝ արդեն «Իրաս» վերլուծական-հետազոտական կենտրոնի կայքում: Այս վերջին վերլուծության՝ տարածաշրջանում Թուրքիա-Ռուսաստան հարաբերությունների դերին վերաբերող հատվածը ևս խիստ բնութագրական է. «*Ռուսաստանի և Թուրքիայի երկկողմ համագործակցությունից մինչև հակամարտություն, հարաբերություններն են, որ որոշելու են Հարավային Կովկասում անվտանգային և աշխարհաքաղաքական զարգացումների ընթացքը*» (Gol-Mohammadi, 2016):

«*Արևմուտքի*» և «*բացասական բնեռի*» այլ խաղացողների շահեր: Որպես այս շրջանում հասարակական-վերլուծական խոսույթի կարևոր բնութագրիչ՝ հարկ ենք համարում ընդգծել, որ Իրանում ընդհանուր առմամբ բացասականորեն ընկալվող խաղացողներն, ըստ էության, որպես ադրբեջանական կողմի միջնորդավորված հովանավոր են դիտարկվում: Այսպես օրինակ՝ պաշտոնական «Իրնա»-յում ԱՄՆ-ն և ՆԱՏՕ-ն հիշատակվում են որպես «*Թուրքիայի հովանավորներ*» (‘Asgari, 2016), իսկ «Մաշրեդ»⁵ լրատվականը ԱՄՆ-ին «*Ղարաբաղի վրա հարձակվելու կանաչ լույս վառող*» է համարում՝ նշելով (4 ապրիլի, 2016 թ.), որ «*Վաշինգտոնն այս աջակցության համար երկու կարևոր պատճառ ունի՝ աշխարհաքաղաքականությունն ու փողը*» (Mashregh News, 2016, I): Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Ադրբեջանի պոտենցիալ աջակիցների

⁵ Ըստ որոշ աղբյուրների՝ «Մաշրեդ»-ը մոտ է կանգնած ԻՀՊԿ-ի հետախուզությանը:

թվում հիշատակվում է անգամ Սաուդյան Արաբիան (Kāleji, 2016)⁶:

Բացի արտաքին խաղացողների դիրքավորմանն ու մասնակցությանը վերաբերող քննարկումներից, Ապրիլյան պատերազմի հետ կապված իրանական լրատվական, վերլուծական տիրույթում, ինչպես նաև տարատեսակ ուղեղային կենտրոններում ուրվագծվում են ևս երկու կարևոր թեմաներ, որոնք ուղղակիորեն մատնացույց են անում տարածաշրջանի հետ կապված ԻԻՀ-ում առկա մտավախությունները:

Դրանցից առաջինը *տարածաշրջանում ահաբեկչական ուժերի ներգրավման հնարավորությունն է*: Անկայուն իրավիճակի դեպքում ահաբեկչական խմբավորումների ներթափանցման վտանգի մասին հիշատակումներ կան հակամարտությանը վերաբերող փորձագիտական տեսակետների զգալի հատվածում (Kāleji, 2016; Quds Online, 2016): Չափազանց խոհատվածում (Kāleji, 2016; Quds Online, 2016): Չափազանց խոսուն է իրանական մեդիայում «պտտվող» մի հոդված, որը վերստին է իրանական մեդիայում «պտտվող» մի հոդված, որը վերստին է նագրված է «Ղարաբաղյան հակամարտության սրացում 2փման գծում. ԻՊ-ը նույնպես մտավ ասպարեզ» (Bayāt, 2016)⁷:

Երկրորդ կարևոր թեման *Իսրայելի գործոնն է*: Խոսույթի այս տարրը ևս, ինչպես վկայում են մեր ուսումնասիրությունները, առավել բնորոշ է ԻՀՊԿ-ամերձ շրջանակներին: Այսպես՝ «Թասնիմ» լրատվական գործակալությունը 2016 թ. ապրիլի 6-

⁶ Ավելորդ չէ նշել, որ 2016 թ. հունվարին սաուդա-իրանական հարաբերություններում հերթական սրացումն էր տեղի ունեցել՝ Սաուդյան Արաբիայում հայտնի շիա քարոզիչ Նիմրա Ալ-Նիմրիի մահապատժի հետևանքով:

⁷ Հոդվածում «ԻԼԻՊ-ը Ղարաբաղ է գնում» ենթավերնագրի տակ «Մպուտ-նիկ» լրատվական գործակալությանը հղումով նշվում է, որ «ԻԼԻՊ (սիոնիստական «թաքֆիթի») կազմակերպության՝ ԱՀ-ից անդամները, որոնց թիվը հասնում է մոտ 100-ի, պատերազմի համար Սիրիայից ուղևորվել են Ղարաբաղի տարածաշրջան:

ին հրապարակում է «Միոնիստական ռեժիմի՝ Ղարաբաղի ճգնաժամում ներգրավվածության նշանները» վերտառությամբ նյութ (Tasnim, 2016), իսկ «Մաշրեդ» լրատվական գործակալությունը դրանից մեկ օր առաջ խոսում էր «*Բարվի և Երևանի միջև պատերազմի շարունակությունից Թել-Ավիվի ռեժիմի շահերի*» մասին՝ նշելով, որ «*Ադրբեջանն Իրանի հարևանը ու միաժամանակ թշնամին է և Իսրայելի համար Իրան տանող «հետնամուտք» է համարվում*» (Mashreg News, 2016, II):

Հատկապես Արցախյան՝ 44-օրյա պատերազմի հետ համեմատության համատեքստում կարևոր ենք համարում նշել, որ սրման այս՝ 2016 թ. շրջանում իրանական խոսույթում «*Ղարաբաղի՝ իսլամական հող*» լինելու մասին⁸ կամ «*որպես իսլամի հող Ղարաբաղն ազատագրելու*» վերաբերյալ խոսույթի տարրը մնում է լուսանցքային մակարդակում, և խոսույթում նշանակալի տեղ, որպես այդպիսին, չի զբաղեցնում (տե՛ս օրինակ՝ Rāh-e Dānā, 2016): Այս բնույթի խոսույթում դիտարկվող շրջանում աչքի է զարնում մեկ այլ կարևոր հանգամանք ևս՝ անգամ Արցախը «*իսլամի հողերին վերադարձնելու*» կողմնակիցների դիրքորոշման մեջ առկա է մեկ հաստատուն գիծ՝ այն է՝ պատերազմը հնարավորինս շուտ կանգնեցնելը և ավելի մեծ սրացում թույլ չտալը (Mehr News Agency, 2016):

⁸ Հաճախադեպ են հղումները Գերագույն հոգևոր առաջնորդի «*Ղարաբաղն իսլամի հող է*» արտահայտությանը: Կոնկրետ այս ձևակերպումը, սակայն, հոգևոր առաջնորդի ելույթներում առկա չէ: Այնուամենայնիվ, այսօրվա խամենեյի 1993-1994 թթ. հրապարակային խոսքում կարելի է հանդիպել «*Ղարաբաղում հայերի ու Հայաստանի կողմից բռնաճնշված մուսուլմաններ*»-ի, «*Ադրբեջանի ժողովրդի նկատմամբ հայերի ագրեսիա*»-ի ևն մասին ձևակերպումների: Տե՛ս օրինակ՝ KHAMENEI.IR 1993; KHAMENEI.IR 1994:

Այս առումով երկու տասնամյակում կարգավորում չգտած ու վերստին ռազմական գործողությունների հասած հակամարտությունը առիթ է դառնում կրկին ու կրկին կարգավորման առկա՝ Մինսկի խմբի ձևաչափը քննադատելու: Ըստ հիմնավորումների՝ սանձազերծված պատերազմը ապացուցում է այդ ձևաչափի «անարդյունավետությունը», ուստի անհրաժեշտ է, որ Իրանը գործուն քայլերի դիմի՝ կարգավորման գործընթացն իր ուսերին վերցնելու ուղղությամբ: Օրինակ՝ ծայրաստիճան պահպանողական «Քեյհան» օրաթերթում⁹ Միջին Արևելքի հարցերով փորձագետ Սաադոլլահ Զարահին արդեն 2016 թ.ապրիլի 4-ին գրում էր, որ «*Իրանը, Ռուսաստանը և Թուրքիան Ադրբեջանի ու Հայաստանի հետ միասին կարող են Ղարաբաղյան ճգնաժամի և նման ճգնաժամերի լուծման համար ավելի լավ քանաձև ներկայացնել*» (Zāra'i, 2016), իսկ քաբեփոխական «Շարդ»-ի էջերում տպագրվում էին ԱՄՆ-ում Իրանի դեսպանության նախկին անդամ և Իրանի Ազգային ճակատի խոսնակ Դավուդ Հերմիդաս-Բավանդի տեսակետներն առ այն, որ Իրանը կարող է «*նախորդ անգամվա նման*»¹⁰ կողմերի ներկայացուցիչներին Թեհրան հրավիրել, իսկ որպես լուծման քանաձև առաջարկում է Կիպրոսի օրինակը՝ սկզբնական շրջանում կոալիցիոն կառավարության ստեղծմամբ (Faršid, 2016):

⁹ «Քեյհան» օրաթերթը շատ հաճախ համարվում է Գերագույն հոգևոր առաջնորդի խոսափողը:

¹⁰ «Նախորդ անգամ»-ը վերաբերում է 1992 թ. Իրանի միջնորդական ջանքերին, որոնք, ըստ փորձագետի, ձախողվել են գլխավորապես Թուրքիայի պատճառով:

բաժաշրջանում «իր նկատառումները քննարկման առարկա դարձնել» (Montazerān, 2020): Այս ուղղությամբ քննարկման շրջանակներում խոսույթ է մուտք գործում նաև «2+3» (Հայաստան, Ադրբեջան + Ռուսաստան, Իրան, Թուրքիա) բանաձևով աշխատելու առաջարկը՝ որպես միջնորդական հնարավոր ձևաչափ (E'temād Online, 2020)^{13, 14}:

Դիվանագիտական խաղից «դուրս չմնալու» համար ջանքեր ներդնելու անհրաժեշտությանը զուգահեռ, պատերազմի օրերին իրանական խոսույթում բաց և պարզորոշ արտահայտվում են նաև ԻԻՀ անվտանգության վերաբերյալ մտահոգությունները, որոնց շարքում էին առաջին հերթին Իրանի հյուսիսային սահմանների ուղղակի անվտանգությունը, դրանց հարևանությամբ վարձկան ահաբեկիչների ներկայությունը, թյուրքախոս բնակչության հետ կապված ներքին կայունության սպառնալիքները, Իսրայելի ռազմական ներկայությունը՝ հատկապես հետախուզական ԱԹՄ-ների տեսքով և այլն:

Այս առումով չափազանց ուշագրավ է, որ Իրանի տարածք «պատահականորեն» մուտք գործած ԱԹՄ-ների մասին խոսելիս հատկապես՝ Իրանի ՀՕՊ ուժերի կողմից երկրի օդային տարածքում այդ ԱԹՄ-ների խոցումից հետո¹⁵), ըստ էության,

¹³ Ըստ էության, հենց այս առաջարկն էլ տարածաշրջանային այցերի ժամանակ ներկայացրել էր Մ.-Ջ. Ջարիֆը: Այդ մասին տե՛ս Mohammedi, 2020:

¹⁴ Միևնույն ժամանակ, Ադրբեջանում ԻԻՀ նախկին ղեկավար և արտաքին քաղաքական հարցերով փորձագետ Մոհսեն Փաքայինն, օրինակ, խոսում էր (5 հոկտեմբերի, 2020 թ.) Թուրքիայի ակնհայտ կողմնակալության ու ուղղակի մասնակցության մասին՝ նշելով, որ «Իրանը Թուրքիայից առավել անկողմնակալ է» և «Թուրքիան այս ուղղությամբ միջնորդության հնարավորություններ չունի» (Xāledi, 2020):

¹⁵ Այդպիսի դեպքերից ամենաքննարկվածն, իհարկե, ադրբեջանական կողմին պատկանող իսրայելական արտադրության Harop տեսակի ԱԹՄ-ի խոցումն էր Արդաբիլ նահանգում, տե՛ս օրինակ՝ TABNAK, 2020, II:

բազմիցս ընդգծվում է դրանց «սիոնիստական» «լրտեսական» լինելու հանգամանքը, և որոշ տեղերում անգամ հիշատակվում, որ դրանց իրական նպատակակետը Իրանի միջուկային ձեռնարկություններն են (Telegram Channel “Axbār-e Surie”, 2020):

Վարձկան ահաբեկիչների՝ ռազմական գործողություններին գոտում ներկայությունը ևս Իրանի գլխավոր մտահոգություններից էր: Այսպես, օրինակ՝ ազգայնական ճակատի՝ ԻԻՀ կառավարության կողմից առավել գործուն քայլեր պահանջող հայտնի փորձագետներից Սալար Սեյֆոդդինին գրում էր, որ «այժմ հյուսիսարևմտյան սահմանների հարևանությամբ ահաբեկիչների և թշնամական զինված ուժերի ներկայությունը Իրանի ազգային անվտանգության համար մեծագույն սպառնալիք է դարձել», ուստի պետք է, որ «Արաքսից այն կողմ» տարածքներում կայունություն ապահովելու քայլեր ձեռնարկվեն (Seyfoddini, 2020, II):

Միևնույն ժամանակ, մինչ երկրի նախագահն ու դիվանագիտական գերատեսչությունը ջանում էին միջնորդության և «ակտիվ չեզոքության» քաղաքականության շրջանակներում լուծումներ և ազդեցության ընդլայնման տարբերակներ գտնել¹⁶, ուժային կառույցներն (մասնավորապես՝ ԻԻՀ Բանակը և ԻՀՊԿ-ն) գործնական ու տեսանելի քայլեր էին ձեռնարկում՝ Իրանի հյուսիսարևմտյան սահմանների երկայնքով նշանակալի ուժեր և զրահատեխնիկա կենտրոնացնելով

¹⁶ Այս առումով հարկ է նշել նաև, որ, ըստ երևույթին, Իրանում ի սկզբանե թերագնահատել էին պատերազմի ծավալները, իսկ ապա սխալվել Ռուսաստանի ներգրավման վերաբերյալ գնահատականներում՝ կարծելով, որ այդ երկիրը ևս անմիջականորեն կմտնի հակամարտության մեջ Հայաստանին աջակցելու:

(Donyā-ye Eqtesād, 2020): Զուգահեռաբար այս կառույցներին կից մեղիա ռեսուրսները ևս ժամանակ առ ժամանակ հրապարակում էին բավական կոշտ տեքստեր՝ վերոնշյալ սպառնալիքներին դիմագրավելու անհրաժեշտությունը շեշտելով (Telegram Channel “Axbār-e Surie”, 2020):

Անվտանգային սպառնալիքների, ինչպես նաև խոսույթի նոր տարածքում գտնող տարրերի առումով հարկ է հիշատակել նաև պատերազմի ընթացքում Իրանի՝ նշանակալի *թյուրքախոս բնակչությունն ունեցող որոշ քաղաքներում* (հիմնականում՝ Թավրիզ, նաև Զանջան, Արդաբիլ) տեղի ունեցած *հավաքներն ու բողոքի ցույցերը*՝ «Ադրբեջանի տարածքային ամբողջականության պաշտպանության», ինչպես նաև «Իրանի տարածքով դեպի Հայաստան գեներալ մատակարարումը կանգնեցնելու» պահանջներով ու «Ղարաբաղը մերն է, մերն է մնալու»-ից մինչև «Ադրբեջանը մեկ լինի, Թավրիզը մայրաքաղաքը լինի», «Նորդուզը¹⁷ պետք է փակել», «Հայերին աջակցելը հանցագործությունն է» և այլ նմանատիպ կարգախոսներով (Mashreg News, 2020, III; Gunaz.TV, 2020; GADTB, 2020)¹⁸: Այս դրսևորումներից առավել հետաքրքրական են, սակայն, դրանց արձագանքները. այսպես, օրինակ՝ ԻՀՊԿ-ին մոտ կանգնած «Մաշրեդ»-ը 2020 թ. նոյեմբերի 1-ին դրանք որակում է որպես «Իրանը բաժանելու դավադրություն՝ Ղարաբաղի ճգնաժամի

¹⁷ Նորդուզի սահմանին է գտնվում Հայաստան տանող իրանական անցակետը:

¹⁸ Որպես կանոն այս հավաքների փոքրաթիվ մասնակիցները «ազգայնական» ու «անջատողական» կարգախոսներ վանկարկելուց պես անմիջապես ցրվում էին ոստիկանական ուժերի կողմից, իսկ հիմնականում սոցիալական ցանցերում և որոշ հայտնի քարոզչական հարթակներով տարածվող Հայաստանին գեներալ մատակարարման վերաբերյալ մեղադրանքներն էլ պաշտոնապես հերքվել էին:

պատրվակով՝ ընդգծելով, որ «*պարսկալեզու հակաիրանական լրատվամիջոցները Ղարաբաղում ճգնաժամի մեկնարկից ի վեր հարձակման են ենթարկում ազգային միասնությունը*» (Mashreg News, 2020, IV):

Պատերազմի ընթացքում հրապարակված ուշադրության արժանի տեքստերի շարքում հարկ է նշել նաև Իրանի գերագույն հոգևոր առաջնորդ Ալի Խամենեյի միջազգային հարցերով խորհրդական, նախկին արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթիի՝ «Քեյհան» օրաթերթին տված հարցազրույցը, որտեղ նա, ըստ էության, երկրորդում է հակամարտության շուրջ ԻԻՀ պաշտոնական դիրքորոշումը. «*ինչպես որ դեմ ենք սիոնիստական ռեժիմի կողմից Պաղեստինի օկուպացիային, նիստական ռեժիմի կողմից Պաղեստինի օկուպացիային, նույնպիսի դիրքորոշում ունենք նաև այստեղ*»: Միևնույն ժամանակ՝ Վելայաթին շեշտում է, որ «*լուծման ճանապարհը որևէ պարագայում ռազմականը չէ, այլ պետք է քաղաքական ճանապարհով լուծվի, ուստի մենք յուրաքանչյուր կողմից ցանկացած ռազմական քայլի դեմ ենք*» (Keyhan, 2020):

Ուշադրության կենտրոնում հայտնվեց նաև սեպտեմբերի 30-ին երկրի հյուսիսարևելյան նահանգներում Գերագույն հոգևոր առաջնորդի չորս ներկայացուցիչների համատեղ հայտարարությունը, որտեղ նշվում է, որ «*Ադրբեջանի կառավարությունն այդ տարածքը վերադարձնելու համար լիովին օրիությունն այդ տարածքը վերադարձնելու համար լիովին օրինական է վարվել*»¹⁹: Միևնույն ժամանակ, և որ հատկանշական է՝ նշվում է, որ «*այժմ էլ Ադրբեջանի՝ Նախիջևան հասնելու միակ ցամաքային ճանապարհն ԻԻՀ տարածքն է, որն Իրանը մեծահոգաբար տրամադրում է Ադրբեջանական պետության*

¹⁹ Ավելորդ չէ նշել, որ այս համատեքստում «ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի չորս բանաձևեր»-ի մասին հիշատակումների պակաս իրանական խոսույթում չկա:

նը»՝ ավելացնելով, որ Իրանին դավաճանության մեջ մեղադրողները երկու երկրների բարեկամության թշնամիներն են, ուստի պետք է զգայուն լինել «հոգեբանական պատերազմի» նկատմամբ ևս (Fars News Agency, 2020):

Հոգևոր առաջնորդի ներկայացուցիչների այս հայտարարության վերաբերյալ մի քանի օր անց բարեփոխական «Շարդ» օրաթերթում էթնիկ հարցերով հետազոտող ու ճանաչված լրագրող Էհսան Հուշմանդը, պաշտպանելով ԱԳՆ-ի չեզոք մոտեցումը, նշում էր, որ նման հայտարարությունները վնասում են միջնորդական որևէ ջանքի, ինչպես նաև կարող են անվտանգային լուրջ մարտահարավերներ ստեղծել: Հոդվածի ավարտին է. Հուշմանդը նշում է, որ *«իշխանական գերատեսչությունները պետք է լրջորեն և առանց ձևականությունների աշխատեն իրենց մասերը ներդաշնակելու ուղղությամբ»* (Hušmand, 2020):

Կարծում ենք, որ մոտեցումների ներդաշնակման մասին այս հիշատակումը կարելի է առանձնացնել որպես հիմնական բնութագրական գիծ Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում ԻԻՀ ներքին խոսույթի համատեքստում: Վերը բերված օրինակներում այս բազմազան կարծիքներն, ըստ էության, բավական տարբեր դիրքորոշումների ցուցիչ կարող են լինել: Չնայած այս հանգամանքին՝ պատերազմի արդյունքների ընկալման առումով կարծիքները բավական միատարր են դառնում. սա ցույց տալու համար բավական է հիշատակել միջազգային հարաբերությունների հետազոտող Էհսան Մովահեդիանի բնորոշումը՝ նոյեմբերի 13-ին ԻՀՊԿ-ի տեսակետներն արտահայտող «Ֆարս» լրատվականում նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության վերաբերյալ՝ որակելով այն որպես *«չարաբաստիկ իրադարձություն»*:

Այսպիսով՝ եթե 2016 թ. Քառօրյա պատերազմի ընթացքում ներիրանական խոսույթը կարելի է բնութագրել ընդհանուր, ինչ-որ չափով հայամետ գծերով կամ շեշտերով, ապա 2020 թ. Քառասունչուսօրյալի դեպքում միատարրության կամ ՀՀ հանդեպ «դրական շեշտերի» մասին դժվար է խոսել²⁰:

Կարող ենք ասել, որ Արցախյան հակամարտության կողմերի նկատմամբ ԻԻՀ արտաքին քաղաքականությունը ձևավորվել է «հարևանների հետ սերտ հարաբերությունների հաստատման» քաղաքականության տրամաբանության շրջանակներում: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ԻԻՀ պետական կառավարման բարդ համակարգում կառավարությունը արտաքին քաղաքականության ուղղությունը որոշող միակ կառույցը չէ, և ինչպես այս հանգամանքը, այնպես էլ քաղաքական տարբեր թևերի տեսակետներն արտացոլվում են նաև հակամարտության վերաբերյալ ներքին խոսույթում:

Անվտանգային առումով Արցախյան հակամարտության հարցը քննարկվում է այս ոլորտին առնչվող մի շարք մարտահրավերների՝ պանթյուրքիստական շարժումների ու անջատողականության սպառնալիքների, Իրանի համար թշնաջատողականության սպառնալիքների (ինչպիսիք են Իսրայելը, ԱՄՆ-ն, Մաուդյան Արաբիան) ազդեցության և ներկայության, ահաբեկիչների ներգրավման հնարավորության և կամ ներկայության համատեքստում:

Արցախյան հակամարտության վերաբերյալ իրանական ներքին խոսույթում մշտապես առկա են արտաքին խաղացող-

²⁰ Բնականաբար, երբ խոսքը գնում է հայամետ դիրքորոշման մասին, ապա այստեղ պարզ է, որ այդ հատվածում հայ-իրանական շահերը համընկել են, ուստի ԻԻՀ դիրքորոշումը ստացել է հայամետ կամ ՀՀ հանդեպ դրական շեշտադրումներով:

ների և դրանց դերակատարության շուրջ քննարկումները: Մասնավորապես՝ Հայաստանը մեծմասամբ դիտարկվում է որպես Ռուսաստանի ազդեցության գոտի, իսկ Ադրբեջանական Հանրապետության պարագայում գերակա են հիշատակությունները Թուրքիայի աջակցության մասին: Հատկապես ուժային կառույցներին մոտ կանգնած անձանց և աղբյուրների խոսույթում «տարածքային ամբողջականության» սկզբունքի պաշտպանությունը զուգահեռվում է ազդեցություն ունենալու պայմանին, իսկ կրոնական գործոնը կիրառվում որպես այդ ազդեցությանը հասնելու գործիք:

2016 թ. ռազմական գործողությունների ընթացքում ԻԻՀ ներքին խոսույթում գերակշռում են Արցախի Հանրապետությանը դրական մոտեցմամբ տարբերը: Այս շրջանի ներիրանական խոսույթը հակամարտությանն ունեցած մոտեցումների առումով խորքում, ընդհանուր առմամբ միատարր է: 2020 թ. պատերազմի ընթացքում հնչեցված կարծիքներում և արված հրապարակումներում բավական նկատելի են որոշում կայացնող ինստիտուտների մոտեցումների տարբերությունները: Մասնավորապես՝ ուրվագծվում են ԱԳՆ կողմից «ակտիվ չեզոքության» և «միջնորդության» քաղաքականության առաջնությունը ուժային կառույցների (հատկապես՝ ԻՀՊԿ-ի) առավել անվտանգային թիրախներին ուղղված գործունեությանը զուգահեռ:

Պատերազմին ուղղակիորեն հաջորդող շրջանում ԻԻՀ ներքին խոսույթում ակնհայտ տարբեր են պատերազմի հանգուցալուծման արդյունքներից դժգոհությունն ու պատերազմի հետևանքով առաջացած և կամ սրված սպառնալիքների սահմանափակ գնահատականներն, այդ թվում՝ տնտեսական

ոլորտում և հատկապես Ադրբեջան-Նախիջևան միջանցքի վերաբերյալ քննարկումների համատեքստում:

AHARON VARDANIAN,
*Department of Iranian Studies, Faculty of Oriental Studies,
Yerevan State University, Lecturer,
e-mail: aharon.vartanean@gmail.com, aharon.vardanian@ysu.am*

ANI MARGARYAN,
*Master of Department of Iranian Studies,
Faculty of Oriental Studies, Yerevan State University,
e-mail: ani.margaryan3@ysumail.am*

PERCEPTION OF THE ARTSAKH CONFLICT IN THE INTERNAL DISCOURSE OF IRI - FROM THE FOUR-DAY TO THE FORTY-FOUR-DAY WAR (2016-2020)

The examination of the views, analysis, and positions in the internal discourse of the IRI on the Artsakh conflict is important from the point of view of understanding the logic forming this country's approaches to the conflict. The approaches of policy-making institutions and various political parties are reflected in internal discourse through the views of individuals associated with them and through the main media resources.

During the military operations in 2016, the elements of a "positive approach" to the Artsakh Republic prevailed in Iran's internal discourse. These days, the Iranian discourse is also more homogeneous in terms of its approaches to the conflict. In terms of the opinions expressed and the publications made during the war in 2020, the differences in the approaches of the decision-making institutions were quite noticeable. Particularly, the Foreign Ministry was promoting a policy of "active neutrality" and "mediation" when in parallel the military power structures

(especially ICRC) were more focused on activities aimed at security targets.

The article discusses the above-mentioned peculiarities both in the context of the dynamics of changing the perception of the Artsakh conflict in the internal discourse, as well as in the context of its place in IRI's foreign policy and IRI-Armenia relations.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Byman D. L. [et al.], "Iran's security policy in the post-revolutionary era", RAND, 2001.

2. Asgari H., Do ru-ye sekke-ye Moskow dar tahavolāt-e jahāni [-Մոսկվայի դրամի երկու երեսն աշխարհի վերջին իրադարձություններում], *IRNA*, 05 ապրիլի 2016 թ., հասանելի է՝ <https://www.irna.ir/news/82022540/>, վերջին մուտքը՝ 29 հունիս 2022 թ.:

3. Amirahmadiān B., Kelid-e hal-e bohrān-e Qarebāy dar dast-e Rusie [Ղարաբաղի հակամարտությունը բանալին Ռուսաստանի ձեռքում], *Hamshahri Online*, 03, ապրիլ 2016 թ., հասանելի է՝ <https://www.hamshahronline.ir/news/329368/>, վերջին մուտքը՝ 29 հունիս 2022 թ.:

4. Bayāt B., Tašdid-e monāqeše-ye Qarebāy dar xat-e tamās: Daeš ham vāred-e ma'reke šod [Շվիման գծում Ղարաբաղյան հակամարտության սրացում. ԻՊ-ն նույնպես գործի մեջ մտավ], *IRIB News Agency*, 05 ապրիլ 2016 թ., հասանելի է՝ <https://www.iribnews.ir/fa/news/1085624/>, վերջին մուտքը՝ 29 հունիս 2022 թ.:

5. Faršid Ā., Zaxm-e kohne-ye "Qarebāy" dar hamsāyegi-ye Irān [«Ղարաբաղ» հին վերքն Իրանի հարևանությամբ], *Ruznāme-ye Šarq*, 05 ապրիլ 2016, հասանելի է՝ <https://sharghdaily.com/fa/main/detail/89500/>, 29 հունիս 2022 թ.:

6. Gol-Mohammadi V., Qarebāy: nazm-e doqotbi-ye jadid dar Qafqāz-e Jonubi va češmandāz-e Torkie [Ղարաբաղ. նոր երկբևեռ հա-

մակարգի առաջացումը Հարավային Կովկասում և Թուրքիայի տեսակետը], *IRAS*, 20 ապրիլ 2016 թ., հասանելի է՝ <http://www.iras.ir/fa/doc/note/1270/>, վերջին մուտքը՝ 29 հունիս 2022 թ.:

7. Hušmand E., Yek bayānie darbāre-ye monāqeše-ye Qarebāy va čand porseš [Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ մի հայտարարություն և մի քանի հարց], *Ruznāme-ye Šarq*, 04 հոկտեմբեր 2020 թ., հասանելի է՝ <https://www.pishkhan.com/news/197531>, վերջին մուտքը՝ 30 հունիս 2022 թ.:

8. Kāleji V.-K., Dalāyel o ab'ād-e bohrān-e axir-e Qarebāy [Ղարաբաղյան վերջին ճգնաժամի պատճառները], *IRAS*, 04 ապրիլ 2016 թ., հասանելի է՝ <http://www.iras.ir/fa/doc/note/992/>, վերջին մուտքը՝ 22 հունիս 2022 թ.:

9. Mohammadi H., Joziyyāt-e tarh-e Irān barāy-e Qarebāy [Ղարաբաղի համար Իրանի ծրագրի մանրամասները], *Ruznāme-ye Xorāsān*, 31 հոկտեմբեր 2020 թ., հասանելի է՝ <https://www.pishkhan.com/news/200561>, վերջին մուտքը՝ 13 մայիս 2022 թ.:

10. Montazerān J., Jang-e Qarebāy, zarurat-e vorud-e Irān be 'onvān-e miānjigar [Ղարաբաղյան պատերազմը. Իրանի՝ որպես միջնորդ ե մուտքի վնասները], *Diplomasi-ye Irāni*, 05 հոկտեմբեր 2020 թ., հասանելի է՝ <http://irdiplomacy.ir/fa/news/1995995/>, վերջին մուտքը՝ 30 հունիս 2022 թ.:

11. Noruzpur Z., "Jang-e niyābati-ye Rusie va Torkie dar Qarebāy / Āyā Putin va Erdoyān enteḡām migirand? Jahāangir-e Karami pāsox midahad [Միջորդավորված պատերազմ Ռուսաստանի և Թուրքիայի միջև Ղարաբաղում. արդյո՞ք Պուտինն ու Էրդոդանը վրեժ են լուծում. Ջահանգիր Քարիմին պատասխանում է հարցերին], *Khabar Online*, Ջահանգիր Քարիմին պատասխանում է հարցերին], *Khabar Online*, 09 ապրիլ 2016 թ., հասանելի է՝ <https://www.khabaronline.ir/news/525154/>, վերջին մուտքը՝ 30 հունիս 2022 թ.:

12. Seyfoddini S., I, Diplomāsi tanhā gozine-ye hal-e monāqeše-ye Armanestān va jomhuri-ye Āzarbāyejān [ՀՀ և ԱՀ միջև հակամարտության լուծման միակ ճանապարհ դիվանագիտությունն է], *Ruznāme-*

ye Šarq, 14 հուլիս 2020 թ., հասանելի՝ <https://sharghdaily.com/fa/Main/Detail/267577/>, վերջին մուտքը՝ 29 հունիս 2022 թ.:

13. Seyfoddini S., II, Ćerā “mantaqe-ye amn-e häyel” dar šomālyarb-e kešvar barāy-e amniyyat-e meli zaruri ast? [Ինչո՞ւ է անվտանգության գոտին երկրի հյուսիս-արևմուտքում ազգային անվտանգության համար վտանգավոր], *Entekhab.ir*, 23 հոկտեմբեր 2020 թ., հասանելի է՝ <https://www.entekhab.ir/fa/news/581142/>, վերջին մուտքը՝ 29 հունիս 2022 թ.:

14. Soleymani A., Qarebāy sahne-ye dargiri-ye Torkiye va Rusie? [Ղարաբաղը Ռուսաստանի և Թուրքիայի հակամարտության թատերաբե՞մ], *Diplomasi-ye Irāni*, 06 ապրիլ 2016 թ., հասանելի՝ <http://irdiplomacy.ir/fa/news/1957729/>, վերջին մուտք՝ 29 հունիս 2022 թ.:

15. Xāledi M., “Forsat-e Tehrān barāy-e miānjigari dar bohrān-e Qarebāy, [Ղարաբաղյան ճգնաժամում Թեհրանի միջնորդ դառնալու հնարավորությունը], *Quds Online*, հրապ. 05 հոկտեմբեր 2020 թ., հասանելի է՝ <http://www.qudsonline.ir/news/722664/>, վերջին դիտում՝ 05 հունիս 2022 թ.:

16. Xān-Mohammadi Z., Taraf-e sevom dar bohrān-e Nāgorno Qarebāy [Լեռնային Ղարաբաղի հակամարտության երրորդ կողմը], *Diplomasi-ye Irāni*, 16 ապրիլ 2016 թ., հասանելի՝ <http://www.irdiplomacy.ir/fa/news/1958109/>, վերջին մուտքը՝ 29 հունիս 2022 թ.:

17. Zāra'i S., Dargiri-ye Qarebāy: darshā va dasthā (yāddāšt-e ruz) [-Հակամարտություն Ղարաբաղում. դասերը և ձեռքերը (օրվա վերլուծությունը)], *Keyhan*, 04 ապրիլ 2016 թ., հասանելի է՝ <http://kayhan.ir/fa/news/71513/>, վերջին մուտքը՝ 29 հունիս 2022 թ.:

Էլեկտրոնային մամուլ (առանց հեղինակի նշման).

18. Իրանը պատրաստ է օգտագործել իր բոլոր կարողությունները զինադադար հաստատելու ուղղությամբ. հայտարարություն,

Infocom, 27 սեպտեմբերի, 2020 թ., հասանելի է՝ <https://infocom.am/Article/37298>, վերջին մուտքը՝ 30 հունիս, 2022 թ.:

19. Իրանը պլան է մշակել, որը «կարող է վերջ տալ դարաբաղյան հակամարտությանը», *Armlur*, 5 հոկտեմբեր, 2020 թ., հասանելի է՝ <https://armlur.am/1048299/>, վերջին մուտքը՝ 30 հունիս, 2022 թ.:

20. Āberurizi-ye pahpād-e poredde'a-ye esrāyili dar moqābel-e mušak-e 50-sāle / Āz Hermes tā Eskāy estrāyker: arzeš-e šekārhā-ye padāfand-e Armanestān az 150 miliun dolār gozašt + ‘aks [Իսրայելական զերթանկարժեք ԱԹՍ-ի խայտառակությունը 50 տարեկան հրթիռի դեմ/ Հերմեսից Սքայ Սթրայքեր. հայկական ՀՕՊ ուժերի «ոքսի» արժեքն անցել է 150 մլն դոլարը + նկարներ], *Mashregh News*, 1, 25 հունիս, 2020 թ., հասանելի՝ <https://www.mashreghnews.ir/news/1098356/>, 29 հունիս 2022 թ.:

21. Āmrikā dar monāqese-ye Qarebāy ĉe naqši dārad? [Ամերիկական Ղարաբաղյան հակամարտության մեջ ի՞նչ դերակատարություն ունի], *Mashregh News*, 1, 04 ապրիլ 2016 թ., հասանելի՝ <https://www.mashreghnews.ir/news/552478/>, վերջին դիտում՝ 29 փետրվարի, 2022 թ.:

22. Āyāz-e tajammo-e hemāyati az āzādsāzi-ye Qārābāy va e'terāz be “bastan-e marz-e Norduz-vidio” dar Tabriz [Թավրիզում, ի աջակցություն Ղարաբաղի ազատագրման և Նորդուզի անցակետի փակման, ցույցերի մեկնարկը տրվեց-տեսագրություն], *Gunaz.TV*, 18 հոկտեմբեր, 2020 թ., հասանելի՝ <https://www.gunaz.tv/fa/new/tabriz-1603031557>, վերջին մուտքը՝ 15 մայիս, 2022 թ.:

23. Bayānie-ye mohem-e namāyandegān-e vali-e faqih dar šomāl-e yarb-e kešvar darbāre-ye bohrān-e Qarebāy [Ղարաբաղի ճգնաժամի վերաբերյալ երկրի հյուսիս-արևմուտքի հոգևոր առաջնորդի ներկայացուցիչների կարևոր հայտարարությունը], *Fars News Agency*, 30 սեպտեմբեր, 2020 թ., հասանելի է՝ <https://www.farsnews.ir/azarbaijan-sharghi/news/13990709001283/>, վերջին մուտքը՝ 30 հունիս, 2022 թ.:

24. Bohrān-e Qarebāy: xosumati be qedmat-e yek qarn + tasāvir [Ղարաբաղյան ճգնաժամ. թշնամություն՝ մեկդարյա հնությանը], *Mashregh News*, II, 05 ապրիլի 2016 թ., հասանելի է՝ <https://www.mashreghnews.ir/news/552838/>, վերջին մուտքը՝ 30 հունիս, 2022 թ.:

25. Čalešhā-ye yek bohrān-e farāmuš šode [Մոռացված ճգնաժամի մատահրավերները], *Quds Online*, 05 ապրիլ 2016 թ., հասանելի՝ <https://www.qudsonline.ir/news/364745/>, վերջին մուտք՝ 29 հունիս 2022 թ.:

26. Didār-e āqā-ye Heydar A'lief ra'isjomhur-e Āzarbāyejān bā rahbar-e enqelāb [ԱՀ նախագահ Հեյդար Ալիևի հանդիպումը հեղափոխության առաջնորդի հետ], *KHAMENEI.IR*, 02 հուլիս, 1994 թ., հասանելի է՝ <https://farsi.khamenei.ir/news-content?id=11233>, վերջին մուտքը՝ 29 հունիս, 2022 թ.:

27. E'zām-e goruhhā-ye mosallah-e suri vābaste be Torkie be Āzarbāyejān [Թուրքիայի հետ շաղկապված սիրիական զինված խմբավորումները տեղակայվում են Ադրբեջանում], *TABNAK*, I, 21 օգոստոս, 2020 թ., հասանելի՝ <https://www.tabnak.ir/fa/news/991991/>, վերջին մուտքը՝ 29 հունիս, 2022 թ.:

28. Kodām yegānhā-ye nezāmi-ye Irān be marzhā-ye šomāl-e yarb e'zām mišavad? [ԻՐՀ ՋՈւ-երի ո՞ր ստորաբաժանումներն են սահմանի հյուսիս-արևմուտք տեղափոխվել], *Donyā-ye Eqtesād*, 11 հոկտեմբեր, 2020 թ., հասանելի՝ <https://www.donya-e-eqtesad.com/fa/tiny/news-3709702>, վերջին մուտքը՝ 30 հունիս, 2022 թ.:

29. Mājarā-ye pahpād-e esrāyili-ye soqut karde dar xāk-e Irān [Իսրայելական ԱԹՄ-ի կործանման պատմությունն Իրանում], *TABNAK*, II, 15 հոկտեմբեր, 2020 թ., հասանելի՝ <https://www.tabnak.ir/fa/news/1009143/>, վերջին մուտքը՝ 30 հունիս, 2022 թ.:

30. Manāteq-e ešyāli-ye Āzarbāyejān bāyad taxlie šavad ammā rāh-e hal-e ān nezāmi nist [Ադրբեջանի բնագավթված շրջանները պետք է ազատվեն, սակայն դրա լուծման ճանապարհը ռազմականը չէ],

Keyhan, 05 հոկտեմբեր 2020 թ., հասանելի է՝ <http://kayhan.ir/fa/news/200232/1969>, վերջին մուտքը՝ 30 հունիս, 2022 թ.:

31. Mohemtarin ātašbas-e Āsyā-ye miāne šekast/Barresi-ye pišine-ye tārixi-ye neza'-e Qarebāy [Միջին Ասիայում կարևորագույն զինադադարը խախտվեց/ Ղարաբաղյան հակամարտության պատմական ուսումնասիրություն], *Mehr News Agency*, 05 ապրիլի, 2016 թ., հասանելի՝ <https://www.mehrnews.com/news/3590663/>, վերջին մուտք՝ 29 հունիս, 2022 թ.:

32. Qarebāy xāk-e eslām ast / Az dasthā-ye pošt-e parde-ye Esrāyil tā mājarājuyi-ye Torkie / Xāb-e zemestāni-ye dastgāh-e diplomāsi-ye dolat-e Rowhāni [Ղարաբաղն իսլամի հող է / Իսրայելի անտեսանելի ձեռքերից մինչև Թուրքիայի արկածախնդրություն / Ռոհանիի կառավարության դիվանագիտական ապարատի ձեռնային քունը], *Šabake-ye etelā'resāni-ye Rāh-e Dānā*, 04 ապրիլի, 2016 թ., հասանելի է՝ <https://www.dana.ir/news/692844.html/>, վերջին մուտք՝ 29 հունիս, 2022 թ.:

33. Sarnaxhā-ye dexālat-e režim-e sahyunisti dar bohrān-e Qarebāy [Ղարաբաղյան ճգնաժամում սիոնիստական ռեժիմի մասնակցությանն հիմքերը], *Tasnim News Agency*, 06 ապրիլ, 2016 թ., հասանելի՝ <https://www.tasnimnews.com/fa/news/1395/01/18/1041072/>, վերջին դիտումը՝ 29 հունիս, 2022 թ.:

34. Soxanrāni-ye rahbar-e enqelāb dar ejtemā'-e a'zim-e mardom-e Tabriz [Հեղափոխության առաջնորդի ելույթը Թավրիզի հանրության առաջ], *KHAMENEI.IR*, 27 հուլիս, 1993 թ., հասանելի է՝ <https://farsi.khamenei.ir/news-content?id=10527>, վերջին մուտքը՝ 29 հունիս, 2022 թ.:

35. Tajammo'āt-e mahdud dar Tabriz, Ardabil va Zanjān dar hemāyat az mosalmānān-e Qarebāy + film [Փոքրաթիվ ցույցեր Թավրիզում և Ջանջանում՝ ի աջակցություն Ղարաբաղի մուսուլմաններին], *Mashregh News*, III, 01 հոկտեմբեր, 2020 թ., հասանելի՝ <https://www.mashreghnews.ir/news/1125177/>, վերջին մուտքը՝ 30 հոկտեմբեր, 2022 թ.:

36. Taqābol-e nezāmi-ye Rusie va Torkie be Qarebāy resid / Āz pahpādhā-ye esrāyili tā tupxāne-ye rusi: hāmiān-e xāreji dar monāze'e-ye Āzarbāyejān va Armanestān če mikonand? + tasāvir va naqše, [Ռուս-թուրքական ռազմական առճակատումն հասավ Ղարաբաղ/ իսրայելական ԱԹՍ-ներից մինչ ռուսական հրետանի. օտարերկրյա աջակիցները ՀՀ և ԱՀ հակամարտությունում ի՞նչ են անում + տեսագրություն և քարտեզ], *Mashregh News*, I, 07 հոկտեմբեր, 2016 թ., հասանելի՝ <https://www.mashreghnews.ir/news/1095855/>, վերջին մուտք՝ 29 հունիս 2022 թ.:

37. Taqābol-e nezāmi-ye Rusie va Torkie be Qarebāy resid / Āz pahpādhā-ye esrāyili tā tupxāne-ye rusi: hāmiān-e xāreji dar monāze'e-ye Āzarbāyejān va Armanestān če mikonand? + tasāvir va naqše [Ռուս-թուրքական ռազմական առճակատումն հասավ Ղարաբաղ/ իսրայելական ԱԹՍ-ներից մինչ ռուսական հրետանի. օտարերկրյա աջակիցները ՀՀ և ԱՀ հակամարտությունում ի՞նչ են անում + տեսագրություն և քարտեզ], *Mashregh News*, II, 20 հուլիս 2020 թ., հասանելի՝ <https://www.mashreghnews.ir/news/1095855/>, 29 հունիս, 2022 թ.:

38. Tāsisāt-e hastei-ye Bonāb va sarneguni-ye pahpād-e režim-e sahyunisti [Բնաբխի միջուկային օբյեկտը և սինիստական ռեժիմի ԱԹՍ-ի խոցումը], *Telegram Channel Axbār-e Surie*, 29 սեպտեմբեր, 2020 թ., հասանելի՝ <https://t.me/syriankhabar/18303>, 14 մայիս, 2022 թ.:

39. Tazāhorāt-e mellat-e tork-e Āzarbāyejān dar Tabriz bā xāst-e baste šodan-e Norduz [Ատրպատականի թուրք ժողովրդի ցույցերը Թավրիզում՝ Նորդուզի անցակետը փակելու պահանջով], *GADTB*, 18 հոկտեմբեր, 2020 թ., հասանելի՝ <https://gadtb.com/fa/تظاهرات-ملت-ترک-آذربایجان-در-تبریز-با-خاست-بودن-نوردوز-در-آذربایجان-در-تبریز-با-خاست-بودن-نوردوز>, վերջին մուտքը՝ 29 հունիս, 2022 թ.:

40. Torkie šebh-e nezāmiān-e suri be Āzarbāyejān e'zām mikonad [-Թուրքիան սիրիական հաբեկչական խմբերին Ադրբեջան է ուղարկում], *ISNA News*, 19 հուլիս, 2020 թ., հասանելի՝ <https://www.isna.ir/news/99042921319/>, վերջին մուտքը՝ հունիս 29, 2022 թ.:

41. Towtee-ye tajziye-ye Irān be bahāne-ye bohrān-e Qarebāy [Ղարաբաղի ճգնաժամի պատրվակով Իրանը մասնատելու դավադրություն], *Mashregh News*, IV, 01 նոյեմբեր, 2020 թ., հասանելի՝ <https://www.mashreghnews.ir/news/1137617/>, վերջին մուտքը՝ 30 հոկտեմբեր, 2022 թ.:

42. Zarif bāyad bā safar be mantaqe naqš-e Irān rā dar Qarebāy fa'altar konad [Զարիֆը, տարածաշրջան այցով, պետք է Իրանի դերակատարությունը Ղարաբաղում ավելի զորձնական դարձնի], *E'temād Online*, 08 հոկտեմբեր, 2020 թ., հասանելի՝ <https://etemadonline.com/content/437589/>, վերջին մուտքը՝ 30 հունիս, 2022 թ.:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՆԺԴԵՀ ԵՐԱՆՅԱՆ, պ.գ.թ.

Հայաստանի պատմության թանգարան,

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

էլ. փոստ՝ nzhdehyan@gmail.com

DOI: 10.56813/2953-786X-2022.2-206

**ՈՐՈՇ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Մ.Թ.Ա. 1-ԻՆ
ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՆԻ
ՈՐՈՇ ՄԱՐԴԱԿԵՐՊ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ**

Առաջավոր Ասիայում և Եվրասիական տափաստաններում քարե մարդակերպ կոթողները երևան են գալիս սկսած մ.թ.ա. 4-3 հազարամյակներից: Քարե մարդակերպ կոթողները առավել ակտիվ սկսում են տարածվել մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջում և 1-ին հազարամյակի սկզբում, ինչն, ըստ երևույթին, կապված է վաղիրանական ցեղերի, հատկապես կիմերա-սկյութական ցեղերի տեղաշարժերի հետ:

Մ.թ.ա. 2-1-ին հազարամյակի առկա նյութերով Հայաստանն առանձնանում է որոշակի բազմազանությամբ և կարելի է ենթադրել, որ այդ բազմազանության մի դրսևորումն էլ արցախյան կոթողներն են:

Վերջիններս կտրվածքում մոտավորապես ուղղանկյուն, տափակ երկայնական սալեր են, որոնք երկու հորիզոնական լայն ակոս-գոտիների միջոցով բաժանվում են երեք մասի՝ «առանձնացնելով» մարմնի երեք մասերը՝ գլուխը, որը զբաղեցնում է ամբողջ կոթողի մեկ երրորդից մի փոքր քիչ ծավալ, իրանը և գոտկատեղից ներքևի հատվածը: Իրանից ներքևի հատվածը սովորաբար թեթև հղկվում էր: Այն նախատեսված է եղել հողի կամ հատուկ հիմքի մեջ դնելու համար: Կոթողներն

ունեն մոտավորապես 30-60 սմ լայնություն, մինչև 2,5 մ բարձրություն և մոտավորապես 20 սմ հաստություն:

Պատկերագրորեն Արցախի կոթողներին բավական մոտ են Արդաբիլի դաշտավայրի Մեշքին Շահր տեղավայրից հայտնաբերված կոթողները, որոնք թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազ. վերջ – 1-ին հազ. սկզբով: Այս կոթողները ժամանակագրորեն ավելի վաղ են, քան արցախյան օրինակները և հավանական է, որ հանդիսացել են վերջիններիս նախատիպը:

Ուսումնասիրման պատմությունը

Արցախյան կոթողները թեև առանձին օրինակներով հայտնի են դարձել դեռ անցած դարի 60-ական թվականներից, սակայն դրանց նվիրված հետազոտությունները շատ չէին (Халилов, 1984, 438-439; Геюшев, 1966, 77-79; Халилов, 1987, 4-8): Հետևաբար նրանց տեխնիկական, պատկերագրական, իմաստաբանական քննությունը, նրանց ժամանակագրությունը և հնարավոր էթնոպատկան խնդիրները մնում էին չմանրամասնված և չլուծված: Հայտնի է, որ այս տարածքները խորհրդային տարիներին հայտնի պատճառներով բավարար չափով չեն ուսումնասիրվել (Պետրոսյան, 2010, 137-148): Եղած հետազոտություններն էլ ակնհայտորեն քաղաքակա-նացված են: Սա վերաբերում է նաև մարդակերպ կոթողներին, որոնք ադրբեջանական որոշ հետազոտողներ ներկայացնել են որպես աղվանական՝ փորձելով դրանց տարածվածությունը հատկապես Արցախում դիտել որպես աղվանական էթնոմշակութային սուբստրատի առկայություն: Ներկայումս վավերացվել է ավելի քան 30 մարդակերպ կոթող: Չի բացառվում, որ ավելի մեծ՝ ֆիզիկապես մեզ ոչ հասանելի տարածական արեալում՝ Արցախի տափաստանի արևելյան մասում և նրա-

նից արևելք ընկած Միլի տափաստանում, դրանք այսքանով չեն սահմանափակվել:

Իրանի տարածքում քննարկվող մարդակերպ կոթողների ուսումնասիրությունը ևս սկսվել է նախորդ դարի երկրորդ կեսից: Արդաբիլի դաշտում գտնվող Մեշքին Շահրի 120 կոթողները 1978 թվականին հետազոտել և վավերացրել է Չ. Բարնեյը (Burney, 1979, 155): Հաջորդիվ կոթողներին անդրադարձել են Մ. Ինգրահամը և Գ. Սամերսը (Ingraham, Summers, 1979, 67-87): Մեշքին Շահրում հնագիտական հետազոտություններ իրականացրած Թեհրանի Թարբիաթ Մոդարբես համալսարանի իրանական արշավախմբի հաղորդումներից տեղեկանում ենք, որ բնակավայրի տարածքից դուրս գտնվող որոշ դամբարանների մաքրման աշխատանքի արդյունքում 2004 թվականին հայտնաբերվել է մարդակերպ կոթողների երկու երկար շարք. կոթողները կանգնեցված են դեմ-դիմաց և կազմում են 1,5 մ լայնությամբ նեղ միջանցք: Ընդհանուր առմամբ վավերացվել է 400 նմանատիպ կոթող (Azarnoush, 2005, 216-217): Այս տարածաշրջանի հնագիտական հուշարձաններին, այդ թվում և քարե մարդակերպ կոթողներին անդրադարձել են այլ հետազոտողներ ևս (Piller, 2010, 60; Dan, Cesaretti, 2020, 347-355; Грекян, 2011, 37): Չնայած առկա հրատարակություններին, դրանց գործառույթը վերջնականապես հստակեցված չէ, ավելի հավանական է դիտվել, որ դրանք մահարձաններ են, որոնք կանգնեցվել են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջ – 1-ին հազարամյակի սկզբին:

Նախնական դիտարկումները ցույց են տալիս որոշ ընդհանրություններ Արցախի տափաստանների և Իրանի Մեշքին Շահր տեղավայրից հայտնի մարդակերպ կոթողների միջև:

Այս երկու տիպի կոթողների քննությունն իրականացրել ենք ըստ.

- պատկերագրական դետալների,
- քանդակման տեխնիկայի,
- ժամանակագրության,
- գործառույթի:

Պատկերագրական դետալներ և քանդակման տեխնիկա

Ինչպես արդեն նշեցինք, Արցախյան կոթողների երկայնական սալերը երկու հորիզոնական լայն ակոս-գոտիների միջոցով բաժանվում են երեք մասի՝ «առանձնացնելով» մարմնի երեք մասերը՝ գլուխը, որը զբաղեցնում է ամբողջ կոթողի մեկ երրորդից մի փոքր քիչ ծավալ, իրանը և գոտկատեղից ներքև հատվածը: Իրանից ներքև հատվածը, որը նախատեսված է եղել հողի կամ հատուկ հիմքի մեջ դնելու համար, սովորաբար թեթև հղկվում էր: Կոթողներն ունեն մոտավորապես 30-60 սմ լայնություն, 120-140 սմ, երբեմն մինչև 2,5 մ բարձրություն և 20-30 սմ հաստություն: Հայտնի բոլոր կոթողները պատրաստված են կրաքարից, որի ընդարձակ նստվածքները և հին մշակումների հետքերով հանքերը, լայնորեն տարածված են Արցախի արևելյան նախալեռներում (Yeranyan, 2021, 248 – 254):

Կոթողները ծավալային հստակ մշակումից զատ ենթարկվել են նաև բավական մանրամասն քանդակային մշակման: Տափակ սալերին մարդակերպություն հաղորդելու համար գործածվել է քանդակման երեք հիմնական տեխնիկա՝ ա. ետ-նախորքի հեռացում, բ. ակոսային քանդակ, գ. գծաքանադակ: Ընդ որում, առաջին երկու տեխնիկաները հիմնական հորինվածքաստեղծ տեխնիկաներն են, գծային քանդակը կիրառվել է միայն առանձին դետալների մշակման ժամանակ:

Կոթողների նկարագրական բնութայունը թույլ է տալիս վավերացնել, որ պատկերագրությունը մեզ ներկայանում է առնվազն երկու համալիրներով՝ ա. մարմնակազմություն, բ. հանդերձանք (ներառյալ սպառազինություն ու հարդարանք): Մարմնակազմական առումով կարելի է առանձնացնել ձեռքերը, քիթը, որպես կանոն, աչքերը: Կոթողների վրա պատկերված հանդերձանքի կամ այլ հարդարանքի շարքում դիտարկելի է գլխանոցը, դաշույնը, ապարանջանը և օղը: Մազերի, ականջների, բերանի, երբմեն էլ աչքերի բացակայությունը, մեջքին՝ գոտկամասում թեթոթյամբ պատկերված դաշույները ավելի քան հավանական են դարձնում հագուստի և հանդերձանքի այլ համալիրների առկայությունը, որոնք ուղղակի կարևոր չեն դիտվել և չեն պատկերվել: Մա մի կարևոր կովան է, ենթադրելու, որ մենք գործ ունենք նշանային պատկերագրության հետ. պատկերվել է ոչ թե ռեալ արտաքինը, այլ նրա նշանակիչ-իմաստակիր բաղկացուցիչները: Կարող ենք եզրակացնել, որ կոթողներին պատկերվել են տղամարդիկ, հիմնականում պաշտպանական հանդերձանքով: Քանդակվողի դիրքի մասին ոչինչ հստակ ասել հնարավոր չէ: Մակայն դատելով մարմնակազմությունից, կարելի է ենթադրել, որ նրանք կամ պատկած են, կամ կանգնած, բայց ոչ երբեք՝ նստած:

Իրանական կոթողները պատրաստված են երկու տեսակ կարծր և ավելի փափուկ տիպի կրաքարից (Dan, Cesaretti, 2020, 350-351): Ըստ սալի կառուցվածքի դրանք բաժանվում են երկու տիպի՝ ուղղանկյուն, հարթ վերջավորությամբ: Այս տիպի ամենամեծ օրինակն ունի 172 սմ բարձրություն, 52 սմ լայնություն և 38 սմ հաստություն:

Երկրորդ տիպը փորագրված է ավելի քիչ մշակված քարե սալերի վրա, որոնք ունեն կլորացված վերջավորություն:

Դրանց չափերը հասնում է մինչև 320 սմ բարձրության, 70 սմ լայնության և 30 սմ հաստության միջև (Ingraham, Summers 1979, 70): 74: Բոլոր տիպերի դեպքում սալերի ստորին հատվածը նախատեսված է եղել որևէ պատվանդանի կամ հողի մեջ տեղադրելու համար:

Մեջքին Շահրի մեզ հայտնի բոլոր կոթողների դեպքում հանդիպում է աչքերի և քթի պատկերումը: Որոշ կոթողների դեպքում պատկերված են դեմքին փոփած մազերը, ինչի արդյունքում դեմքին փոխանցել են սրտաձև պատկեր: Մազերի վերջավորությունը պատկերված է խոր ակոսների միջոցով (Ingraham, Summers, 1979, 75-76): Երբեմն պատկերված են նաև ձեռքերը՝ ծալած կրծքին:

Կոթողների մի մասի մոտ հանդիպում ենք գոտու վրա կամ դրա տակ պատկերված՝ պատյանի մեջ տեղադրված դաշույնը, որը հիմնականում դիմացի հատվածում է պատկերված: Այս գոտիները գուրկ են նախշերից, ունեն պարզ, ուղղանկյուն կառուցվածք:

Պատկերագրության և քանդակման տեխնիկայի առումով Արցախի կոթողների հետ ընդհանրությունները բազմաթիվ են: Նախ մարմնակազմական առումով՝ ապա առնաձին պատկերված դետալների՝ քիթ, աչքեր, ընդգծված մազեր, որոնք, ի տարբերություն Արցախյանի, ազատ փոփած են թիկունքին կամ դեմքին, ինչպես նաև դաշույն և գոտի: Հետաքրքրական է երկու տիպի կոթողների դեպքում էլ բերանի պատկերման բացակայությունը: Հավանական է, որ կամ կոթողներին պատկերված կերպարները սաղավարտ են կրում իրենց գլխին, կամ սա որևէ ծիսական դրսևորման արտացոլումն է կոթողների վրա:

Քանդակման տեխնիկայի առումով տեսնում ենք, որ այն բավական սխեմատիկ է: Երկուսի դեպքում էլ քանդակված է սալի միայն երկու կողմը՝ դիմահայաց հատվածը և թիկունքը: Կողային հատվածներում սալերը պարզապես հղկված են և որևէ պատկերագրություն չունեն: Երկու տիպի կոթողների դեպքում էլ պատկերման հիմնական տեխնիկան ետնախորքի հեռացումն է: Եվ միայն առանձին դետալների դեպքում է հանդիպում ակոսային և գծային քանդակը, որևէ նախշ ընդգծելու և առանձնացնելու նպատակով:

Ժամանակագրություն

Ինչ վերաբերում է կոթողների հնարավոր թվագրությանը, ապա նշենք, որ երկու տիպի կոթողներն էլ մեծամասամբ իրենց կանգնեցման նախնական վայրում չեն հայտնաբերվել և թվագրության և իմաստաբանության հարցերն այս պատճառով բարդանում են: Այսպես՝ Արցախի տափաստաններից հայտնաբերված ավելի քանի երեք տասնյակ կոթողներից միայն մեկ խումբը՝ Նոր Կարմիրավանից հայտնաբերված կոթողներն է, ամենայն հավանականությամբ գտվում են իրենց կանգնեցման միջավայրում: Այս կոթողների շրջակայքում իրականացված պեղումների արդյունքում հայտնաբերվեց 12 մետր տրամագծով կրոմլեխով և հիմնահողային խցով դամբարան, որից հայտնաբերված գտածոները ցույց են տալիս, որ դամբարանը թվագրվում է մ.թ.ա. 8-6-րդ դարերով: Հավանաբար նույն ժամանակով են թվագրվում նաև Արցախի մարդակերպ կոթողները: Ինչ վերաբերում է Մեշքին շահրից հայտնաբերված կոթողների թվագրությանը, ապա պետք է նշենք, որ այդ հարցը վերջնականապես հստակեցված չէ: Այսպես, այս կոթողներին առաջիններից մեկն անդրադարձած բրիտանացի հետազոտող Չ. Բարնեյը նշում է, որ Մեշքին Շահրի դաշտի

արևելյան ծայրին Արջաք Քալեն է, որտեղ որոշ արձաններ վերաօգտագործվել են պատնեշների, պաշտպանական կառույցների շինարարության ժամանակ, գործածվելով որպես շինանյութ: Սա խոսում է արձանների վաղ թվագրման մասին: Չ. Բարնեյը նշում է, որ արձանների համար ամենահավանական թվագրումը երկաթե դարի երկրորդ կեսն է (մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկիզբ): Սրանց ընդհանուր կապը հյուսիսային տափաստանների բոչվոր ժողովուրդների հետ Չ. Բարնեյի մոտ ոչ մի կասկած չի հարուցում (Burney, 1979, 155):

Կոթողների թվագրությանն անդրադարձել է նաև Բ. Պիլլերը: Նա նշում է, որ թեև տարածքում առկա են մինչև անգամ միջնադարյան հուշարձաններ, սակայն այստեղից հայտնաբերված սև և կարմիր փայլեցված խեցեղենը փաստում է, որ հուշարձանը թվագրվում է մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբով: Բացի այդ, նա հուշարձանի թվագրման հիմք է ընդունում այս տարածքից հայտնաբերված բրոնզե դաշույնները, որոնք պեղվել են արձանների շրջակայքից: Տիպաբանորեն, այս զենքերը գուգահեռներ ունեն Հյուսիսային Իրանում, հատկապես Թալիշի տարածաշրջանից հայտնաբերված Ժ. դե Մորգանի նյութերի հետ: Համաձայն այս շրջանի ժամանակագրության վերաբերյալ վերջին ուսումնասիրությունների, զենքերը թվագրվում են մ.թ.ա. 1-ին հազարամյակով: Սա, իր հերթին, հիմք է տվել հետազոտողին կարծել, որ արձանները կարող էին պատկանել մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին-1-ին հազարամյակի սկզբին (Piller, 2010, 55-56), ինչը կարծում ենք բավական հիմնավորված և այս կոթողների համար առավել ընդունելի թվագրություն է: Նույն թվագրության օգտին է խոսում նաև Ռոբերտո Դանը (Dan, Cesaretti, 2020, 351-352):

Գործառույթ

Ինչպես նշեցինք, Արցախի տափաստաններից հայտնաբերված կոթողների մեծ մասն իրենց կանգնացման նախնական վայրում չեն հայտնաբերվել: Համադրելով առկա տվյալները կարող ենք փաստել, որ Արցախից հայտնաբերված կոթողներն ամենայն հավանականությամբ, հանդիսանում էին գերեզմանաքարեր, և/կամ պաշտամունքային սիմվոլներ, որոնք պատվանդանի մեջ կամ առանց պատվանդանի տեղակայված էին դամբանաբլուրի գագաթին կամ սրբարանի կենտրոնում, չի բացառվում՝ նաև հիմնահողային թաղումների վրա: Այս կոթողները կանգնեցվել են կոլեկտիվի որևէ անդամի մահվան դեպքում: Հավանաբար խոսքը գնում է մարդու մասին, ով սոցիալական բարձր խավի է պատկանել: Ձորապետ-ռազմական առաջնորդի և/կամ հերոս-ռազմիկի պատկերումն ամենահավանականն է Արցախի կոթողների համար: Արցախի տարածքից հայտնաբերված որոշ կոթողներ հետագայում վերաօգտագործվել են՝ հիմնականում ծառայելով որպես շինանյութ:

Անդրադառնալով այն հարցին, թե ում էին պատկերում Մեշքին Շահիրից հայտնաբերված արձանները, Չ. Բարնեյը նշում է, որ դրանք պատկերում են մահացած զինվորներին, նրանց ընկերոջը կամ թշնամուն (Burney, 1979, 156): Նման տեսակետ է արտահայտում նաև Ռոբերտո Դանը (Dan, Cesaretti, 2020, 350): Նման պատկերումը մեր կողմից քիչ հավանական է թվում, քանի որ քանդակի պատրաստումը մեծ ջանքեր և ռեսուրսներ պետք է որ պահանջեր: Բացի դա՝ կրաքարի այս տեսակը, որով քանդակվել են այս կոթողները, մոտակայքից չեն տեղափոխվել: Այս դեպքում թշնամու զինվորին պատկերելու համար իրատեսական չէր լինի նման ռեսուրսների վատնումը:

Բացի այդ, կոթողների մեծ մասը պատկերված են դաշույնով, ինչը իշխանության խորհրդանիշ է հանդիսանում: Հետևաբար կարծում ենք, որ ինչպես արցախյան, այնպես և Իրանի տարածքից հայտնաբերված կոթողները ոչ թե մահացածի հետ միասին նրա կողմից սպանած «թշնամու» զինվորների քանակով այրն կանգնեցնելու սովորույթ է, այլ պատկերել է մահացած ռազմական առաջնորդին կամ սոցիալական բարձր դիրք գրավողի անհատի:

Եզրակացություն

Հիմք ունենալով Մեշքին Շահիրի և Արցախի կոթողների համեմատական-պատկերագրական քննությունը, որն ակնհայտորեն ցուցում է Արցախի կոթողների ավելի զարգացած, այս պատճառով և ժամակագրորեն մի փոքր ավելի ուշ լինելու հանգամանքը, մենք ներկա հետազոտության արդյունքում առաջադրում ենք այն վարկածը, որ կիմմերա-սկյութական ցեղերի թերևս առաջին ավիթը, ներթափանցելով իրանական սարահարթ, այստեղից է փոխառել և դեպի հյուսիս, այդ թվում և Արցախ տարածել մարդակերպ կոթողների մշակույթը:

Կարող ենք նշել, որ Արցախի կոթողների դեպքում գործ ունենք մի մշակութային երևույթի հետ, որի կերտողները մի կողմից առնչվում են Հայկական լեռնաշխարհի և Առաջավոր Ասիայի նստակյաց մշակույթների կրողների, մյուս կողմից քոչվորական տնտեսաձևի հետ:

NZHDEH YERANYAN, PhD
*History Museum of Armenia,
Institute of Archaeology and
Ethnography NAS RA
e-mail: nzhdehyan@gmail.com*

SOME SIMILARITIES BETWEEN ANTHROPOMORPHIC STELAE OF THE STEPPES OF ARTSAKH AND IRAN OF THE 1ST MILLENNIUM

In Near East, in the Eurasian plains, various stone monuments are found, especially beginning from the 4th-3rd millennia BC. The stone anthropomorphic steale stand out in this row, which began to spread more actively at the end of the 2nd millennium and at the beginning of the 1st millennium BC, which is probably related to the movements of different races.

With the materials of the 2nd – 1st millennium BC, Armenia is distinguished by a certain diversity: it can be assumed that one of the manifestations of that diversity is the Artsakh stelaе.

The latter are approximately rectangular, flat longitudinal slabs, which are divided into three parts by two wide horizontal grooves, "separating" the three parts of the body: the head, which occupies a little less than one third of the whole monument, the waist and the "below the waist". The bottom of the waist was usually lightly polished. It was designed to be placed in the ground or on a special foundation. The steale are about 30-60 cm wide, up to 2.5 m high, about 20 cm thick.

Pictorially, the stelaе found at Meshkin Shahr in the Ardabil valley are quite close to the monuments of Artsakh, which date back to end of 2nd millennium and the beginning of the 1st millennium BC. These stelaе are chronologically earlier than the Artsakh examples; it is possible that they were the prototype of the latter.

We assume that in the case of the monuments of Artsakh we are dealing with a cultural phenomenon, the creators of which are on the one hand related to the Armenian Highlands, the bearers of the sedentary cultures of Central Asia, and on the other hand to those who lives in nomadic economy.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պետրոսյան Հ., Մշակութային էթնոցիդն Արցախում (մշակութային ժառանգության բնայուրացման մեխանիզմը), Աղբբեջանի պետական ահարեկյությունը և էթնիկական գտումների քաղաքականությունը Լեոնային Ղարաբաղի դեմ, Շուշի, 2010, էջ 137-148:
2. Геюшев Р., *Каменные идолы нового типа*, ДАН Аз. ССР, т. XXII, 1966, №6, Баку, с. 77-79.
3. Грекян Е., *Следы древнейших цивилизаций на территории Талыша. Введение в историю и культуру Талышского народа*, Ереван, 2011, с. 37.
4. Халилов М., *Исследование каменных изваяний Карабаха, АО 1982 года*, Москва, Наука, 1984, с. 438 -439.
5. Халилов М., *Каменные изваяния Азербайджана (IV в. до н. э. – VII в. н. э.)*, Автореф. канд. исторических наук, Ереван, 1987, 22 с.
6. Azarnoush M., *Helwing B. Recent Archaeological research in Iran: Prehistory to Iron Age*, AMIT, 2005, 37, Berlin, p. 189-246.
7. Burney Ch., *Meshkinshahr survey*, Iran, 1979, vol. XVII, p. 155-156.
8. Dan Roberto, Cesaretti A., *The "Mouthless People": Some Remarks on the Shahr Yeri Statue-Stela Complex, Iran, Iran and the Caucasus*, 24, 2020, 347-357.
9. Ingraham M., Summers G., *Stelae and settlements in the Meshkin Shahr Plain, Northeastern Azerbaijan*, Iran, AMIT, 1979, bd. 12, Berlin, p. 67-87.

10. Piller Ch., *Northern Iran in the Iron age II and III: a neighbour of Urartu?*, «Aramazd» AJNES 2010, V/2, Yerevan, p. 53-75.

11. Yeranyan N., *Main Results of the Study of Anthropomorphic Stelae in Artsakh*, Archaeology of Armenia in regional context, Yerevan, 2021, p. 248 – 254.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ, պ.գ.դ.

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

«Պատմության և փիլիսոփայության ամբիոն»-ի դոցենտ

էլ. փոստ՝ hovhkhor78@mail.ru

DOI: 10.56813/2953-786X-2022.2-219

ՍԱՏՐԱՊՈՒԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ

Վերջին տասնամյակներին Արեւմտյան Պարսկաստանի XIII սատրապության կամ հայկական սատրապության վարչական կացության ու բաժանման մասին հրապարակվել են բազմաթիվ ուսումնասիրություններ (Հարությունյան, 1999, 45-114; Խորիկյան, 2014, Գլուխ Ա; Խորիկյան, 2019, 6-13; Khorikyan, 2017, 174-180), սակայն խնդիրը, անշուշտ, սպառված չէ, և ստորև կանդադառնանք այդ սատրապության ընդգրկած տարածքի հարցին: Հարցն այն է, թե ինչով էր պայմանավորված նման վիթխարի տարածքով սատրապության առկայությունը տերության անմիջական հարևանությամբ¹, և այս տեսանկյունից, անկասկած, մինչաքեմենյան իրողությունների բացահայտումը կարևոր նշանակություն ունի:

Նախ սկսենք այն հարցից, որ հայկական սատրապության տարածքն իր ընդարձակությամբ բացառություն չէր տերության սատրապական բաժանման համակարգում, և այս առումով կարող ենք հիշատակել ընդարձակ տարածքներ ունեցող այլ նահանգներ, օրինակ՝ III, VI, X, XIV, XVI, XVII սատրապությունները: Ընդ որում, նշենք, որ հիշատակված սատրա-

¹ Այս հարցի վրա մեր ուշադրությունը հրավիրել է պ.գ.դ., պրոֆեսոր Արամ Քոսյանն անձնական գրույցում, ինչի համար շնորհակալություն ենք հայտնում:

պությունների տարեկան հարկը մոտ էր կամ գերազանցում էր XIII սատրապությունից գանձվող 400 տաղանդ արծաթ հարկին: Այսպես, III սատրապությունը տարեկան տալիս էր 360 տաղանդ հարկ, VI-ը՝ 700, X-ը՝ 450, XIV-ը՝ 600, XVI-ը՝ 300, XVII-ը՝ 400 (Հերոդոտոս 1986, III, 90-94): Այս հողվածում մենք չենք քննարկելու յուրաքանչյուր սատրապությունից գանձվող հարկի չափի հնարավոր պատճառները, ինչն առաջին հերթին պայմանավորված էր այս կամ այն սատրապության տնտեսական հնարավորությունների առկայությամբ (Дандамаев, Луконин, 1980, 187): Անշուշտ, գերհարուստ Եգիպտոսի համար 700 տաղանդ հարկը (նաև այլ հարկեր էր տալիս) պայմանավորված էր այս սատրապության տնտեսական հզորությամբ, բայց XVI սատրապության ընդարձակ տարածքի համար 300 տաղանդ հարկը քիչ էր այն առումով, որ տնտեսապես թույլ զարգացած նահանգ էր՝ իհարկե չբացառելով որոշ այլ հանգամանքներ, որոնք պայմանավորված էին այս սատրապության նկատմամբ պարսից արքունիքի առանձնահատուկ վերաբերմունքով: Բերված մի քանի համեմատությունները նախնական առումով թույլ են տալիս մտածել, որ XIII սատրապության ընդարձակ տարածքը 400 տաղանդ տարեկան վճարվող հարկով տեղավորվում էր Աքեմենյան տերության վարչահարկային քաղաքականության ընդհանուր տրամաբանության մեջ և որևէ բացառություն չի կազմել սատրապական բաժանման համակարգում: Միևնույն ժամանակ նշենք, որ փոքր տարածք ունեցող սատրապությունը կարող էր վճարել հսկայական հարկ, որն առաջին հայացքից կարծես թե անհամատեղելի էր փոքր տարածքին: Օրինակ, կիլիկյան սատրապությունն իր փոքր տարածքով վճարում էր 500 տաղանդ հարկ (տարեկան նաև 360 սալիտակ ձի) (Հերոդոտոս, 1986, III, 90), ինչը պայ-

մանվորված էր այս վարչական միավորի տնտեսական հզոր հնարավորություններով: Այնպես որ Սատրապական Հայաստանի վճարած 400 տաղանդ հարկն այնքան էլ շատ չէր ընդգրկած տարածքի համեմատությամբ: Սակայն նշենք, որ բացի 400 տաղանդ հարկից, Հայաստանը տարեկան պարսից թագավորին ուղարկում էր նաև 20000 քուռակ Միհրի տոնի համար (Ստրաբոն, 1940, 61, հմմտ. Քսենոփոն, 1970, 98), ինչն արդեն, իրոք, խոսում է այն մասին, որ XIII սատրապության վճարած հարկն իրոք մեծ էր: Իսկ Հայաստանի կամ Թորգոմի տան՝ ձիերով հայտնի լինելը Հայաստանից դուրս, օրինակ՝ Տյուրոսում, նշված է դեռևս Եզեկիելի մարգարեությունում (Աստուածաշունչ, 2014, 1316): Ստրաբոնի մեկ այլ տեղեկությունից էլ պարզվում է, որ Օրխիստենե-Արցախն էր տրամադրում առավել մեծ թվով հեծյալներ (Տրաբոն, 1964, 497): Այս տեղեկությունից անուղղակիորեն բխում է, որ Արցախը Սատրապական Հայաստանի անբաժանելի մասն է կազմել, որպեսզի վերջինս կարողանար պարսից արքունիքին ուղարկել տարեկան 20000 քուռակ: Ընդ որում, ըստ Ստրաբոնի՝ նեսեական հայտնի ձիերի հայրենիքը գուցե Հայաստանն էր (Տրաբոն, 1964, 495), տվյալ դեպքում՝ Հայոց Արևելից կողմերը: Պետք է նաև նկատի ունենանք, որ հայերը ևս, ինչպես մյուս հպատակ ժողովուրդները, այլ պարտավորություններ են ունեցել պարսիկների հանդեպ, և հավանական է, որ բնամթերք էին վճարում սատրապության տարածքում գտնվող պարսկական կայազորներին (Дандамаев, 2010, 83):

Ժամանակին մենք ցույց էինք տվել, որ Հայաստանն ընդարձակ տարածքով նախ մտավ մարական, ապա Աքեմենյան տերության կազմի մեջ (Խորիկյան, 2014, 33): Սեպագիր, անտիկ աղբյուրների և Մովսես Խորենացու տեղեկությունների

վերլուծությամբ ևս փորձել էինք ցույց տալ, որ Աքեմենյան տիրապետության նախօրեին հայկական պետության ձևավորումը նախընթաց դարաշրջանում արդեն ավարտված էր, և Հայկազյան Տիգրանի ժամանակ հայկական պետությունն ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի գրեթե ամբողջ տարածքը: Հայկական պետության և հայ ժողովրդի կազմավորումը Խորենացու մոտ ներկայանում է Հայկյանների «հերոսական դարաշրջանի» (Քոսյան, 1999, 256) պատմության շարադրմամբ: Հենց Հայկյանների՝ Հայկական լեռնաշխարհում տարածվելու պատմությունն է, որ Խորենացու մոտ հանդես է գալիս որպես հայկական էթնոսի համախմբման և կենտրոնացման դարաշրջան (Խորիկյան, 2011, 154-163): Մեր քննությունը բերել էր այն կարծիքին, որ մինչև մ. թ. ա. VI դարի կեսերը Հայաստանն ուներ ընդարձակ տարածք և հիմնականում այդ տարածքով էլ, ըստ հին աղբյուրների, նախ մտավ մարական տերության, ապա Աքեմենյան Պարսկաստանի XIII սատրապության կազմի մեջ: Սատրապական Հայաստանի ընդարձակ տարածքի մասին խոսելիս պետք է նկատի ունենանք մի շատ կարևոր իրողություն ևս, ինչն արտացոլված է Հերոդոտոսի մոտ: Վերջինս գրում է. «Պակտյուիկեից, արմեններից և հարևաններից մինչև Եվքսինյանը ստացվում էր չորս հարյուր տաղանդ. սա տասներեքերորդ նահանգն էր» (Հերոդոտոս, 1986, III, 93): Պակտյուիկեն համապատասխանում էր Կատպատուկա-Կապադովկիա երկրի արևելյան մասին՝ տեղորոշվելով հետագա Կեսարիա-Մաժակի շրջանում (Խորիկյան, 2014, 22, 30-31): Պարսից արքունիքի սատրապական բաժանման հիմքում ընկած էր տարբեր էթնոսների միավորման սկզբունքը, և ակնհայտ է, որ Պակտյուիկեն աշխարհագրական անվանում է: Սատրապությունների թվարկման մեջ քիչ դեպքերում է, որ

այս կամ այն սատրապությունը հիշատակվում է ըստ դրանցում ընդգրկված երկրանունների կամ երկրանունների կողքին գուգահեռ հիշատակվում են նաև ցեղեր կամ ժողովուրդներ. օրինակ՝ V, VI, VIII, IX, X, XII սատրապությունները: Ինչ վերաբերում է արմենների անանուն հարևաններին, ապա սրանք համապատասխանում են Պակտյուիկեից հյուսիս գտնվող կապադովկիացիներին մինչև Սև ծով ընկած հատվածներ՝ Թերմոդոնտ գետի և Յասոնի հրվանդանի միջև (Խորիկյան, 2014, 26-27, 79)²: Այսպիսով, որպես ժողովուրդ՝ XIII սատրապության մեջ անվանական հիշատակվում են միայն արմենները³,

² Այս տեսանկյունից պետք է մեկնաբանվի Ստրաբոնի այն տեղեկությունը, որ հետագայում Փոքր Հայքի իշխանությունը տարածվում էր Խաղտիքի և տիբարենների վրա մինչև Տրասպոն և Փառնակիա (Ստրաբոն, 1940, 75). վերջինս մասամբ նախկին Կեռասունտն է, այսինքն՝ XIX սատրապության մյուս ցեղերը՝ մոսսինոյկները և կոլխերի ու մակրոնների մի մասը ևս ուշ ժամանակներում ենթարկվել են Փոքր Հայքին: Ստրաբոնի տեղեկությունը վկայում է այն մասին, որ հայոց մեջ հետաքեմենյան շրջանում պահպանվել էր պատմական հիշողությունը, որ հայոց իշխանությունը տարածվել է Սև ծովի հարավային ափերի վրա, ինչը փորձել են իրագործել Փոքր Հայքի տիրակալներն ավելի մեծ աշխարհագրական ծավալումով:

³ Արմենիաներ թարգմանությունը (Քրեստոմատիա, 2007, 242) չենք ընդունում, որովհետև Փոքր Հայքի գաղափարը մ. թ. ա. VI վերջին անընդունելի է, անկախ այն հանգամանքից, որ Եփրատից արևմուտք ընկած հետագա Փոքր Հայքի տարածքը մտնում էր Սատրապական Հայաստանի մեջ (այս մասին մանրամասն տե՛ս Խորիկյան, 2018, 213-217): Ուշադրություն հրավիրենք նաև այն հանգամանքին, որ «Կյուրոպեդիա»-ում ևս օգտագործված է «արմենների թագավորություն» բառակապակցությունը (Xenophon, 1960, 236; Ксенофонт, 1976, 63; Քսենոփոն, 2000, 103): Անգլերեն «the throne of Armenia» թարգմանությունը հունարեն բնագրի «Ἀρμενίων βασιλείαν»-ը ճիշտ չի արտահայտում, իսկ ռուսերենում թարգմանված «... армянского царства» իմաստային առումով հնարավոր է, բայց նախընտրում ենք տվյալ հատվածի մեր թարգմանությունը, այսինքն՝ Հերոդոտոսի և Քսենոփոնի համար արմեններ-հայերն ընկալվել են մեկ էթնիկական ամբողջություն, ինչպես, օրինակ, պարսիկները և մարերը: Արմեններ ժողովրդի անունով էլ հին հույն պատմիչները երկիրն անվանում են Արմենիա:

տու միավոր՝ XIII սատրապությունը միավորվել է Պակտյուիկեի և հարևանների հետ: Հայերով բնակեցված այս ընդարձակ երկիրն ու սատրապությունն Աքեմենյանների սեպագիր արձանագրություններում հիշատակվում է Արմինա անունով, որի նշանակությունն Աքեմենյան հարստության համար շատ կարևոր էր. Օրոնտասն Աքեմենյան արքայադստեր՝ Արտաքսերքսես Բ-ի քրոջ ամուսինն էր (Xenophon, 1980, 136; 228), իսկ Դարեհ Գ Կողոմանոսը, մինչև արքայից արքա հռչակվելը, Հայաստանի սատրապն էր (Justin, 1853, 90): Հելլադա արշավող Քսերքսեսի բանակի հայոց զորքի հրամանատարը Դարեհ Ա-ի դստեր ամուսին Արտոքմեսն էր (Հերոդոտոս, 1986, VII, 73), որի անունն իրականում Արտաշես է (Кркшараян, 1979, 130), և ըստ էության՝ ազգությամբ հայ զորավար է: Հայաստանի թագավոր Երվանդ Վերջին-Օրոնտասին Ստրաբոնը համարում է Դարեհ Ա-ի յոթ մեծատոհմիկ ազնվականներից մեկի՝ Հյուդառնեսի ժառանգներից (Страбон, 1964, 500; Орлов, 2016, 778)⁴, այսինքն՝ Հայաստանն ուղղակիորեն կապված էր Աքեմենյանների հետ, և Դարեհ Ա-ն Հայաստանը պարզել էր Հյուդառնեսին, որն օգնել էր Դարեհին տիրանալ գահին: Հնարավոր է, որ Հայաստանի՝ մ. թ. ա. 522-521 թվականների հակապարսկական ասպտամբությունից հետո Հյուդառնեսը ստացավ Հայաստանը, այսինքն՝ հայոց թագավորական տոհմը՝ Հայկյանները,

⁴ Ա. Քոսյանը ևս գտնում է, որ Ստրաբոնի այս տեղեկությունը պատմական լուրջ հիմք ունի և վկայում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավարևմտյան գոտում հնդիրանական էթնիկական տարրի առկայության մասին՝ սկսած մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսից (Քոսյան, 2014, 16): Ելնելով Ա. Քոսյանի կարծիքից՝ կարող ենք եզրակացնել, որ Դարեհի Ա-ի ազնվական Հյուդառնեսի և վերջինիս նախնիների կապն Հայաստանի հետ շատ ավելի հին պատմություն ունի, և Դարեհը պարզապես նրա սերունդներին հաստատել է որպես Հայաստանի թագավորներ:

խնամիական կապեր հաստատեցին Հյուդառնեսի ընտանիքի հետ՝ պատճառ դառնալով Երվանդունիների՝ Հյուդառնեսի տոհմից սերելու մասին տեղեկության ծագմանը (Հարությունյան, 2005, 144)⁵: Նկատենք նաև, որ հայերը էթնիկական տեղաշարժման արդյունքում դուրս էին եկել Հայկական լեռնաշխարհի սահմաններից, և Միջագետքի հյուսիսարևմտյան մասը հայտնվել էր հայկական սատրապության կազմի մեջ (Խորիկյան, 2005, 183-188): Հյուսիսարևմտյան Միջագետքի մի մասը՝ Հայոց Միջագետք անվանումով, հետագայում Մեծ Հայքի թագավորության անբաժանելի մասն էր:

Սատրապական Հայաստանի կենտրոնի հարցը քննարկելիս մենք ուշադրություն էին դարձրել այն հանգամանքին, որ պարսից արքունիքն առանձնահատուկ վերաբերմունք ուներ այն սատրապությունների նկատմամբ, որոնք մինչև Աքեմենյանները թագավորություններ են եղել: Սատրապական Հայաստանի կենտրոնը Վան քաղաքն էր, որը միաժամանակ տերության հյուսիսային սատրապությունների՝ տոպարքիայի կենտրոնն էր, այսինքն՝ տերության հյուսիսային շրջանների համար Հայաստանը, այսպես ասած, տարածաշրջանային գերասատրապություն էր⁶: Բացառված չէ, որ հնագույն քաղաքակրթության՝ Ուրարտուի կենտրոն Վանը ևս Աքեմենյան արքաների նստավայրերից մեկն էր, ինչպիսին էին Սուսան, Բաբելոնը, Էկբատանան, Պերսեպոլիսը կամ էլ Բակտրան

⁵ Է. Ռունգը չի կարծում, որ Հյուդառնեսն ուղղակիորեն Հայաստանի սատրապն է եղել, և նրան կապում է մարական սատրապության հետ (Рунг, 2012, 18-19), սակայն նրա փաստարկները հիմնավոր չեն:

⁶ Համեմատության համար նշենք, որ Կողքիսը համարվել է Սատրապական Հայաստանի ենթաշրջաններից (Jacobs, 1994, 184), սակայն վերևում նշեցինք, որ XVIII և XIX սատրապությունները մինչև Կովկասյան մեծ լեռնաշղթա մտել են հայկական տոպարքիայի մեջ:

(Խորիկյան, 2019: 10-11): Ըստ էության՝ Սատրապական Հայաստանի կառավարումը վարչական կազմակերպվածության առումով արդյունավետ է եղել, քանի որ այլ տեղեկություններ սատրապության արմատական վերաձևման մասին չունենք: Սա խոսում է այն մասին, որ հայկական տեղական վերնախավը հաջողությամբ ընդգրկվել էր «Pax Persica»-ի՝ պարսկական խաղաղության հարացույցի ձևավորման գործընթացում (հմմտ. Вєрразов, 2019, 118-119): Մ. թ. ա. V դարի վերջերին XIII սատրապության տարածքը նվազել էր, սակայն որպես վարչական միավոր՝ այն պահպանել էր իր կենսունակությունը: Նշված ժամանակում տարբեր սատրապությունների ու ցեղերի կիսանկախ կամ անկախ վիճակը պայմանավորված էր նաև տերության կենտրոնական իշխանության թուլացումով:

Աքեմենյան տերության վարչական բաժանման ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի Հերոդոտոսի հետևյալ տեղեկությունը. «Յուրաքանչյուր ազգի նա (իմա՝ Դարեհ Ա - Խ. Հ.) կցեց մերձակա հարևաններին և, բացի այդ, հեռավոր ազգություններին միացրեց այս կամ այն իշխանությանը» (Հերոդոտոս, 1986, III, 89): Բերված տեղեկության մեջ կա մի շատ առանցքային շեշտադրում (Хорикян, 2019, 20-28), այն է՝ պարսից արքունիքը մինևույն ժողովրդին ընդգրկում էր ոչ թե տարբեր սատրապությունների մեջ, այլ մի քանիսին ներառում էր մեկ վարչական միավորի մեջ: Հետևաբար, եթե XVIII սատրապությունը տեղադրում ենք Հայկական լեռնաշխարհում, ապա դրանով հակասում ենք Հերոդոտոսի վերոբերյալ

⁷ Կեղծ-Արիստոտելը ևս նշում է պարսից տերության ցեղային կառավարման մասին. «Ասիայի ամբողջ կայսրությունը (իմա՝ պարսից տերությունը - Խ. Հ.)՝ արևմուտքում սահման ունենալով Հելլեսպոնտոսը, արևելքում՝ Ինդոսը, ըստ ցեղերի բաժանված էր Մեծ արքայի գորավարների, սատրապների և հպատակ-արքայորդիների միջև» (De Mundo, 1914, 398):

տեղեկությանը և այդ սատրապության ցեղերին՝ մատիեններին, սասպեյրներին ու ալարոդներին համարում ենք ոչ հայկական ցեղեր՝ ընդունելով, որ մ. թ. ա. VI-IV դարերում Արևելյան Հայաստանը բնակեցված չի եղել հայերով կամ էլ ալարոդներին արհեստականորեն նույնացնում ենք հայացած ուրարտացիների հետնորդներին (Հարությունյան, 1999, 45-47): Հայաստանը և հայերն Աքեմենյան արքունիքի կողմից ներառված են եղել XIII սատրապության մեջ, որի կազմում էր նաև Արևելյան Հայաստանի տարածքը⁸, իսկ XVIII սատրապության ոչ հայկական ցեղերը՝ մատիենները, սասպեյրներն ու ալարոդները, բնակվել են Կուր գետի ձախափնյակում:

XIII սատրապության տարածքը, ըստ էության, գոյություն ուներ դեռևս մարական տիրապետության ժամանակներից, երբ մինչև Հալիսի ոլորանի հատված ընկած հողերը մարերը միացնում են Հայաստանին: Այդ հողերի մի մասից հետագավում՝ պարսկական տիրապետության շրջանում, կազմավորվում է III սատրապության Կապադովկիա ենթաշրջանը (Дьяконов, 1956, 337, 356; Խորիկյան, 2014, 33): Այդուհանդերձ, Փոքր Ասիայի արևելյան զգալի տարածքներ պարսիկները թողնում են Սատրապական Հայաստանի կազմի մեջ: Նկատենք, որ նախ մարական, ապա պարսկական տիրապետության սկզբնական շրջանում Հայաստանը կախյալ թագավորություն էր ընդարձակ տարածքով, ինչը հաշվի առավ նաև Դարեհ Ա-ն վարչական վերափոխումների ժամանակ՝ որպես սատրապություն պահպանելով Հայաստանի ընդարձակ տարածքը: Հայաստանի կարևորությունը պահպանվեց նաև հետագա դարերի ընթացքում և՛ պարթևների, և՛ սասանյաններ

⁸ Հայկական էթնոսի ձևավորման կենտրոններից մեկը Էթիունին էր՝ Արգիշտիխինիլի-Արմավիր կենտրոնով (Քոսյան, 1999, 256-257):

րի համար: Ընդ որում, պարսիկների ազդեցությունը Հայաստանում հիմնականում ընդգրկել է քաղաքական ու կրոնական ոլորտը, այն դեպքում, երբ Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանում, ի տարբերություն հետագայի Վիրթի ու Աղվանքի, տեղական նյութական մշակույթի ազդեցությունն ավելի ուժեղ էր (Knauss, 2021, 305): Եթե Աքեմենյան դարաշրջանում Հայաստանում ճարտարապետությունը և կիրառական արվեստը մասնակի փոփոխություններով ենթարկվում էին պարսկական ազդեցությանը, այն էլ տեղական կառավարող վերնախավի շրջանակում, ապա խեցեգործությունը որևէ արտաքին ազդեցության չի ենթարկվում (L'archéologie de l'empire achéménide, 2005, 209; Dan, 2015, 12; Беprазов, 2019, 119)⁹, այսինքն՝ կարող ենք եզրակացնել, որ էթնիկական առումով Սասրապական Հայաստանը գրեթե միատարր էր:

Հերոդոտոսը պահպանել է մի հետաքրքիր տեղեկություն, որը թույլ է տալիս ուշագրավ եզրակացություններ կատարել: Այսպես, հույն պատմիչը գրում է. «Բոլորից առավել նրանք (իմա՝ պարսիկները - Շ. Խ.), անշուշտ իրենցից հետո, հարգում են իրենց մերձավորագույն հարևաններին, ապա պակաս մոտիկ բնակվողներին, և այսպես, հարգում են նրանց ըստ մոտիկության: Բոլորից պակաս նրանք հարգում են ամենահեռվում բնակվողներին. քանզի կարծում են, թե իրենք ամեն ինչում գերազանցում են բոլորին, իսկ մնացյալները, իրենց կարծիքով, առաքինի են իրենց մերձավորության համեմատ. իրենցից հեռավոր վայրերում ապրողներին նրանք համարում են ստորագույնը բոլորից: Մեղական տիրապետության ժամանակ ևս

մեկ ազգ իշխում էր մյուսին, իսկ մեղացիները՝ բոլորին, նաև իրենց մերձավոր հարևաններին. սրանք՝ իրենց հարևաններին, սրանք էլ իրենց հարևաններին և այլն: Նույն կարգով էլ այժմ պարսիկներն են հարգում. քանզի սրանք ևս նույն ձևով են իշխում և կառավարում» (Հերոդոտոս, 1986, I, 134): Հերոդոտոսի տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ մարերի անմիջական հարևան հայերը ևս իշխել են իրենց հարևաններին՝ ենթարկվելով մարերի գերագույն իշխանությանը, այսինքն՝ Փոքր Ասիայի արևելյան մասում հայերն իրոք իշխել են կապադովկիացիների մի մասին: Ըստ աշխարհագրական մերձավորության հարևանների նկատմամբ հարգանքը պայմանավորված էր մարերի ու պարսիկների համար ազգակցության, բարքերի, սովորույթների ու կրոնական պատկերացումների ընդհանրությամբ, իսկ այս առումով հայերի ու Հայաստանի նկատմամբ մարերի ու պարսիկների հարգանքը պետք է արտահայտվեր քաղաքական առանձնահատուկ վերաբերմունքով, քանի որ ըստ մերձավորության էին մարերն ու պարսիկները կառավարում, այսինքն՝ Հերոդոտոսի մեջբերված տեղեկության մեջ արտացոլված է պարսից տերության վասալական կառավարման համակարգը, որում Հայաստանն ավելի կարևոր է եղել Աքեմենյան տոհմի համար: Սա նշանակում է, որ «մենք»-«նրանք» երկբևեռ հակադրության մեջ հայերը մարերի ու պարսիկների համար գտնվել են «մենք»-ի տիրույթում, իսկ հեռվում բնակվողները՝ «նրանք»-ի բևեռում: Անշուշտ, իսկ հեռվում բնակվողները՝ «նրանք»-ի բևեռում: Անշուշտ, իրանական ազդեցությունը Հայաստանի վրա անժխտելի է (Խոթրիկյան, 2019, 10-11): Այս համատեքստում ուշադրություն հրավիրենք նաև այն իրողության վրա, որ Պերսեպոլիսի հրաձրաքանդակներում պատկերված հարկատու ժողովուրդների շարքում հայերը 3-րդ տեղում են մարերից ու էլամացի-

⁹ Աքեմենյան քաղաքակրթության վրա ուրարտական ուժեղ ազդեցության մասին տե՛ս Գրեկյան 2013, 333-336, 340-341:

ներից հետո (Дандамаев, Луконин, 1980, 195), ինչը խոսում է պարսկական կառավարման համակարգում հայերի զբաղեցրած կարևոր դիրքի մասին և համահունչ է Հերոդոտոսի I, 134 տեղեկությանը:

Եթե Հայկական լեռնաշխարհը բաժանված տեսնենք XIII և XVIII սատրապությունների միջև (տե՛ս, օրինակ, Cook, 1985, 256-257), ինչը պայմանավորված էր հայ ժողովրդի ձևավորման գիտական սխալ տեսությամբ, ապա հարց է ծագում, թե ինչպե՞ս կարող էր փոքր տարածք ունեցող XIII սատրապությունը վճարել վիթխարի՝ 400 տաղանդ արծաթ հարկ¹⁰: Իհարկե, վարչական նման բաժանման դեպքում Հայաստանը չէր կարող այդ չափի տարեկան հարկ վճարել պարսից արքունիքին, այսինքն՝ պարսիկների հարկային քաղաքականության տեսանկյունից դժվար է պատկերացնել, որ Հայաստանի տարածքը բաժանված է եղել երկու սատրապությունների միջև: Եվ հետո, երբ խոսում ենք Սատրապական Հայաստանի վճարած 400 տաղանդ արծաթ հարկի մասին, ապա չպետք է մոռանանք, որ այդ հարկը վճարել է Դարեհ Ա-ի ժամանակ ձևավորված XIII սատրապությունը, որը կազմված է եղել վարչական երեք ենթաշրջաններից՝ Պակտյուիկեից, արմեններից և հարևաններից: Արդյո՞ք այդ նույն հարկը Հայաստանը վճա-

րում էր մ. թ. ա. V դարի վերջերին և մինչև Արեմենյան տերության անկումը, երբ կրճատվել էր XIII սատրապության տարածքը, դժվար է ասել: Հավանական է, որ հարկաչափը ևս նվազել էր մ. թ. ա. V դարի վերջերից սկսած՝ սատրապության տարածքի նվազմանը համապատասխան: Հետևաբար, երբ օգտագործում ենք Սատրապական Հայաստան, Հայաստանի սատրապություն, հայկական սատրապություն հասկացությունները, ապա վարչաքաղաքական և աշխարհագրական առումով դրանք պետք է տարբերակենք Դարեհի ժամանակ ձևավորված XIII սատրապությունից և Քսենոփոնի հիշատակած Արմենիա երկրից: Հարկավ, XIII սատրապության հիմնական ժողովրդի անունով սատրապության հայկական անվանումը ճիշտ է, բայց Արեմենյան տիրապետության երկհարյուրամյա շրջանում Սատրապական Հայաստանի տարածքը փոփոխությունների էր ենթարկվում: Այդուհանդերձ հետագայի փոփոխությունների էր ենթարկվում: Մյուս կողմից՝ Մեծ և Փոքր Հայքերի տարածքը մ. թ. ա. 331 թվականի Գավգամելայի ճակատամարտին որպես մեկ սատրապություն շարունակում էին ենթարկվել պարսիկներին (Խորիկյան, 2018, 213-217):

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ Սատրապական Հայաստանի ընդարձակ տարածքը բացառություն չէր Արեմենյան տերության վարչական բաժանման համակարգում, և կային ավելի մեծ տարածք ունեցող սատրապություններ: XIII սատրապության ձևավորման հարցում պարսից արքունիքն ուղղորդվել է ոչ միայն իր ռազմաքաղաքական և տնտեսական շահերով, այլև հաշվի է առել Հայաստանում Արեմենյաններից առաջ գոյություն ունեցած պետական կառավարման համակարգի իրողությունը: Ըստ այդմ էլ,

¹⁰ Նշենք, որ Արգիրոկաստրոն-Գյումուշխանեի շրջանում գտնվող արծաթի հայտնի հանքը թերևս Սատրապական Հայաստանի մեջ էր, իսկ ոսկու ամենահայտնի հանքը գտնվում էր Սպերի գավառում, որը փորձում է նվաճել Ալեքսանդր Մակեդոնացու զորավար Մենոնը (Страбон, 1964, 499): Բացառված չէ, որ Գյումուշխանեի արծաթի հանքը գտնվել է XIX սատրապության մեջ, որն էլ կարողանում էր նաև այդ հանքի շնորհիվ վճարել տարեկան 300 տաղանդ հարկը (Հերոդոտոս, 1986, III, 94): Ամեն դեպքում Սատրապական Հայաստանը տնտեսապես ի վիճակի էր վճարելու տարեկան 400 տաղանդ հարկը:

Արեմենյան արքայատոհմում հայոց սատրապի պաշտոնը կարևոր նշանակություն ուներ:

HOVHANNES KHORIKYAN

“M. Nalbandyan State University of Shirak” Foundation,
Chair of History and Philosophy, Doctor of History
e-mail: hovhkhor78@mail.ru

ON THE TERRITORY OF SATRAPIC ARMENIA

The vast territory of Satrapic Armenia was no exception in the system of administrative division of the Achaemenid Empire and there were satrapies with a larger territory. The Persian court was guided not only by its military-political and economic interests in the formation of the XIII Satrapy, but also by the reality of the pre-Achaemenid system of government in Armenia. Accordingly, the position of the Armenian Satrap in the Achaemenid dynasty was very important.

The main population of Satrapic Armenia was Armenians, which was a unique case in the system of administrative division of the Achaemenid Empire. The formation of the Armenian Satrapy also was based on the existence of an ethnos, in this case the Armenians, but as an administrative, taxpaying unit, the XIII Satrapy was united with Pactyica and neighbours.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստուածաշունչ, Մատեան Հին Եւ Նոր կտակարանների, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2014:
2. Գրեկյան, Ե., Արեմենյան Իրանը և Հայաստանը, *Հայաստանի հարակից երկրների պատմություն*, հ. I, Հին շրջան, խմբ. խորհուրդ՝ Ռ. Սաֆրաստյան և ուրիշ, Երևան, «Զանգակ» հրատ., 2013:

3. Խորիկյան, Հ., Սատրապական Հայաստանի կենտրոնի հարցի շուրջ, *Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես*, թիվ 2, 2019:

4. Խորիկյան, Հ., Արիանոսի մի տեղեկության շուրջ, *Պատմաբանասիրական հանդես*, թիվ 2, 2018:

5. Խորիկյան, Հ., Հայաստանը և Այսրկովկասը Արեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, Հեղինակային հրատ., 2014:

6. Խորիկյան, Հ., Հին Հայաստանի տարածքը մ. թ. ա. VI-IV դարերում՝ ըստ Մովսես Խորենացու, «Վէմ» *համահայկական հանդես*, թիվ 2, 2011:

7. Խորիկյան, Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ. թ. ա. VI-IV դարերում, *Պատմաբանասիրական հանդես*, թիվ 3, 2005:

8. Հարությունյան, Բ., Թոգարմա երկիրը և Հայկյանները, *«Աստվածաշնչական Հայաստան»*, Երևան, «Նոյյան Տապան», 2005:

9. Հարությունյան, Բ. Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, ԵՊՀ հրատ., 2001:

10. Հարությունյան, Բ., Արեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, *Հանդես ամսօրեայ*, Վիեննա, թիվ 1-12, 1999:

11. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1986:

12. Ստրաբոն, քաղեց և թարգմ. Հ. Աճառյան, Երևան, ԵՊՀ հրատ., 1940:

13. Քոսյան, Ա., Հայոց վաղ պետականության պատմության մի խնդրի շուրջ, *Բանբեր հայագիտության*, թիվ 1, 2014:

14. Քոսյան, Ա., Արամ Նահապետը Կապադովկիայում (Մի վարկածի առթիվ), *Պատմաբանասիրական հանդես*, թիվ 1, 1999:

15. Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, Հայաստանի Գրողների Միության «Նոր-Դար» հրատ., 2000:

16. Քսենոփոն, Անարասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970:

17. Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա (2007), հատ. 1, Հնագույն ժամանակներից մինչև Ք. Հ. 298 թ., կազմողներ Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Սովսիսյան, Երևան, ԵՊՀ հրատ.:

18. Вергазов, Р. Р., «Персидский мир». Механизмы культурной интеграции локальных элит северных и северо-восточных сатрапий Ахеменидов, *Труды Института востоковедения РАН*, М. 2019, № 21.

19. Дандамаев, М. А., Вавилония в 626-330 годы до н. э.: социальная структура и этнические отношения, Санкт-Петербург, Петербургское лингвистическое общество, 2010.

20. Дандамаев, М. А., Луконин В. Г., Культура и экономика древнего Ирана, М. 1980, Главная редакция восточной литературы издательства «Наука».

21. Дьяконов, И., История Мидии, М.-Л., Издательство АН СССР.

22. Крякшарян, С., К интерпретации некоторых сведений древнегреческих авторов об Армении, *Проблемы античной истории и культуры*, I, Ереван 1979, Издательство АН Армянской ССР.

23. Ксенофонт, Киропедия, издание подготовили В. Г. Борухович и Э. Д. Фролов, М. 1976, Издательство «Наука».

24. Орлов, В. П., Шесть знатных персов и их потомки при Дарии I: положение персидской аристократии в ахеменидской империи, *Ученые записки Казанского университета. Серия гуманитарные науки*, 2016, Т. 158, кн. 3.

25. Рунг, Э. В., Тиссаферн и Гидарниды в контексте политической истории Ахеменидской державы в V в. до н. э., *Вестник древней истории*, 2012, № 1.

26. Страбон, География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. А. Стратановского, Ленинград 1964, Издательство «Наука».

27. Хорикян, О. Г., Принцип административного деления в Ахеменидской Персии, 2019, *Scripta antiqua. Вопросы древней истории, филологии, искусства и материальной культуры*. Т. VIII, М.

28. Cook, J. M., The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, in: *The Cambridge History of Iran*, Vol. 2, Cambridge University Press 1985.

29. Dan, R., From the Armenian Highland to Iran. A Study on the Relations between the Kingdom of Urartu and the Achaemenid Empire, *Serie Orientale Roma* 2015, Nuova Serie 4, Roma, ISMEO.

30. De Mundo, ed. by E. S. Forster, Oxford, Clarendon Press 1914.

31. Jacobs, B. Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, Wiesbaden, Dr. Ludwig Reichert Verlag, 1994.

32. Justin, Cornelius Nepos, and Eutropius, literally translated, with notes and a general index by J. S. Watson, London 1853, "H. G. Bohn".

33. Khorikyan, H., The Administrative Division of the 13th Satrapy of Achaemenid Persia in the Reign of Darius II, *Metamorphoses of History*, Scientific Almanac, Issue 10, Pskov State University 2017.

34. Knauss, F. S., Caucasus Region, in: *A Companion to the Achaemenid Persian Empire*, Vol. I, ed. by B. Jacobs, R. Rollinger, New York, 2021, Wiley Blackwell.

35. *L'archéologie de l'empire achéménide: nouvelles recherches. Actes du colloque organisé au Collège de France, 21-22 novembre 2003*, *Persika* 6, P. Briant et R. Boucharlat éd., Paris, Éditions de Boccard 2005.

36. Xenophon, *Anabasis*, with an English translation by Carleton L. Brownson, Vol. III, Books I-VII, Cambridge-Massachusetts-London, Harvard University Press 1980, Loeb Classical Library.

37. Xenophon, *Cyropaedia*, Vol. I, with an English translation by W. Miller, Cambridge-Massachusetts-London, Harvard University Press 1960, Loeb Classical Library.

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ, պ.գ.դ., պրոֆեսոր
*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ համաշխարհային պատմության և
նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
էլ. փոստ՝ kh.stepanyan@gmail.com
DOI: 10.56813/2953-786X-2022.2-238*

**ԻՐԱՆՈՒՄ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ
(1918-1920 ԹԹ.)**

Ներածություն

Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին բավական սուր էր դրված հայ գաղթականության խնդիրը: Երիտթուրքերի գործադրած բռնությունների հետևանքով արևմտահայության՝ Եղեռնից փրկվածների մի մասը հանգրվանել էր ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ հարևան երկրներում, այդ թվում՝ Իրանում: 1918-1920 թթ. Իրանում հայ գաղթականների հիմնական կայանները գտնվել են Թեհրանում, Թավրիզում, Համադանում և Ղազվինում: Անշուշտ եղել են նաև այլ կայաններ, որոնք իրենց չափսերով և նշանակությամբ փոքր են եղել: Բացի արևմտահայ գաղթականներից Իրանում որոշակի քանակությամբ հայ գաղթականներ հանգրվանեցին Ռուսաստանի Թուրքեստանի երկրամասից (խորհրդայնացումից հետո), ինչպես նաև Նախիջևանից: Կային նաև ներքին գաղթականներ (Խոյ-Սալմաստից և Փերիայից): Զեկույցում ներկայացվում են 1918-1920 թթ. Իրանում հայ գաղթականության ծանր դրությունը և դրա բարելավման ուղղությամբ Հայաստանի առաջին հանրապետության կառավարության, մասնավորապես, Իրանում ՀՀ դիվա-

նագիտական առաքելության կատարած աշխատանքները: Որպես սկզբնաղբյուր գերազանցաբար օգտագործվել են ՀՅԴ պատմության կենտրոնական արխիվի (Ուոթերթաուն, Մասաչուսեթս, ԱՄՆ) նյութերը:

**1918-1920 թթ. հայ-իրանական դիվանագիտական
հարաբերությունների մասին**

Հայաստանի առաջին հանրապետության հարևաններից Իրանը միակ երկիրն էր, որի հետ տարածքային և այլ կարգի խնդիրներ չեղան: Սկզբից ևեթ խթանվեց առևտրական և դիվանագիտական հարաբերությունների զարգացումը: 1919 թ. Իրանում Հայաստանի դիվանագիտական առաքելության ղեկավար նշանակվեց Հովսեփ Արղությանը, ով ճանապարհների փակ լինելու պատճառով միայն 1920 թ. հունվարին հասավ Թեհրան և անմիջապես ձեռնամուխ եղավ իր լիազորությունների կատարմանը: Նա պետք է Իրանի հետ բազմակողմանի համագործակցության համաձայնագիր ստորագրեր: Կարևոր էր հատկապես իրանահայության թվաքանակի ճշտումը և նրա ներուժի օգտագործումը Հայաստանի վերաշինության գործում: Արղությանը պետք է ճշտեր նաև Իրանում և Միջագետքում ապաստանած հայ գաղթականության հայրենիք ներգետքում և հարավորությունները: Իրանի միջոցով Արղությանը կարող էր կապեր հաստատել նաև Հնդկաստանի և Միջագետքի հայերի հետ:

Հայաստանի հետ առևտրական և բարեկամական պայմանագրեր կնքելու հետաքրքրություն ուներ նաև Իրանը: Հանգամանքների բերումով երկու երկրների միջև պայմանագրեր

չստորագրվեցին, սակայն Ատրպատականի հետ հնարավոր եղավ առևտրական կապեր հաստատել:

Պետք է նշել, որ Արդությանի նշանակման մասին լուրը խանդավառությամբ ընդունվեց Իրանի հայության կողմից (Սամսոն, 1934, Ե, 71):

1920 թ. հունվարի 5-ին Իրանի արգործնախարարության պաշտոնյան այցելում է Արդությանին և պաշտոնական բարեմաղթանքներ հղում նրան: 1920 թ. հունվարի 9-ին Արդությանին ընդունում է վարչապետ Վոսուդ-օդ-Դոուլեն (Միրզա Հասան խան): Արդությանի նշանակումն ու այցը արձագանք է գտնում նաև իրանական մամուլում: «Ռաշտ» պարբերականը կարևորում է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը (Սամսոն, 1934, Ե, 75-77):

Արդությանը 1920 թ. հունվարին հանդիպումներ է ունենում Իրանի ֆինանսների, զինվորական, հանրային աշխատանքի, կրթության, փոստ-հեռագրի նախարարների հետ: Հունվարի 17-ին հանդիպում է Իրանի թագաժառանգին («Առաւօտ», 1920, 22 յունւար):

Չնայած Հայաստանի Հանրապետությունը դեռ ճանաչված չէր, Արդությանի գործադրած ջանքերի և ունեցած հեղինակության շնորհիվ դիվանագիտական առաքելության աշխատանքները սկզբից ևեթ բավական հարթ ընթացան: Իսկ երբ 1920 թ. հունվարի 19-ին Հայաստանի Հանրապետությունը ճանաչվեց Անտանտի Գերագույն խորհրդի կողմից, Իրանի վարչապետն ու արտաքին գործերի նախարարը իրենց ներկայացուցիչների միջոցով շնորհավորեցին Արդությանին այդ կապակցությամբ (ՀՅԴ արխիւ, 80/2, 003):

1920 թ. մայիսի 28-ին Հայաստանի անկախության տարեդարձի առթիվ վարչապետ Վոսուդ-օդ-Դոուլեն անձամբ է գա-

լիս դեսպանատուն՝ շնորհավորելու (Սամսոն, 1934, Է, 75): Սա հարևան երկրի կողմից բացառիկ ուշադրություն էր Հայաստանի անկախության հանդեպ ու որոշ առումով՝ նաև հարգանքի ցուցադրում դեսպանի անձի հանդեպ: Եթե Հայաստանի անկախությունը անկում չապրեր, հաջորդ տարի՝ 1921 թ. Իշխան Հովսեփի Արդությանը լինելու էր Թեհրանում օտարերկրյա դեսպանական կազմի ավագը (doyen) (Սամսոն, 1934, Է, 75): Փաստորեն Հայաստանի և Իրանի միջև հաստատված դիվանագիտական հարաբերությունները բավական բարձր մակարդակի էին: Դա հնարավորություն էր տալիս Իրանում ՀՀ դիվանագիտական առաքելությանն ավելի ինքնավաստահ գործելու, որն էլ իր հերթին նպաստում էր այս երկրում հայ գաղթականության խնդրին առավել պատշաճ ուշադրության ցուցաբերման հնարավորությունների ընձեռմանը:

Իրանում 1918-1920 թթ. հայ գաղթականության թվաքանակի շուրջ

Ինչպես նշեցինք, Արդությանի առջև խնդիր էր դրվել ճշտել Իրանում հայության և, մասնավորապես, գաղթականության իրական թիվը: Թեև գաղթականների մեծ մասը մի քանի կայաններում էին կենտրոնացած, այնուամենայնիվ որոշ մակայրերում: Սա ավելի էր դժվարացնում գործը: ՀՀ Իրանի դիվանագիտական առաքելությունը փորձել է գաղթականական կոմիտեների, հայրենակցական միությունների տրամադրած՝ երբեմն իրարամերժ տվյալների հիման վրա ընդհանուր պատկեր կազմել:

Նախ փաստենք, որ Բացի գաղթականությունից Իրանում ապրում էր այդ երկրի հպատակություն ունեցող պատկառելի թվով հայություն: Ըստ Ռուբեն Տեր-Մինասյանի, ով Հայաստանի առաջին հանրապետության կենտրոնական ղեկավար դեմքերից էր (Ռազմական նախարար, խորհրդարանի պատգամավոր), իրանահայության թիվն անցնում էր 100.000-ից (Ռուբեն, 1990, 174):

Մոտավոր հաշվարկով 1918-1920 թթ. Իրանում հանգրվանել էր 50.000 արևմտահայ գաղթական: Բացի Արևմտյան Հայաստանից, Պարսկաստանը դարձավ նաև այդ տարիներին Թուրքեստանից գաղթած հայերի ժամանակավոր ապաստան: Չհանդուրժելով բոլշևիկյան հալածանքները կամ կանխազգալով դրանց արհավիրքները՝ բազմաթիվ հայեր Թուրքեստանից տեղափոխվում էին Պարսկաստան, հիմնականում Հայաստան անցնելու նպատակով: Նրանց թիվը հասնում էր մոտ 10.000-ի: Թեհրանում և գաղթականական կայաններում կային նաև Խոյ-Սալմաստից և Փերիայից (Սպահան) եկած գաղթականներ (6 հազար): Վերջիններս գաղթական էին դարձել սոցիալական ծանր պայմաններից և խաների հալածանքից:

Պարսկաստանի հայ գաղթականության սոցիալական խնդիրները

Հայաստանի առաջին հանրապետության տարիներին կառավարության ուշադրության կենտրոնում էր նաև հայ գաղթականության հարցը: Խորհրդարանի 1918 թ. սեպտեմբերի 28-ի ընդունած օրենքով կառավարությունը պարտավորվում էր գաղթականներին ապահովել հողով և աշխատանքով (Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի ար-

ձանագրություններ, 54-56): Ընդհանուր առմամբ փորձ էր արվում օգնել ոչ միայն հանրապետության սահմաններում հաստատված գաղթականներին՝ այլև հարևան երկրներում ապաստանածներին: Կառավարության 1918 թ. նոյեմբերի 6-ի նիստում որոշվում է նաև 300 հազար ռուբլի օգնություն տրամադրել Իրանի հայ գաղթականներին (Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, 201):

Իրանի հայ գաղթականությանը հետապնդում էին մի շարք սոցիալական խնդիրներ: Նրանք ովքեր հաստատվել էին գաղթականական կայաններում, որոշակիորեն ապահովված էին ամենօրյա սննուդով, հագուստով և թեկուզ ժամանակավոր ծածկով: Սակայն նրանք, ովքեր դուրս էին մնացել կայաններից (հատկապես Ղազվինում և Համադանում), ընդմիջտ գրկվում էին ամերիկացիների կողմից տրվող նման օժանդակությունից (ՀՅԴ արխիվ, 80/2, 003):

Հայաստանի կառավարությունը իր հատկացրած միջոցները հիմնականում ուղղում էր կրթական հոգսերի բարելավմանը: Գաղթականական կայաններում ՀՀ դիվանագիտական առաքելության աջակցությամբ բացվել էին դպրոցներ: Ճիշտ է, առաքելության համար անհրաժեշտ գումարը դժվար էր հայայդ դպրոցների համար անհրաժեշտ գումարը դժվար էր հայաթայթվում, սակայն, ինչպես երևում Ղազվինի գաղթականական ներկայացուցչին Արդությանի գրած նամակից, վերջինս հուսադրում է, որ դպրոցի համար գումար անպայման կգտնեն (ՀՅԴ արխիվ, 80/2, 090):

Առաջին հանրապետության տարիներին առանձին ուշադրության էր արժանանում 1919 թ. ամռանը Նախիջևանում թուրք-թաթարական կոտորածներից փրկված և Արաքսի աջափնյակում հայտնված հայությունը: Ճիշտ է, նրանց թիվն

անհամեմատ ավելի քիչ էր, բայց նրանց հանդեպ հատուկ ուշադրությունը երբեք չնվազեց: 1920 թ. հունիսի 10-ի կառավարության որոշմամբ 300.000 ռ. վարկ հատկացվեց Նախիջևանի դեպքերից հետո Պարսկաստան անցած նախկին միլիցիոներների և պաշտոնյաների կարիքները բավարարելու համար (Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, էջ 482-483): Կարևոր էր, որ նման անձիք առաջին իսկ հնարավորության սահմաններում կարողանում էին Թավրիզից վերադառնալ Հայաստանի Հանրապետություն:

Հայաստանի կառավարությունը նման ուշադրություն ցուցաբերեց նաև 1919 թ. դեկտեմբերին Ագուլիսի ջարդերից փրկվածների հանդեպ: Հ. Արդությանը 1920 թ. ապրիլի 5-ին ՀՀ ԱԳՆ հղած հեռագրով փորձում է պարզել, թե ինչ կարգի նյութական աջակցություն է հնարավոր տրամադրել այդ մարդկանց, և արդյոք նրանք հայրենիք վերադառնալուց հետո կկարողանան վերականգնել իրենց նախկին աշխատանքը (ՀՅԴ արխիվ, 80/2, 017): 1920 թ. մայիսի 4-ին կառավարության նիստում լսեցին զեկուցումը Ագուլիսի և Նախիջևանի դեպքերից հետո Պարսկաստան փախած պետական պաշտոնյաներին հայրենիք վերադառնալու համարություններ ընձեռելու մասին: Արդությանի միջոցով փորձ է արվել ճշտել այդ մարդկանց քանակը և անհրաժեշտ այն միջոցները, որոնք հնարավորություն կտան նրանց գոհացնել (Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, 440):

Այսպիսով, 1918-1920 թթ. Պարսկաստանում ապաստանած հայ գաղթականությունը կանգնած էր ծանր սոցիալական խնդիրների առաջ՝ սկսած ամենօրյա սնունդից մինչև կրթա-

կան և այլ հարցեր: Առաջնային խնդիրների մի մասը կարգավորվում էր ամերիկացիների (հիմնականում Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի) կողմից, մի մասն էլ՝ ՀՀ կառավարության հատկացված սուղ միջոցների հաշվին:

Պարսկաստանի հայ գաղթականության՝ հայրենիք վերադառնալու հարցը

Ինչպես նշեցինք Հովսեփ Արդությանը համապատասխան հանձնարարություն էր ստացել և ջանքեր է գործադրել Իրանում ապաստանած հայ գաղթականներին Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու ուղղությամբ: Հաշվի առնելով, որ առաջին հանրապետության տարիներին Հայաստանը մեծապես զգում էր մասնագետների, նաև արհեստավորների կարիք՝ Հ. Արդությանը փորձում էր հնարավորության դեպքում առաջինը նրանց ուղարկել հայրենիք:

1920 թ. փետրվարի 16-ին Հովսեփ Արդությանը նամակ է գրում ՀՀ խնամատարության նախարարին և օգնություն խնդրում Իրանում տեղակայված հայ գաղթականությանն աջակցելու համար: Հետաքրքիր է, որ դիվանագիտական ներկայացուցիչն առաջարկում է այստեղ հավաքված հայությանը տեղափոխել Հայաստան, հատկացնել մի բնակավայր և այդտեղ զարգացնել գորգագործությունը, որովհետև իր նշած գաղթականության մի մասը լավ գորգագործներ էին (ՀՅԴ արխիվ, 80/2, 003):

Հայ գաղթականությանը Իրանից Հայաստան տեղափոխելու հարցի արդյունավետ և հեռահար նպատակներով լուծման տեսանկյունից շատ հետաքրքիր է Հայաստանի Հանրապետությունում գործող և պետական հովանավորություն վայելող

Մայիսյան եղբայրների «Գիտական-տնտեսական էսպեդիցիա ի Հայաստան»-ի կողմնակալի նախագահի նամակը Հ. Արղությանին: Էքսպեդիցիան իր ուշադրությունը կենտրոնացրել էր նաև հայերի ներգաղթի և Հայաստանի ազգաբնակչության խնդիրների ուսումնասիրության վրա: Մասնավորապես պետք է վեր հանվեին, ինչպես հայ գաղթականության պատմությունը, այնպես էլ նրանց Հայաստանում վերաբնակեցնելու հիմնական ռազմավարական ուղղությունները, կազմակերպման ձևերը:

Նամակով խնդրում են Հ. Արղությանին հնարավոր բոլոր միջոցով գտնել այն բանալի կազմակերպություններին և անհատներին, որոնք համապատասխան հարցացուցակի («Արտասահմանի հայերի կեանքի մասին») պատասխանների շնորհիվ օգտակար կարող էին լինել էքսպեդիցիայի մեր աշխատանքների համար: Էքսպեդիցիան ակնկալում էր Հայաստանի դիվանագիտական առաքելության անվերապահ աջակցությունը տարատեսակ տեղեկությունների տրամադրման առումով (ՀՅԴ արխիվ, 80/2, 077): Փաստորեն, ծրագրվում էր գաղթականներին ոչ միայն հայրենիք տեղափոխելը, այլև նրանց հայրենիքում հաստատվելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը, որն էլ անուղղակիորեն նպաստելու էր հայրենիքի վերաշինության գործին:

1920 թ. անգլիացիների և ամերիկացիների նախաձեռնությամբ բարձրացավ Իրանի հայ գաղթականության մի մասին (հատկապես Համադանի շրջանի) Միջազգետքի վրայով Հայաստան տեղափոխելու տեղափոխելու խնդիրը: Հիմնական պատճառն այն էր, որ գաղթականները բեռ էին ամերիկացիների և անգլիացիների գլխին: Վերջիններս մտածում էին, որ Իրանի հայ գաղթականությանը Միջազգետք տեղափոխելով

այստեղի հայ գաղթականության հետ միասին կլուծվի նրանց Հայաստան տեղափոխելու հարցը (ՀՅԴ արխիվ, 80/2, 088): Անգլիացիները համոզում էին, որ Թավրիզով Հայաստան տեղափոխելն ավելի ծախսատար ու վտանգավոր է: Նման խնդիր իրոք կար: Բայց ամեն դեպքում գաղթականները դեմ էին Միջազգետք տեղափոխվելուն: Դրան դեմ էր նաև Իրանում ՀՀ դիվանագիտական առաքելությունը: Քանի որ Համադանում ապաստանած հայ գաղթականության մեծ մասը ներքին գաղթականներ էին (Խոյ-Սալմաստ) դիմում էին Արղությանին, որ նա կանխի իրենց Միջազգետք տեղափոխվելը, և իրենց հարցը լուծվի ընդհանուր իրանահայ գաղթականության հարցի հետ (ՀՅԴ արխիվ, 80/2, 086):

Սակայն քանի որ անգլիական ներկայացուցիչները սպառնացել են նրանց զրկել նպաստից և նույնիսկ օրական սնունդից, խորհուրդ է տվել անցնել Բաղդադ, որտեղից այնտեղ հավաքված հայ գաղթականության հետ պիտի տեղափոխվեին վանված Հայաստան: Բաղդադում պիտի միանային այնտեղ հավաքված 14 հազար հայ գաղթականությանը: Համադանից վանվածների թիվը մեծ չի եղել, մոտ 100 ընտանիք (ՀՅԴ արխիվ, 80/2, 090): Մինչ այդ Արղությանը 1920 թ. օգոստոսի 24-ին հեռագրել էր Հայաստան՝ հայտնելով, որ Բաքուբայի հայ գաղթականությունն ինքը անվտանգության խնդիրներ ունի, քանի որ անգլիացիների դեմ արաբները շարժում են սկսում, որը պայմանավորված էր նաև գաղթականության առկայությամբ, նույնիսկ թալանել էին հայ գաղթականներին (ՀՅԴ արխիվ, 80/2, 031):

Իսկ ինչ վերաբերում է Բաղդադում հավաքված 14 հազար հայ գաղթականությանը, ապա նրանց մեծ մասին՝ 12 հազար հոգու ծրագրվում էր Միջերկրական ծովի վրայով տեղափոխել

Բաթում, այնտեղից էլ՝ Հայաստան, մնացած 2 հազարը պետք է անցնեն Կ. Պոլիս և Կիլիկիա (այն ֆրանսիացիները դեռ չէին հանձնել թուրքերին) (ՀՅԴ արխիւ, 80/2, 033):

Վերևում նշեցինք, որ Իրանի հայ գաղթականության մեջ որոշակի թիվ էին կազմում թուրքեստանից գաղթածները: Թուրքեստանի խորհրդայնացումը ծանր կացության առջև էր դրել այստեղ ապրող շուրջ 40 հազար հայությանը: Իթթիհատական և մուսավաթական գործակալների ակտիվ դրդմամբ գրեթե բոլոր հայերն այստեղ ամբաստանվում էին հակահեղափոխականության մեջ և հալածանքի ենթարկվում (ՀՅԴ արխիւ, 80/2, 008):

Այստեղի հայությունը ստիպված էր մտածել օր առաջ Հայաստան կամ ավելի ապահով վայր տեղափոխվելու մասին: Թուրքեստանից դուրս գալու միակ ճանապարհը գործնականում անցնում էր Իրանով: Սակայն իրանական իշխանությունները մի շարք առարկայական և ենթակայական պատճառներով խոչընդոտում էին ներգաղթը Թուրքեստանից Իրանի տարածք: Այս խոչընդոտը առավել խիստ գործում էր հայերի հանդեպ:

Արդությանը ՀՀ արտաքին գործերի նախարարին գրած նամակում կարևորում է թուրքեստանի հայերին Հայաստան տեղափոխելու խնդիրը և առաջարկում է միջնորդել Իրանի կառավարության առաջ, թույլ տալու նրանց Հայաստան տեղափոխումն իրականացնել Իրանի տարածքով: Ի դեպ նման արտոնություն Իրանի իշխանություններն արդեն տվել էին հույներին և լեհերին (ՀՅԴ արխիւ, 80/2, 008):

Միաժամանակ թուրքեստանի հայությանը արտագաղթելու խոչընդոտներ էին հարուցում նաև խորհրդային իշխանությունները: Արդությանն առաջարկում էր Հայաստանի արտ-

գործնախարարին այս հարցով բանակցել խորհրդային իշխանությունների հետ: (Ավելի ուշ 1920 թ. մայիսին Մոսկվայում սկսված հայ-ռուսական բանակցություններում հայկական պատվիրակությունը (Լևոն Շանթի գլխավորությամբ) բարձրացրեց նաև այդ հարցը և նախնական պայմանավորվածության համաձայն այն դրական լուծում էր ստանալու): Համապատասխան արտոնություն ստանալուց հետո Արդությանն առաջարկում էր Իրանի տարածքով թուրքեստանից Հայաստան տեղափոխվող հայ գաղթականների համար ստեղծել ժամանակավոր կայաններ, որտեղ նրանց կապահովեն սննդով և առաջին անհրաժեշտության այլ աջակցությամբ (ՀՅԴ արխիւ, 80/2, 008):

Արդությանը թուրքեստանի հայության մուտքը Իրան արտոնելու խնդրանքով ինքն էլ է անձամբ դիմում Իրանի իշխանություններին: Վերջիններս սակայն իրենց դիրքորոշումը պայմանավորում են Իրանի տարածքում հնարավոր խորհրդային բարոզչության տարածման մտավախությամբ: Արդությանը խնդիրը բարձրացրել էր նաև Իրանում ամերիկյան դեսպանի մոտ: Վերջինս խոստացել էր արգելքի վերացումից հետո օգնել թուրքեստանի հայերին Հայաստան տեղափոխումը կազմակերպելու գործում (ՀՅԴ արխիւ, 80/2, 008):

Չնայած հարուցված արգելքին հարյուրավոր հայեր Հայաստան հասնելու նպատակով թուրքեստանից անցան Իրան: Սակայն Իրանում հայտնվելուց հետո նրանց Հայաստան տեղափոխվելու ծրագիրը առաջին հանրապետության տարիներին տարալուծվեց ամբողջ Իրանի հայ գաղթականության նույնանման խնդրի հետ:

Եզրակացություն

Ամփոփելով վերոնշյալը՝ կատարենք հետևյալ ընդհանրացումները.

- Հայաստանի առաջին հանրապետության տարիներին հայ-իրանական բարեկամական հարաբերությունները հնարավորություն տվեցին Հայաստանի իշխանություններին իր դիվանագիտական առաքելության միջոցով զբաղվելու Իրանի հայ գաղթականության խնդիրներով:

- Հիմնականում ամերիկացիների և անգլիացիների աջակցությամբ նվազագույն չափով ապահովվում էր հայ գաղթականության մեծ մասի օրեկան սնունդը և կեցությունը:

- Որոշակի աշխատանքներ տարվեցին գաղթականներին սնունդով ապահովելու, գաղթականների երեխաների կրթական հարցերը հոգալու առումով:

- Հայաստանի առաջին հանրապետության իշխանություններն ի դեմս Իրանում Հայաստանի դիվանագիտական առաքելության ղեկավար Հովսեփ Արղությանի որոշակի աշխատանքներ իրականացրին Իրանում ապաստանած հայ գաղթականությանը հայրենքի տեղափոխելու ուղղությամբ:

- Իրանում ՀՀ դիվանագիտական առաքելությունը ստիպված էր զբաղվելու նաև Թուրքեստանից Իրան տեղափոխված հայ գաղթականների խնդրով:

Վերջում ավելացնենք, որ Իրանում ՀՀ դիվանագիտական առաքելության ղեկավար Արղությանը հայ գաղթականների խնդիրներով զբաղվեց նաև 1921 թ., երբ Հայաստանի առաջին հանրապետությունն անկում էր ապրել:

1920 թ. վերջին՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո Թեհրան ուղարկվեց Հայհեղկոմի նախագահ Սարգիս Կասյանի հետևյալ հեռագիրը. «Յեղափոխական Կոմիտեի որոշման

համաձայն դաշնակցական կառավարութեան կողմից նշանակած բոլոր ներկայացուցիչները կորցնում են իրենց լիազորութիւնը եւ գործերը պետք է յանձնեն նոր ներկայացուցիչներին»: Շուտով Թեհրան հասավ նաև Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի կոմիսար Ասքանազ Մոսվյանի հեռագիրը, որով հայտնվում էր Արղությանի պաշտոնանկությունը և կարգադրվում էր ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության փաստաթղթերը փոխանցել Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչությանը (Սամսոն, 1934, Ը, էջ 78-79):

Պետք է նշել, որ մինչև Հայաստանի խորհրդայնացումը Թեհրան էր հասել նաև վարչապետ Ս. Վրացյանի թիվ 67-47 ծածկագիր հեռագիրը ուղղված իշխան Արղությանին, որով հայտնի էր դառնում հետևյալը. «... Պետական ծախսերը կրճատելու նպատակով Նախարարների խորհուրդը որոշեց վերացնել մի շարք արտասահմանեան միսիաներ, որոնց շարքում նոյնպէս Թեհրանինը. Խնդրում եմ միսիան հաշւեյարդարի ենթարկել եւ ամբողջ կազմով վերադառնալ Երեւան, յանձնելով գործերը համապատասխան անձնաւորութեան տեղացիներից իբրեւ պատուաւոր ներկայացուցչի, պայմանով, որ պետական գանձարանից օժանդակութիւն չստանայ» (ՀՅԴ արտական գանձարանից օժանդակութիւն չստանայ» (ՀՅԴ արխիւ, 80/2, 002):

Սակայն Արղությանը վերոնշյալ հեռագրերին ուշադրություն չդարձրեց, որոշեց մնալ Թեհրանում և շարունակել իր դիվանագիտական գործունեությունը (Սամսոն, 1934, Ը, էջ 79), որի հիմնական առանցքը, ինչպէս նշեցինք, հայ գաղթականության խնդիրների կարգավորումն էր:

KHACHATUR STEPANYAN

Doctor of Historical Sciences, Professor

Head of the Chair of the World History and its Teaching Methods at

Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,

e-mail: kh.stepanyan@gmail.com

ON THE PROBLEMS OF ARMENIAN IMMIGRATION IN IRAN

(1918-1920)

One of the most difficult issues facing the government during the years of the First Republic of Armenia was the issue of Armenian emigration both inside the country and abroad. The article presents the difficult situation of the Armenian emigration in Iran in 1918-1920, the work done by the Government of the First Republic of Armenia, in particular, the diplomatic mission of the Republic of Armenia in Iran to improve it. The Armenian-Iranian friendly relations enabled the Armenian authorities to deal with the problems of the Armenian emigration to Iran. The daily food and livelihood of most of the Armenian emigrants was mainly provided with the support of the Americans and the British. Some work has been done to address the educational needs of migrant children. The authorities of the First Republic of Armenia carried out certain works to repatriate the Armenian emigrants who took refuge in Iran. The Armenian diplomatic mission in Iran had to deal with the issue of Armenian migrants transferred from Turkestan to Iran.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Առաւօտ», Թեհրան, 1920, 22 յունւար:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., Երևան, 2014:

3. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2009:

4. ՀՅԴ պատմության կենտրոնական արխիվ, ՀՀ Դիւանագիտական ներկայացուցչութիւն Պարսկաստանում, թղթածրար 80/2, փաստաթուղթ 002, 003, 008, 017, 031, 033, 077, 086, 088, 090:

5. Ռուբէն, *Հայ յեղափոխականի մը յիշատակները*, հ. 7, Երևան, «Ադանա», 1990:

6. Սամսոն, Հայաստանի անդրանիկ դեսպանը Պարսկաստանում, «Վէմ», Փարիզ, 1934, Ե, Մայիս-Յունիս, էջ 61-73: 1934, Է, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 96-103, 1934, Ը, Նոյեմբեր-Դեկտեմբեր, էջ 72-85:

ԱՐՏՅՈՄ ՏՈՆՈՅԱՆ, Բ.Գ.Թ.

ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դոցենտ,

ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի

Իրանի բաժնի գիտաշխատող

էլ. փոստ՝ artyom.tonoyan@ysu.am

DOI: 10.56813/2953-786X-2022.2-254

**ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԻ
ՇՈՒՐՁ՝**

Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920 թթ.) Պարսկաստանի հետ ունեցած հարաբերությունների վերաբերյալ առկա սկզբնաղբյուրային գրականությունը (տե՛ս Խատիսյան, 1968, Վրացյան, 1958; Սամսոն, 1934/3-6/, նույնի՝ 1935, Տեր-Մինասյան, 1990 և այլք), ինչպես նաև ցարդ արված ուսումնասիրությունները և դրվագային քննությունները (տե՛ս Եսայան, 1967, Զոհրաբյան, 1980, նույնի՝ 1985 և 2010, Հովհաննիսյան, 2005, նույնի՝ 2014, Բաղայան, 2019, Hovhannisian, 1971 and 1982, Bayāt, 2000) թեև կարևոր են այդ ժամանակահատվածում երկու երկրների միջև հարաբերությունների և դրանց առանձնահատկությունների մասին ընդհանրական պատկերացում կազմելու դիտանկյունից, սակայն որոշ խնդիրներ, այնուամենայնիվ, դեռևս մնում են ոչ լիարժեք ուսումնասիրված և հրատարակված, որոնց քննությունը կարևոր է թվում Հայաստանի առաջին հանրապետության՝ ար-

* Հոդվածի նախնական տարբերակն ընթերցելու և արժեքավոր դիտողություններ ներկայացնելու համար հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի ազգային արխիվի և ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից, պ.գ.թ. Աստղիկ Հակոբյանին:

տաքին քաղաքականության ոլորտում ունեցած խնդիրների վերհանման առումով:

Նշված խնդիրների թվին են պատկանում նաև Պարսկաստանի կողմից Հայաստանի առաջին հանրապետության անկախության ճանաչման հարցը և դրա ազդեցությունը հայպարսկական հարաբերությունների վրա 1918-1920 թթ.:

Մինչ այժմ հրատարակված սկզբնաղբյուրներում, գիտական աշխատանքներում և գիտահանրամատչելի ակնարկներում Պարսկաստանի կողմից Հայաստանի առաջին հանրապետության անկախության ճանաչման խնդրի առնչությամբ տեղ գտած հաճախ հակասական և իրարամերժ կարծիքները պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական խմբի, որոնք են՝

1. Հայաստանի առաջին հանրապետության անկախությունը ճանաչվել է Պարսկաստանի կողմից 1919 թ. հուլիսի 7-ին (տե՛ս Բաղայան, 2019):
2. Առաջին հանրապետության անկախությունը կարող է իրավական առումով ճանաչված համարվել Պարսկաստանի կողմից՝ հաշվի առնելով, որ Հայաստանը մյուս երկրների պես Պարսկաստանում ունեցել է դեսպան՝ հանձին Հովսեփ Արղությանի (տե՛ս Տեր-Մինասյան, 1990):
3. Անկախ Հայաստանի անկախության ճանաչման կամ չճանաչման խնդրից՝ Հայաստանի առաջին հանրապետության և Պարսկաստանի միջև չի կնքվել երկկողմ հարաբերությունները կարգավորող որևէ պայմանագիր (տե՛ս Զոհրաբյան, 1985, 74):

Մի կողմ թողնելով ներկայացված կարծիքների առանձին վերլուծությունը՝ ստորև քննության ենք առել այն ջանքերը, որոնք գործադրել է Հայաստանի առաջին հանրապետության

քաղաքական ղեկավարությունը Հայաստանի անկախությունը Պարսկաստանին ճանաչել տալու և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ, ինչպես նաև այն պատասխան գրությունները, որոնք ստացվել են Պարսկաստանից նշված հարցի առնչությամբ:

Այսպես, 1918 թ. մայիսի 30-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը իրեն հռչակում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն, և արդեն հունիսի 13-ին առաջինը հենց Թիֆլիսում պարսից հյուպատոսին է ուղարկվում Հայոց ազգային խորհրդի և կառավարության ծանուցումը հետևյալ բովանդակությամբ.

«Զերդ Գերագանցություն,

Անդրկովկասյան Հանրապետության լուծարման հետևանքով Կովկասի Հայոց ազգային խորհուրդը [1918թ] մայիսի 28-ի իր ժողովում, հայ ժողովրդի կողմից իրեն տրված լիազորությունների հիման վրա, որոշեց հռչակել հայկական պետության անկախությունը և հիմնել Հայկական Դեմոկրատական Հանրապետություն:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատիվ ունի այդ մասին հայտնել Զերդ Գերագանցությանը և խնդրել այդ մասին տեղեկացնել Պարսկական կայսերական կառավարությանը:

Զերդ Գերագանցությանը խնդրում ենք ընդունել մեր խորին հարգանքների հավաստիքը:

Հայոց Ազգային խորհրդի նախագահ

Հայկական Հանրապետության կառավարության նախագահ

Արտաքին գործերի նախարար

Ազգային խորհրդի քարտուղար

Հաղորդագրությունն ուղղված է՝

Շվեդիայի թագավորական կառավարությանը

Ավստրո-Հունգարիայի կայսերական կառավարությանը

Օսմանյան կայսերական կառավարությանը

Բուլղարիայի թագավորական կառավարությանը

Իսպանիայի թագավորական կառավարությանը

Դանիայի թագավորական կառավարությանը

Հոլանդիայի թագավորական կառավարությանը

Գերմանիայի կայսերական կառավարությանը» (Սուքիսայան, 2009, 76-77):

Այս ծանուցագրի առաքումից հետո թեև հենց նույն տարում՝ 1918 թ. ընթացքում, Հայաստանի առաջին հանրապետության և Պարսկաստանի միջև ծավալվում են որոշակի քաղաքական հարաբերություններ, մասնավորապես ավելի լայն լիազորություններով է սկսում գործել Երևանում պարսից հյուպատոսությունը (Չոհրաբյան, 1985, 75)¹, նաև տեղի են ունենում որոշ պաշտոնական փոխայցեր², սակայն Հայաստանի

¹ 1918-1920 թթ. ընթացքում պարսկական կառավարությունը դեսպանատներ բացել ոչ Հայաստանում, ոչ՝ Վրաստանում և ոչ՝ էլ Ադրբեջանում: Փոխառենը նշված երեք երկրներում էլ պահպանել է դեռևս ցարական շրջանից գործած հյուպատոսությունները՝ նախկինում ունեցածից առավել լայն լիազորություններով, իսկ գլխավոր հյուպատոսության կարգավիճակն էլ թողել է Թիֆլիսի պարսից հյուպատոսությանը (Չոհրաբյան, 1985: 75):

² Օրինակ՝ Հայաստանի կառավարության հետ առևտրատնտեսական, քաղաքական և քաղաքացիական հարցերով բանակցություններ վարելու լիազորություններով Պարսկաստանի թագաժառանգ Հասան խան Մոշիր օդգորություններով Պարսկաստանի թագաժառանգ Հասան խան Մոշիր օդգորություններով 1918 թ. դեկտեմբերին Երևան է ուղարկվել պատակական մի պատվիրակություն, որի կազմում են եղել Մարանդի գավառապետ Վոսուղ Մամալիբբե, Մակուի սարդարի ազգական Հաջի խանը և այլք: Պարսից պատվիրակությունը հանդիսավոր ընդունելության է արժանացել Հայաստանի կառավարության կողմից՝ նախ ընդունվելով վարչապետ Հ. Քաջազնունու և արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանի, ապա և Էջմիածնում՝ կաթողիկոս Գևորգ Ե-ի կողմից: Ընդ որում, վերջինը Առաջնոր-

անկախությունը մնում է Պարսկաստանի կողմից պաշտոնապես չճանաչված: Այդ մասին է վկայում Հայաստանի կառավարության՝ 1919 թ. հունվարի 9-ով թվագրված գրությունը՝ ուղղված պարսից շահին, որում պարսկական կողմին ոչ միայն հիշեցվում է Հայաստանի անկախության հռչակման մասին, այլև ներկայացվում է կառավարության կազմը: Գրության մեջ, մասնավորապես, նշված է.

«Հայտնվում է, որ իր ժամանակին բոլոր պետություններին հայտնված է Հայկական դեմոկրատական հանրապետության անկախության հռչակումը, բայց նկատի առնելով հաղորդակցման անկանոնությունը, հայկական կառավարությունը պարտք է համարում կրկնել նույնը:

Հայաստանի կառավարությունը հայտնում է իր կառավարության կազմը.

Ռ. Քաջազնունի – Նախագահ մինիստր

Ա. Մանուկյան – ներքին գործոց մինիստր

Ս. Տիգրանյան – արտաքին գործոց – , –

Ա. Էնֆիաջյան – տնտեսական – , , –

Գ. Մելիք–Ղարազյոզյան – լուսավորության – , , –

Լ. Ղուլյան – պարենավորման – , , –

Ս. Հարությունյան – արդարադատության – , , –

Ա. Խատիսով – ընդհանուր օգնության – , , –

1919 թ. հունվար 9-ին»³:

դարանի սրահում, ի պատիվ պարսից պատվիրակության, կազմակերպել է հանդիսավոր խնջույք, որին մասնակցել են Հայաստանի խորհրդի անդամները, նախարարները, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, թեմական առաջնորդ Խորեն Եպիսկոպոսը և Երևանում պարսից հյուպատոս Ասադուլախանը (մանրամասն տե՛ս Սամսոն, 1935, 4-7):

³ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 38ա (լուսապատճենը՝ *Հավելված 1.1*-ում):

Հայտնի չէ, թե արդյո՞ք ստացվել է պարսկական կողմից որևէ պատասխան գրություն այս հիշեցման առնչությամբ, սակայն կողմերի միջև հաջորդ ամիսների պաշտոնական նամակագրությունը ցույց է տալիս, որ պարսկական կողմը չի շտապել ճանաչել Հայաստանի անկախությունը՝ թողնելով իր դիրքորոշման արտահայտումը Փարիզի խաղաղության վեհաժողովից հետո:

Կողմերի միջև տեղի ունեցած պաշտոնական նամակագրության բովանդակությունը ցուցում է, որ հայկական կողմի համար Էական է եղել Հայաստանի դեսպանի նշանակումը Թեհրանում և դրանով Պարսկաստանի կողմից Հայաստանի անկախության ճանաչման հարցին վերջնական լուծում տալը⁴, սակայն իրանական կողմը, այնուամենայնիվ, չի շտապել

⁴ Ասվածի ապացույց է, թերևս, Հայաստանի առաջին հանրապետության ռազմական նախարար (1920 թ. մայիսի 5-ից մինչև նոյեմբերի 24-ը) Ռուբեն Տեր–Մինասյանի հետևյալ պնդումը. «Մեզ շահեկան էր ունենալ յարեան Տեր–Մինասյանի համակրությունը, թեև նրանից չէինք կարող սպասել ոչ Պարսկաստանի համակրությունը, թեև էլ լայն քաղաքական օգուտներ: Բրբե տնտեսական, ոչ զինուորական եւ ոչ էլ լայն քաղաքական օգուտներ: Բրբե իսլամ պետութիւն, նրա բարեացակամ լինելը խիստ կարեւոր էր, եւ սպասուած արդիւնքը ստացուեց Պարսկաստանից: Նա նախ ճանաչեց մեր անկախութեան փաստը իրաւական կողմից, քանի որ Արդարեանը դեսպան էր համահաւասար միւս պետութիւնների (ընդգծումը մերն է – Ա. Տ.): Իսլամ պետութեան մը ճանաչումով համախալամութեան եւ համաթուրանականուպետութեան մը ճանաչումով համախալամութեան եւ համաթուրանականութեան հարուած էր հասնում» (Ադրբեջանի, Վրաստանի, Պարսկաստանի հանդեպ Հայաստանի կեցվածքը մինչև 1920-ի մայիս. Ռուբեն Տեր Մինասյանի հիշատակը, 11 մայիսի, 2022 սեան, *Հայկական ուսումնասիրությունների Անի կենտրոն*, 11 մայիսի, 2022 թ., հասանելի՝ <http://www.aniarc.am/2022/05/11/azerbaijan-georgia-iran-ruben-2022>, chapter-7-armenia-foreign-policy-part-1-1920/, վերջին դիտում՝ 1 օգոստոսի 2022 թ.): Մեկ այլ տեղ Ռ. Տեր–Մինասյանը նշում է. «Պարսից իշխանությունը 2022 թ.): Մեկ այլ տեղ Ռ. Տեր–Մինասյանը նշում է. «Պարսից իշխանությունը եղաւ, որ ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախութիւնը եւ ընդունեց Իշխանին իբրեւ պաշտօնական դեսպան, հաւասար միւս պետութեանց դեսպաններուն» (Տեր–Մինասյան, 1990, 174-175):

հայկական կողմից առաջարկվող դեսպանին ընդունել որպես Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Թեհրանում:

Այսպես, 1919 թ. մայիսի 19-ին Հայաստանի Հանրապետության վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը նախ Զուլֆայից հեռագրում է Պարսկաստանի վարչապետ Վոսուղ օդ-Դոուլեին և հույս հայտնում, որ երկու երկրները կարող են վերսկսել բարիդրացիական պետական հարաբերությունները⁵, մեկ օր անց ստանում պատասխան ջերմ գրություն⁶, ապա արդեն հունիսի 13-ին վարչապետ Վոսուղ օդ-Դոուլեին ուղարկած հեռագրում խնդրում է Շահի կառավարության համաձայնությունը՝ Հայաստանի հատուկ ներկայացուցչին Թեհրան ուղարկելու, հայ և պարսիկ ժողովուրդների միջև գոյություն ունեցող բարեկամական կապերն ամրապնդելու և երկու երկրների կենսական շահերին վերաբերող մի շարք հարցեր լուծելու նպատակով բանակցություններ սկսելու համար:

⁵ Ա. Խատիսյանի հեռագրում, մասնավորապես, նշված է եղել. «Կը գտնուիմ Պարսկաստանի ու Հայաստանի Հանրապետության սահմանին վրայ եւ կարիք կը զգամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմէ յայտնելու խորին ուրախութիւն, որ մեր ժողովուրդները, որոնք միշտ իբրեւ բարեկամներ ապրած են կողք կողքի, այժմ կարող են վերսկսիլ իրենց բարի դրացիական պետական յարաբերութիւնները: Հայաստանը համոզուած է, որ Պարսից կառավարության դարաւոր հովանաւորութիւնը Հայերուն պիտի արտայայտուի նաեւ երկու հարեւան պետութեանց բարեկամական յարաբերութիւններու մէջ: Կը խնդրեմ հաղորդել Նորին Վեհափառութեան Շահին իմ ամենաբարձր զգացումներն ու բարեմաղթութիւնները» (Խատիսյան, 1968, 165-166):

⁶ Գրության մեջ նշված է եղել. «Նորին Վեհափառութեան հրամանով կը յայտնեմ Ձեզ խորին շնորհակալութիւն բարեմաղթութեանց համար. Հայաստանը կարող է վստահ ըլլալ, որ պարսկական կառավարութիւնը անփոփոխելի կերպով պիտի երեւան բերէ իր բարի դրացիական վերաբերումը դէպի բարեկամ հայ ժողովուրդը և հայկական նոր հանրապետութիւնը» (Խատիսյան, 1968, 166):

Ա. Խատիսյանի՝ հունիսի 13-ի հեռագրում, մասնավորապես, նշված է. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայ և պարսիկ ժողովուրդների միջև գոյություն ունեցող բարեկամական կապերն ամրապնդելու, ինչպես նաև գաղթականության, տարանցման, երկաթգծի և մեր երկու երկրների կենսական շահերին վերաբերող այլ բազմաթիվ հարցերի լուծման համար խնդրում է Շահի կառավարության համաձայնությունը՝ Հայաստանի հատուկ ներկայացուցչին (ընդգծումը մերն է – Ա. Տ.)՝ օժտված լիիրավ լիազորություններով, Թեհրան ուղարկելու և բոլոր վերոհիշյալ հարցերը լուծելու նպատակով բանակցություններ սկսելու համար: Լիահույս ենք, որ Շահի կառավարությունը կընդառաջի Հայաստանի կառավարությանը՝ հաստատելու իր հետ սերտ հարաբերություններ՝ հաշվի առնելով հայ ժողովրդի ջերմ վերաբերմունքը պարսից ժողովրդի և կառավարության հանդեպ: Հույս ունենք, որ այս խնդրանքը Պարսից կառավարության կողմից դրական պատասխանի կարժանանա՝ հաշվի առնելով հարցի հրատապությունը: Այս ցանկությունն արտահայտում ենք ամբողջ հայ ժողովրդի անունից»⁷:

Պարսկական կողմից ստացված պատասխանում չկա առարկություն Հայաստանի «հատուկ ներկայացուցչին» ընդունելու առնչությամբ, սակայն կա շատ հստակ ընդգծում, որ պարսկական կողմը տրամադիր է ընդունելու Թեհրանում Հայաստանի հատուկ ներկայացուցչին նույնիսկ «անպաշտոն կերպով և անհատապես»: Վոսուղ օդ-Դոուլեից ստացված պատասխանում մասնավորապես նշված է. «Ի պատասխան Ձեր Գերազանցութեան Յունիսի 13-ին հեռագրին պատիւ ունիմ յի-

⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 8 (լուսապատճենը՝ Հավելված 1.2-ում):

շեցնել Ձեզ որ Պարսկաստանին Հայ ժողովրդին միացնող աւանդական բարեկամութիւնը շատ ակնայայտ լինելով նոր հաւաստիքների կարիք չկայ. քսան դարու պատմութիւնը ապահովում է երկու ժողովուրդների փոխադարձ համակրանքը, և նրանց անցեալն ու ապագան միացնում են, այսպէս ասած, նրանց շահերը. Պարսկական կառավարութիւնը բոլորովին տրամադիր է ընդունելու **անպաշտօն կերպով և անհատապէս Հայաստանի յատուկ ներկայացուցիչը** (ընդգծումը մերն է – Ա. Տ.) Թեհրանում, լուծելու համար ժամանակաւորապէս նրա հետ ընթացիկ հարցերը»⁸:

Վստուղ օդ-Դոուլեից ստացված այս պատասխանից հետո Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունը որոշում է պարսից կառավարությանն ուղարկել հաջորդ գրությունը, որում հայտնում է արդեն Թեհրանում Հայաստանի կողմից նշանակվող ներկայացուցչի անունը, սակայն գրության մեջ այս անգամ արդեն օգտագործվում է ոչ թե «հատուկ ներկայացուցիչ», այլ «ղիվանագիտական ներկայացուցիչ» արտահայտությունը:

Պարսից կառավարությանն ուղարկված այդ գրության մեջ, որը պետք է, որ եղած լինի հունիսի 15-17-ի ժամանակային միջակայքում, տեղ է գտել հետևյալը. «Ձերդ գերագուշտությանն եմ հեռագրում այն մասին, որ մեր կողմից իշխան Հ. Արդուրյանը ընտրվել է Պարսկաստանում Հայաստանի **ղիվանագիտական ներկայացուցիչ**, և Ձեր պատասխանին եմ սպասում նրան Ձեր երկիր ճանապարհելու համար» (Սրապյան, 2022, 18):

⁸ Նույն տեղում, գ. 197, թ. 19 (լուսապատճենը՝ Հավելված 1.3-ում):

Պարսից կառավարության պատասխան գրության մեջ՝ թվագրված 1919 թ. հունիսի 18-ով, որը Երևանում Ա. Խատիսյանին է հանձնել պարսից հյուպատոս Միրզա Ասադուլլախանը (Ձոհրաբյան, 1985, 27), արդեն հստակ ձևակերպված է պարսից շահի դիրքորոշումը Հայաստանի առաջին հանրապետությունը ճանաչելու և ղիվանագիտական հարաբերություններ հաստատելու առնչությամբ, քանի որ դրանում երկու կառավարությունների միջև «բարիդրացիական հարաբերությունների հաստատումը» առկախվում է և թողնվում Փարիզի կոնֆերանսում Հայաստանի ճանաչումից հետո: Շահի ուղարկված պատասխանի մեջ նշված է. «**Պարսկական կառավարությունը միշտ ցանկացել և ցանկանում է երջանկություն հայ ժողովրդին և ցանկանում է, որ հայ ժողովրդի ձգտումներն իրականանան: Պարսկաստանի տարածքում մենք միշտ ապահովել ենք հանգստություն հայ ժողովրդին և հատուկ ուշադրություն ենք հատկացրել հայերին: Ցանկանում ենք, որ Պետությունը, որի գլուխ կանգնած էք Դուք, շուտ ճանաչվեք Փարիզի կոնֆերանսի կողմից և երկու կառավարությունների միջև հաստատվեին բարիդրացիական հարաբերություններ** (ընդգծումը մերն է – Ա. Տ.) և որ այդ հարաբերությունները դառնային ավելի սերտ: Պարսկաստանի կառավարությունը այսուհետ ևս ամեն ինչով կօգնի հայ ժողովրդին ինչպես խաղաղության կոնֆերանսում, այնպես էլ առհասարակ: Այս հարցում Պարսկաստանի կառավարությունը կարող է տալ իր ամուր երաշխիքը»⁹:

Շահից ստացված պատասխանը ժամանակավորապես վերջակետ է դնում Հայաստանի առաջին հանրապետությունը

⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 15 (լուսապատճենը՝ Հավելված 1.4-ում):

Պարսկաստանին պաշտոնապես ճանաչել տալու գործընթացին, և տողերիս հեղինակին պարզ չէ, թե ինչ փաստաթղթի հիման վրա է Գ. Բադալյանը իր հողվածում պնդել, թե «*հուլիսի 7-ին (1919 թ. - Ա. Տ.) Պարսկաստանը պաշտոնապես ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատում նրա հետ*» (Բադալյան, 2019):

Շահից ստացված պատասխանից հետո Հայաստանի կառավարությանը մնում էր մեկ բան. եթե ոչ «դիվանագիտական ներկայացուցիչ», ունենալ ամեն դեպքում գոնե «հատուկ ներկայացուցիչ» Թեհրանում, որին պարսկական կառավարությունն ավելի վաղ՝ մինչև Շահից ստացված պատասխանը, տվել էր իր համաձայնությունը:

Մրանով է պայմանավորված այն, որ 1919 թ. օգոստոսի 1-ին Հայաստանի կառավարության վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը գրություն է ուղարկում Պարսկաստանի կառավարությանը, որում «դիվանագիտական ներկայացուցիչ» արտահայտության փոխարեն արդեն օգտագործված է «լիազոր ներկայացուցիչ» արտահայտությունը և ընդգծված, որ վերջինս ունի Հայաստանի կառավարության մանդատը՝ լուծելու բոլոր այն հարցերը, որոնք վերաբերում են Հայաստանին: Ա. Խատիսյանի՝ 1919 թ. օգոստոսի 1-ի գրության մեջ, մասնավորապես, նշված է. «*Որպես Պարսկաստանի կառավարության բարյացակամ պատասխանի հետևանք, Հայաստանի կառավարությունը Նորին կայսերական մեծության Շահի կառավարությանը կից լիազոր ներկայացուցիչ (ընդգծումը մերն է - Ա. Տ.) է նշանակում իշխան Արդուրյանին և նրան տալիս է մանդատ՝ լուծելու բոլոր այն հարցերը, որոնք վերաբերում են Հայաստանին*» (Բադալյան, 2019):

Պարսկական կառավարության պատասխանը, որը, ամենայն հավանականությամբ, պետք է, որ ստացված լինի նույն ամսվա ընթացքում՝ օգոստոսին, Թեհրանում Հայաստանի կառավարության ներկայացուցչի կարգավիճակը հասակեցնելու և դրա համար ընտրված եզրույթի առումով շատ չի տարբերվում նախկինում ստացված գրություններից, քանի որ այն ավարտվում է հետևյալ ձևակերպմամբ. «*Պարսից կառավարությունը կատարելապես տրամադիր է Հայաստանի մասնավոր ներկայացուցչին (ընդգծումը մերն է - Ա. Տ.) պաշտոնապես ընդունել Թեհրանում*» (Բադալյան, 2019):

Դիվանագիտական եզրաբանության առումով այս գրությունը նախկիններից տարբերող մի հանգամանք է միայն այն, որ, ի տարբերություն Ա. Խատիսյանի՝ 1919 թ. հունիս 11-ի (կամ 13-ի) գրությանը տրված պատասխանի, որում ընդգծված էր, որ պարսկական կառավարությունը բոլորովին տրամադիր է ընդունելու «անպաշտոն կերպով և անհատապես» Հայաստանի հատուկ ներկայացուցչին Թեհրանում, այս անգամ արդեն «անպաշտոն կերպով» ձևակերպումը փոխարինված է «պաշտոնապես» տարբերակով:

Այսպիսով, Հայաստանի և Պարսկաստանի կառավարությունների միջև 1919 թ. մայիսից մինչև օգոստոս տևած պաշտոնական նամակագրությունն ու բանակցությունները կողմնորին բերում են որոշակի համաձայնության և վերջնարդյունքում 1919 թ. ավարտին՝ մասնավորապես դեկտեմբերի 24-ին, Հովսեփ Արդուրյանի պատվիրակությունը Կասպից ծովի վրայով հասնում է Անգալի, երկու օր կանգ առնում այնտեղ, ապա դեկտեմբերի 27-ից 29-ը լինում է Ռաշտում, ապա մինչև 1920 թ. հունվարի 3-ը՝ Ղազվինում և արդեն հունվարի 4-ին հասնում է Թեհրան (Զոհրաբյան, 1985, 32-33):

Հովսեփ Արղությանի ընդունելությունը պարսից թագա-
ժառանգի մոտ՝ Գոլեսթան պալատում, տեղի է ունենում հուն-
վարի 17-ին, և հետաքրքրական է, որ Արղությանն իր ելույթի
հենց ամենասկզբում ներկայանում է որպես «Հայաստանի
անդրանիկ դիվանագիտական ներկայացուցիչ Պարսկաստա-
նում»՝ նշելով. *«Ձերդ կայսերական բարձրություն. խորապես
երջանիկ եմ, որ պատիւ ունիմ ներկայանալու Ձերդ կայսերա-
կան վեհափառութեան, որպէս նոր ազատագրած Հայաստա-
նի անդրանիկ դիւանագիտական ներկայացուցիչ (ընդգծումը
մերն է – Ա. Տ.) Պարսկաստանում»* (Սամսոն, 1934 /5/, 78):

Պատասխան խոսքում պարսից թագաժառանգը չի օգտա-
գործել «դիվանագիտական ներկայացուցիչ» արտահայտու-
թյունը, և ինչպէս Սամսոնն է հիշում՝ *«Ճառի թարգմանութիւ-
նից յետոյ, գահաժառանգն իր ուրախութիւնը յայտնեց, որ
Պարսկաստանում տեսնում է Հայաստանի ներկայացուցչին
(ընդգծումը մերն է – Ա. Տ.), ապա շեշտեց պարսից վեհապետ-
ների դէպի հայերն ունեցած սիրալիր վերաբերմունքը եւ պար-
սից ժողովուրդի բարեկամական յարաբերութիւնները»* (Սամ-
սոն, 1934 /5/, 78):

Սամսոնի հուշերի շարունակության մեջ ևս ակնհայտ է,
որ Գոլեսթան պալատում պարսից թագաժառանգի հետ Հով-
սեփ Արղությանի հանդիպման ժամանակ Հայաստանի առա-
ջին հանրապետությունը դեռևս պաշտոնապես ճանաչված չէր
Պարսկաստանի կողմից. *«Թէեւ դեռ Հայաստանի Հանրապե-
տութիւնը պաշտօնապէս ճանաչւած չէր, բայց նրա ներկայա-
ցուցիչը Թեհրանում այնպիսի բարեացկամ վերաբերում գտաւ,
որ, անխուսափելի պաշտօնական արարողութիւններից յետոյ,
առանց դժարութեան անցաւ իր վրա դրած պարտականու-
թիւնների կատարման»* (Սամսոն, 1934 /5/, 79):

Պարսկաստանի կողմից Հայաստանի անկախության
պաշտոնական ճանաչումը տեղի է ունեցել միայն Դաշնակից-
ների կողմից 1920 թ. հունվարի 19-ին Հայաստանի անկախու-
թյան դե ֆակտո ճանաչումից հետո¹⁰: Հայաստանի անկախու-
թյան ճանաչման լուրը Հայաստան և Պարսկաստան է հաս-
նում մի քանի օր անց (Hovhannisian, 1982, 512; Սամսոն, 1934
/5/, 80) և պարսկական արձագանքներն էլ շատ չեն ուշանում:
Հունվարի 23-ին, երբ նոր էր Հայաստանի անկախության ճա-
նաչման լուրը հասել Երևան, Վրաստանի և Ադրբեջանի ներ-
կայացուցիչների հետ միասին վարչապետի գրասենյակ է այ-
ցելում և իր շնորհավորանքները հայտնում նաև Պարսկաս-
տանի ներկայացուցիչը (Դարբինեան, 1950, 25), իսկ հաջորդ
օրը՝ 1920 թ. հունվարի 24-ին, Թիֆլիսից Երևան է հասնում
նաև Պարսկաստանի կովկասյան հյուպատոսի շնորհավորա-
կան հեռագիրը, որում մասնավորապես նշված էր. *«Խնդրում
եմ ընդունել և յայտնել Հայաստանի կառավարութեան և պառ-
լամենտին իմ անկեղծ շնորհաւորանքները Հայաստանի պե-
տութեան փաստական ճանաչման պատմական մեծ ակտի
առթիւ որով դրում է երկրի քաղաքական և տնտեսական
զարգացման ամուր հիմքը: Հաւատացած եմ, որ Հայկական
կառավարութիւնը և ժողովուրդը, որոնց համար բացում է մի
նոր շրջան, կպահպանեն և կամրապնդեն սրտակցութեան և
բարեկամութեան այն զգացումները, որ հնուց ի վեր կան երկու
դրացի ժողովուրդների միջև, որպիսի զգացմունքների անկեղ-*

¹⁰ Դաշնակից պետությունների կողմից Հայաստանի առաջին հանրապետու-
թյան անկախության դե ֆակտո ճանաչման մանրամասները հանգամանու-
թեան ներկայացված են Ռիչարդ Հովհաննիսյանի՝ Հայաստանի առաջին հան-
րապետության պատմությունը նվիրված մոնումենտալ քառահատորյակի
երկրորդ հատորում (Hovhannisian, 1982, 511-530; Հովհաննիսյան, 2014, 609-
632):

ծութիւնը մեկից անգամ ապացուցել են այն վերաբերմունքի մէջ, որ ունեցել են իմ կառավարութիւնը և ժողովուրդը հայ ժողովրդի վերաբերմամբ:

Պարսկաստանի Կովկասում հիւպատոս՝ Մաազազեդովլէ»¹¹:

Պարսկաստանի կողմից Հայաստանի Հանրապետության անկախության պաշտոնապես ճանաչումը օրեր անց մեկ անգամ էլ վերահաստատվում է այդ պահին Կովկասում Պարսկաստանի արտակարգ կառավարական պատվիրակության ղեկավար Սեյյեդ Ջիաադդին Թաբաթաբայիի կողմից, ով ընդամենը մեկ տարի անց արդեն դառնում է Պարսկաստանի վարչապետ: Վերջինիս՝ 1920 թ. հունվարի 27-ին Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանին հղած շնորհավորական հեռագրում նշված է. «Համաձայնութեան կառավարութեան կողմից Կովկաս-Հայաստանի ճանաչումը ինձ առիթ է տալիս յայտնել Ձեզ իմ անկեղծ շնորհատրանքներս: Ձերդ գերազանցութեանն արդէն յայտնի է, որ իմ կառավարութիւնը ճանաչել է Կովկաս-Հայաստանի անկախութիւնը և ինձ ուղարկել է արտակարգ միսսիայով Կովկասեան հանրապետութիւնների մոտ: Բազում երկար մնալս արգելք եղաւ, որ ես մինչև այժմ չկարողացայ գալ Երևան՝ Ձեզ հաղորդելու իմ կառավարութեան բարի մտադրութիւնները և ջերմ ցանկութիւնները Հայաստանի ազատության և երջանկության մասին: Յոյս ունեմ, որ [շատ] շուտով բախտ կունենամ [յանդիպել] Ձերդ Գերազանցութեանը, որին խնդրում եմ ընդունել ամենալաւ զգացումներիս հաւաստիքը:

Պարսկական կայսերական կառավարութեան Արտակարգ միսսիայի պետ Կովկասում՝ Թապաթապայի»¹²:

Հայաստանի Հանրապետության անկախությունը պաշտոնապես ճանաչելու հարցում Պարսկաստանի կառավարության ցուցաբերած դանդաղկոտությունը և սպասողական կեցվածքը 1918 և հատկապես 1919 թվականների ընթացքում պայմանավորված էր ոչ միայն այս երկրի ներքին կյանքում այդ ժամանակահատվածում տիրապետող խառնակ իրավիճակով, քաղաքական ապակայունությամբ, ներքին ապստամբություններով (ջանգալիների շարժում են), արտաքին ծանր մարտահրավերներով, մասնավորապես Պարսկաստանի հյուսիսային տարածքներ՝ ընդհուպ մինչև Թավրիզ, օսմանյան ներխուժմամբ, այլ նաև Անգլիայի՝ այդ ժամանակահատվածում Պարսկաստանում ունեցած հսկայական ազդեցությամբ: Թեև 1907 թ. օգոստոսի 31-ի անգլո-ռուսական համաձայնագրով Անգլիան և Ռուսաստանը բաժանել էին այս երկիրը ազդեցության գոտիների և պետության հյուսիսային հատվածը՝ 790.000 կմ² տարածքով հայտարարվել էր ռուսական ազդեցության գոտի (Բայբուրդյան, 2005, 515), սակայն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, հատկապես 1917 թ. փետրվարին Ռուսաստանում սկսված հեղափոխական գործընթացների պատճառով անգլիական ազդեցությունն այստեղ աստիճանաբար ուժեղացել էր և ընդլայնվել, իսկ 1918 թ. հունվարին գեներալ Դենստերվիլի գլխավորությամբ բրիտանական ռազմաօդային ուժերով Իրանի նախկին ռուսական ազդեցության գոտիներ, ամբողջ գարնան ընթացքում դրանց պարբե-

¹¹ Պարսկաստանի Կովկասեան հիւպատոսո ողջույնը (Թիֆլիս, 24 յունւարի), «Յառաջ» օրաթերթ, 1920 թ., 29 հունւարի, № 20, Երևան, էջ 2:

¹² Հայաստանի անկախութեան ճանաչման առթիւ Պարսկական միսսիայի շնորհատրանքը նախարարապետ Խատիսեանին, «Յառաջ» օրաթերթ, 1920 թ., 3 փետրւարի, № 24, Երևան, էջ 1:

րական համայրումներով, ապա և ամռան ընթացքում Կասպից ծովի առափնյա Գիլան նահանգի քաղաքները (Ռաշտ, Անգալի ևն) գրավելով (Բայբուրդյան, 2005, 560-562) և ի վերջո հուլիսի 30-ին Անգլիայի հետ սերտ քաղաքականություն վարող և անգլիամետ դիրքորոշմամբ հայտնի Վոսուդ օդ-Դոուլեի գլխավորությամբ Թեհրանում նոր կառավարության ձևավորմամբ (Բայբուրդյան, 2005, 563) Իրանը փաստացիորեն ամբողջությամբ հայտնվել էր անգլիական ազդեցության տակ: Հետևաբար, պարսկական կառավարությունը, ինչքան էլ շահագրգռված լիներ Հայաստանի հետ քաղաքական, տնտեսական և առևտրային հարաբերություններ հաստատելու հարցում, այնուամենայնիվ, Հայաստանի առաջին հանրապետության անկախությունը պաշտոնապես ճանաչելու խնդրում պարսկական դիրքորոշումը չէր կարող էապես տարբեր լինել Անգլիայի դիրքորոշումից:

Բացի վերը նշվածից Պարսկաստանի կողմից Հայաստանի անկախության պաշտոնապես ճանաչման հարցում չշտապելու պատճառ կարող էին լինել առնվազն տեսականորեն Փարիզի խաղաղության վեհաժողովից պարսկական կողմի մոտ առաջ եկած որոշ ակնկալիքներ, որոնք կարծես թե ուղիղ բախման մեջ էին նաև հայկական շահերի հետ: Այսպես, 1919 թ. մարտին Պարսկաստանի արտաքին գործերի նախարար Ալի Ղուլի խան Սոշավեր օլ-Մամալեքը Փարիզի հաշտության վեհաժողովին է ներկայացնում երեք մասից բաղկացած մի հուշագիր¹³, որում ձևակերպված էին Պարսկաստանի քաղա-

¹³ "Revendications de la Perse devant la Conférence des préliminaires de paix à Paris", Paris, Mars, 1919.

քական, իրավական և տնտեսական պահանջները¹⁴: Հուշագրի 8-րդ կետում առաջարկվում էր Պարսկաստանին վերադարձնել ընդարձակ տարածություններ Կենտրոնական Ասիայից, որոնք ձգվում էին Ամուդարյա գետից մինչև Կասպից ծով (Կրասնովոդսկ, Աշգաբադ, Մերվ, Խիվա ևն), և այսրկովկասյան նախկին խանությունների տարածքները (Բաքու, Շիրվան, Դերբենդ, Շաքի, Շամախի, Գանձակ, Ղարաբաղ, Նախիջևան, Երևան), որոնք ցարական Ռուսաստանին էին անցել 19-րդ դարում, այսինքն՝ Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների գրեթե ամբողջ տարածքը և Հյուսիսային Կովկասի մի մասը (Բայբուրդյան, 2005, 564; Հովհաննիսյան, 2005, 309): Բացի այդ պարսկական կողմից ներկայացվում էր նաև պահանջ Քրդստանի նկատմամբ, որը, ըստ հուշագրի, բնակեցված էր «իրանական» տարրերով և ընդգրկում էր, ըստ հուշագրին կցված քարտեզի¹⁵, Հյուսիսային Միջագետքը և Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Խարբեքի վիլայեթները: Թեև Անգլիայի պնդմամբ Դաշնակիցները վեհաժողովում տեղ չեն լիայի պնդմամբ Դաշնակիցները վեհաժողովում տեղ չեն հատկացնում պարսկական պատվիրակությանը (Hovhannisian, 284, Հովհաննիսյան, 2005, 310), իսկ հուշագիրն էլ հրաժարվում են մտցնել օրակարգ՝ հիմնավորմամբ, որ Պարսկաստանը չի մասնակցել պատերազմին, և հուշագրի 8-րդ կետն էլ խախտում է «Ռուսաստանի տարածքային ամբողջականությունը» և հաշվի չի առնում նաև այն հանգամանքը, որ Այսրկովկասում դե ֆակտո գոյություն ունեն երեք անկախ հանրապետություններ (Բայբուրդյան, 2005, 565), սակայն

¹⁴ Պարսկաստանի պահանջները Հաշտության վեհաժողովից, «Վէմ» հանդես մշակողի եւ պատմության, 1934 թ., թիվ 5 (սեպտեմբեր – հոկտեմբեր), Փարիզ, էջ 108-112.

¹⁵ Լուսավատճենը՝ Հավելված 1.5-ում:

պարսկական կողմը հուշագրի պահանջներից հրաժարվում է միայն 1921 թ. փետրվարի 26-ին Մոսկվայում Խորհրդային Ռուսաստանի հետ կնքած պայմանագրի ժամանակ (Hovhannisian, 284, Հովհաննիսյան, 2005, 310)¹⁶: Ռիչարդ Հովհաննիսյանը համարում է, որ Փարիզի վեհաժողովին պարսկական կառավարության ներկայացրած փաստաթուղթը ոչ մի շոշափելի անբարենպաստ հետևանք չի թողել հայ-պարսկական հարաբերությունների վրա¹⁷, իսկ վարչապետ Վոսուդ օդ-Դոուլեն էլ խստիվ դատապարտել է իր երկրի արտգործնախարարի «անկախ գործողությունները»՝ բրիտանական պաշտոնատար անձանց բացատրելով, որ պարսկական պատմիրակության՝ Փարիզում հայտնած տեսակետները չեն արտացոլում Թեհրանի կառավարության դիրքորոշումը (Hovhannisian, 1971, 284, Հովհաննիսյան, 2005, 310), սակայն փաստ է նաև այն, որ 1919 թ. հունիսի 18-ին Երևանի պարսից հյուպատոսը Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանին է փոխանցել մի գրություն, որում պարսկական կառավարությունը

¹⁶ Հետաքրքիր է այն, որ 1921 թ. Խորհրդային Ռուսաստանի և Պարսկաստանի միջև պայմանագրի կնքման ժամանակ պարսկական կողմից բանակցում էր այդ պահին արդեն Կոստանդնուպոլսում Պարսկաստանի դեսպան Ալի Ղուլի խան Մոշավեր օլ-Մամալեքը, ով հուշագիրը պատրաստել էր և ներկայացրել Փարիզի խաղաղության վեհաժողովին՝ որպես այն ժամանակ Պարսկաստանի արտաքին գործերի նախարար (Hovhannisian, 1971, 284, Հովհաննիսյան, 2005, 310):

¹⁷ Հավանաբար Ռ. Հովհաննիսյանն այստեղ հաշվի է առել այն բոլոր ջանքերը, որոնք հատկապես 1920 թ. ընթացքում գործադրել են Հայաստանի առաջին հանրապետության և Պարսկաստանի կառավարությունները երկկողմ հարաբերությունների հաստատման, ամրապնդման և առևտրատնտեսական պայմանագիր կնքելու ուղղությամբ: Թեև դրված երկկողմ ջանքերին՝ 1920թ. վերջին Հայաստանի խորհրդայնացման պատճառով որևէ երկկողմ պաշտոնական պայմանագիր երկու պետությունների միջև այդպես էլ չկնքվեց:

Հայաստանի պաշտոնապես ճանաչումից փաստացիորեն հրաժարվել է՝ թողնելով այդ հարցը ապագային և կապելով այն Փարիզի վեհաժողովի ավարտի և դրա արդյունքների հետ (Հավելված 1.4):

Որպես ամփոփում՝ պետք է նշել, որ թեև 1918-1920 թթ. ընթացքում Հայաստանի առաջին հանրապետության և Պարսկաստանի միջև հաստատվել են բավականին լավ հարաբերություններ, լուրջ ջանքեր են գործադրվել դրանց ամրապնդման և հատկապես առևտրային և տնտեսական ոլորտներում ակտիվ գործակցության համար, սակայն Հայաստանի անկախության պաշտոնական ճանաչման հարցում պարսկական կառավարությունը չի շտապել:

Պարսկաստանի կողմից Հայաստանի անկախությունը պաշտոնապես ճանաչվել է միայն այն բանից հետո, երբ 1920 թ. հունվարի 19-ին Դաշնակիցները ճանաչել են Հայաստանի Հանրապետությունը որպես դե ֆակտո անկախ պետություն: Պարսկաստանի կողմից Հայաստանի անկախության պաշտոնապես ճանաչումը Փարիզի վեհաժողովի ավարտի և արդյունքների հետ կապելը մի կողմից պայմանավորված էր այդ ժամանակահատվածում Պարսկաստանի՝ Անգլիայից ունեցած ժափազանց մեծ կախվածությամբ, մյուս կողմից՝ այդ պետությունն ինքը Փարիզի վեհաժողով էր ներկայացրել մի հուշագիր, որում ներկայացված տարածքային պահանջները ներառում էին նաև Հայաստանի Հանրապետության գրեթե ողջ տարածքը:

Թեև Փարիզի վեհաժողովին ներկայացված հուշագրին կից քարտեզում գրեթե ողջ Անդրկովկասը, այդ թվում և Հայաստանի Հանրապետության տարածքը ներառելու առնչությամբ առկա է եղել որոշակի անհամաձայնություն այն Փարիզ

հասցրած արտգործնախարար Ալի Ղուլի խան Մոշավոր օլ-Մամալեքի և Թեհրանում այդ պահին կառավարության վարչապետի պաշտոնը զբաղեցնող Վոսուզ օղ-Դոուլեի միջև, սակայն փաստ է նաև, որ 1919 թ. հունիսի 18-ին Երևանում պարսից հյուպատոսի կողմից Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանին փոխանցված պարսկական կառավարության գրության մեջ, ըստ էության, դիվանագիտորեն մերժված է Հայաստանի անկախության պաշտոնապես ճանաչման հարցը և այն թողնված է Փարիզի վեհաժողովի որոշմանը:

ARTYOM TONoyAN, Ph.D. in Philology
Yerevan State University, Chair of Iranian Studies,
NAS RA, Institute of Oriental Studies,
Researcher, Associate Professor
e-mail: artyom.tonoyan@ysu.am

ON THE ISSUE OF RECOGNITION OF THE INDEPENDENCE OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA BY PERSIA

Although constructive and positive relations were established between the First Republic of Armenia and Persia during 1918-1920, as well significant efforts were made to strengthen them and actively cooperate, especially in the trade and economic sphere, the Persian government seemed to be in no particular hurry to officially recognize Armenia's independence.

The independence of Armenia was officially recognized by Persia only after the Allied peacemakers recognized the Republic of Armenia as a de facto independent state on January 19, 1920.

Connecting the official recognition of the independence of Armenia by Persia to the end and results of the Paris Peace Conference could be

conditioned, on the one hand, on the almost absolute dependence of Persia on England during the period under discussion, on the other hand, on the fact that this state itself submitted a memorandum to Peace Conference, in which the territorial claims included nearly all the territories of the republics of Armenia and Azerbaijan.

On the last point, in particular on the presentation of a memorandum to the Paris Peace Conference and the inclusion of all of territories of former Transcaucasian khanates in it, existed certain disagreements between the Minister of Foreign Affairs Ali Quli Khan Moshavor ol-Mamalek, who delivered the memorandum to Paris, and Vosuq od-Dowleh, Prime Minister of the Persian government in Tehran, but it is a fact that in the official letter of the Persian government, sent by the consul in Yerevan to the Prime Minister of Armenia Alexander Khatisyan on June 18, 1919, the question of the official recognition of the independence of Armenia by Persia was, in fact, diplomatically rejected and given to the decision of the Paris Peace Conference.

ՀԱՎԵԼՎԱԾ

1.1. Հայաստանի կառավարության գրությունը Պարսկաստանի շահին, 9 հունվարի 1919 թ. (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 38ա):

38a

Հայկական կառավարության նամակը
Պարսկաստանի Շահին Շահին

Հայտնում է, որ իբ ժամանակին բոլոր դեռություններին
հայտնած է Հայկական դեմոկրատական հանրապետության անկախ-
ության հռչակումը, ըստ էության ու ներքին հարաբերական անկախ-
ությանը, հայկական կառավարությունը պարտ է համարում կրկն
հանդեսը:

Հայաստանի կառավարությունը հայտնում է իբ կառավարու-
թյան կազմը:

Ռեզոլուցիաներ	- Շահազադ Մինխար
Ան Կանոնային	- Երզրեզ գործող Մինխար
Ան Տիգրանյան	- Խրատին գործող -,-
Ան Գեորգիան	- Կանոնական -,-
Գեորգիան	- Լեռնավորության -,-
Լ. Գուրյան	- Կարենավորման -,-
Ան Հարությունյան	- Խրատարության -,-
Ան Խատիսյան	- Ընդհանուր Օգնության -,-

1919 թ. հունվարի 9-ին

Հայկական ՄԱԿ ՊԿՊԱ, Գրեթ 38, Բեք 38

1.2. Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանի՝ հունիսի 13-ի
հեռագրի պատճենը Պարսից կառավարությանը (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ.
13, թ. 8):

8

COPIE

N66/9

A Son Altesse
M. le Président du Conseil des Ministres
de Perse
TEHRAN

partant du sentiment de l'amitié immémoriale existante entre le
Gouvernement I. le Schah et le peuple arménien, le Gouvernement de la
République d'Arménie, en vue d'affermir les liens qui rattachent le peuple
Persan au Peuple Arménien et pour résoudre plusieurs questions concer-
nant les réfugiés, le transit, le chemin de fer qui touchent vivement
les intérêts vitaux de deux pays, prie le Gouvernement de S.M.I. le
Schah d'accorder Son consentement à l'envoi à Téhéran d'un Représentant Spécial
d'Arménie, muni des pleins pouvoirs pour entamer tous pourparlers et
résoudre, d'accord avec le Gouvernement I. Persan, toutes questions men-
tionnées. Dans la ferme foi que le Gouvernement de S.M.I. le Schah
ira au devant du désir du Gouvernement
d'Arménie d'entrer en relations étroites avec le Gouvernement I. persan
étant donné les bons sentiments du peuple arménien envers le peuple et
le Gouvernement Persans, informé par le rapport de M. S. Arartian, l'ex-
Président du Conseil Arménien National de Bakou, que ce désir du peuple
Arménien sera favorablement accueilli par le Gouvernement I. Persan
ou attend, vu l'urgence de la question, une prompte et favorable réponse et
le prie d'agréer etc.

A. Khatissian
Ministre-Président
de la République d'Arménie

1.5. Փարիզի հաշտության վեհաժողովից պարսկական պատվիրակության տարածքային պահանջները պատկերող քարտեզ, որը գետեղվել է արտաքին գործերի նախարար Ալի Ղուլի խան Մոշավեր օլ-Մամալեքի ներկայացրած հուշագրում¹⁸:



¹⁸ "Revendications de la Perse devant la Conférence des préliminaires de paix à Paris", Paris, Mars, 1919.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաղալյան, Գ. (2019), Հայաստան-Պարսկաստան հարաբերությունները 1918-1922-ին, *Հայկական ուսումնասիրությունների Անի կենտրոն*, 12 հունիսի, հասանելի՝ <http://www.aniarc.am/2019/06/12/armenia-iran-1918-1922-garnik-badalyan/>, վերջին դիտում՝ 25 հուլիսի 2022¹⁹:

2. Բայբուրդյան, Վ. (2005), *Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)*, Երևան, Զանգակ-97:

3. Դարբինեան, Ռ. (1950), Հայաստանի Հանրապետության օրերուն, «Հայրենիք» ամսագիր, *հատ. XXVIII, № 6*, յունիս, Բոստոն, էջ 24-36:

4. Եսայան, Ա. (1967), *Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920-1922 թթ.*, Երևան, Միտք:

5. Չոհրաբյան, Է. (1980), Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանում սովետական իշխանության առաջին ամիսներին, *Բանբեր Երևանի համալսարանի*, № 3(42), էջ 155-161:

6. Չոհրաբյան, Է. (1985), *Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները (1920-1922 թթ.)*, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն:

7. Չոհրաբյան, Է. (2010), Հայ-իրանական (պարսկական) կապերը, *Հայոց պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.)*, պատասխանատու խմբ. Ղազարխեցյան Վ., Երևան, Զանգակ-97, էջ 126-129:

8. Խատիսյան, Ա. (1968), *Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը*, Բ հրատ., Պեյրուիթ, Տպարան Համազգային, 1-ին հրատ. 1930 (Աթենք, Նոր օր), 3-րդ հրատ. 2021 (Երևան, Անի կենտրոն):

¹⁹ Առաջին անգամ «Հայաստանի առաջին դեսպանությունը Իրանում» անվան տակ 6 մասով լույս է տեսել www.diplomat.am կայքում 2013 թ. մայիսի 17-ից հունիսի 27-ի ընթացքում:

9. Հովհաննիսյան, Ռ. (2005), *Հայաստանի Հանրապետություն. հատ. I, Առաջին տարին, 1918-1919*, Երևան, Տիգրան Մեծ:
10. Հովհաննիսյան, Ռ. (2014), *Հայաստանի Հանրապետություն. հատ. II, Վերսալից-Լոնդոն*, 1919-1920, Երևան, Տիգրան Մեծ:
11. Սամսոն (1934 /3-6/), Հայաստանի դեսպանը Պարսկաստանում, *ՎԷՄ*, Փարիզ, թ. 3, էջ 61-73; թ. 4, էջ 96-103; թ. 5, էջ 72-85; թ. 6, էջ 73-65:
12. Սամսոն (1935), Դեպքերը հայ-պարսկական սահմանի վրա, *ՎԷՄ*, Փարիզ, թ. 4, էջ 1-13:
13. Սուքիասյան, Հ. (2009), կազմ., առաջ. և ծանոթ., *Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս). փաստաթղթերի և նյութերի ժողովածու*, Երևան:
14. Սրապյան, Ա. (2022), *Պարսկաստանի հարաբերությունները Հայաստանի առաջին հանրապետության հետ (1918 – 1920 թթ.)*. «Իրանագիտություն» մասնագիտությամբ արևելագիտության բակալավրի որակավորման աստիճանի հայցման համար ներկայացված և պաշտպանված ավարտական աշխատանք, Երևան, 2022:
15. Վրացյան, Ս. (1958), *Հայաստանի Հանրապետություն*, Բ հրատ., Բեյրութ, Տպարան Մշակ, 1-ին հրատ. 1928 (Փարիզ), 3-րդ հրատ. 1993 (Երևան, Հայաստան), 4-րդ հրատ. 2018 (Երևան, Անտարես):
16. Տեր-Մինասյան, Ռ. (1990), *Հայ յեղափոխականի մը յիշատակները*, Է հատ., 4-րդ հրատ., Երևան, Ադանա, 1-ին հրատ. 1952 (Լոս Անջելոս), 2 հրատ. 1979 (Պեյրոթ, Տպարան Համազգային), 3-րդ հրատ. 1982 (Թեհրան), 5-րդ մասնակի հրատ. «Հայաստանի Հանրապետություն» վերնագրով՝ 2017 (Երևան, Անի կենտրոն):
17. Bayāt, K. (2000), *Negāhī be monāsebāt-e Īrān va jomhūrī-ye avval-e Armanestān, 1918-1921* [Հայացք Իրանի և Հայաստանի առաջին հանրապետության հարաբերություններին, 1918-1921], *Moqāle'āt-*

e Āsiā-ye markazī va Qafqāz, sāl-e haštom, doure-ye sevvom, № 25 (bahār), Tehrān, ss. 125-132.

18. Hovhannisian, R. (1971), *The Republic of Armenia, vol. I, The First Year, 1918-1919*, University of California Press, թրգմն. տե՛ս Հովհաննիսյան (2005):

19. Hovhannisian, R. (1982), *The Republic of Armenia, vol. II, From Versailles to London, 1919-1920*, University of California Press, թրգմն. տե՛ս Հովհաննիսյան (2014):

ԼԵԶՈՒ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԱՐՎԵՍՏ

ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈԶՄՈՅԱՆ, ք.գ.դ., պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի

առաջատար գիտաշխատող

էլ. փոստ՝ kozmoyan@mail.ru

DOI: 10.56813/2953-786X-2022.2-286

ԲԱԶՄԱԹԵՄԱՏԻԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՄ

«ՀԱՖԵԶՅԱՆ ԳԱԶԵԼԻ» ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ

(ՄԵԿ ԳԱԶԵԼԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ)

Արդեն մոտ 7 դար պարսից բանաստեղծ Շամս ադ-Դին Մուհամադ Հաֆեզի պոեզիան ուղեկցում է ողջ քաղաքակիրթ մարդկությանը: Նույնիսկ այսօր, դժվար է նրա բազմանիստ, բազմախորհուրդ պոեզիայի մասին համապարփակ և վերջնական խոսք ասել: Մինչև օրս նրա՝ հատկապես գազելները (ղազալ), մասնագետների, թարգմանիչների՝ ավելին, աշխարհի ողջ ընթերցող հասարակության քննության նյութն են:

Այնուհանդերձ, մենք փորձելու ենք Հաֆեզի մեկ գազելի վերլուծությամբ ցույց տալ թեմաների, իմաստների և պատկերների այն բազմազանությունը, հաջորդական կապն ու գուգորությունների շղթան, ինչը նորույթ էր նրա պոեզիայում և ոչ միայն օրինակ ու չափանիշ դարձավ այդ ժանրի զարգացման հետագա փուլերում այլ դարձավ՝ ինչպես նշում է Յան Ռիպկան «գազելի գազաթնակետ»:

Ինչ վերաբերում է պատմական ժամանակաշրջանին, ապա դա 14-րդ դարն էր՝ մոնղոլների ավերիչ արշավանքների, Իրանի անկախության կորստի, արագ իրար հաջորդող գահակալների շրջանը: Շիրազում՝ պալատին և արքունական միջավայրին մերձակից, ապրում և ստեղծագործում էր Հաֆեզը:

Նրա մասին կենսագրական տեղեկությունները սուղ են, նույնիսկ իր ժամանակին մոտ ապրած անթուրգիստների (թագքյարե) աղբյուրներում: Հայտնի է, որ եղել է ժամանակի կրթյալներից մեկը, ճանաչել իր ժողովրդի անցյալը, մշակույթը, անգիր իմացել Ղորանը, այստեղից նրա՝ Հաֆեզ՝ անգիր դորանասաց գրական անունը (թախալոս): Հետագայում կենսագրական բազմաթիվ դրվագներ՝ լեգենդների տեսք ստացած, դարերով ուղեկցել են նրա կերպարը:

Այսօր դժվար է կռահել, թե այդ լեգենդներից որո՞նք են ճշմարիտ և որոնք՝ մտացածին: Փաստն այն է, որ նրա գազելներին վերագրվել է մոզական մի ուժ, անհասկանալի մի գորություն, որի նմանը մենք տեսնում ենք մեր ժողովրդի մոտ միայն Գրիգոր Նարեկացու «Մատյանի» նկատմամբ: Հաֆեզին անվանել են «գաղտնիքների լեզու» (Լեսան ալ-դեյթ), «Առեղծվածների թարգման» (թարջոման ալ ասրար), իսկ բանաստեղծությունների դիվանը՝ «Բախտագուշակության գիրք» (Ֆալե Հաֆեզ):

Ահավասիկ այդ լեգենդներից մեկը, որը մեկ անգամ ևս հաստատում է գազելի ժանրում Հաֆեզի բերած նորարարության փաստը:

Ավանդագրույցը հավաստում է, թե Հաֆեզի մեկենաս և բարեկամ՝ ծագումով թյուրք շահ Շոջան նույնպես բանաստեղծ էր և այնքան էր սիրում հանգը, որ նույնիսկ իր քաղաքական, դիվանագիտական գրառումները ջանում էր հանգավորել (Рипка, 1970, 256): Մի օր նա դիտողություն է անում Հաֆեզին, թե նրա գազելներում բովանդակային միասնականություն չկա, բեյթերը իրարից անկախ են և բազմազան թեմաներ են արծարծում, ինչն էլ հակասում է պերճախոսության և պոետիկայի արվեստի օրենքներին: Հաֆեզը պատասխանում է, թե

այդ ամենով հանդերձ, իր գազելները շրջում են աշխարհով մեկ, իսկ որոշ մարդկանց բանաստեղծություններ հեռու չեն գնում քաղաքի դարպասներից (Брагинский, 1976, 254): Հաֆեզի գազելներից մեկն էլ (№ 10) ավարտվում է հենց այդ տրամադրությամբ.

Ո՛վ անճարակ դու հանգաթուխ, մի նախանձիր Հաֆեզին,
Մարդուն տրված ձիրքն ու փայլը Աստծու շնորհն է միայն:
(Թարգմ. Ս. Կապուտիկյանի (2004, 63):

Վերոհիշյալ լեզենդը հետաքրքիր է ոչ այնքան որպես շահի և բանաստեղծի ավանդական հակադրություն, որքան հաֆեզյան գազելի ակնառու յուրահատկության փաստ, երևույթ, որ կոչվում է բեյթի անկախություն կամ դեզինտեգրացիա: Ի՞նչ է ստացվում. Հաֆեզը չէ՞ր ենթարկվում պոետիկայի ավանդական կանոններին, սխալ էր կատարում: Նմանօրինակ «սխալների» կապակցությամբ կարելի է հիշել Դենի Դիդրոյի կողմից հանճարի ֆենոմենը վերլուծող միտքը՝ «հանճարը զարմացնում է հենց իր սխալներով...» (Дидро, 1980, 209-11):

Գազել անվանումը արաբական ծագում ունի, որ նշանակում է սիրախաղ, հանդիպման երջանկություն և սիրո տվայտանք, ծառ ու ծաղկի նկարագիր և այլն: Ելնելով ասվածից՝ ենթադրվում է, որ գազելը երջանիկ կամ դրամատիկ սիրո նկարագիր է: Սակայն ժամանակի սոցիալ-քաղաքական համատեքստը, այնուհանդերձ, թելադրել է նաև այլ բովանդակություն՝ դարի անցուդարձ, տիրակալի ներքող, կրոնական գաղափարախոսությունների արտացոլում, փիլիսոփայական մտորումներ, բարոյագիտական հորդորներ և այլն: Հաֆեզից առաջ՝ արդեն թեմաների միասնականությամբ և բեյթերի ներ-

քին կապվածությամբ կայացել էին Ջալալ-ադ-Դին Ռումիի միաստիկական և Սաադիի սիրային գազելները:

Թվում էր, թե Հաֆեզին մնում էր շարունակել իր նախորդների ավանդույթը: Սակայն հետահայաց արվեստը հանճարների համար չէ: Նա խախտեց գազելի ներքին կառուցվածքի միջև դարեր ի վեր հաստատված կայունությունը, բեյթերին ազատություն տվեց, մի բանաստեղծության մեջ թեմաների, մոտիվների և պոետիկ պատկերների բազմիմաստությամբ, ապշեցրեց իր ժամանակակիցներին և պարսից պոետիայի ժանրային համակարգում գազելի անվերապահ առաջնությունը հաստատեց: Ինչո՞ւ առաջնությունը: Որովհետև, դարեր շարունակ, ներքող-դասիդեն և՛ հասարակական գիտակցության մեջ և՛ ժողովածու-դիվաններում առաջնային կարգավիճակ ուներ:

Այսպիսով, Հաֆեզյան գազելը դարձավ բազմաթիվ հին ու նոր թեմաների միասնություն, որտեղ բեյթերի մեջ կապը հաճախ հաստատվում էր թաքնված դորանյան ակնարկներով (reminiscentia), զուգորդություններ ծնող պատկերներով և սիմվոլներով, ինչպես նաև բացահայտ սոցիալ-քաղաքական և առօրյա իրողությունների անդրադարձով: Այդ ամենով հանդերձ, ինչպես նշում է Ի. Բրագինսկին՝ «բացառիկ բազմազանություն՝ միասնականության մեջ» (Брагинский, 245): Երևույթ, որը մենք կանվանենք «Հաֆեզյան գազելի պարադոքս»:

Հայտնի գազելներից մեկի օրինակով փաստենք Հաֆեզյան գազելի բազմիմաստությունը

Ո՛վ մատովակ, հանիր գավը պտույտի և փոխանցիր նաև ինձ,

Քանի որ սերը սկզբից հեշտ էր թվում, սակայն ընկավ բարդությունների մեջ:

Քո խոսքով հանգույցների մշակաբույրը՝ լուսադեմի գեփ-
յուն է տարածում,

Խոսքովիտ ոլորքի մշակաբույրից, բոլորի սրտից արյուն է
կարծում:

Ես ինչպես հանգիստ հաճույք վայելեմ սիրելիի հանգրվա-
նում, երբ ամեն պահ,

Ազդարարում է զանգը (քարավանի), թե պատրաստեք
պատգարակները (ճամփի):

Ներկիր գինով աղոթագորգդ, ինչպես քեզ հորդորում է գի-
նետան ծերը,

Քանի որ ճամփորդը անտեղյակ չպետք է լինի ճամփի
կարգ ու կանոնից:

Գիշերը մութ, ալիքներն ամեհի ու ջրապտույտը սարսա-
փելի,

Ո՞նց հասկանան մեր վիճակը ափին նստած անհոգները:

Ինքնահավանությունս ինձ վատահամբավ դարձրեց,

Ինչպես՝ գաղտնիք կմնա այն, ինչն ընկել է բոլորի բերանը:

Եթե ուզում ես մոտ լինել նրան, մի հեռանա նրանից, Հա-
ֆեզ,

Իսկ երբ հասնես (նրան), լքիր այս աշխարհն ու գնա:

Մա Հաֆեզի ամենահայտնի առաջին գագեղն է, որը, որոշ
աղբյուրների կարծիքով, սկսվում է Յազիդ էբն-Մուավիայի
(արաբ Օմայանների խալիֆ) բանաստեղծության տողով՝
արաբերեն: Շատերը ընդդիմանում են այս տեսակետին:

Գագելի առաջին և վերջին տողերը (մեսրա) արաբերեն են:

Դեռևս Սաադին էր կայացրել «մուլամա» կոչվող «խայտաբղետ
տաղի» ավանդույթը:

Այս գագելը համարվում է միստիկական, որտեղ հանգու-
ցային պատկերներն են՝ սերը Աստծո նկատմամբ, որից

սկսվում է սուֆիի բարդ ճանապարհը, ճամփորդը, ով գնում է
հոգու կատարելագործման ուղով, գաղտնիքը, որն աստծո հետ
միանալու առեղծվածային պահն է, յարը՝ աստծո խորհրդանի-
շը, հանգրվանը՝ հոգու կատարելագործման յոթ աստիճաննե-
րից մեկը են:

Առաջին բեյթը, որտեղ «սերը սկզբից հեշտ էր թվում...»,
դիտվում է որպես միստիկ սուֆիի դասական վիճակ, երբ
աղեպտը ընտրում է աստծո հետ միանալու և նրա մեջ տար-
բալուծվելու ճանապարհը, սակայն անտեղյակ է այդ ճամփի
խուրթերին: Շատ բարդ և բազմիմաստ է երկրորդ բեյթը՝ մշկա-
հոտ խոսքով և այդ բույրից՝ արյունոտ սրտերի մասին: Առա-
ջին հայացքից թվում է, թե դասական սիրային նկարագիր է,
սակայն, իրականում պատկերը բազմաշերտ է: Բացի միստի-
կական խորհրդանիշ հանդիսացող խոսքով, բույր, գույն եզ-
րույթների, առկա է նաև թաքնված զուգորդություն՝ ցավի և
տանջանքի: Այն գալիս է մուշկի հիշատակումից: Հայտնի է, որ
մշկայծյամի պորտի մոտ մի փոքրիկ պարկ կա, որի պարու-
նակությունից մուշկ են ստանում. մինչև չխոցեն կենդանու
կուրծքը, չթափեն նրա արյունը, մուշկը չեն ստանա: Զուգոր-
դությունների ընթացքը հետևյալն է՝ երբ գեփյուտը ցրում է սի-
րուհու խոսքայները, մշկաբույր է տարածվում ճիշտ այնպես,
ինչպես մշկահոտ է տարածվում, երբ խոցում են մշկայծյամի
կուրծքը: Խոսքովի ամեն ոլորքի բույրից մարդկանց սրտերից
արյուն է հոսում՝ այնպես, ինչպես մշկայծյամի վիրավոր
կրծքից:

Այս պատկերում կա նաև արտատեսքային զուգորդու-
թյուն՝ մուշկը խորհրդանշում է սև գույն, իսկ արյունը՝ կար-
միր: Կարող ենք փաստել, որ բեյթը կառուցված է հակաթեզերի
վրա, ինչը սուֆիական-միստիկական բանաստեղծության

առանձնահատկություններից մեկն է (մութ-լույս, միացում-բաժանում, կարմիր-սև, կյանք-մահ, մոտ-հեռու և այլն):

Միրտ-խոպոպ համադրությունը ավելի քան ավանդական է. 10-րդ դարի բանաստեղծ Ռուդարփին, ով ժամանակի բերումով հեռու էր միստիցիզմից՝ գրում էր.

(Խոպոպիդ) ամեն ոլորքում հազար սիրտ կա բանտված,

(Խոպոպիդ) ամեն ծալքում՝ հազար կյանք՝ հանգուցված:

Dar har bandi hezar del darbandesh

Dar har pichi hezar jan pichide.

Երրորդ բեյթը փիլիսոփայական խորհրդածություն է: Կարելի է ընկալել, որպես խայամյան քառյակում արդեն կայացած՝ կյանքի ունայնության ազդարարում: Հաջորդ բեյթում՝ գինու և աղոթագրգի հիշատակումը կարող է միստիկական հենք ունենալ, քանի որ գինին աստծո սիրով արբեյու խորհրդանիշն է: Ակնհայտ է սուֆիական եզրույթների մի ողջ համալիր. գինի, մոգ, փիր-առաջնորդ, ճամփորդ, հանգրվան և այլն: Սակայն, հնարավոր է սույն բեյթն ընկալել որպես ըմբոստություն կեղծ հավատավորության դեմ, որից հեռու չէր Հաֆեզը: Հիշենք նրա գազելներից մեկի մուտքը (մաթլա).

Երեկ գիշեր մզկիթից դեպի գինետուն ուղղվեց մեր հոգևոր առաջնորդ ծերը (փիր),

Էլ ինչպիսին կլինի մեր՝ (հետևորդ աշակերտներիս) ողջամիտ վարքագիծը...

Հինգերորդ բեյթն՝ ամեհի ալիքների և ափին նստած անհոգների պատկերն է, որը և աշխարհիկ խոհափիլիսոփայական հենք ունի և հնարավոր՝ միստիկական: Այն է, ով չի անցնում հոգևոր կատարելագորման դաժան ճանապարհը, նա անտեղյակ է և երջանիկ՝ իր անգիտությամբ:

Վերջին երկու բեյթերը նմանապես կարելի է մեկնաբանել և՛ որպես միստիկական և՛ որպես աշխարհիկ՝ ամենօրյա բարոյախրատական հորդոր: Ինչպես կարծում են որոշ մեկնաբաններ՝ այն ունի թաքնված հղում Ղորանի դրվագներին (allusio):

Ահա այսպես, պոեզիայի ավանդույթները դարից դար էին փոխանցվում՝ կրելով ժամանակի գաղափարական և էսթետիկական մտքի ազդեցությունը:

Հաֆեզյան գազելը ձևավորվում էր՝ թեմաների բազմազանության, բեյթերի անկախության, բազմանիստ զուգորդությունների և այլաբանությունների, զուգահեռներ ծնող դուրանյան մեջբերումների, նախորդների պոեզիայից եկող և ավանդական դարձած մոտիվների, պատկերների, ժողովրդական լեզվի, ձայնաներդաշնակության, ուժեղ հանգերի (դաֆիե) միասնականությամբ: Այդ ամենը Հաֆեզին դնում էր ոչ միայն դժվար մեկաբանվող, այլ նաև դժվար թարգմանվող հեղինակների շարքը:

«Հաֆեզյան գազել» ֆենոմենը միջնադարյան Իրանի սոցիալ-պատմական և քաղաքակրթական արժեքների հանրագումարն էր, որը հավասարակշռում էր ավանդականը և նորը, իրականը և այլաբանականը, միստիկականը և աշխարհիկը, կրոնականը և ըմբոստ ազատախոհականը:

Այսօր, Հաֆեզի պոեզիան նույնքան առեղծվածային է, որքան 700 տարի առաջ՝ իր կենդանության օրոք: Հաֆեզյան գազելի գաղտնիքների որոնումներում նա հնչում է աշխարհի բազմաթիվ լեզուներով, միավորում ողջ առաջադեմ մարդկությանը, դառնում այն խաչմերուկը, որտեղ հանդիպում են դարերը, մշակույթները և ժողովուրդները:

ARMANUSH KOZMOYAN

Doctor of Philology, Leading Researcher at the Institute of Oriental Studies, Academy of Sciences of the Republic of Armenia

e-mail: kozmoyan@mail.ru

MULTITHEMES AS A CHARACTERISTIC FEATURE
OF "HAFEZIAN GHAZALS"
(AN EXPERIENCE OF ONE GHAZAL ANALYSIS)

The analysis of the famous first ghazal of Hafez's Divan can serve as a model to understand the poetic features of the "Hafezian ghazal". It both epitomizes the experience of the achievements of the early traditions of Persian verse and brings the ghazal to ideological and formal perfection. This ghazal lacks leitmotif; the bayts are in dynamics, each creating a new situation in the "poet-world" perception. Yet, with the independence of the bayts and the diversity of motives and themes, the Hafezian ghazal reflects the unity of Persian culture and its aesthetic consciousness. In the ghazal, Hafez skillfully balances the traditional and the new, the real and the mystical, the secular and the religious, the philosophical reflection and the moralistic maxim. In this we see the paradox of the genius of "Hafezian ghazals".

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պարսից պոեզիայի ընտրանի, պարսկերենից տողացի թարգմանեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Ա. Կոզմոյանը, Ե., 2004:
2. И.С. Брагинский, *12 миниатюр*, М., 1976.
3. Дени Дидро, *Эстетика и литературная критика*, М., 1980.
4. История персидской и таджикской литературы, ред., Яна Рипка, М., 1970.

5. Divane Khadje Hafez-e Shirazi, be ehtemam-e Seid Aby al Ghasem Andjavi Shirazi, Chap-e dovom, Tehran, 1346. Divan-e Hafez-e Shirazi, Mohammad Kazvini, d-r Ghasem Ghani, 1374.
6. Dovlatshah Samarkandi, *Taskherat ash shoara*, Leide, 1901.
7. D-r Zarrinkub Abd al Hosein, *Az kuche-e rendan*, Tehran, 1375.
8. Zarrinkub Abd al Hosein, *nagsh bar ab. Se gazale Hafez*, Tehran, 1374.

ԳԱՌՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ, Բ.Գ.Թ.

ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս

էլ. փոստ՝ garnikgevorgian@cmail.com

DOI: 10.56813/2953-786X-2022.2-296

ԻՐԱՆԱԿԱՆԻ, ԻՍԼԱՄԱԿԱՆԻ ԵՎ ՄՈՂԵՌՆԻ ՄԻՆԹԵԶԸ

ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ ՊԱՐՄԻՑ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՁԱԿՈՒՄ

Պարսից ժամանակակից արձակի բնութագրականներից է դարավոր ազգային գրական ավանդույթների սինթեզումը համաշխարհային գրականության նոր ուղղությունների հետ: Դրանք բազմազան են և, անկախ անվանումից՝ մոդեռնիստական, նեոմոդեռնիստական, նեոմիֆոլոգիական, թե մոզական ռեալիզմ (Л. Кихней, В. Гавриков, 3), Ս. Հեղայաթի և նրա հետևորդների ստեղծագործություններում միահյուսվել են ազգայինին՝ դառնալով մշակութային ինքնագիտակցության դրսևորման յուրահատուկ միջոց:

20-րդ դարի պարսից գրականության մեջ «սուբյեկտիվ արձակի» սկզբնավորման գործում հիմնաքարային նշանակություն ունի Ս. Հեղայաթի «Բուֆ-ե քուր» (Կույր բու, 1937) վիպակը: Դրանով իրանական գրականությունը մուտք է գործում հոգեվերլուծության, մարդուն և իրեն շրջապատող աշխարհի կենսական երևույթները նոր փիլիսոփայությամբ դիտարկելու փուլ (Ходжимурадов О., 1998):

Հեղայաթը մի քանի տարի աշխատում է Եվրոպայում մոդեռնիզմի հիմնադիրներից մեկի՝ Ֆ. Կաֆկայի ստեղծագործությունների՝ ֆրանսերենից պարսկերեն թարգմանության վրա և

1940-ական թթ. վերջում ընթերցողի դատին հանձնում «Կաֆկայի ուղերձը» ուսումնասիրությունը: Նրա վրա ազդեցություն գործած մոդեռնիզմի մյուս խոշոր ներկայացուցիչն է ավստրիացի պոետ և արձակագիր Ռ. Մ. Ռիլկեն:

Հեղինակի «Կույր բու» վիպակը գրվել է հենց այն տարիներին, երբ Երվրոպայում ամրապնդվում էր Ջ. Ֆրեյդի հոգեվերլուծության մեթոդը: Արևմտյան մոդեռնիստական գրականության ազդեցությամբ ստեղծված այս երկի վրա ակնառու է պարսից հազարամյա գրական-մշակութային ավանդույթի, բուդդայական փիլիսոփայության և սանսկրիտյան պոետիկայի հետքը:

Փիլիսոփայական և գրական ազդեցությունների այսպիսի բարդ համակցության մասին խոսելիս, կարծում ենք, առաջնահերթ է դառնում նաև հակիրճ անդրադարձն իրանական մշակութային ինքնության ձևավորման նախադրյալներին: Ինքնություն, որն ստիպում է «տեղայնացնելու» Արևմուտքից փոխառնված գրական-մշակութային ցանկացած երևույթ, այդ թվում նաև մոդեռնիստականը:

Դարեր շարունակ իրանական ազգային-մշակութային ինքնության ձևավորման վրա կանխորոշիչ դեր են խաղացել երեք հիմնական՝ աշխարհագրական, լեզվական և կրոնական գործոնները: Պատմական հանգամանքների բերումով դավանականը գերակա է դառնում ամենուր, և 16-րդ դարից սկսած՝ շիայականությունը կազմում է իրանական հոգեկերտվածքի մի մասը՝ վերածվելով մշակութային ինքնության կողի: Սյն, մի մասը՝ ծառայում է որպես մշակութային սիմվոլների անսպառ շտեմարան և յուրօրինակ միստիկ մտածելակերպի հիմք (Eshaqian J., 2022):

Շիայական միստիցիզմը մշտապես աչքի է ընկնել փիլիսոփայական ու գիտական մտքի նկատմամբ ընդգծված հակամոլ (Мирзаян П., 2018): Հենց այս հանգամանքն էլ, ամենայն հավանականությամբ, հանգուցային դեր է խաղում պարսից ժամանակակից «սուբյեկտիվ արձակի» ձևավորման գործում:

20-րդ դարում արևմտյան քաղաքակրթությունից փոխառնված առաջադեմ փիլիսոփայական և գրական-մշակութային յուրաքանչյուր գաղափար անցնում է շիայական դավանանքի ոսպնյակով, քննություն բռնում այլևս անտարանջատելի շիայական-իրանական արժեհամակարգում և ստանում խիստ ազգային դիմագիծ:

Հատկանշական է, որ թե՛ նախախլամական, թե՛ հետխլամական մշակույթում տեսիլներին ու երազներին տրվում է միստիկ իմաստաբանում, ինչը տեղ է գտել նաև Հ. Գոլշիրիի «Շազդե Էհթեջաբ» (Արքայազն Էհթեջաբը), Ս. Դանեշվարի «Սավուշուն» (Միավուշական) և այլ վեպերում: Երազահանությունը հանդես է գալիս որպես սյուժեի շարժիչ ուժ և հերոսների մտադրությունների բացահայտման միջոց:

Մանավանդ «Սավուշուն» վեպում հերոսուհի Զարիի կիսարթմնի տեսիլները և ամուսնու՝ Յուսեֆի դավադիր սպանության կապակցությամբ հարազատների լացուկոճը հիշեցնում են միֆական հերոս Միավուշի եղերական մահվան պատճառով համաժողովրդական սգո ծիսակարգը, այնուհետև՝ Քարբալայում իմամ Հուսեյնի նահատակությանը նվիրված համաժողովրդական սգո արարողությունները՝ աշուրան:

Կիսարթմնի մենախոսության պատկերներ ենք տեսնում նաև Մ. Դովլաթաբադիի «Քելիդար» (Քելիդար) վեպի գլխավոր հերոս Գոլմոհամմադի վարքագծում:

Մոդեռնիզմին հատուկ «գիտակցական հոսքի», ինչպես նաև վերևում հիշված երազի ու տեսիլի դրսևորումները հաճախ պարսից ժամանակակից «սուբյեկտիվ արձակում» հանդես են գալիս միահյուսված:

Միֆաբանաստեղծական ավանդույթի մասնագիտ Ե. Մ. Մելետինսկիի խոսքերով Իրանում «ունիվերսալը» և սիմվոլիկը միշտ հանդես են եկել ճշգրիտի դերում, իսկ մարդու կյանքում անձնական ու հասարակական վարքը, ինչպես նաև աշխարհայացքը համարվում են մեկ համակարգի բաղադրիչ: Այս համատեքստում նկատելի է կրոնականին միտված գիտակցությունը, որի պարագայում մարդու առաջնային ապրումները կապված են առեղծվածայինի և անտեսանելիի հետ (Ходжимурадов О., 1998):

Վերադառնալով Ս. Հեդայաթի դերին՝ նշենք, որ հենց նա պարսից արձակ ներմուծեց առաջին դեմքով սուբյեկտիվ պատմողի կերպար և դարձավ «գիտակցական հոսքի» մեթոդի նախակարապետն Իրանում: Այն իր հետևորդներն ունեցավ 60-70-ական թվականներին, մանավանդ ի դեմս Հ. Գոլշիրիի ստեղծագործությունների:

Հեդայաթի հոգեբանական նովելները հող նախապատրաստեցին նրա խոշորագույն սուբյեկտիվ ստեղծագործության՝ «Կույր բու»-ի իհայտ գալու համար: Գրական մեթոդի տարածման հարցում Հեդայաթի հետ իր լուսման ունի ներդրած նաև Բ. Ալավին՝ իր «Ջամեդան» (Ճամպրուկ) ժողովածուով:

«Կույր բու»-ն կառուցված է մոդեռնիստական ստեղծագործությունների կոմպոզիցիայի՝ սյուժետային որոշ դրվագների բեկորային կրկնության, հակադրության, ինչպես նաև դրանց ներքին միասնության սկզբունքով: Հեդայաթի կիրառած բազ-

մաթիվ սիմուլների մեջ արքետիպային դեր ունի վիպող հերոսի ստվերը, ինչը, սովորաբար, իհայտ է գալիս արևի կամ լամպի լույսի ազդեցությամբ: Այստեղ արևը կամ լամպը խորհրդանշում են մարդու ինքնությունը, ինքնաճանաչումը կամ գիտակցական աշխարհը, իսկ ստվերը՝ ենթագիտակցականը: Հեղինակն անընդհատ ձգտում է տարբեր կերպարներով իհայտ եկող իր հոգու ճանաչմանը: Աստիճանաբար այդ ստվերն ավելի է մեծանում և վիպակի վերջում վերածվում բվի: Ստեղծագործության մեջ մեկ անգամ հնչող «բու» բառն էլ հենց տեղ է գտնում վիպակի վերնագրում:

Այստեղ սիրուհին ևս կերպավորվում է պարսից դասական գրականության երկնային «յարի» ընկալումներով:

Վիպակի գաղափարը հասնում է իր գագաթնակետին, երբ պատմող հերոսն ընդունում է շուրթը պռատ ծերունու կերպարանքը, իսկ նրա ինքնությունը՝ տարրալուծվում հոր և հորեղբոր էության մեջ:

Հեղայաթի վիպակին նվիրված ուսումնասիրություններից առանձնացնելի են Մ. Յ. Ղոթբիի «Սա է Կույր բուն» (Qotbi M., 1971) և Ս. Շամիսայի «Պատմություն մի հոգու մասին» (Samisa S., 2004) աշխատությունները:

Իհարկե, հիշված երկու հեղինակներն ընտրել են վերլուծության տարբեր մեկնակետեր: Ղոթբին հենվում է Ջ. Ֆրեյդի հոգեվերլուծության մեթոդի վրա և գալիս այն եզրակացության, որ վիպակի կենտրոնում ճշմարտությունն ու գերբնականը որոնող անձն է:

Ս. Շամիսան ղեկավարվում է Կ. Գ. Յունգի հոգեվերլուծության մեթոդով՝ իր ուսումնասիրությունն անվանելով «Մի հոգու պատմություն»: Ըստ նրա՝ «Կույր բու»-ն մարդու ինքնությունն ու հոգին մեկտեղելու պատմություն է, սակայն երբեք

հնարավոր չէ հասնել գիտակցականի և ենթագիտակցականի սինթեզի:

Տաջիկ գրականագետ Օ. Խոջիմուրադովի (Ходжимурадов О., 1998) կարծիքով Հեղայաթի կիրառած հերոս-սիվուներն ակունք են առնում ոչ միայն դասական շրջանի գրականությունից, այլև նույնիսկ հինիբրանական կամ արիական միֆերից: Նրա համոզմամբ վիպակի հերոս ծերունին մարմնավորում է արիական շրջանի արարչական գաղափարը, իսկ երիտասարդ կինը՝ մարդկության կենսուրախ ջիղը:

1953 թ. իրադարձություններից հետո մտավորականության շրջանում ծայր առած ընկճախտն ու հոռետեսությունը պատճառ են դառնում, որ գեղարվեստական արձակում տարածում գտնեն ռոմանտիկ-փիլիսոփայական ուղղությունները՝ համեմված կրոնամիստիկական մոտիվներով: Մտավորականներից շատերն իրենց ստեղծագործություններում գիտակցաբար խույս էին տալիս իրականությունից՝ հարելով սուբյեկտիվ-հզեբանական և ինտելեկտուալ-փիլիսոփայական թեմաներին:

Իրանցի գրականագետներից ոմանք այս ուղղությունն անվանեցին «կույրբուական արձակ», քանի որ շատերի համար ուղենիշ էր դարձել հենց «Կույր բու»-ն (Ходжимурадов О., 1998):

1950-60-ական թթ. նման բովանդակությամբ լույս տեսած ստեղծագործությունները սուբյեկտիվ արձակը դարձրին առանձին ուղղություն՝ պարարտ հող ստեղծելով մոդերնիստական երկրորդ՝ ուղղության ասպարեզ գալու համար:

Բացի Հ. Գոլշիրիի «Շագդե Էհթեջար» վիպակից, այս կարգի բոլոր ստեղծագործությունները գրվել են իրանական հասարակությունը համակած սոցիալ-քաղաքական ճգնաժամի

պայմաններում: Օ. Խոջիմուրադովը, իրավացիորեն, դրանք պայմանականորեն բաժանում է երկու խմբի՝ առաջին խմբի՝ կրոնաառասպելական թեմաներով ստեղծագործած հեղինակներին անվանելով «միֆարարողներ»: Երկրորդ խումբը «գիտակցական հոսքի» գրողներն են, ում ստեղծագործություններում գլխավոր հերոսը ձգտում է ճանաչել, բացահայտել իր ներաշխարհը և կենսական երևույթների բնույթը (Ходжимурадов О., 1998):

«Միֆարարողների» ուղղության հեղինակներից կարելի է հիշատակել Թ. Մոդարրեսի «Յակոյա վա թանհայի-ե ու» (Յակոյան և իր միայնությունը) և Բ. Սադեղիի «Մալաբուր» (Թագավորություն) ստեղծագործությունները (Qobadi H., Bigdeli S., Alijani M., 2014):

1940-ականների վերջում և 50-ականների սկզբին Թ. Մոդարրեսին և Է. Թաբարին միակը չէին, որ անդրադարձան աստվածաշնչյան առասպելներին, սակայն Մոդարրեսին, կրկնօրինակելով արևմտյան արձակագիրներին, հինկտակարանյան սյուժեն օգտագործում է համամարդկային նշանակության քնարափիլիսոփայական խնդիրների արձարձման համար:

«Յակոյան և իր միայնությունը» վեպում Երուսաղեմի արքա Միքահի հոգեվիճակին համապատասխան են գունավորվում նաև պալատի լուսամուտների վարագույները, սյուները: Այս գույների մեջ սևն ունի հանգուցային դեր: Միքահի ծանր ապրումների օրերին քաղաքի դարպասներն անգամ ներկված են սևով, իսկ պարտված ցեղի ներկայացուցիչ Թամարն արքայի ննջարան է գալիս սևազգեստ: Երբ, հակառակ Յահվե Աստծո կամքի, Միքահը Թամարին բերում է սրբազան քաղաք՝ Երուսաղեմ, Աստված երկինքը պատում է սև, ահարկու ամ-

պերով, ինչը հին առասպելաբանության մեջ մեկնաբանվում է որպես վերահաս աղետի նախանշան:

Թամարը Միքահի մոտ է գալիս մութ գիշերով, «ինչպես հոգին է մոտենում նրան»: Նրա դեմքը չի երևում, իսկ ինքը գտնվում է սուվերի մեջ: Այսպիսի կերպարն ընթերցողի մոտ ասոցացվում է «Կույր բու»-ի «երկնային կնոջ» կամ Յունգի «անիմայի» հետ: Այսպիսով՝ Թ. Մոդարրեսին Ս. Հեդայաթից հետո, օգտվելով կրոնաառասպելական մոտիվներից, ստեղծում է յուրօրինակ քնարափիլիսոփայական ստեղծագործություն:

Սուբյեկտիվ արձակի առավել կատարելագործված տարբերակը ձևավորվում է 20-րդ դարի 60-70-ական թթ.՝ «գիտակցական հոսքի» մեթոդի ակտիվ կիրառմամբ, որի առաջնեկներից է Հ. Գուլշիրիի «Շազդե Էհթեջաբ» (Արքայազն Էհթեջաբը) վիպակը (Qolami A., 2013):

Եթե նախորդ տասնամյակների սուբյեկտիվ արձակին բնորոշ էր հերոսների հոգեվիճակի բացահայտումը՝ տարբեր դրվագների, սիմվոլ-կերպարների առանձին դրսևորումների, դրվագների, սիմվոլ-կերպարների առանձին դրսևորումների, դրվագների խոսքի կամ ներքին մենախոսությունների բազմաթիվ կրկնությունների միջոցով, ապա 20-րդ դարի 60-ականների երկրորդ կեսին լույս տեսած երկերի՝ Ս. Չուբաքի «Մանգե սաբուր» (Համբերանքի քարը), Բ. Շուլեվարի «Մաֆարե շաբ» (Երեկոյան ճամփորդություն) և հատկապես Հ. Գուլշիրիի «Շազդե Էհթեջաբ» ստեղծագործություններում այդ իրավիճակներն արտահայտվում են «գիտակցական հոսքի» մեթոդի կիրառմամբ՝ սեփական ներքին մենախոսության կամ մեկ այլ անձի խոսքի կրկնությամբ: Այս ճանապարհով ընթերցողը ընկղմվում է հերոսի գիտակցական կամ ենթագիտակցական գործողությունների հորձանուտի մեջ:

Թեև Ս. Չուրաքի և Բ. Շուլեվարի վեպերում կիրառված են «գիտակցական հոսքի» մեթոդին բնորոշ տարրեր, սակայն Հեղայաթի «Կույր բու» վիպակից հետո հենց Հ. Գուլշիրիի «Արքայազն Էհթեջաբը» վիպակն է ամբողջությամբ համապատասխանում մոդեռնիստական արձակի նորմերին (Dehqani N., Hesampur S., 25-48):

Գուլշիրիի կարծիքով գեղարվեստական ստեղծագործությունը միջոց է մարդկային հոգու բացահայտման համար, ինչպես նաև ճանապարհ է դեպի ինքնաճանաչում և աշխարհճանաչում:

Այս ստեղծագործության ինքնատիպությունը պարսից գրականության մեջ պայմանավորված է ոճի անսովորության և կոմպոզիցիայի ոչ ավանդական կառուցվածքով: Հեղինակը հրաժարվում է սոցիալական տիպեր ստեղծելուց և էմպիրիկ հարթությունում դիպաշարի հաջորդական շարադրումից: Դրանք փոխարինված են հիմնական հերոսի՝ արքայազն Էհթեջաբի գիտակցության մեջ կատարվող իրադարձություններով: Վիպման հիմնական շարժիչ ուժը ներքին մենախոսություններ են:

Արտաքին գործոնները՝ գերդաստանի անդամների նկարները և նախնիների ռազմական երթերի պատկերները զարկ են տալիս որոշակի ասոցիացիաների, որոնք միաժամանակ ենթարկվում են արքայազնի ներաշխարհի մեկ այլ տրամադրության: Հուշանգն ընթերցողին ուղեկցում է գլխավոր հերոսի գիտակցական աշխարհ և նրանց այնտեղ թողնում միայնակ դեմառդեմ:

Առաջին հայացքից իրադարձությունների շարադրման ընթացքում, թվում է, բացակայում է պատճառահետևանքային կապը, սակայն խորանալով ստեղծագործության էության մեջ՝

նկատում ենք, որ առկա է կոմպոզիցիոն հստակ կառուցվածք, վեպի տարբեր մասերի միջև տրամաբանական կապ, և հուշողվագները շարադրվում են հեղինակային համապատասխան նկատառումներով: Յուրաքանչյուր հուշողվագ իր հետ բերում է սյուժետային գծի շարժի նոր առիթ՝ այդպիսով բացահայտելով Ղաջարական դինաստիայի վերջին մոնիկաններից մեկի ուղեղում ծավալվող իրադարձությունների լարված հոսքի դրդապատճառները: Այսպիսով՝ ներկայի շրջանակներում վերակենդանանում է անցյալը, և Հ. Գուլշիրին արքայազնի հուշերում անդրադառնում է Իրանի շուրջ 150 տարվա պատմությանը և Ղաջարական արքայատան երեք սերնդի գործունեությանը:

Մյուս կողմից, հերոսի ենթագիտակցական աշխարհին ապավինելը չի նշանակում, թե ստեղծագործության մեջ չկա հեղինակային սուբյեկտիվիզմ: Հեղինակի տեսակետը բացահայտվում է սիմվոլների, այլաբանությունների և այլիմաստակներների շարքում: Հենց սիմվոլիկ լեզուն էլ համապատասխանում է նման բարդ կոմպոզիացիա ունեցող ստեղծագործություններին:

Էհթեջաբի նուպայիկ հագերից ցնցվում են տան պատերը, դրանցից կախված նախնիների նկարները և առաստաղի ջահերը՝ խորացնելով իրավիճակի դրամատիզմը:

Վիպակի վերջում արաղաղի կանչը և արշալույսի վրա հասնելն ակամա հիշեցնում են «Կույր բու»-ի ավարտը, սակայն, հակառակ վերջինիս, այն դեռ առավոտ չէ, այլ ընդամենը դրան նախորդող ցայգալույսը:

Այսպիսով, ինչպես Ս. Հեղայաթի, այնպես էլ նրա հետևորդների ստեղծագործություններում մոդեռնը և նորարականը հանդես են գալիս սինթեզված ազգայինին, կրոնականին

ու գրական դարավոր ավանդույթներին՝ դառնալով ժամանակակից իրանական մշակութային ինքնության դրսևորման անբաժանելի բաղկացուցիչ:

GARNIK GEVORGYAN, PhD IN PHILOLOGY

Assistant professor at the Department

of Iranian Studies, YSU

e-mail: garnikgevorgian@cmail.com

THE SYNTHESIS OF IRANIAN, ISLAMIC AND MODERN AS A MANIFESTATION OF NATIONAL-CULTURAL SELF-AWARENESS IN THE MODERN PERSIAN PROSE

One of the characteristics of the modern Persian prose is the synthesis of centuries-old national literary traditions with new directions in world literature. In the formation of "the subjective prose" in the 20th century Persian literature, S. Hedayat's novel "Buf-e kur" (Blind owl, 1937) has been of fundamental importance. With this, Iranian literature enters the stage of psychoanalysis, observing the vital phenomena of man and the world around him with a new philosophy. The works with such content published in 1950-1960s. turned subjective prose into a separate direction, creating fertile ground for the emergence of the modernist second direction. The most improved version of the subjective prose was formed in the 60-70s with the active use of the method of "stream of consciousness", one of the pioneers of which is H. Golshiri's novel "Shazde Ehtejab" (Prince Ehtejab).

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Кихней Л., Гавриков В., *Проза Льва Наумова в контексте мистического реализма в русской литературе XX - XXI веков*, Москва – Амстердам, 2020, Тардис, 240 стр.
2. Ходжимурадов О., *Поэтика современной персидской психологической прозы (30-70 – годы XX века)*, Душанбе, 1998, автореферат (<https://cheloveknauka.com/v/442442/a#?page=1>).
3. Мирзай П., *Поэтическая репрезентация метафизических тенденций и богоискательства в современной поэзии Ирана*, Душанбе, 2018, автореферат (<http://www.dslib.net/jazyko-znanie/pojeticheskaja-reprezentacija-metafizicheskikh-tendencij-i-bogoiskatelstva-v.html>).
4. Dehqani N., Hesampur S., *Barrasi-e avamel-e moasere bar šetab-e revayat dar roman-e Šazdeh Ehtejab, Adabiyatpajuheši*, šomare-e bist o šešom-e zemestan-e 2013, 25-48 ss.
5. Eshaqian J., *Xodkavi va hoviyat, ba takie bar «Buf-e kur»-e Sadeq Hedayat*, 2022, Mardomeh (<https://madomeh.com/1401/03/11/saye/>).
6. Šamisa S., *Dastan-e yek ruh*, Tehran, 2004, Ferdous, 360 s.
7. Qobadi H., Bigdeli S., Alijani M., *Tahlil-e ostureha-e «Yakolia va tanhai-e u» va «Malakut» ba negah-e be tasir-e kudeta-e 28 mordad dar baztab-e osture ha, Matn-e pajuhi talabi*, dowre-e 18, šomare-e 60, šahrivar 2014, ss. 25-50 (https://ltr.atu.ac.ir/article_999.html).
8. Qolami A., *Naqd-e roman-e Šazdeh Ehtejab asar-e Hušang-e Golširi*, 2013, (<https://www.slideshare.net/gholami7508/literary-criticism-23893848>).
9. Qotbi M., *In ast buf-e kur*, Tehran, 1971, Rayin, 191 s.

HASMIK HMAYAKYAN, PhD,
ASSOCIATE PROFESSOR
Researcher of the Institute of
Oriental Studies, NAS RA,
e-mail: hhmayakyan@yahoo.com
DOI: 10.56813/2953-786X-2022.2-308

POSSIBLE HITTITE PARALLELS OF SOME LOANWORDS IN ARMENIAN CONSIDERED IRANIAN

In the word stock of the Armenian language, the Iranian borrowings constitute an extensive layer and this issue has been a subject of studies already from the 19th century. Fundamental studies on the Iranian loanwords in Armenian have been authored by H. Hübschmann, E. Benvenist, H. Acharyan, G. Jahukyan, A. Perikhanyan and others whereas it continues to remain in the focus of researchers' interests to nowadays.

In this paper, we are going to revert to some loanwords in Armenian that are considered Iranian, which, however, have their parallels also in the Hittite language.

The first word that we would like to discuss is the Armenian word *išxan* 'prince'. It has several meanings in Armenian: 1. 'ruler, lord, great, mighty' (HAB, 2, 246) 2. 'ruler of the country, king' 3. 'governor of province or a town, notable' 4. In ancient Armenia – 'a hereditary landowner, patriarch, *naxarar* (minister)' (Malkhasyants, 1944, 167). This word is found in the Bible and in ancient literature. It is considered a borrowing from Iranian *xšana* (HAB, 2, 246). What speaks well for this word to be an Iranian borrowing is the existence of the root '*išxel*, to rule' both in Armenian and

Iranian languages, which are semantically identical. Compare the Iranian *xšī* 'to rule, dominate' as well as the equivalence of other meanings in Iranian to the word meanings in Armenian. These loanwords show the exact principles of sound changes of Iranian borrowings, when the Iranian *xš* becomes "*šx*" in Armenian, which can be seen in other Iranian loanwords in Armenian (*ašxarh* 'world', *ašxarel* 'to weep, cry, mourn', *Ašxen* 'a female name, *ašxet* 'horse', etc.). Therefore, they are considered Iranian loanwords in Armenian (HLP, 1987, 559).

Nevertheless, it should be noted that already in 1920s Neshan Martirosyan (Martirosian) noticed the semantic and phonetic similarity of the Hittite word *išha-* "lord" with the Armenian *išxan* (Martirosian, 1924, 458-459). This view was later supported by a number of scholars, but the word was considered an Iranian loanword by Grigor Ghapantsyan (Kapanc'yan, 1957, 354) and Hrachya Acharyan (HAB, 2, 246). Gevorg Jahukyan believed that the similarity between the Hittite and Armenian words was accidental (HLP, 1987, 319-320). The genitive and accusative cases of this word is *išhaš*, and *išhan* respectively. The equivalent of this word recorded in Luwian is *uashā-* meaning 'lord' and it existed in other Hittite-Luwian languages with similar meaning, but various forms. The Hittite dictionaries consider the Armenian version to be a parallel to the Hittite word. It should be noted that the etymology of the Hittite word is unclear, there is a possibility of its etymological connection with Latin *erūs* 'lord' and *era* 'lady, empress', but according to the researchers, phonetic disparities occur here (Tischler, 1983, 374-375) and, as supposed, the Hittite *išha* and the Latin *erūs* have been generated from the oldest Indo-

European thematic suffix, of which the Armenian root *išx* (Ivanov, 2007, 314-315).

It is obvious that in this particular case we are dealing with the existence of similarly sounding word having the same semantics in Armenian, Iranian and the Hittite-Luwian languages.

The second is the Armenian root *ašxar/ašxarel* 'to weep, cry, mourn'. It is also found in the Bible, and in the ancient Armenian manuscripts (HAB, 1, 217). This word was compared by Ghapantsyan (Kapanc'yan) with Hittite *išharḫu-ešharḫu* having the same semantics (Kapanc'yan, 1957, 348), and this point of view was initially shared by Gevorg Jahukyan (Jahukyan, 1970, 152), but later he started considering this parallel to be an Iranian loanword (HLP, 319). A. Perikhanyan also believing that this was an Iranian borrowing, mentions that it was borrowed from Iranian **xšād*, probably the Parthian version *'xš'd-* which means 'compassion, pity, etc' (Perikhanyan, 1993, 17-18). The narrow meaning of the Hittite word is 'to shed tears, to cry', which, of course, semantically seems to be directly identical to the Armenian word. Interestingly, the Hittite etymological dictionaries compare it to the Vedic *ásru*, the Old Iranian *ásram-* 'tear', indicating to the phonetic inconsistencies and etymology problems of the word. As a possible parallel the Armenian word is given without any comments (Tischler, 1983, 112; 115; HED, 1/2, 392-394). V. Ivanov also considered it to be a Hittite loanword in the Armenian, notes that the semantics and phonetics of the Armenian and Hittite words are identical (Ivanov, 2007, 251-252). In this given case, we are dealing with identical words in three languages.

The third parallel that we have found is the Armenian word *k'ur'ak* 'foal, colt' which is considered to be an Iranian loanword,

but which has its equivalent in Hittite - *kurka*, meaning 'foal of a horse or donkey'(HED, 4, 267-268). It should be noted that the word *k'ur'ak* in Armenian is considered an Iranian loanword by Acharyan (HAB, 4, 594-595), Jahukyan (Jahukyan, 2010:787) and others. The Hittite word does not have a clear etymology, the researchers compared it with the Middle Persian *kurrag*, new Persian *kurra* and the Armenian word *k'ur'ak* (HED, 4, 267-268). As we can watch here the Armenian word is completely identical with the Iranian one, and there is a certain phonetic discrepancy with the Hittite- *kurka - kurak*. However, it is obvious that the same word with similar semantics and almost identical phonetics exists once again in all three languages.

Another parallel is the Armenian pair '*tapast*' 'cover, carpet' and '*tapast*' 'a kind of deadly pain, decease' compared with the Hittite '*tapašpa*' meaning 'a type of cloth or cover' and *tapaš-* 'fever, heat' to which we dedicated a separate article (Hmayakyan, 2022).

Concluding the observations on the parallels of the Armenian words in the Iranian and Hittite -Luwian languages, we would like to mention that the Iranian origin of the latter has not always been unanimously accepted and unquestionably proven. We believe that the existence of almost identical words in these three languages can be explained by:

- a). the circumstance that these languages belong to the Indo-European language family;
- b). borrowing from one language to another; they are considered such in Armenian, but in this particular case it would be doubtful to state whether these words have been borrowed from Iranian or Hittite and this requires additional linguistic examination;

c). these similarities may indicate to early contacts between the above peoples, as a result of which these borrowing could have taken place.

There are numerous studies on the issue of how and where the contacts between the Hittite-Luwian peoples and the proto-Armenians could have taken place which concern especially the direct contacts between the state of Hayasa formed on the Armenian Highlands in the 2nd millennium BC and the Hittite Empire as well as its ethnic and linguistic composition: a number of scholars consider Hayasa to be the cradle of Armenians and its language - the basis of proto-Armenian, and this view is not unequivocally accepted by scholars. However, despite the different views on this issue, it is undeniable that there are a number of borrowings from the Hittite-Luwian languages in Armenian circulating in science¹. As for the Iranian loanwords in Armenian, as it has already been mentioned, this issue has been best studied comprehensively well and, as known, the history of the Armenian-Iranian contacts has started as early as in the 9th century BC based on latest dating circulating in science regarding the appearance of Iranian tribes in Iran (HLP, 1987, 492-493). Among the borrowings from Old Persian in Armenian are, e.g. such words as *gušak* 'fortune teller', *tšnami* 'enemy', *partez* 'garden', etc.

A question arises here, is it possible that the Iranian speaking peoples have had direct contacts with the bearers of the Hittite-Luwian languages? As known the Indo-Aryans split off happened around 1800-1600 BCE into two groups - the Iranians and Indians

¹ For Hittite-Armenian linguistic historical and cultural relations see Kapanc'yan 1948; Jahukyan 1961: 398-405; HLP 198: 311-337; Greppin 1978: 115-126; Khachatryan 1998; Kosyan 1999; Ghazaryan 2016; Hmayakyan 2016.

and Iranians finally defeated the Indians and "chased (the Indo-Aryans) to the extremities of Central Eurasia." (Beckwith, 2009, 33).

One group of the Indo-Aryans who founded the Mitanni kingdom in northern Syria (c. 1500-1300, BCE) the other group were the Vedic people. As mentioned by a small number of Indians settled in Mesopotamia, Syria, Asia Minor in the 2nd thousand millennium BC: the state of Mitanni is especially famous in mid-2nd millennium, Indian origin is ascribed to its elite. The kings of Mitanni had direct contact with the kings of the Hittite empire. One of the most famous evidence is the treaty signed by the Mitanni king Šattiwaza who was dependent on the Hittite empire and the Hittite king Suppiluliumas I in the second half of the 14th century, where the Mitanni Aryan deities are listed twice - in the Mitanni Hatti treaty (KBo, I 3) and the Hatti-Mitanni treaty (KBo I 1 and its duplicates) between Šattiwaza of Mitanni and Suppiluliumas I the Hittite king. The former will be first dealt with from KBo 3 Vo 23 to Vo 27 (Cf. CTH, 52.1 §.11) (Fournet, 2010).

Without going into details about the Hittite political relations with Mittani, we can mention that they were very active; naturally, it is possible to assume mutual interactions in many spheres. In the preserved treaty the Mittani side was witnessed by gods Mithras: Mi-it-ra-as-i-il, Varuna - Ú-ru-wa-na-as-si-il, Indra - In-tar and Nasatians - Na -sa-at-ti-ya-an-na. Of course, there are some linguistic differences in the spelling of the names represented in the cuneiform (Fournet, 2010:26-40).

Generally, the scholars based on linguistic analysis of various personal and deity names proposed a term 'Mitanni Aryan'(Kosyan,

2006: 246). It worth mentioning here that Mitanni Aryan names of kings, nobles and deities were collected and examined for the first time from the 1960s and these studies continue to date (Mayrhofer, 1966; Mayrhofer, 1974; Eichner, 2009: 57-67, Gentile, 2019).

It is interesting that according to the researchers, traces of the Aryan presence can be seen in the second millennium BC, outside Mittani, in other places, also there are also indications of existence of Aryan nobility in Asia Minor, and in the western part of Armenian Highlands - in Tsopk (Kosyan, 2006:247-258). As known that the Aryans were very militant, that's why they played such a significant role in the military-political life of Western Asia (Grekyan, 2013:418). We should also note here that fragments of Hurrian myths have been preserved in Hittite sources, which once again witnesses the close contacts of the Hurrians, the people of Mitanni, as well as the Indo-Aryan elite ruling this country with the Hittites.

Summarizing, without disputing the Iranian origin of the discussed in Armenian, we nevertheless would like to state the existence of their Hittite parallels which give us opportunity for an enhanced and deeper studies and conclusions.

ՀԱՍՄԻԿ ՀՄԱՅՆԱԿՅԱՆ, պ.գ.թ.
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
ավագ գիտաշխատող, դոցենտ
Էլ. փոստ՝ hhmayakyan@yahoo.com

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԽԵԹԱԿԱՆ
ԶՈՒԳԱԸԵՌՆԵՐԸ

Հոդվածում անդրադարձ է կատարվում հայերենում մի քանի իրանական համարվող փոխառությունների, որոնք, սակայն ունեն իրենց զուգահեռները նաև խեթերենում:

1. Հայերեն «իշխան» բառը համարվում է փոխառյալ իրանական xšana ձևից: Սակայն Ն. Մարտիրոսյանը դիտարկել է նաև խեթերենում առկա išha- «տեր» բառի հետ հայերեն «իշխան» բառի իմաստային և հնչյունական նմանությունը: Խեթերեն բառի սեռական ձևն է išhaš, իսկ հայցականն է՝ išhan:

2. Հայերեն «աշխար, աշխարել»- «ողբ, լաց, կոծ և ողբալ, կոծել, վրան լալ» բառը համարվում է իրանական փոխառություն, սակայն վրան լալ» բառը համարվում է իրանական փոխառություն, սակայն Գ. Ղափանցյանն այն համեմատել է խեթ. išharḫu-ešharḫu - «արցունքների թափել, արտասվել» բառի հետ, որն իմաստային առումով ուղղակի նույնական է հայերեն բառի հետ: Հայերենում խեթական փոխառություն է այն համարել նաև Վ. Իվանովը:

3. Հայերեն «քուռակ» բառը համարվում է իրանական փոխառություն, որը սակայն իր համարժեք նույնիմաստ զուգահեռն ունի խեթերենում՝ kurka, որ նշանակում է՝ «ձիու կամ ավանակի ձագ՝ քուռակ»:

Հարկ է նշել, որ այս երեք բառերն էլ ստույգ ստուգաբանություն չունեն խեթերենում:

Կարծում ենք, որ երեք լեզուներում առկա նույնիմաստ և գրեթե նույնահունչ բառերի առկայությունը կարող են պայմանավորված լինել.

ա. Այդ լեզուների հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելու հանգամանքով:

բ. մի լեզվից մյուսին անցած փոխառություն լինել, ինչպես և համարվում են հայերենում, սակայն այդ դեպքում հստակ պնդել, թե արդյո՞ք այդ բառերը իրանական փոխառություններ են հայերենում, թե խեթական, կարծում ենք, հավելյալ լեզվաբանական քննություն է պահանջում:

գ. Այս ընդհանրությունները կարող են վկայել վաղ փուլում այս ժողովուրդների շփումների մասին, որոնց արդյունքում էլ տեղ կարող էին գտել վերոնշյալ փոխառությունները: Տվյալ կետը առավել մանրամասնորեն քննարկվում է հոդվածում:

Ամփոփելով, կարելի է ասել, որ չվիճարկելով քննարկվող բառերի՝ հայերենում իրանական փոխառություններ լինելը, այսուհանդերձ, հարկ ենք համարում նշել վերջիններիս խեթական զուգահեռները, որոնք առավել խորը ուսումնասիրությունների ու եզրակացությունների հնարավորություն են ընձեռում:

BIBLIOGRAPHY

1. Beckwith 2009 – Beckwith, Christopher, *Empires of the Silk Road: A History of Central Eurasia from the Bronze Age to the Present*, Princeton University Press, 2009.

2. Eichner 2009 - Eichner, H., Parallelen zu indoiranischen religiösen Konzepten in Texten der Hethiter. In Pirart, Eric & Tremblay, Xavier (eds.), *Zarathustra entre l'Inde et l'Iran: Études indo-iraniennes et indo-européennes offertes à Jean Kellens à l'occasion de son 65^e anniversaire*, 57–67. Wiesbaden, Reichert.

3. Fournet 2010 – Fournet, A., *About the Mitanni-Aryan Gods*, *Journal of Indo-European Studies*, 2010 (1-2:) 26-40.

4. Gentile 2019 - Gentile, S., *Indo-Iranian Personal Names in Mitanni: A source for Cultural Reconstruction*, *Onoma 54, Journal of the International Council of Onomastic Sciences*, 2019/8; 137-159.

5. Ghazaryan 2016 - Ghazaryan, R., *Hayasa: The Political and Cultural History*, Yerevan, 2016 (in Armenian).

6. Grekyan 2013 – Grekyan, Y., *The Indo-Aryans, History of Neighbouring Countries of Armenia, Vol. 1, Ancient Period*, Yerevan, 2013, 416-418.

7. Greppin 1978 – Greppin J., *Luwian Elements in Armenian*, *Древний Восток III*, Ереван, 1978, p. 115-126.

8. HAB 1 - Acharyan, Hrachya, *Hayeren armatakan bar'aran (HAB)*, h. 1, Erevan, 1926 (Acharyan, H., *Armenian Etymological Dictionary (HAB)*, Yerevan, v. 1, 1926 (in Armenian)).

9. HAB 2 - Acharyan, Hrachya, *Hayeren armatakan bar'aran (HAB)*, h. 2, Erevan, 1973 (Acharyan, H., *Armenian Etymological Dictionary (HAB)*, Yerevan, v. 2, 1973 (in Armenian)).

10. HAB 4 - Acharyan, Hrachya, *Hayeren armatakan bar'aran (HAB)*, h. 4, Yerevan, 1979 (Acharyan, H., *Armenian Etymological Dictionary (HAB)*, Yerevan, v. 4, 1979 (in Armenian)).

11. HED 4 – Puhvel, J., *Hittite Etymological Dictionary*, Vol. 4, *Words beginning with K*, Berlin, New York, Amsterdam, 1997.

12. HLP 1987 - Jahukyan, G., *Hayoc' lezvi patmut'yun (HLP)*, *Naxagrayin zamanakašrjan*, Erevan, 1987 (Jahukyan, G., *History of the Armenian Language (HLP), Pre-Writing Period*, Yerevan, 1987) (in Armenian).

13. Hmayakyan 2016 - H.Hmayakyan, *Grigor Kapantsyan and Hittite Studies*, Yerevan, 2016 (in Armenian).

14. Hmayakyan 2022 – Hmayakyan, H., Iranian and Hittite – Luwian Parallels of the Armenian Words *tapast-* 'carpet' and *tapast-* 'a kind of

deadly pain, disease', *Norwegian Journal of Development of the International Science* 84, 2022, <https://zenodo.org/record/6540028#.YsXLcnZBzIU>.

15. Ivanov 2007 - Иванов, Вячеслав. *Труды по этимологии индоевропейских и древнепереднеазиатских языков. Индоевропейские корни в хеттском языке, Т.1*, М., 2007.

16. Jahukyan 1961 - Jahukyan, G., *The Hayasa Language and its Relation to Indo-European Languages*, *Archiv Orientalni*, 29/3, 1961, pp. 398-405.

17. Jahukyan 1970 - Jahukyan, G., *Հայերենը և հնդեվրոպական լեզուները*, Erevan, 1970 (Jahukyan, Gevorg. *Armenian and Indo-European Languages*, Yerevan, 1970 (in Armenian)).

18. Jahukyan 2010 - Jahukyan, G., *Armenian Etymological Dictionary*, Yerevan, 2010 (in Armenian).

19. Каранц'уан 1948 - Капанцян Г., *Хайаса-колыбель армян*, Ереван, 1948.

20. Каранц'уан 1957 - Капанцян Г., *Историко-лингвистические работы. К начальной истории армян, Древняя Малая Азия, т. 1*, Ереван, 1957.

21. Khachatryan 1998 - Khachatryan V., *Armenia in XV-VII cc. BC.*, Yerevan, 1998 (in Armenian).

22. Kosyan 1999 - Kosyan, A., *The XII century B.C. Near Eastern Crisis and the Armenian*, 1999 (in Armenian).

23. Kosyan 2006 - Kosyan, A., *Aryans in Pahlhwa, The Countries and Peoples of the Near and Middle East XXV*, Yerevan, 2006.

24. Malkhasyants 1944 - Malkhasyants, St., *Հայերեն բա՛տրական բա՛րան, հ.2*, Yerevan, 1944; (Malkhasyants, St., *Explanatory Dictionary of Armenian*, v. 2, 1944 (in Armenian)).

25. Martirossian 1924 - Martirossian N.A., *Beziehungen der armenischen Sprache zur hettitischen*, *Handes Amsorya, Monatsschrift für armenische Philologie*, XXXVIII Jahrgang, 1924 (in Armenian).

26. Mayrhofer 1966 - Mayrhofer, M., *Die Indo-Arier im alten Vorderasien: Mit einer analytischen Bibliographie*, Wiesbaden, 1966.

27. Mayrhofer 1974 - Mayrhofer, M., *Die Arier im Vorderen Orient - ein Mythos?* Mit einem bibliographischen Supplement. Wien, 1974.

28. Perikhanyan 1993 - Периханян, А., *Материалы к этимологическому словарю древнеармянского языка, часть I*, Ереван, 1993.

29. Tischler 1983 - Tischler, J., *Hethitisches Etymologisches Glossar, Teil I, a-k*, Innsbruck, 1983.

TIGRAN MIKAYELYAN

Researcher of the

Institute of Oriental Studies, RA

e-mail: mtigran2002@yahoo.com

DOI: 10.56813/2953-786X-2022.2-320

PERSIAN AS A LANGUAGE OF MEDIEVAL EPIGRAPHIC INSCRIPTIONS OF ARMENIA¹

As known, from the 8th century, Armenia fell under the rule of the Arab caliphate (7-9th centuries) and together with the neighboring countries formed the province with name Arminia. Arminia was ruled by the appointees of the Arab caliphs.

At the beginning of the 9th century, the power of the Arabs in Armenia was abolished and the independence of Armenia was restored. Later, from the 11th century to the 19th century, Armenia was incorporated in the states of various Muslim rulers (Shaddadids, Ilkhanids, Seljuks, Kara-Koyunlu, Ak-Koyunlu, Iranian dynasties, etc.), although in some parts of the country, Armenian princes managed to maintain their principalities up to 15-16 centuries (Orbelians in Syunik, Proshyans in Vayots Dzor, Vachutians in Aragatsotn, etc.).


The conquest of Armenia by the Muslim rulers was often accompanied by the infiltration of Arabs, Kurds, Persians, and mostly Turkic-speaking nomadic tribes especially after the mass deportation of the Armenians to Iran by Shah Abbas in 1604.

¹ This study covers the territory of the modern Republic of Armenia (most of Eastern Armenia) and not the historical Armenia.

The Muslim rulers and ordinary people residing in Armenia left their traces in the forms of memorial epigraphic inscriptions (rarely constructional inscriptions and mostly tombstones).

Among the Arabic-lettered inscriptions of the 9-19 cc. (the absolute majority of which are tombstones traditionally written in Arabic) some have carved also in the Persian language.

The oldest Arabic inscriptions are found on pagan Garni Temple (currently Kotayk marz of Armenia). They are graffitis written in Kufi script of Arabic and date back to the 9-10 cc. Persian graffitis are also encountered next to Arabic ones e.g. Bahram's inscription in cursive *naskh* (Khachatryan, 1987: 51-52) (Pictures 1, 2 & 3):



Picture 1



16 A (№ 16)

نوشته بدین جا همین نامی من
خودا یاچه باشن سرانجامی من
بهرام سنگتراش تبریزی

16 B (№ 16)

Picture 2

- [1] نوشته بدین جا همین نامی من
[2] خودا یاچه باشن سرانجامی من
بهرام سنگتراش تبریزی

Picture 3

Translation:

1. My name is written here
 2. God, what my end will be like?
- Bahram stone mason Tabrizi

One hardly noticeable inscription in Arabic made on the right side from the temple entrance contains the phrase 'دعا گفت' 'he said a prayer' and an Iranian personal name - Nushirvan. It paleographically can be dated back to the 9-10th century (Khachatryan, 1987: 52-53 No 20).

From the 12th century onwards one can observe the increased influence of the Persian language. Although Arabic remains the

main language of the Islamic memorial monuments, Persian words, personal names, numerals or complete sentences are started being used in the Arabic epigraphic inscriptions.

Such is the inscription dating to the 12th found from the citadel of Bjni fortress (Kotayk region of Armenia) (Mikayelyan, 2019-1) (Picture 4). It was discovered in 2007 by the expedition of the Institute of Archaeology and Ethnology of the National Academy of Sciences of the Republic of Armenia during the excavation of Bjni fortress. According to the participant of the expedition H.Hakobyan the inscribed stone was unearthed in a well-resembling structure².



Picture 4

As appears it is fragment of a larger inscription that unfortunately has not been lost.

² According to verbal information.

It is a five-line relief writing in Persian in *naskh* script that reads as follows:

- 1). [کم] ?
- 2). [اسفه] سلار محمد طوسي ...
- 3). [ر.]. اندری سلا ..
- 4). خدا بر همه ر [حمت کند].
- 5). [سنة] . و خمس ما ..عین [نه] ...

Translation:

1.[km]?
2. Ifh[salar]/Esfah[salar] Muhammad Tusi ...
3. ...ndri? of Isla[m]?...
4. May God bless all
5. [Year] five hundred and seventeen? *or* nineteen?

The most valuable information is contained in the second line that gives the name of an official Muhammad/Mohammad holding a position of Isfahsalar/Esfahsalar from the Iranian town of Tus, who probably ordered some remarkable action that was honoured by recording in an epigraphic inscription.

Judging from the Arabic numeral [٥٠٠] 'five hundred' the inscription can be dated to the 5th century of Hijra (12th century) and more precisely from the 90s to the 70s of that century (from 1175 to 1183 of the Christian era) judging from the possible Arabic decimal numerals having ending عین.. (Mikayelyan, 2019-1:328).

Inscriptions in Arabic containing Persian words have also been carved by representatives of the Armenian princely dynasties considering the importance of these languages in the region. Such is the famous inscription made by Chesar Orbelian of Orbelian princely dynasty in Sulema or Selim Caravanserai of 1332 (currently in Vayots Dzor region) communicating about the

construction of this large structure. The Armenian inscription is carved in the lobby of the caravanserai (Barkhudaryan, 1967:180-181), while the Arabic-Persian now completely weathered and erased on the entrance (Alishan, 1893: 164) (Picture 5). The Persian words used were خان ('caravanserai'), preposition در while the words دولة is written with Persian orthography as دولت .



Picture 5


The increasing influence of the Persian languages is also felt in using یت instead of ۃ (ta marbuta) and sometimes ز instead of ض . Thus, e.g. in medieval Muslim tombstones of Vorotnavan (formerly Vorotn or Urut, Sisian subregion), we meet ریزمان instead of رمضان [Khachatryan, 1987:68 No58 (1), use of Persian prepositions, as

از مرض جدی [died of...] “a skin decease” on a tombstone of the 17th century [Khachatryan, 1987:68 No 79(22)].

Among the so far discovered Persian inscriptions there is one remarkable made along with an Armenian and Arabic ones, fixed in a flat stone slab installed in the southern part of the Armenian cemetery near St. Nshan Chuch in Yeghegis (Vayots Dzor region), usually referred to as the three-language inscription (Khachatryan, 1987: 67 No 56(1); Khachatryan, 1982).

It is the epitaph of Tawakkal, a Christian Armenian doctor, member of *akhi* medieval craft guild (Khachatryan, 1982: 127-131).

The Persian inscription is as follows (Picture 5 & 6):




Picture 6

Translation:


1. In gratitude, Egypt and Rum and China will be yours
2. Whatever will be³

³ This is probably a paraphrasing of Mashati Ganjavi's ruba'i. <https://ganjoor.net/mahsati/robmah/sh46>



Picture 7

The Persian language is used on the Agarakadzor bridge inscription made on a stone slab, the beginning of which to all probability was made on the right-side slab that is in completely erased state now (Mikayelyan, 2019-2) (Picture 8).



Picture 8

The inscription consists of three lines: As mentioned the surrounding slabs are damaged and generally the inscription is difficult to read:

The inscription is as follows:

- 1 [...] سنه صد و هف[تاد] ?
- 2 [...] دو سال [..!]
- 3 صاحبه مرک/س[...]

Translation:

- 1 [...] year? hundred and seventy
- 2 [...] two year
- 3 Owner [implementer] Mark/s [...]

The inscription is extraordinary because Persian numerals are used instead of Arabic ones as practiced in Islamic constructional and in medieval epitaphic writing. In our opinion the inscription informs about the rehabilitation of the bridge in 1172 of Hijra or 1758. Another interesting occurrence is that letters 'fa', dot over it and 'mim' were carved by using a round mold (Mikayelyan, 2019-2: 338-348).

Another inscription on a formless stone put in high-altitude pasture at a distance of a few kilometers from the village of Lernarot in the north-western Aragatsotn informs about founding a channel in 1858 (Mikayelyan, 2007) (Picture 9). Using of the Persian language by local Muslims thirty years after conquering of

Eastern Armenia by Russia (1828) indicates that Persian still remained a practicable language among them.



Picture 9

Inscription:

1. ۱۲۷۴
2. سنه سالم
3. نهري

Translation:

1. 1274 [of] Hijra [1858 A.D.]
2. Year [....]
3. Channel

It should be noted that the museums of Armenia in their turn also display objects dating to late medieval period of the 19th century (seals, amulets, vessels) containing Persian inscriptions some of which have been excavated in the recent years.

Thus the Regional Museum of Yeghegnadzor preserves a ring containing the name 'Sa'dabad' (a settlement in Iran) (Picture 10). A blue-coated plate-vase was excavated in 2021 from Yerevan's Children's Garden illustrating Fat'h-Ali Shah Qajar's (1772–1834) coat of arms⁴.



Picture 10

Summarizing, it can be noted that the Persian has been important increasingly important language of Islamic epigraphy in Eastern Armenia from the 12th century onwards, its positions are especially strengthened in the late Middle Ages, when the Persian

⁴ Archaeologist Meri Safaryan of Scientific Research Center of the Historical and Cultural Heritage of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia presented this plate in her report titled 'New Historical and Cultural Layers in Yerevan's Children's Park' on 16 March 2022 at 'Historical and Cultural Heritage of Yerevan' scientific conference held on 16-17 March, 2022. A verbal information.

language become the written language of important official communication: e.g. the sharia notarial documents are written in Persian (Kostikyan-Khecho, 2018: 33), despite the nomad and settled Turkic tribes of Armenia spoke dialects of Oghuz Turkic. Inscriptions or epitaphs started including Persian phrases or words. Eastern Armenia passed under the control of the Turkic-speaking mostly Shiite tribes that the Iranian state used them as a military against Ottoman Empire and Russia. They have been under the strong influence of the Iranian culture, therefore the Persian language meant a language of Shiite civilization for them.

Until the 1920s, the Turkic-speaking element that penetrated Eastern Armenia, which later received the name 'Azeris' or 'Azerbaijanis', had a weak national self-consciousness and were under the strong influence of the Iranian culture as already said. Persian being the language of Shia Islam and a country with powerful and distinguished culture - Iran therefore enjoyed prestige among them for very long time.

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
 ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
 գիտաշխատող
 էլ. փոստ՝ mtigran2002@yahoo.com

ՊԱՐՄԿԵՐԵԼԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՎԻՍԱԳԻՐ
 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒ

Հայաստանի տարածք VIII-XIX դդ. ներթափանցած տարբեր մուսուլման հարստությունների, ցեղախմբերի ներկայացուցիչների հետքերը հանդիսացող արաբատառ վիմագիր արձանագրությունների շարքում (որոնց ճնշող մեծամասնությունը արաբերեն են) կան

նան պարսկերեն արձնագրություններ: Դրանցից ամենահները Գառնու տաճարի վրա արված գրաֆիտիներն են. ամբողջությամբ պարսկերեն Թավրիզի Բահրամ քարտաշի *նասիս*, ինչպես նաև Նուշիրվանի քուֆի գրատեսակով արված գրությունները (ըստ՝ Ա. Խաչատրյանի վերջինս թվագրվում է IX-X դդ.-ով): Նուշիրվանի գրությունը արաբերեն է, սակայն պարունակում է պարսկերեն մեկ բառ:

Ավելի ուշ շրջանին է պատկանում Բջնիի ամրոցի միջնաբերդից գտնված XII դ. երկրորդ կեսով թվագրվող արձանագրությունը:

Արաբերեն (կամ պարսկերեն բառեր պարունակող արաբերեն) արձանագրությունները արվել են նաև հայ իշխանական տների ներկայացուցիչների կողմից իրենց կառուցած տարանցիկ նշանակություն ունեցող շինությունների վրա: Այսպես, օրինակ, արաբերեն բառերի պարսկերեն ուղղագրությամբ և պարսկերեն որոշ բառերի օգտագործմամբ է փորագրվել Սուլեմա կամ Սելիմի քարվանսարայի Օրբեյանների հանրահայտ արձնագրությունը (XIV դ.): Քարվանսարան հայերեն արձանագրությունը փորագրված է նախասրահում, մինչդեռ արաբերեն-պարսկերենը՝ մուտքի վրա:

Պարսից լեզվով է արված նաև Ագարակաձորի կամրջի սալիկներից մեկի վրա (մեր կարծիքով վերանորոգման առիթով և XVIII դ.-ի թվագրվող) խիստ վնասված արձնանագրությունը: Լեռնարոտ գյուղի մերձակա բարձրադիր արոտավայրում հայտնաբերված 1858 թվականի ջրանցքի հիմնադրման մասին արձնագրությունը իր հերթին վկայում է, որ Ռուսաստանի կողմից Արևելյան Հայաստանի նվաճումից երեսուն տարի անց տեղի մուսուլմանների համար՝ անկախ ազգային պատկանելության պարսկերենը շարունակել է հեղինակակափոր լեզու մնալ:

Առանձնապես հետաքրքիր է Եղեգիսի Սբ. Նշան եկեղեցու գերեզմանատան հարավային մասում հարթ քարի մեջ ամրացված երեք մարմառե սալիկների վրա եռակգու արձանագրությունը (արաբերեն, պրսկերեն և հայերեն). Պարսկերենը, ըստ երևույթին, իրենից ներկայացնում է Մասհատի Գանջավի ռուբաիի նմանակով: Պարսկերեն արձանագրություններ պարունակող կամ Իրանից բերված առարկաներ՝ անոթներ, կնիքներ կարելի է հանդիպել հա-

յաստանյան երկրագիտական թանգարաններում, կամ վերջին տարիներին պեղումներից գտնված գտածոների շարքում:

Այսպես, օրինակ, Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում պահպանվում է Սադաբադ (բնակավայր Իրանում) գրությամբ մատանին կամ 2021 թ. Երևանի մանկական այգու պեղումների ժամանակ գտնված Ղաջարյան հարստության Ֆաթհ-Ալի Շահի զինանշանով ափսեն:

BIBLIOGRAPHY

1. Alishan 1893 – Alishan, Gh., Sisakan, Venice, 1893 (in Armenian).
2. Barkhudaryan 1967 – Barkhudaryan, S., Corpus Inscriptionum Armenicarum, Liber III, Yerevan, 1967 (in Armenian).
3. Khachatryan 1982 – Хачатрян А., Трехъязычная надпись из Елегиса, Кавказ и Византия, выпуск 3, 1982, Ереван, 124-134.
4. Khachatryan 1987 – Хачатрян А., Корпус арабских надписей Армении, Ереван, 1987 (Khachatryan, A., The Corpus of Arabic Inscriptions of Armenia, Yerevan, 1987 (in Russian).
5. Kostikyan-Khecho 2018 – Persian Documents of the Matenadaran, Shari'a Notarial Documents (XVII-XVIII cc.), prepared by Kostikyan, K., Khecho, M., Yerevan, 2018 (in Armenian).
6. Mikayelyan 2019-1 – Mikayelyan, T., The Newly Discovered Persian Inscription of the XII century in the Fortress of Bjni, The Countries and Peoples of the Near and Middle East, Volume XXXII, Part I, 2019, 324-332 (in Armenian).
7. Mikayelyan 2019-2 – Mikayelyan, T., The Persian Inscription of Agarakadzor Bridge, The Countries and Peoples of the Near and Middle East, Volume XXXII, Part II, 2019, 338-348 (in Armenian).
8. Mikayelyan 2007 – A Persian Inscription Relating to A Channel Near Lernarot Village, Aragatsotn Marz of Armenia, The Countries and Peoples of the Near and Middle East, Volume XXVI, 2007, 279-282 (in Armenian).

ԻՎԵԹ ԹԱԶԱՐՅԱՆ, ա.գ.թ.

*ՄՄ անվան հին ձեռագրերի գիտահետազոտական
ինստիտուտ, Մատենադարան, Արևելագիտության
բաժնի ավագ գիտաշխատող
ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության
ամբիոնի դոցենտ,*

Էլ. փոստ՝ yvettetaj@yahoo.com

DOI: 10.56813/2953-786X-2022.2-334

ԱՆՎԱՆԻ ՀԱՅԵՐԸ ՂԱԶԱՐԱԿԱՆ ԻՐԱՆՈՒՄ

Պատմական տարբեր իրադարձությունների հետևանքով ու ճակատագրի բերումով հայագրի բազմաթիվ արվեստագետներ ապրել և ստեղծագործել են աշխարհի տարբեր երկրներում: Հայ գաղթականության պատմությունը, լինելով հայ ժողովրդի պատմության բաղկացուցիչ մասը, եղել է և կա հայ և օտար պատմաբանների, հայագետների ուսումնասիրության առարկաներից մեկը: Հայերը կամա թե ակամա իրենց մասնագիտությամբ, արհեստով կամ արվեստով բազմիցս նպաստել են հենց այդ երկրների մշակույթի զարգացմանը:

Հաստատվելով Մպահանում՝ հայերը մեծ դեր ունեցան Իրանի շենացման գործում: Քաղաքականության, արվեստի, գիտության, երաժշտության, կինոյի, գեղանկարչության, թատրոնի և լուսանկարչության բնագավառներում, գրատպության, արդյունաբերության ու ճարտարապետության ոլորտներում իրանահայերի և մանավանդ՝ նորջուղայեցիների անունները դասվում են Իրանի առաջավոր գործիչների շարքին: Այս գործընթացը շարունակվեց նաև Ղաջարական Իրանում (Թաջա-

րյան, 2021, էջ 13)¹: Բազմաթիվ պատմաբաններ լայնորեն ուսումնասիրել են Ղաջարական Իրանի պատմությունը: Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր Ղաջար իշխանության վերաբերյալ գնահատականը միշտ չէ, որ միանշանակ է տրվել:

Ղաջարների կառավարման ժամանակ՝ հատկապես թագավոր Աբբաս Միրզայի² օրոք, արևմտյան հասարակությունը սկսեց մեծ հետաքրքրություն ցուցաբերել Մերձավոր Արևելքի՝ այդ թվում նաև Իրանի նկատմամբ: Աշխարհը Արևելքը դիտում էր որպես սկիզբների սկիզբ: Գայթակղված Արևելքի խորհրդավորությամբ՝ երիտասարդ Եվրոպան ջանում էր փախուստի դիմել իրական ժամանակից ու հաղորդակցվել այն ուղուն, որը տանում է դեպի վաղնջական քաղաքակրթությունների խորքը: Արևմուտքի կողմից Իրանին ուշադրություն դարձնելը պայմանավորված էր նաև մեկ այլ հանգամանքով. Արևմուտքը փնտրում էր նոր շուկաներ, որոնցից մեկը, թերևս, Իրանն էր, որի նկատմամբ հետաքրքրությունը աճեց հատկապես Ղաջար հարստության (1785-1925 թթ.) թագավոր Նասեր էդ-Ղին շահի (1848-1896 թթ.) իշխանության օրոք (Մալեքզադե, 1328, էջ 25-33): Իրանահայ գաղութի իրավիճակը սկսվեց բարելավել սկզբում Աբբաս Միրզայի, իսկ հետո՝ հատկապես Նասեր էդ-Ղին շահի ժամանակ:

¹ Ղաջարական հարստության հիմնադիրն է Աղա Մուհամմեդ Խանը (1794-1797 թթ.): Հաջորդաբար իշխել են Ֆաթի Ալի շահը (1797-1834 թթ.), Մուհամմեդ շահը (1834-1848 թթ.), Նասեր էդ-Ղին շահը (1848-1896 թթ.), Մուզաֆեր էդ-Ղին շահը (1896-1907 թթ.), Մուհամմեդ Ալի շահը (1907-1909 թթ.) և վերջապես Ահմեդ շահը (1909-1925 թթ.):

² Աբբաս Միրզան (1789-1833 թթ.) Ֆաթի Ալի շահի որդին էր: Նա պետական և ռազմական գործիչ էր, որ գլխավորելով Իրանի ներքին և արտաքին քաղաքականությունը ձգտում էր ուժեղ կենտրոնացված պետություն ստեղծել:

Նա շուրջ 50 տարի եղել է պալատական ակնագործ և ստացել պատվո բազմաթիվ շքանշաններ: Նրա ամենահայտնի աշխատանքը գոհարակուտ երկրագունդն է, որը պատրաստվել է 1875 թ. Նասեր էդ-Դին շահի կարգադրությամբ¹⁹: Ներկայումս այն համարվում է Իրանի ազգային հարստությունը և պահվում է ԻԻՀ կենտրոնական բանկի Գոհարեղենի թանգարանում: Ծերունի Մասեհյանի որդին՝ Հովհաննես խան Մասեհյանը (1864-1931 թթ.), քաղաքական գործիչ, դիվանագետ, հրապարակախոս և թարգմանիչ էր (Լազարյան, 2012, էջ 73-74)²⁰: Նրա պետական տիտղոսներն են եղել «Մոսաեղոլսալթանե» և «Էմադոլվոզարա»: Մեծ է Մասեհյանի դերը նաև պարսկական դպրոցների հիմնադրման և ընդարձակման գործում: Հովհաննեսը կրթություն է ստացել Թեհրանում, այնուհետև 1881 թ. ընդունվել «Փարիզի Քոլեջ դե Ֆրանսը», որը գերազանցությամբ ավարտում է 1884 թ. փիլիսոփայություն, իրավագիտություն, քաղաքատնտեսություն և գրականություն մասնագիտացմամբ: Իրան վերադառնալուց հետո որպես թարգմանիչ սկսել է աշխատել Իրանի արտաքին գործերի նախարարությունում: Որպես Նասեր էդ-Դին շահի պատվիրակության ավագ թարգմանիչ 1887 թ. գործուղվել է մասնակցել Վիկտորիա թագուհու գահակալության 50-ամյա հոբելյանա-

¹⁹ Երկրագունդի տրամագիծը մոտ 66 սմ է, բարձրությունը՝ 110 սմ: Պատրաստվել է 34 կգ բարձր հարգի ոսկուց, որի մակերեսը ամբողջությամբ ծածկված է թանկարժեք քարերով: Մայրցամաքները, օվկիանոսները, ծովերը, անապատները, երկրների սահմանները և աշխարհագրական յուրաքանչյուր հատված առանձնանում է թանկարժեք քարի տեսակով:

²⁰ Հովհաննես խան Մասեհյանի հայրը եղել է անվանի ոսկերիչ Ծերունի Մասեհյանը, իսկ մայրը՝ Աննա Երվանդյանը, Մոզաֆար էդ-Դին Միրզայի ֆրանսերեն լեզվի ուսուցիչը:

կան արարողությանը, իսկ 1897 թ.՝ Մոզաֆար էդ-Դին շահի կողմից գործուղվել է Լոնդոն շնորհավորելու Վիկտորիա թագուհու ծննդյան 80-ամյակն ու գահակալության 60-ամյակը: 1912 թ. Մասեհյանը եղել է Իրանի դեսպանը Գերմանիայում (1912-1916 թթ. և 1921-1927 թթ.), Մեծ Բրիտանիայում (1927-1929 թթ.) և Ճապոնիայում (1930-31 թթ.): Հովհաննես Խան Մասեհյանը տիրապետել է հայերեն, պարսկերեն, թուրքերեն, հունարեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն և ռուսերեն լեզուներին: Դեռևս պալատական թարգմանիչ եղած տարիներին թարգմանել է Ալեքսանդր Դյումայի, Գյոթեի, Բայրոնի, Հայնեի, Օմար-Խայյամի, Տագորի և Շեքսպիրի գործերը²¹: Ըստ Գևորգ Էմինի՝ Մասեհյանի թարգմանությունները «գերազանց են» և «հրաշալի են հնչում հայերենով» (Էմին, 1974, էջ 211):

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին երկրում տեղի ունեցած սահմանադրական շարժմանը գործուն մասնակցություն են ունեցել իրանահայերը: Այս առումով կարևոր է հիշել 1905 թվականի հայտնի գործիչներից մեկին՝ Եփրեմ խան Դավթյանին (հայտնի նաև Եփրեմ խան Արմանի անունով, 1868-1912 թթ.): Իրանական պատմագրությունը Եփրեմ խանին բնութագրում է որպես առաջադեմ բուրժուադեմոկրատական գործիչ և նրան համարում ժողովրդական հերոս (Լազարյան, 2012, էջ 155-156)²²: Եփրեմ խանի համախոհներից էր Պետրոս Մելիք Անդրեասյանը (հայտնի որպես Պետրոս խան): Սահմանադրական շարժման առաջին օրերին համախմբելով իրանահայ հայրենասեր երիտասարդներին՝ միանում է Եփրեմ խանի ուժերին: Իրանի Գոհարեղենի թանգարանն իր գոյությամբ

²¹ Ավելին տե՛ս Իրանահայ հանրահայտ գործիչներ (38) - Pars Today դիտման օր (19.12.2021)

²² Եփրեմ խանը մասնակցել է ավելի քան 60 խոշոր և փոքր մարտերի:

պարտական է Պետրոս խանին: Բանն այն է, որ Սահմանադրական շարժման օրերին Եփրեմ խանը Պետրոս խանին հանձնարարում է թալանից ու կողոպուտից պահպանել թագավորական հարստությունն ու թանկարժեք քարերը, որն էլ գերագանց կերպով է կատարում իրեն տրված առաջադրանքը (Լազարյան, 2012, էջ 154)²³:

Իրանահայ գաղութի և ընդհանրապես Իրանի 19-րդ դարի մշակույթի պատմության մասին խոսելիս չենք կարող անտեսել Հակոբ Հովնաթանյանին: Ըստ Մանյա Ղազարյանի և նկարչի ժառանգների տեղեկությունների՝ Հակոբը Պարսկաստան է ներգաղթել 1866-1867 թթ.: Սկզբնական շրջանում ապրել ու ստեղծագործել է Թավրիզում, հետագայում տեղափոխվել է Թեհրան: 1860-ական թթ. Իրան տեղափոխվելու և այնտեղ հաստատվելու պատճառն այն էր, որ Թիֆլիսում լուսանկարչության զարգացումը նպաստում է դիմանկարչի պատվերների նվազմանը: Պալատական հմուտ դիմանկարիչ Մանի օլ-Մոլլի (1814-1866 թթ.) մահից հետո Հակոբ Հովնաթանյանը մուտք է գործում դաջարական արքունիք՝ դառնալով արքունական նկարիչ: Ըստ Մանյա Ղազարյանի ուսումնասիրությունների՝ Հակոբ Հովնաթանյանը Իրանում ինը աշխատանք է ստեղծել: Նասեր էդ-Դին շահը նկարչին շնորհել է «Նաղաշ բաշի» (Նկարիչների գլխավոր) տիտղոսը, ինչպես նաև «Էլմի» (Գիտություն) շքանշանը:

Հակոբ Հովնաթանյանի թավրիզյան շրջանի առաջին աշխատանքներից է Իմամ Ալիի դիմանկարը, որից էլ, ըստ Մանյա Ղազարյանի, «հետագայում արտանկարել են պետական

²³ Աբրահամ խան Բախթիարին և գնդապետ Գրիշ խան Դանիելյանը ընդգրկված են եղել Եփրեմ խանի հեղափոխական խմբի կազմում:

շքանշանի վրա» (Դազարյան, 1974, էջ 228): Նկարիչը նկարել է նաև Նասեր էդ-Դին շահին և Մոզաֆեր էդ-Դին շահին (Դազարյան, 1974, էջ 236-237): Նկարիչը Իրանում ստեղծած մեկ այլ աշխատանքում նույնպես անդրադարձել է հասակով մեկ կանգնած Նասեր էդ-Դին շահին, որի մի ձեռքին հեռադիտակ է, իսկ մյուսը դրված է գոտկատեղին՝ թնդանոթին թիկնած: Կտավը, որը իր չափսերով նույնպես մեծ է, պահվում է Վիեննայի Բելվեդերյան թանգարանում (Թաջարյան, 2022, էջ 157-158)²⁴:

1881-1882 թթ. Իրանում հիմնադրվեց առաջին թատերասահը: Սկզբնական շրջանում բեմ էին բարձրանում միայն հայ դերասանները, սակայն հետագայում Հարություն Մարտիրոսյանի և մի խումբ թատերասերների (վերջինս աշխատում էին Սպահանի թատրոնում) ջանքերով «Իրան ջավան» («Երիտասարդ Իրան») թատերական խմբի և Արտո Տերյանի ղեկավարությամբ բեմադրեցին առաջին համատեղ ներկայացումը: Պարսկական գեղարվեստական ֆիլմում նկարահանված առաջին դերասանուհին նույնպես հայազգի Ասիա Կոստանյանն է եղել, որ նկարահանվել է «Հաջի աղան կինոյի դերասան» կինոնկարում: Ասյա Կոստանյանը նկարահանվել էր սան «Աբի Ռաբի» ֆիլմում, որի սցենարիստը Ավանես Օզանյանցն է » (Լազարյան, 2012, էջ 353-354):

²⁴ Վիեննայի Բելվեդերյան թանգարանում 2021 թ. սեպտեմբեր 9-ից մինչև 2022 թ. մարտ 27-ը «IN-SIGHT» ցուցահանդեսների շարքի ներքո ցուցադրվեց Հակոբ Հովնաթանյանի, Բադեն Սալեի և Օսման Համդի Բեյի ստեղծագործություններից մեկական կտավ: Այս շարքն անցկացվում է տարեկան երեք անգամ և կենտրոնանում է սեփական թանգարանի Բելվեդերի հավաքածուի եզակի օրինակների վրա: Հակոբ Հովնաթանյանին պատկանող որոշ ստեղծագործությունների հետ միասին, վերը նշված աշխատանքը նկարագրվել է ներթարկվել են արվեստաբանական վերլուծության:

Իրանահայերը 1808 թվականին վարպետ Հարությունի գլխավորությամբ կառուցեցին Թեհրանի հայկական առաջին եկեղեցին, որը Թադեոս-Բարդուղեմեոս կոչվեց: Եկեղեցին գտնվում է Հազրաթ շուկայում և Մշակութային ժառանգություն կազմակերպության կողմից գրանցվել և հովանավորվում է որպես մշակութային հուշարձան (Լազարյան, 2012, էջ 277): Հայ ճարտարապետներից առավել մեծ համբավ են վայելել Մարգար Գալստյանը (Էլզալ): Անվանի ճարտարապետը իր բարձրագույն կրթությունը ստացել էր Լոնդոնի թագավորական քոլեջի ճարտարապետության բաժնում: Նրա նախագծով կառուցված առաջին երևելի շինությունը Թեհրանի կենտրոնական փոստատան շենքն է: Էլզալը կառուցել է նավթային ընկերության մի շարք կառույցներ, Թեհրանի արտաքին գործերի նախարարության շենքը, ինչի համար արժանացել է պատվո շքանշանի (Լազարյան, 2012, էջ 239):

Իրանահայերը, մեծ դերակատարություն են ունեցել և այժմ էլ շոշափելի դեր ունեն երկրի շինարարական ոլորտում՝ տարբեր ժամանակներում Իրանի տարբեր քաղաքներում կառուցելով բազմաթիվ պետական, հասարակական կառույցներ, բնակելի շենքեր:

Բժշկության ասպարեզում արժանահիշատակ է Դավիթ Մկրտչյան-Դավիդյանցը նույն ինքը՝ Հեթիմ Դավուդ խան արմանին կամ Դավուդ խան մասիհին: Նա 1805 թ. մեկնել է Հնդկաստան՝ բժշկական կրթություն ստանալու: 1812 թվականին ավարտում է Կալկաթայի բժշկական քոլեջը և աշխատանքի անցնում անգլիական բանակում: Դավուդ խանը խուլերա հիվանդության մասին իր լայնածավալ հետազոտություններով հանդես է եկել Փարիզում և Անգլիայում: Բազմաթիվ երկրներում փորձ ձեռք բերելուց հետո վերադառնում է Իրան և դառ-

նում Ղաջարական պալատական հատուկ բժիշկ: Դավուդ խանը որպես Միրզա Թադի խան Ամիր քաբիրի ներկայացուցիչ մեկնել է Ավստրիա ռազմական աշխատանքի և հարակից հարցերի ոլորտում յոթ գիտնականների գտնելու և Դար օլ ֆոնոնում ֆիզիկա, քիմիա և դեղագործություն դասավանդելու նպատակով: Այսպիսով, Իրան հրավիրվեցին 7 մասնագետներ և դարձան Դար օլ ֆոնոն համալսարանի առաջին դասախոսները: Դավուդ խանի որդին՝ Հովնանը, հայտնի որպես «Հովնան խան», նույնպես հայտնի բժիշկ էր և ծառայում էր ղաջար թագավորների համար (Լազարյան, 2012, էջ 245-247):

Բժշկությունից կրկին անցում կատարելով արվեստին՝ պետք է նշել կարևոր իրադարձության մասին: Իրանում լուսակարչությունը մուտք է գործում ղաջարների կառավարման ժամանակահատվածում: Լուսանկարչությունը դառնում է ղաջար թագավորների՝ հատկապես արվեստասեր թագավոր Նասեր էդ-Դին շահի կենցաղի բաղկացուցիչ տարրերից մեկը: Իրանում մեծ հեղինակություն է վայելում ծագումով հայ Անթրուզիանի լուսանկարները: Սևրուզինը դարձավ քաղաքի Նասեր էդ-Դին շահի անձնական, պալատական լուսահանդեսի կենտրոնը: Առօրյա կյանքում, ճանապարհորդությունների, ծիսական արարողությունների ընթացքում, հասարակական և պալատական կարևոր իրադարձությունների ժամանակ Սևրուզինը վավերացրեց Ղաջարական Իրանը՝ պարզ, անմիջական և բնական գրավչությամբ: Լուսանկարիչը իր արժանի վաստակի համար թագավորի կողմից «Խան» տիտղոսի հետ

միասին պարզատրվեց նաև «Շիր օ խորշիդ» աղամանդակուռ շքանշանով²⁵:

Ժամանակի սղության պատճառով այստեղ մի շարք անձանց անուններ չեն նշվել: Անշուշտ, այսքանով հանդերձ կարող ենք պնդել, որ իրանահայերը իրենց ավանդն են ունեցել Իրանի և մի շարք այլ պետությունների միջև անգնահատելի հարաբերությունների հաստատման գործում:

Այսպիսով, իրանահայ համայնքի պատմությունը մեր ժողովրդի ու երկրի պատմության էական մասերից է: Այդ պատմության կերտողները, դարեր շարունակ օտար միջավայրում իրենց արմատներին հավատարիմ մնալով, իրանցիների շրջանում ձեռք են բերել վստահելի, շիտակ, նվիրված և հայրենասեր քաղաքացիների համբավ, որը կրում է շարունակական բնույթ:

YVETTE TAJARIAN, PhD in art history

Art Historian Senior researcher at the Department of Oriental studies at The Mesrop Mashtots Institute of Ancient Manuscript, The Matenadaran. Associate professor, Chair of History and Theory of Armenian Art, YSU
e-mail: yvettetaj@yahoo.com

FAMOUS ARMENIANS IN QAJAR IRAN

The significance of the Qajar dynasty in the modern history of Iran has been widely studied in historiography. The assessment of that dynasty

²⁵ Եթե Սիրիայում ու Բեյրութում երաշխավորում էին ձեռք բերել Ֆելիքս Բոնֆիսի (1831-1885 թթ.), Եգիպտոսում՝ Լուկսորում Անտոնի Բետոնի (1825-1903 թթ.), Կոստանդնուպոլսում՝ Աբդուլահյան եղբայրների (Վիլչենը (1820-1902 թթ.), Հովսեփը (1830-1908 թթ.) և Գևորգը (1839-1918 թթ.)) կամ Պասալ Սեպահի (մահացել է 1890 թ.), ապա Իրանում մեծ հեղինակություն էին վայելում Անթուան Սևրուգինի լուսանկարները:

has not always been unequivocal. It was characterized as a flourishing period on the one hand, and a period of decline on the other.

During the Qajar Dynasty, the Iranian Armenians made immense contribution towards the development of Iran's economy and arts. They were also able to make obvious advancements in the social and political life of the country receiving high-ranking positions.


In this regard, Mirza Melkum khan's (Hovsep Melkumyan 1834-1908) activities are worth mentioning. He was a diplomat, writer, and publicist in Iran. Another significant figure was Tseruni Masehyan (Ibrahim Zargarbashi or goldsmith Ibrahim). He used to serve as a palace goldsmith for fifty years and received a number of medals. His most famous work is the "Globe of Jewels" made by the order of Naser al-Din shah in 1875. Among other well-known figures were Hovhannes khan Masehyan (1864-1931, an official, diplomat, writer, and interpreter) and Set khan (Astvatsatur or Tsatur, Ambassador of Iran in London). His son, Lieutenant General was the spouse of Hakob Hovnatanyan's daughter Nune. Of course we have to mention Antoin Sewruguin, who captured this period with photos. Antoine Sevruguin belongs to the generation of those rare photographers who introduced the artistic photography to the court of Naser ed-Din Shah in the second half of the 19th century.

One of the famous activists of the Persian Revolution of 1905 was Yeprem khan Davidian (1868-1912). In Iranian history Yeprem khan is mentioned as a progressive bourgeois-democratic leader and is considered a national hero.


The above-mentioned individuals, along with many others, come to prove that Armenians played a significant role in forming Iran's social, political, and cultural life back then. The famous Armenian people life and activities are an inseparable part of the history and culture of Iran, which is also a witness to the contribution of Armenians to Iranian culture.

Հավելվածներ

Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան,
թղթ. 1ե, վավ. 633, բնագիր, Մեծ. 36 x 50.5 սմ



Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան,
թղթ. 4, վավ. 144, բնագիր, Մեծ. 30 x 41.5 սմ




Միրզա Մելքոն խան (Հովսեփ Մելքոնյան 1834-1908 թթ.)



Օերունի Մասեհյանի նույն ինքը Իրրահիմ Ջարգարբաշի կամ ոսկերիչ Իրրահիմի և իր խմբի պատրաստած գոհարակուտ երկրագունդը:

Նասեր էդ-Դին շահը և Օերունի Մասեհյանի կողմից պատրաստված գոհարակուտ երկրագունդը:



Հովհաննես խան Մասեհյան (1864-1931 թթ.)



Եփրեմ խան Դավթյան (հայտի որպես Եփրեմ խան Արմանի 1868-1912 թթ.)



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բայբուրդյան Վ., *Իրանի պատմություն*, Երևան, 2006:
2. Գորոյանց Ն., *Պարսկաստանի հայերը*, Թեհրան, 1968:
3. Եզանյան Հ. Ս., *Հասարակական-քաղաքական հոսանքները Իրանում 19-րդ դարի վերջին- 20-րդ դարի սկզբին*, Երևան, 1966:
4. Էմին Գ., *«Յոթ երգ Հայաստանի մասին»*, Երևան, 1974:
5. Թաթարաբայի Մոհիթ, Մ., *«Մաջմունե ասարե Միրզա Մելքոն խան»*, Թեհրան, 1327 (պարսկ.):
6. Թաջարյան Ի., *Մատենադարանի Ղաջարական արվեստի նմուշները*, Երևան, 2021:
7. Թաջարյան Ի., *«Ղաջարական գեղանկարչական ավանդույթների արտացոլանքը Հակոբ Հովնաթանյանի արվեստում»*, Բանբեր հայագիտության, Երևան, 2022:
8. Լազարյան Ժ., *Իրանահայոց հանրագիտարան*, Երևան, 2012:
9. Կոստիկյան Բ., *Մատենադարանի պարսկերեն հրովարտակները*, Երևան, 2021:
10. Հաղդար, Ա., *Նամեհայե Միրզա Մելքոն խան Նազեմ օլ-Դոլե, «Միրզա Մելքոն խան Նազեմ օլ-Դոլեի նամակները»*, Թեհրան, 1396 (պարսկ.):

11. Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Երևան, 1974:

12. Մալքեթյան Մ., Թարիխն Էնդելարե Մաշրությաթե Իրան, «Իրանի սահմանադրության հեղափոխության պատմությունը», Թեհրան, 1328 (պարսկ.):

13. Բային, Ի., Միրզա մելքոմ խան, Թեհրան, 1353, երկրորդ հրատ. (պարսկ.):

14. Yarshater E., Observations on Nasir al-Din Shah, Qajar Iran: Political, Social and cultural Change, 1800-1925. Edinburg, 1983.

ԱՆԱՀԻՏ ՅԱՀՅԱՄԱՍԻՀԻ, Բ.Գ.Թ.

էլ. փոստ՝ ayahyamasihi@yahoo.com

DOI: 10.56813/2953-786X-2022.2-355

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՎԱՆՔԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԻՐԱՆՈՒՄ
(ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ)

Տարագրված հայերը դարերի ընթացքում Իրանում, շնորհիվ իրենց կենսունակության, աստիճանաբար վերաճում են կազմակերպված համայնքների և ամեն կերպ պահպանում իրենց ազգային ինքնությունը, լեզուն, դավանանքը, հայրենիքից ժառանգած ավանդույթներն ու բազմազան արվեստը և ամենից կարևորը՝ ձուլման չենթարկվելը: Անշուշտ, այս գործընթացում Հայ առաքելական եկեղեցին ունեցել է իր անգնահատելի ներդրումը:

Իրանահայերի հոգևոր-հասարակական կյանքը կենտրոնացված է Ատրպատականի, Սպահանի կամ Իրանա-Հնդկաստանի և Թեհրանի թեմերում:

1833 թ. կազմակերպվել է Ատրպատականի թեմը, որը ղեկավարել է հյուսիսային շրջաններում բնակվող հայերի հոգևոր-հասարակական գործերը: Սա իրանահայության հնագույն թեմն է, և դրա մասին դեռևս XII դարից հիշատակություններ կան: Այս թեմի նախկին կենտրոնը եղել է Ս. Թադեոս Սոաքյալի վանքը, և Թուրքմենչայի պայմանագրից հետո (1828 թ.) տեղափոխվել է Թավրիզ: «Ատրպատականի թեմը, իհարկե ոչ ներկայիս տարածքով ու վիճակով եղել է հնուց ի վեր, երբ մաս է կազմել պատմական Հայաստանին կամ Ռուսաստանին, որի առաջնորդները նստել են Ս. Թադեոս Առաքեալի

պանման պետական հիմնարկության ջանքերի և հոգածության շնորհիվ աշխատանքներ են տարվում հայկական բոլոր եկեղեցիների և հուշարձանների կանգուն մնալու և պահպանման գործում:

Ատրպատականի թեմի հայոց եկեղեցիներ: Պատմական ու հայկական ճարտարապետական արժեք ներկայացնող կոթողներից բացի, շուրջ երկու հարյուր կանգուն, կիսականգուն և խոնարհված եկեղեցիներ ցրված են թեմի տարբեր շրջաններում: Ատրպատականի գործող եկեղեցիները՝ Թավրիզում չորս՝ Ս. Մարիամ Աստվածածին (1782 թ.), Ս. Մարիամ Աստվածածին ուխտավայր մատուռ (1965 թ.), Ս. Մարգիս (1750 թ.) և Ս. Շողակաթ մատուռ (1940 թ.), Ուրմիայում՝ Ս. Ստեփանոս եկեղեցի (2002 թ.): Թավրիզի շրջակայքում պահպանվում են ևս տասներկու կանգուն եկեղեցիներ: Ատրպատական նահանգի Արասբարան, Արդաբիլ, Ուրմիա, Խոյ, Մակու քաղաքներում և Մալմաստ գավառում գոյություն ունեն տասնյակ կանգուն, կիսականգուն և խոնարհված եկեղեցիներ: Կանգուն վիճակում գտնվող եկեղեցիները թեմի հսկողության և խնամքի ներքո են, իսկ ԻԻՀ-ի Մշակութային Ժառանգության և նրան կից կազմակերպության ջանքերով և աշխատանքով հոգատար վերաբերմունք է դրսևորվում կոթողների, առավել ևս վանքերի նկատմամբ: Հյուսիսային կամ Թավրիզի թեմի տարածքում գտնվում են ճարտարապետական մեծարժեք հուշարձաններ, ինչպես Մուրբ Թադեոս Առաքյալի (Ս. Թադեի) վանքը, Մուրբ Ստեփանոս Նախավկայի և այլ վանքեր, որոնց կանդրադառնանք ավելի ուշ:

Սպահանի թեմի հայոց եկեղեցիներ: Գաղթականության առաջին տարին՝ Նոր Ջուղայի հիմնադրվելուց հետո, տարագրված հայերը, հանուն Հին Ջուղայում ունեցած իրենց

Ամենափրկիչ վանքի, առաջինը կառուցեցին մի փոքրիկ վանք (1606 թ.), որը դարձավ իրանահայության եկեղեցիների փառքն ու շուրբ: Շահը տարագրվածներին իր հողին ավելի ամրացնելու համար «հրամայեց որ ամեն տեղ, թե՛ քաղաքին, թե՛ բերդին և թե՛ գիւղերուն մեջ եկեղեցիներ շինուին. ինքն ալ շատ անգամ գալով շինողներուն քով կը կանգնէր և կը յորդորէր անելի գեղեցիկ շինել: Քրիստոնէից ամեն արարողութիւնները՝ կոչնակ գարնել, ժամ կանչել, ջրօրհնէքի թափօր, հանդիսաւոր յուղարկաւորութիւն, բացօթեայ արարողութիւն, բոլորը հրամայեց անխափան կատարել» (Աճառյան, 2002, 222):

50 տարի անց Դավիթ Ա առաջնորդի հորդորանքով և ջուղայեցիների նյութական օժանդակությամբ Ամենափրկիչ փոքրիկ վանքի առաջին շինությունը քանդվում և տեղը կառուցվում է շքեղ ու նկարագարդ տաճար՝ ընդարձակ հատակագծով, որը ավարտին է հասնում ինը տարի հետո: «Եկեղեցին կոչւում է «Ս. Յովսէփ Յարեմաթացի», վերջինիս աջն այնտեղ գտնւելու պատճառով» (Մինասեան, 1971, 46): Եկեղեցու ներսը՝ հախճապակիների մոտից մինչև գմբեթների ձեղունը, իր բոլոր կամարներով ծածկված են աստվածաշնչական ու սուրբգրային պատկերներով և զարդանկարներով, որոնք ներկայացնում են հին և նոր կտակարանյան տեսարանները, դժոխքն ու դրախտը, Ս. Աստվածածնի թաղումը, Ս. Գրիգոր Լուսավորչի չարչարանքները և Գործք Առաքելոցից պատկերներ:

Վանքի շրջակայքում եկեղեցուց բացի կառուցվել են թանգարան (1930 թ.), սենյակներ, որոնք ծառայում են որպես տպարան (հիմնադրվեց 1636 թ.), գրադարան-մատենադարան (հիմնադրվեց 1905-1906 թթ.), առաջնորդանիստ, թեմական ու

կրոնական խորհուրդների և այլ ազգային մարմինների ժողովարաններ ու գրասենյակներ:

Թեմի շուրջ 105 եկեղեցիներից կանգուն են երեսուներ, իսկ գործող եկեղեցիների թիվը քսաներեքն է: «18-րդ և 19-րդ դարերի ընթացքում Ջուղայի բնակչության դեմ գործադրված հալածանքների պատճառով նվազում է բնակչության թիվը, երբեմնի վայրը՝ ամայանում, որի պատճառով տեղի եկեղեցիները փլվում և ավերվում են» (Արք. Պապեան, 2015, 18):

Նոր Ջուղայում, Առաջնորդանիստ Ս. Ամենափրկիչ վանքից (1655 թ.) և Ս. Կատարինյան մենաստանից (1623 թ.) բացի, աշխատում են հետևյալ եկեղեցիները՝ Ս. Հակոբ Մծբնա մատուռ (1607 թ.), Ս. Գևորգ (1611 թ.), Ս. Հովհաննես Մկրտիչ (1612 թ.), Ս. Աստվածածին (1613 թ.), Ս. Բեթղեհեմ (1627 թ.), Ս. Նիկողայոս (1630 թ.), Ս. Գրիգոր Լուսավորիչ (1633 թ.), Ս. Մինաս (1659 թ.), Ս. Ներսես Մեծ (1666 թ.): Սպահանի թեմի Շիրազ քաղաքում Ս. Աստվածածին եկեղեցին (1662 թ.), Պարսից ծոցի առափնյա քաղաքների՝ Ահվազի Ս. Մեսրոպ (1967 թ.), Աբաղանի Ս. Կարապետ (1958 թ.) և Բուշեիրի Ս. Գևորգ (1700 թ.) եկեղեցիները առ այսօր կանգուն են, սակայն չեն գործում՝ հավատացյալների բացակայության պատճառով: Բոլոր եկեղեցիները գտնվում են Սպահանի թեմի նյութական օժանդակության և ԻԻՀ-ի Մշակութային Ժառանգության և նրան կից կազմակերպության հսկողության ներքո:

Հատկանշական է այն, որ Աբաղանի Ս. Կարապետ եկեղեցին մի շարք վերանորոգման աշխատանքներից հետո, 2018 թ. դեկտեմբերի 24-ին վերաբացվել է Սպահանի հայոց թեմի առաջնորդի ձեռամբ տեղի ունեցած կրոնական արարողությունով, Ատրպատկանի հայոց թեմի առաջնորդ և Սպահանի թեմական և կրոնական խորհուրդի ներկայացուցիչների ներ-

կայությամբ: «Աբաղանի եկեղեցու վերանորոգման և բարեկարգման աշխատանքները իրականացել են Իրանի Մշակութային Ժառանգութեան պահպանման կազմակերպութեան Աբաղանի մասնաճիւղի և «Արևանդ» առևտրի ազատ գոտու համատեղ ջանքերով» (Ալիք օրաթերթ, 2018, 1):

Թեհրանի թեմի հայոց եկեղեցիներ: Իրանահայ համայնքի ամենամեծ թեմը Թեհրանն է և իր նշանակությամբ ու բնակչությամբ ամբողջ հայ համայնքի կորիզն է: «Թեմը իր Թեհրան կենտրոնով ընդգրկում է հետևյալ համայնքները՝ Թեհրան, կենտրոնով ընդգրկում է հետևյալ համայնքները՝ Թեհրան, Համադան, Մաշհադ, Գորգան, Սարի, Ռաշտ, Անգալի, Ղազվին, Արաք (նախկին Սուլթանաբադ), Բախթարան (նախկին Քերմանշահ)» (Բայբուրդյան, 1999, 304):

Թեմի տարածքում գտնվող շուրջ հարյուր եկեղեցիներից գործում են միայն Թեհրանի ութ եկեղեցիները: Դրանք են՝ Ս. Թադեոս-Բարթողիմեոս (1808 թ., ամիսը մեկ անգամ է պատարագ մատուցվում), Ս. Գևորգ (1884 թ.), Ս. Մինաս (1854 թ.), Ս. Մարիամ Աստվածածին (1945 թ.), Սրբոց Թարգմանչաց (1968 թ.), Ս. Սարգիս (1970 թ.), Ս. Գրիգոր Լուսավորիչ (1982 թ.), Սրբոց Վարդանանց (1986 թ.), Թեհրանի Նոր Բուրաստանի գերեզմանատան Ս. Ստեփանոս (1974 թ.) և «Արարատ» մարզավանի Ս. Խաչ մատուռներ (1987 թ.): Հին գերեզմանատան Ս. Աստվածածին եկեղեցին (1936 թ.) կանգուն է, սակայն չի գործում:

Ստորև ներկայացվում են Թեհրանի թեմի հովանու ներքո այն քաղաքների եկեղեցիները, որտեղ պատարագ է մատուցվում տարին մեկ անգամ: Դրանք են՝ Համադանի Ս. Ստեփանոս եկեղեցի (1931 թ.), Մաշհադի Ս. Աստվածածին եկեղեցի (1941 թ.), Գորգանի Ս. Աստվածածին մատուռ (1985 թ.), Ռաշտի Ս. Մեսրոպ եկեղեցի (1868 թ.), Անգալիի Ս. Աստվածածին

սակայն Մկրտիչ Էպիսկոպոսի ջանքերով և Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի հովանավորությամբ այն վերականգնվում է» (Պայման եռամսազիր, 1387, 8-9): 1946 թ. Թավրիզի առաջնորդարանի ջանքերով վանքը հիմնովին վերանորոգվել է:

Ս. Թաղեի վանքը «1955 թ. N 405 հրամանագրով ներառվում է Իրանի պատմական հուշարձանների ցուցակում» (Աւետեան, 2021, 19), այնուհետև 2000 թ. կառավարության առաջարկությամբ վանքը ներկայացվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային հուշարձանների ցուցակում ներգրավվելու համար: «2008 թ. հուլիսի 2-10-ը Կանադայի Քվեբեկ քաղաքում անցկացվող ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային Ժառանգության կոմիտեի 32-րդ նստաշրջանի ընթացքում, Սբ. Թաղեոս Առաքյալի պատմական վանքը՝ որպես Իրանի 9-րդ պատմամշակութային կոթող, պաշտոնապես գրանցվեց միջազգային այդ կազմակերպության պատվավոր ցուցակում» (Իսկանդարյան, 2016, 190-191):

1946 թ. Թավրիզի ազգային իշխանության և թեմական խորհրդի որոշմամբ կազմակերպվում են ուխտագնացություններ դեպի Ս. Թաղեի վանք: Հիսունչորս հոգուց կազմված ուխտավորների առաջին ուխտագնացությունը տեղի է ունենում 1954 թ.: Վանքում տարվա կտրվածքով տեղի է ունենում միայն մեկ ծառայություն: Իրանի Ատրպատականի հայոց թեմի, ազգային իշխանության և տեղի պետական այրերի տնօրինությամբ ամեն տարի (մոտավորապես հուլիս ամսին) տեղի է ունենում եռօրյա ուխտագնացություն դեպի Ս. Թաղեի վանք:

Սուրբ Սանդուխտ կույսի մատուռ (5-րդ դար)

Թաղեոս Առաքյալի քարոզչությամբ Սանատրուկ արքայի դուստր Սանդուխտը Քրիստոսի հավատի համար, ով սպան-

վում է արքայի հրամանով, առաջին նահատակված կինն է: Հետագայում նրա նահատակության վայրում կառուցվում է մատուռ, որը գտնվում է Ս. Թաղեոս վանքից 1.8 կմ հարավ-արևելք՝ ճանապարհի եզրին՝ փոքր բլրի գագաթին:

Սուրբ Սանդուխտ կույսի մատուռը 2008 թ. Ս. Թաղեոս Առաքեալի վանքի հետ մեկ տեղ գրանցվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային հուշարձանների ցուցակում, իսկ 2018-2019 թվականներին Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի թվականների հիմնադրամիջոցներով և Իրանի ու Հայաստանի Հանրապետության մասնագետների համատեղ ջանքերով ամբողջովին վերանորոգվում է:

Շործորի Սուրբ Աստվածածին վանք (7-րդ դար)

Վանքը գտնվում է Իրանի Արևմտյան Ատրպատական նահանգի Բարուն գյուղից 1 կմ հարավ-արևելք՝ Չանգմար գետի հանգի ափին՝ Մակու քաղաքից 8 կմ հարավ՝ Թաղեոս Առաքյալի վանքից 7.5 կմ հյուսիս-արևմուտք: Շործոր նշանակում է նեղ ձորակ կամ լեռների մեջ անձրևներից առաջացած հեղեղատ:

Վանքի հիմնադրման վերաբերյալ ստույգ տեղեկություններ չկան: Եկեղեցու ճարտարապետական տվյալներից (հատկապես տակազմային լուծումներ, պատերի ստորին շարվածքներում մեծ քարերի օգտագործում և այլն) ենթադրվում է, որ այն կառուցվել է 7-րդ դարում: Ըստ վկայությունների՝ վանքը հիմնվել է 14-րդ դարում Ս. Թաղեոս վանքի հոգևոր հայր Չաքարիա Էպիսկոպոսի ջանքերով և որպես դպրության կենտրոն ծառայել է տեղի հայ համայնքին: Վանքը գործել է մինչև 18-րդ դարի վերջը: Ներկայիս Սուրբ Աստվածածին մատուռը վանքի միակ կանգուն շինությունն է:

Հատկանշական է այն իրողությունը, որ 1985 թ. Իրանի Էներգետիկայի նախարարության որոշումով վանքի մոտակայքում ջրամբարի կառուցման նախագիծ էր իրականանալու, սակայն Մշակութային Ժառանգության կազմակերպության մասնակցությամբ որոշում է ընդունվում այդ գողտրիկ կոթողը փրկել և այն տեղափոխել 600 մ հեռու՝ 110 մ ավելի բարձր, նույնությամբ կառուցել Բարձր գյուղի մերձակա լեռնալանջի վրա: Վերականգնման աշխատանքները սկսվեց 1989 թ. հայ բարերարների նյութական օժանդակությամբ և ավարտվեց 2001 թվականին: 2008 թ. Ծործորի Ս. Աստվածածին եկեղեցին ևս ընդգրկվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային հուշարձանների ցուցակում:

Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանք (առաջին դար)

Հայկական ճարտարապետական, սրանչելի և աչքի ընկնող մեկ այլ հուշարձան, որը գտնվում է Արաքս գետի աջ ափին՝ Հին Ջուղա քաղաքից 13 կմ արևմուտք, Շամ «Դարաշամբ»¹ (Մինասեան, 1971, 19) ձորում՝ Մաղարդ լեռնաշղթայի (1787 մ.) ստորոտին, Ս. Ստեփանոս Նախավկայի վանական համալիրն է: Վանքը կոչվել է նաև Մաղարդա վանք: «Երբ 1828 թ-ի Ռուս-պարսկական պատերազմի հետևանքով, համաձայն Թուրքմենչայի դաշնագրի, Ասորպատականը մնում է պարսիկ-

¹ Վանքից շուրջ վեց քիլոմետր հեռավորության վրայ, դեպի հիւսիս, գտնվում է վանքի գիւղը՝ Դարաշամբը, որ շամբերով (եղեգներով) առատ մի ընդարձակ ձորի մեջ կառուցած լինելու պատճառով պարսկերեն բառերով կոչվել է «Դարաշամբ» (Դառոճ շամբ), իսկ հայերեն անունն էլ է «Շամբաձոր» կամ «Եղեգնաձոր»: Վանքը գիւղին մօտիկ լինելով, յաճախ նրան այդ անունով կոչել են նաև Դարաշամբի վանք:

ներին և մաս կազմում Իրանին, որով սահմանային գիծը երկու երկրների միջև դառնում է Արաքս գետը:

Այս նոր սահմանագծով Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը ևս, որ անցեալում համարում էր Նախիջևանի շրջանի Թեմի կենտրոնը, ինքնաբերաբար դադարում է այդ վիճակն ունենալուց...» (Մինասեան, 1983, 7):

Վանքի հիմնադրման մասին ճշգրիտ տեղեկություններ չեն պահպանվել: Ըստ կաթողիկոս Խաչիկ Արշարունու՝ 976 թ. կոնդակի՝ վանքը կառուցել է Բարդուղիմեոս Առաքյալն առաջին դարում՝ ի պատիվ քրիստոնեական առաջին նահատակի՝ Սբ. Ստեփանոս Նախավկայի² (Մինասեան, 1971, 23): Վանքի մասին առաջին անգամ գրավոր աղբյուրներում հիշատակվում է 7-րդ դարում: Ինչպես մյուս վանքերը, այս վանքում նույնպես համախմբված են եղել վանականներ, գիտնականներ, փիլիսոփաներ, պատմաբաններ, գեղանկարիչներ և քանդակագործներ: Վանքի դրսի պատերի քանդակագործությունն ապացույցն է հայ վարպետների տքնաջան աշխատանքի: Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը դարերի ընթացքում նույնպես վնասվել և ավերվել է պատերազմների և երկրաշարժերի հետևանքով, սակայն կրկին վերականգնվել է: «1954 թ. Ասորպատականի հայոց առաջնորդարանի կազմակերպությամբ, ամեն տարի իրանահայերը, ընդունելով ճանապարհի դժվարությունները, մեծ խմբերով ուխտագնացության էին

² «Ս. Ստեփանոսի կողմից հաւատի հանդէպ ցոյց տուած իր ջերմեռանդութիւնը, թշնամիների հանդէպ ունեցած վստահութիւնն ու մահուան դիմաց ունեցած աներկիւղութիւնը քրիստոնեայ համայնքների մէջ հանդիսացել է որպէս հաւատքի մարմնացում և որպէս քրիստոնէութեան առաջին վկան...Նախավկան եղել է Հայաստանի նշանաւոր վանքերից և յայտնի ուխտատեղիներից մէկը...»

գնում, և մինչ այսօր շարունակվում է: Վանքի կառույցի վերանորոգումները առաջին անգամ սկսել է Ատրպատականի Հայոց առաջնորդարանը, սակայն կառույցի պատմական և կրոնական նշանակության պատճառով, վանքը գտնվեց Իրանի Մշակութային Ժառանգության հսկողության ներքո» (Պայման եռամսագիր, 1394 թ. (2015), 78):

Վանքը 2000 թվականից մինչև օրս պահպանվում և վերանորոգվում է Իրանի մշակութային ժառանգության նախարարությանը կից Պատմական եկեղեցիների կենտրոնի հսկողությամբ և նյութական օժանդակությամբ: Այս վանական համալիրը նույնպես 2008 թ. վերոնշյալ նախարարության կողմից ներկայացվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ին և գրանցվում Համաշխարհային Ժառանգության ցուցակում:

Հին Ջուղային Անդրերդրի (Հովվի) եկեղեցի (13-րդ դար)

13-րդ դարից մեզ հասած Անդրերդրու մատուռն ավելի հայտնի է իր ժողովրդական անվանումով՝ Հովվի մատուռ: Եկեղեցին գտնվում է Արաքսի աջ ափին՝ Իրանի Արևելյան Ատրպատական նահանգի Ջուլֆա քաղաքից 6 կմ հյուսիս-արևմուտք՝ Հին Ջուղա քաղաքատեղիի իրանական հատվածում՝ երեք կողմից ժայռերի մեջ ամփոփված թեք լանջի վրա:

Եկեղեցու կառուցման ժամանակը հայտնի չէ, բայց, ըստ Ատրպատականի հայկական եկեղեցիների ցուցակի, Անդրերդրին կառուցվել է 13-րդ դարից ոչ շուտ: Իրանի մշակութային ժառանգության պահպանման կազմակերպության և հայ համայնքի միջոցներով եկեղեցին նորոգվել է 1997-1998 թթ.: 2012-2013 թթ. Հայաստանի մասնագետների և Իրանի մշակութային ժառանգության կազմակերպությանն առընթեր Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի միասնական

ջանքերով մշակվում է վերանորոգման նախագիծ, և 2014-2015 թվականներին եկեղեցին ամբողջովին վերանորոգվում է: Այս եկեղեցին ևս 2008 թ. գրանցվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային Ժառանգության ցուցակում:

Ատրպատականի թեմի առաջնորդ Գրիգոր եպս. Չեֆթճեանը իր «Ուղևորութիւն Ատրպատականի Հայոց Թեմում» գրքի մի հատվածում այսպես է գրում. «Հինգշաբթի 1 Նոյեմբերի 2012-ի առաւօտեան, Ս. Պատարագ մատուցինք Հովվի մատուռում: Մեր մատուցած բազմաթիւ պատարագներից երեւի ամենից հաճելին (եթէ կարելի է պատարագների միջեւ էլ տարբերութիւն տեսնել...) անվեղար մնացած գմբէթի միջից երեսացող կապոյտ երկնքի տակ մատուցած սոյն պատարագն էր», ապա շարունակում է. «Կիսակործան վիճակը սոյն մաէր», ապա շարունակում է. «Կիսակործան վիճակը սոյն մատուռի միշտ էլ մղկտացնում էր մեր սիրտը, ինչպէս բոլոր նրանց սիրտը, որոնք ո՛չ միայն սիրում, այլև մտահոգում են մեր հայրերի ժառանգ թողած հոգեւոր ու մշակութային արժէք ներկայացնող հարստութիւններով» (Եպս. Չեֆթճեան, 2017, 109):

Դարաշամբի Սբ. Աստվածածին եկեղեցի (17-րդ դար)

Գտնվում է Իրանի Արևելյան Ատրպատական նահանգում՝ Ս. Ստեփանոս Նախավկա վանքից 2.3 կմ հյուսիս-արևմուտք՝ Արաքս և Տղմուտ գետերի միախառնման վայրում՝ Արաքսի աջ ափին՝ Դարաշամբ գյուղի արևելյան եզրին:

Եկեղեցին կառուցվել է 1628 թ. Արիստակես Շամբեցու կողմից: Առաքել Դավրիժեցին իր *Պատմության* մեջ հիշատակում է այս եկեղեցու կառույցի մասին: Բազմիցս նորոգվել է այն, քանի որ 1963-1967 թթ. Ատրպատականի Հայոց թեմի վանքերի ու եկեղեցիների կազմած ցուցակում հիշատակվում

է որպէս կանգուն եկեղեցի, իսկ 1983 թ. Իրանի մշակութային ժառանգության կազմակերպության կողմից վերանորոգվել է: 2008 թ. Դարաշամբ գյուղը և եկեղեցին գրանցվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում (Աւետեան, 2021, 14-66):

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը՝ հանգում ենք այն եզրակացության, որ բռնագաղթի ենթարկված և օտար միջավայրում հանգրվան գտած հայությունը, որն արդեն ճանաչված է որպէս իրանահայություն, օտար միջավայրում, այլ կրոնի, մշակույթի և սովորությունների առկայությամբ, չտարրալուծվեց, չկորցրեց իր ազգային դիմագիծը և կառչելով իր ազգային-մշակութային արժեքներին ստեղծեց ուժեղ համայնք՝ պահպանելով իր բարքերն ու սովորությունները, դավանանքն ու մայրենին: Անշուշտ իր գոյատևման ներշնչանքը եղել է մայր հայրենիքը, հայ Առաքելական եկեղեցու կենտրոն Սուրբ Էջմիածինը և նրա միավորիչ դերը: Իրանի հայ գաղթօջախները իրենց բազմադարյա գոյության ընթացքում կառուցել են ուշագրավ և արժեքավոր մշակութային արժեքներ՝ վանքեր ու եկեղեցիներ, արմատավորել իրենց հավատքը, ավանդություններն ու սովորությունները, իսկ եկեղեցական և հասարակական գործերը ղեկավարելու համար ստեղծել երեք՝ Ատրպատականի, Սպահանի (Իրան-Հնդկաստան) և Թեհրանի թեմեր:

Հուշարձանների պահպանման գործում նյութական և բարոյական մեծ ջանքեր են գործադրել հայ համայնքը, հայ բարերարները և նաև Իրանի Իսլամական Հանրապետությունը: Հարկ է նշել նաև ԻԻՀ-ի Մշակութային ժառանգության, ձեռարվեստի և զբոսաշրջության նախարարության առաջարկու-

թյամբ և Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի ջանքերի շնորհիվ Իրանի Ատրպատական նահանգի մի շարք վանքեր և հուշարձաններ 2008 թվականին ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության հուշարձանների ցանկում:

ANAHIT YAHYAMASIHI, PhD IN PHILOLOGY
e-mail: ayahyamasih@yahoo.com

PRESERVATION OF ARMENIAN CHURCHES AND MONASTERIES IN IRAN (CONTEMPORARY PERIOD)

In Iran, Armenian people due to their vitality, the mass exiles gradually grew into an organized community that kept its national identity, language, religion, traditions and diverse arts inherited from the homeland, and most importantly, not to be assimilated.

The Armenian colonies of Iran have built remarkable and valuable cultural assets such as, monasteries and churches, rooted their faith, traditions and customs during the centuries of their existence.

The Iranian-Armenian communities are divided into the dioceses of Atrpatakan, Isfahan, and Tehran. The daily problems of the communities are solved through the work of religious leaders and the diocesan council.

More than 341 monasteries, churches and shrines were built in Iran, but only 123 withstand today.

The cultural heritage of the Armenian community of Iran has been sacredly preserved due to great efforts, care, and financial support of National authority of the Armenian community of Iran, Armenian benefactors, The Center of Historical Churches of Iran and Ministry of Cultural Heritage, Handicrafts and Tourism of the Islamic Republic of

Iran, as well as, Cooperative through efforts of specialists of Islamic Republic of Iran and Republic of Armenia.


A number of monasteries and monuments were included in UNESCO's World Heritage sites' list in 2008. The list of UNESCO World Heritage Sites includes the following monasteries and monuments of Atrpatakan province. They are St. Thaddeus The Apostle Monastery (4th-6th centuries AD), Chapel of St. Sandukht The Virgin (5th century), St. Astvatsatsin Monastery of Tsortzor (7th century), St. Stepanos Nakhavka Monastery (1st century), Church of Andreordi (Hovvi Church), Old Jugha village site (13th century), and St. Astvatsatsin Church of Darashamb (17th century).

Հավելված


Նկ. 1 Սուրբ Ամենափրկիչ վանք, (Նոր Զուղա) Սպահան:



Նկ. 2 Սուրբ Գևորգ Եկեղեցի, Թեհրան:



Նկ. 3 Սուրբ Թադեոս Առաքյալի Վանական Համալիր, Ատրպատական:



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալիբ օրաթեր, Թեհրան, 87-րդ տարի, թիվ 270(23192), 25 դեկտեմբերի, 2018 թ.:
2. Աճառյան Հրայրյա, *Հայ գաղթականության պատմություն*, Երևան, 2002:
3. Աւետեան Շեռլի, *Իրանի հայկական եկեղեցիները*, Երևան, 2021:
4. Բայրուրյան Վահան, *Իրանն այսօր*, Երևան, 1999:
5. Գրիգոր Եպս. Չեֆթճեան, *Ուղևորութիւն Ատրպատականի Հայոց Թեմում*, Թավրիզ, 2017:
6. Իսկանդարյան Գոհար, *Հայաստան-Իրան հարաբերությունները՝ Հայաստանի անկախության ձեռք բերումից հետո (1991-2014 թթ.)*, Երևան, 2016:
7. Կորիւն Արք. Պապեան, *Ուսումնասիրական յօդածաշարը*, Նոր Ջուղա, 2015:
8. Մինասեան Լևոն, *Իրանի հայկական եկեղեցիները*, Նոր Ջուղա, 1983:
9. Մինասեան Լևոն, *Իրանի հայկական վանքեր*, Թեհրան, 1971:
10. Պայման եռամսագիր, 12-րդ տարի, 46-րդ համար, Թեհրան, 1387 թ. (2009 թ.):
11. Պայման եռամսագիր, 19-րդ տարի, 74-րդ համար, Թեհրան, 1394 թ. (2015 թ.):

ԱՆԻ ԲԱԲԱՅԵԱՆ

Մագիստրոս, արուեստաբան եւ

նկարիչ-վերականգնող

էլ. փոստ՝ *babaiანი@yahoo.com*

DOI: 10.56813/2953-786X-2022.2-376

ԻՐԱՆԱՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆԸ XX ԴԱՐՈՒՄ

(ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ)

XX դարն Իրանի համար նշանաւորում է որպէս քաղաքական-հասարակական տնտեսական անկիւնադարձային փոփոխութիւններով լի դարաշրջան, որն սկսում է Ղաջարական հարստութեամբ (1796-1925), յաջորդելով Փահլաւի հարստությանը (1925-1979) և իր ավարտին է հասնում Իրանի Իսլամական Հանրապետության կարգի հաստատումով: Այս շրջանում պատմական կարևոր իրադարձություններն (Իրանի Սահմանադրությունը, ազգային շարժումները, յեղաշրջում, հեղափոխություն, Առաջին և Երկրորդ, Իրան-Իրաքի պատերազմները եւ այլն) իրենց ազդեցությունն են ունեցել Իրանի տնտեսական, հասարակական, կենցաղային և իհարկէ մշակութային կյանքի վրա:

Այս փոփոխությունների արդյունքում XX դարը համարվում է նաև մտավոր եւ արհեստի նոր ուղղությունների եւ ազգային ինքնագիտակցության, ազգայնական գաղափարների ձեւավորման շրջան: Իրանահայ համայնքների հասարակական և մշակութային կյանքը երկրի և քաղաքական և տնտեսական պայմաններին համընթաց՝ զարգացում կամ անկում է ապրել: Նավթային արդյունաբերության զարգացման արդյունքում՝ Իրանի հարավային քաղաքներում, ինչպէս Աբադանում եւ Ահվազում նոր հայկական համայնքներ են կազմավորվում:

Նաև հանդիպում ենք պատմական համայնքների, որոնց հասարակական-համայնքային կյանքը դադարում են ինչպէս՝ հայության ներգաղթի արդյունքում Չհարմահալի հայկական գյուղերի լքվելը: Յուրաքանչյուր իրանահայ համայնք ունի իր պատմությունը, մշակութային և կենցաղային յուրահատկությունը, որը կրում է տվյալ շրջանի և միջավայրի ազդեցությունը:

Այս ժամանակաշրջանում հայկական մշակութային հիմնական կենտրոններն են հանդիսանում Թեհրան, Սպահան և Թաւրիզը, որտեղ ստեղծագործել են մի շարք արուեստագետներ, որոնք իրենց ստեղծագործական անհատականությամբ և աշխարհընկալմամբ ներդրումն են ունեցել ոչ միայն իրանահայ, այլև Իրանի կերպարվեստի, հատկապէս գեղանկարչության նոր դպրոցների և ժանրերի ստեղծման և զարգացման գործում: Հայկական ակումբ- հավաքատեղերի եւ հայկական մամուլի դերը մեծ է եղել գեղանկարչությունը զարգանալու և գեղանկարիչներին քաջալերելու ուղղությամբ:

XX դարում Իրանում գեղանկարչությունն ընթացել է երեք հիմնական ուղիներով:

ա) Ռեալիստական (Իրապաշտական)

Իրանի կերպարվեստի պատմությունը 20-րդ դարում սկսվում է Ղաջարների շրջանի պալատական նկարիչ Քեմալ օլ Մուլի (1843-1898) ռեալիզմի սկզբունքով հիմնած դպրոցի ազդեցությամբ: Քեմալ օլ Մուլը, Եւրոպայից վերադառնալով, 1920ին Թեհրանում հիմնում է ռեալիստական ուղղությամբ գեղանկարչության և քանդակագործության դպրոց (Փաքբագ, 2004, էջ 185):

Այս դպրոցն է հաճախել բանաստեղծ-նկարիչ Դեւը (Մարգար Ղարաբեգեան, 1901-1976), որի նկարչական արվեստանո-

ցը, երիտասարդ նկարիչների համախմբման կենտրոնն ու գործունեութեան սկիզբը դարձավ, որի ավանդը նկարիչ սերունդ դաստիարակելու մեջ մեծ է (Սարեան, 1974, էջ 20):

Քեմալ օլ Մուքի դպրոցն ավարտած Միքայել Շահբազյանը (1904-1976) ռեալիզմով առաջնորդվելով՝ այնուհետև հրապուրվում է իմպրեսիոնիզմով, զարգացնում ջրանկարչությունը: Շահբազյանը իր ազգային պատկանելությունը արտահայտում է հայկական պատմական կոթողներ նկարելով (*Իրանահայ Տաղանդաւոր Նկարիչ՝ Միքայել Շահբազյան (Միշա)-ի Ցուցահանդեսին Առիթով*, 1990, էջ 27):

Իրանի ծովանկարչության ժանրի առաջատարն է համարւում Հարություն Մինասյանը (1910-2002), որը առաջնորդվել է ռեալիզմով (Վարանդ, 2002, էջ 50):

1931 թ. Իրանի ժամանակի կառավարության հրավերով Սարգիս Խաչատուրյանը (1886-1974) Սպահան է ժամանում պատմական շինությունների որմնանկարչությունը նորոգելու համար: Նա Սպահանի Սաֆավյան որմնանկարներից ներշնչված նկարները ցուցադրում է Իրանի, Եվրոպայի և Միացյալ Նահանգների տարբեր պատկերասրահներում, որոնց շնորհիվ, արովեստասերների ուշադրության կենտրոնում է հայտնվում Իրանի XVII դարի որմնանկարչությունը (Բաբայան, 2003, էջ 32):

1931-1934 թթ. ընթացքում Նոր Ջուղայի երիտասարդությունն առիթ է ունենում մասնակցելու Սարգիս Խաչատուրյանի կազմակերպած դասարաններին: Այս դասարաններին մասնակցող Սմբատ Կյուրեղյանն (1913-1999) ու Երվանդ Նահապետյանը (1916-2006) շարունակեցին ջրանկարչությունը դառնալով ջրանկարչության վարպետ-նկարիչներ (Բաբայան, 2003, էջ 33): Նրանք ունեցել են իրենց արվեստանոց-խանութ-

ները Սպահան քաղաքի գլխավոր պողոտայում (Բաբայան, 2004, էջ 20): Նրանք նոր ոգի ու երանգ ներարկեցին Սպահանի ավանդական ջրանկարչության և կենցաղային իրապաշտական ոճին:

բ) Իրանական Ավանդական Նկարչություն

Հոսեյն Բերգադը (1887-1952) այս հոսանքի գլխավոր վարպետն է, որին հետևելով՝ մի շարք նկարիչներ ձգտում են վերականգնել ազգային մանրանկարչության ավանդությունը (Փակբազ, 2004, էջ 191): Իրանական դասական գրականությունը, հատկապես՝ Շահնամե և Օմար Խայյամը, այս ուղղության հետևող նկարիչների ներշնչման աղբյուր են հանդիսացել: Նկատելի է, որ իրանական պատկերները հայ միջնադարեան մանրանկարչութեան պայծառ գունապնակով են պատկերել:

Հայ նկարիչները, ազդեցություն կրելով այս երկերից, նկարել են նաև դրուագներ հայ հին բանահյուսությունից, հայոց պատմությունից և Սայաթ Նովայի բանաստեղծություններից:

Իրանական ավանդական նկարչության դպրոցին են հետևել Իրանի առաջին կին մանրանկարիչ Քլարա Աբգարն (1922-1995) (Փակբազ, 2004, էջ 191) ու Եսայի Շահիջանյանը (1939-1987), որոնք իրանական մանրանկարչության ավանդույթների շարունակողն հանդիսանալով նոր բարձունքի հասցրին այն: Իսկ իրանական ավանդական նկարչությունից ներշնչված և ինքնուրույն ոճ ստեղծած նկարիչներ Դարվիշը (Անդրե Սերուգեան, 1894-1996) (Բերբերյան, 1997, էջ 10) և Աբրահամ Գուրգենյանը (1908-1991) (Բաբայան, 2006, էջ 28): Իրանական և հայկական մանրանկարչության սկզբունքները հիմք ընդունելով՝ նոր, ինքնատիպ և ժամանակակից ոճ ստեղծեցին:

գ) Մոդեռնիստական՝ ժամանակակից տարբեր ժանրեր 1940 թ. նոր գաղափարների և մոդեռնիստական հոսանքի ձևավորման սկիզբն է համարվում: Եվրոպայից Իրան են վերադառնում երիտասարդ արվեստագետներ՝ նոր գաղափարներով և տեսություններով: Նկարիչների մի մասը, գեղարվեստական կրթություն ստանալով Եվրոպայում կամ այնտեղ ստեղծվող արվեստի ազդեցությունը կրելով՝ մի նորագոյն հոսանք են ձևավորում: Մոդեռնիստական շարժմանն իր հատուկ տեղն ունի Մարկո Գրիգորյանը (1925-2007), որի շնորհիվ Իրանում հիմք դրվեց նաև Իրանի համընդհանուր երկամեայ նկարչական բիենալներին ցուցահանդեսների (Biennale), որ երկու տարի մեկ 1958 թ.-ից կազմակերպվում էր (Փակբազ, 2002 էջ 110): Իրանի Իսլամական Հեղափոխությունից հետո, տարիներ դադարից հետո, ցուցահանդեսները վերականգնվեցին: Առաջին բիենալն իր կարևոր դերն է ունեցել Իրանի ժամանակակից գեղանկարչության ձևավորման մեջ:

Մարկո Գրիգորյանի հիմնադրած Էսթետիկ (Aesthetics Գեղագիտություն) Պատկերասրահը (1954), իր վեցամյա գործունեությունով նկարիչներ համախմբող և նորարար հայ և պարսիկ նկարիչների ոգեշնչող և հայտնաբերման կենտրոն դարձավ (Փակբազ, 2002 էջ 440): Յատկանշական է, որ Գրիգորյանն է առաջին անգամ իրանական ժողովրդական նկարչությունն, որն հայտնի է *ղահիլխանէ* անվամբ, գնահատել է որպես մշակութային արժեք և ավանդական արվեստ, որի արդյունքում այն հայտնվել է է արվեստ գնահատողների ուշադրության կենտրոնում (Խաչեսարի, 2004, էջ 32):

Իրանի Իսլամական Հեղափոխությունից հետո, մշակութային համակարգի և արժեքների փոփոխության արդյունքում, գեղանկարչությունը թևակոխեց նոր շրջան: Կրոնա-քաղաքա-

կան և հայրենասիրական գործեր հովանաւորելու արդիւնքում, Իրանական աւանդական նկարիչները եւ բնանկարիչները հնարավորություն ունեցան իրենց գործունեությունը շարունակել, իսկ մինչ հեղափոխություն կայացած ժամանակակից նկարիչներից մի մասը պարտադիր Իրանից հեռացան: 1990-ականներին վերաբացվեցին և իրենց աշխատանքներն վերսկսեցին պատկերասրահները, տարեկան ցուցահանդեսները և մշակութային ամսագրերը:

Հիշյալ իրանահայ արվեստագետներն իրենց ուրույն դերը և ավանդն ունեն Իրանի XX-րդ դարի գեղանկարչության պատմության մեջ: Իրանական հարուստ մշակույթը և գրականությունը դարեր շարունակ հայ գեղանկարիչների ոգեշնչման աղբյուր են եղել: Հայ նկարիչներն իրենց ազգային գունաշխարհով ճոխացրել են իրանական արվեստը՝ հանդիսանալով եվրոպական և իրանական արվեստը միմյանց միացնող կապ: Հայ և պարսիկ գեղանկարիչների փոխառնչությունները և փոխհարաբերությունները դեռ կարոտ են գիտական վերլուծմանը:

ANI BABAIAN

Master of Fine Arts

Independent Researcher, Artist,

and Art Conservator

e-mail: babaianani@yahoo.com

BRIEF OVERVIEW OF ARMENIAN IRANIAN PAINTINGS IN THE TWENTIETH CENTURY

This article provides a brief overview of the history of painting in Iran in the twentieth century, introducing Armenian

Iranian painters whose works reflect the interaction and fusion of Armenian traditional artistic styles with contemporary Persian and European styles. Iranian painting in the twentieth century developed in three directions: Realism, Traditional Painting, and Modern. Armenian artists whose works are the best examples of Armenian and Iranian interaction are presented.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաբայեան, Անի, *Նոր Ջուղայի Գեղանկարչութեան Վարպետները Արրահամ Գուրգէնեան*, Հանդէս Գրականութեան եւ Արուեստի, Թեհրան, 2006 (14):
2. Բաբայեան, Ա., *Սարգիս Խաչատուրեան Արուեստագէտ Ուսուցիչը*, Հանդէս Գրականութեան եւ Արուեստի, Թեհրան, 2003 (6):
3. Բաբայեան, Ա., *Սմբատ Կիւրեղեան, Հանդէս Գրականութեան եւ Արուեստի*, Թեհրան, 2004 (8):
4. Իրանահայ Տաղանդաւոր Նկարիչ՝ Միքայէլ Շահբազեան (Միշա)-ի Ցուցահանդէսին Առիթով, Քուլիս, Իսթանպուլ, 1990 (No.1030):
5. Սարեան, Անդրանիկ, *Յուշամատեն Բանաստեղծ-Նկարիչ Դեւի Գրական-Նկարչական եւ Մշակութային գործունէութեան Յիւնամեայ Յոբելեանի Առթիւ*, Թեհրան, Նայիրի, 1974:
6. فصلنامه آندره سوروگيان، درويش بربريان، ليدا، زيتونچيان، آرمينه، (5,6) شماره 1376 [1997] تهران، فرهنگي پيمان،
7. پاکباز، رويين، دایرةالمعارف هنر، تهران، فرهنگ معاصر 2002.
8. نقاشی ایران از دیرباز تا امروز، تهران، زرین و سيمين، [2004] 1383، رويين
9. خواجه سرى، سيلوى، ماركو گريگوريان، فصلنامه فرهنگي پيمان، تهران، 1383
10. واراندا، نقاش موج درياها به اقيانوس آرامش پيوست، فصلنامه فرهنگي پيمان، تهران 1381.

ԳՄԱ գրականության ինստիտուտ, ասպիրանտ
 էլ. փոստ՝ bagratyanareg@gmail.com
 DOI: 10.56813/2953-786X-2022.2-383

ՀԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ ՀՈՄԱ ՋԱՍԵՄԻԻ «ԱՄԹԱՄԱՐ»
 ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ

Բազմադարյա պատմությունն ունեցող հայ-իրանական փոխառնչակցության յուրահատուկ դրսևորումն է թե՛ իրանցիների ներկայությունը հայ գրականության մեջ և թե՛ հայերինս՝ իրանական պոեզիայում և արձակում: Անդրադառնալով հայերի կերպարին պարսից գրականության մեջ՝ պետք է հիշենք, որ իրանական գրականության թերևս բոլոր շրջափուլերում էլ առկա է հայը: Իրանական ժամանակակից գրականության մեջ իրանահայ համայնքը և անհատապես հայը պատկերված են Մոհամմադ Ալի Ջամալզադեի ուղեգրություններում, Մոջթաբա Բոգորզ Ալավիի «Մենյակիս պատմությունը», Սադեդ Չուբաքի «Իրիկնավարտ», Մոնիրու Ռավանիփուրի «Հերոս», Փաքսիմա Մոջավեզիի «Քառասունութ աստիճան», Ռեզա Ամիր Խանիի «Հայ Նասերը» և այլ պատմվածքներում: Ուշագրավ է իրանահայ արձակագիր Ջոյա Փիրզադի ստեղծագործությունը, որտեղ դեպքերը մեծով մասամբ զարգանում են հայ համայնքում (հատկապես՝ «Լույսերը ես կհանգցնեմ» վեպը): Իրանական արդի վեպերից կարելի է նշել Գոլի Թարաղիի «Վերադարձ», Ռեզա Ամիր Խանիի «Ես՝ Նրանը» և մի շարք այլ երկեր, որոնցից յուրաքանչյուրում հայը պատկերված է յուրովի:

Մեր աշխատանքում կանդրադառնանք ամերիկաբնակ իրանցի ժամանակակից հեղինակ Հոմա Ջասեմիի «Ախթամար» ժողովածուին և մասնավորապես՝ այն պատմվածքներին, որոնց գեղարվեստական առանցքը հայ կամ հայկականությունն է: Հոմա Ջասեմին ծնվել է 1963 թվականին Թեհրանում: Բարձրագույն կրթությունը հոգեբանության բնագավառում ստացել է Թեքսասի համալսարանում: Մի շարք պատմվածքների, գիտական հոդվածների հեղինակ է: Նա այժմ բնակվում է ԱՄՆ-ում: 2021 թվականին Իրանում լույս տեսավ նրա պատմվածքների առաջին ժողովածուն՝ «Ախթամար» խորագրով¹:

Տասնյոթ պատմվածքներից բաղկացած այս ժողովածուի երկու՝ «Ախթամար» և «Անետն ու Այլինը» պատմվածքները հայերի մասին են, իսկ գլխավոր կերպարները՝ իրանահայեր:

Ուշագրավ է «Ախթամար» պատմվածքը, որի վերնագիրը կարդալիս արդեն հայ ընթերցողի աչքի առջև պատկերվում է հայկական հայտնի լեգենդը, և մտածում է՝ միթե պատմվածքը հյուսված է այդ պատումի շուրջ, կամ ինչո՞ւ է օվկիանոսից անդին բնակվող մի իրանցի հեղինակ անդրադարձել հայկական լեգենդին: Հարց է առաջանում՝ այստեղ հեղինակը դիմել է գրական հնարքի՞, թե՞ դա գուտ արտահայտչամիջոց է՝ պատումին ավելի խորքայնություն և գեղեցկություն տալու համար: Հարցի պատասխանը տվել է հենց ինքը՝ Հոմա Ջասեմին, իր հարցազրույցներից մեկում: «...Ամեն ինչ սկսվեց Սպահանի կամուրջներին նմանվող կամուրջի վրա մի աղջկա նկարի նայելուց: Մի օր փնտրում էի Գուզլի քարտեզները՝ պատմվածքիս համար իսկական հրուշակեղենի խանութի անուն գտնե-

¹ پدم/هما جاسمی <https://shahrvand.com/archives/109480>, 21.12.2021.

լու համար և «Ախթամար» հրուշականոցի անունը տեսա: Չհասկանալով, որ ենթագիտակցությանս մեջ ձևավորվում է պատումի մի հատվածը, հետաքրքրությամբ փնտրեցի բառի իմաստը և իմացա հայկական «Ախթամար» լեգենդի մասին: Պատմվածքը գրելը քանիցս թողեցի, բայց ժամանակ առ ժամանակ թափառում էի Սպահանի հին լուսանկարների մեջ, մինչև որ մի օր տեսա Հոլսթրի և նրա հայ կնոջ նկարը: Պատկերացում չունեի, որ այդ գերմանացի ինժեները կհայտնվի իմ պատմության մեջ և իր փայտե եռոտանիով տեսախցիկով կլուսանկարի Միոսեփովը: Քանի որ ծանոթ էի գերմաներենին, սկսեցի ուսումնասիրել նրա կյանքը և խորասուզվեցի նրա Սպահանից արված լուսանկարների մեջ: Բանը նրան հասավ, որ երբ նայում էի նրա Սպահանի տան նկարին, թվում էր՝ անցյալ եմ մտնում, լսում կյանքի ձայնը այդ սև ու սպիտակ, գեղեցիկ բնապատկերի միջից և այն օթյակաձև պատուհաններում տեսնում եմ Հոլսթրին ու կնոջը՝ Մարիամ Հախնազարին: Հենց այդ արտասովոր զգացողություններից էր, որ թույլ տվեցի նարատորը ինչ-որ տեղ ասի. «պապան ունի նրա նկարների գիրքը: Անունը Հոլթսթր է: Պապան ասում է՝ Սպահանում մարդիկ չեն մեռնում, պատմության գիրկն են անցնում»: Այդպես, Գուզլի քարտեզներում տեսա Վանք եկեղեցին ու վարդապետ Կեսարացու արձանը: Տասնյակ հոդվածներ կարդացի եկեղեցու և վարդապետ Կեսարացու մասին և շարունակ փնտրում էի, թե վարդապետի՝ եկեղեցու դիմացի արձանի ձեռքին ինչ կա: Սպահանի ու Ջուղայի մասին այնքան լուսանկարներ ու տեսանյութեր նայեցի, որ զգացի՝ պատկերացնում եմ պատմվածքիս մթնոլորտը ոչ միայն ներկայում, այլ նաև այն ժամանակ, երբ Հոլսթրը կամ վարդապետ Կեսարացին շնչում էին նակ, երբ Հոլսթրը կամ վարդապետ Կեսարացին շնչում էին Սպահանում: Երբ գրելն ավարտեցի, ընկերոջս միջոցով

պատմվածքս մի հայուհու հանձնեցի: Նա ասաց, որ կարդալիս հուզվել է, և իրեն թվացել է՝ կարծես ինքն է պատմության հերոսը, և զարմացել, թե ինչպես եմ կարողացել պատկերել հայ ընտանիքի: Այդ ժամանակ էր, որ հասկացա՝ պատմվածքը պատրաստ է, գործս՝ ավարտուն»²:

Հեղինակի այս խոսքերից կարելի է ենթադրել, որ հայկականությունը տվյալ պատմվածքում ավելի շատ գեղարվեստական պատկերավորման միջոց է: Այս հարցը պարզելուց հետո փորձենք հասկանալ, թե ինչ սյուժե ունի պատմվածքը: Պատումի գլխավոր կերպարը Արլինն է՝ Սպահանում բնակվող Ստեփանյանների ընտանիքի դպրոցահասակ դուստրը, որի հայրը կոտրում է իր ոտքը, և տնային բուժումների համար իրենց տուն է գալիս իրանցի երիտասարդ մի բժիշկ: Հետագայում ամբողջ պատմվածքը զարգանում է Արլինի և բժշկի՝ կիսով չափ իրական, կիսով չափ երևակայական ու ցնորական սիրո դրվագներով: Եվ նրանց սերն էլ կարծես մի յուրօրինակ «Ախթամար» լինի: Արլինն ինքն էլ, հասկանալով, որ հրապուրված է մուսուլման երիտասարդով, գիտակցում է, որ իր սերը դատապարտված է ձախողման՝ մտածելով. «...ամաչում էի, որ աղոթում եմ՝ հայրս երբեք չլավանա» (152, 1399, هما جاسمی) կամ «...եթե պապան գլխի ընկնի, որ սիրահարվել եմ մի մուսուլման տղայի» (152, 1399, هما جاسمی):

2 از پرسزنی میان عکس‌های قدیم اصفهان تا خلق آختامار
<http://isfahanziba.com/news/4811/%D8%A7%D8%B2-%D9%BE%D8%B1%D8%B3%D9%87%E2%80%8C%D8%B2%D9%86%DB%8C-%D9%85%DB%8C%D8%A7%D9%86-%D8%B9%DA%A9%D8%B3%E2%80%8C%D9%87%D8%A7%DB%8C-%D9%82%D8%AF%DB%8C%D9%85-%D8%A7%D8%B5%D9%81%D9%87%D8%A7%D9%86-%D8%AA%D8%A7-%D8%AE%D9%84%D9%82-%D8%A2%D8%AE%D8%AA%D8%A7%D9%85%D8%A7%D8%B1>, 21.12.2021.

Պատմվածքում մի յուրօրինակ թելով հեղինակը հյուսում է Արլինի հոգեկան անառողջության փաստը: Խոսվում է նրա շփոթվածության, շարունակական ձայներ լսելու, բժիշկներին այցելության ու դեղահաբերի մասին: Հերոսուհու աչքին հաճախ են պատկերվում տեսիլքներ, որոնցից մեկն էլ, պարզվում է, բժշկի հետ իր սիրո պատմությունն ու «Ախթամարի» Թամար դառնալն է: Հետաքրքիր կերպով է հեղինակը բացում Արլինի հոգեկան խնդիրների կծիկը: Արլինը ասում է՝ «...բայց ես հենց այդ պատուհաններից (նկատի ունի Սիոսեփոլի օթյակները Ա. Բ.) էի նայում Չայանդեռուդին, երբ մի օր հայելին ձեռքիցս ընկավ, և ջուրը տարավ այն: Այդ նույն օրն էր, որ նա խեղդվեց: Փնտրեցի նրան պապայի բոլոր գրքերում, Չայանդեռուդի բոլոր լուսանկարներում, Սպահանի ողջ պատկերներում»³: Այստեղ է, որ պարզվում է՝ նրանց սիրո ցնորական լինելը, քանի որ ցամաքած Չայանդեռուդն ինչպես կարող է բշտանել հայելին, իսկ պատմվածքի վերջում էլ, այս կծիկն էլ ավելի բացելով, Արլինի մայրը դիմում է հոգեբույժին. «...Բժիշկ, որևէ մեկը չի խեղդվել. առհասարակ ուր է ջուր, որ: Անցած տարի մի ուսանող տղա էր գալիս մեր տուն՝ ամուսնուս ոտքը բուժելու: Նա էլ հետո գնաց Թեհրան» (162, 1399 هما جاسمی):

Պատմվածքի ժամանակը և տարածությունը ևս հաճախ են փոխվում: Առաջին հայացքից թվում է, թե գործողությունները ներկայում են՝ ժամանակակից Սպահանում, սակայն հերոսները մի յուրօրինակ «ճամփորդության» են ենթարկվում գրքերի, լուսանկարների ու համացանցի միջոցով: Հատկա-

3 «Ախթամար» պատմվածքը հայերեն թարգմանությամբ հասանելի է <https://www.cultural.am/hy/2020-03-06-09-14-27/grakanutyun/3543-homajasemi-axtamara> հղումով:

նշական է, որ, ի տարբերություն, ժամանակի հոսքի այլ ստեղծագործությունների՝ այստեղ նկատելի է, թե որոնք են այն միջոցները կամ վերջնակետերը, դեպի որը պիտի ճամփորդեն հերոսները: «Ախթամար» պատմվածքում դրանք երեքն են՝ «Ախթամար» լեզենդը, Խաչատուր Կեսարացին և Էռնեստ Հոլսթրը՝ իր կնոջ Մարիամ խանումի հետ:

Ինչպե՞ս է հայկական լեզենդը հյուսվում սպահանյան այս պատմությանը: Ստեփանյանների տուն եկող բժիշկը ասում է, որ ճանապարհին մի հրուշականոց կար՝ հետաքրքիր մի անվամբ՝ Ախթամար՝ հարցնելով դրա պատմությունը: Եվ հենց այդ հրուշականոցի անունն էլ դառնում է կամուրջ լեզենդի ու կիսալեզենդ սիրո պատմությունների միջև, որտեղ պիտի հոսեն ժամանակն ու տարածությունը: Երբ նա իմանում է Թամարի ու երիտասարդի սիրո տխուր վախճանի մասին, Արլինի ցնորքներում իրենց սերը համեմատում է այդ լեզենդի հետ՝ Արլինին էլ այսուհետ անվանելով Ախթամար:

Երկրորդ հարցը, որ տալիս է բժիշկը Ստեփանյաններին, Խաչատուր Կեսարացու՝ Ջուղայի եկեղեցու դիմաց դրված արձանի ձեռքի առարկայի վերաբերյալ է: Բժիշկը զարմացած հարցնում է. «...Ներքևում տեսա՝ գրված էր Վարդապետ Կեսարացի⁴՝ Մերձավոր Արևելքի առաջին տպարանի հիմնադիր, բայց ինչքան նայեցի, չհասկացա՝ ձեռքում ինչ է բարձրացրել⁵»: Հենց այս հարցն է, որ տանջում է Արլինին և հանուն իր սիրելի

⁴ Խաչատուր Կեսարացի (1590-1646): Եղել է Նոր Ջուղայի առաջնորդը և Ս. Ամենափրկիչ վանքում (վանահայր 1620-1646 թվականներին) կատարել է կրթական-լուսավորական աշխատանք: Իսկ 1638 թ. հիմնել է Իրանի առաջին տպարանը:

⁵ «Ախթամար» - Հոմա Ջասեմի <https://www.cultural.am/hy/2020-03-06-09-14-27/grakanutyun/3543-homa-jasemi-axtamar>, 21.12.2021.

բժշկի պատրաստ է տառապել, տքնել՝ գտնելու, թե ինչ կա Խաչատուր Կեսարացու ձեռքում: Եվ շատ հետաքրքիր է այդ տեղեկությունը իմանալու ողջ տքնանքի նկարագրությունը, որը ինչ-որ տեղ անգամ հիշեցնում է հայոց այբուբենի երկնումը: «...Մինչև ուրբաթ ում տեսա, հարցրի, բայց որն է մեկը չգիտեր՝ վանահոր ձեռքում ինչ է: Գիշերը հասա համացանցի ջանին և մինչև լուսադեմ ամենուր տակնուվրա արեցի: Ի վերջո, Ազատ Մաթյանի⁶ բանաստեղծություններից մեկում գտա այն առարկան, որ վանահայր Կեսարացու ձեռքին էր: Բանաստեղծությունը ոգևորված երեք անգամ կարդացի ու աչքերս փակեցի: Տեսա մանրավաճառների, որ դուրս էին գալիս Վանք եկեղեցու կողքի խանութներից: Անհասկանալի ժխտքին խառնված նրանց ոտնաձայները զրնգացին գլխումս: Բոլորը հավաքվեցին ավազանի դիմաց, ուր վանահոր արձանն էր դրված: Հետո նրանցից մեկը ձեռքը երկարեց՝ մատնացույց անելով վանահոր ձեռքի մետաղը: Աչքերս բացեցի: Մաթյանի բանաստեղծության բառերը մեկիկ-մեկիկ անհետանում էին Էկրանի վրայից: Ինչքան կտտացնում էի, անօգուտ էր. ստեղնաշարս շարքից դուրս էր եկել: Մոնիտորը մթնեց, թրթռաց, և սենյակումս քստքստոց լսվեց: Վանահայրը իջավ պատվանդանի վրայից, անցավ սաղր ավազանի միջոց և երբ քայլում էր դեպի եկեղեցի, հետևից ջրի բարակ հետք էր նշմարվում: Երբ հասավ ժամի աշտարակի տակ, մի քանի վայրկյան կանգնեց: Վեղարի տակից դեմքը դժվարությամբ էի տեսնում: «Ես Խաչատուր Կեսարացին եմ և մի քանի հարյուր տարի անց վերադարձել եմ Ջուղա՝ ձեզ համար հիմնած տպարանի տառերը փնտրելու»: Եկեղեցու բակում նրա ոտնաձայներն էին լսվում: Վանահայրը

⁶ Ազատ Մաթյան (ծնվ.՝ 1942)՝ իրանահայ բանաստեղծ և թարգմանիչ:

բացեց փայտե մի շինության դուռ, որը մինչև այդ չէի տեսել եկեղեցու շրջակայքում, մտավ ներս և կանգնեց կապույտ լուսի տակ՝ կամարակապ ու փոքրիկ պատերով սենյակում, սեղանի վրայից վերցրեց մի հին գիրք, մատը հպեց շապիկի վրայի խունացած գրությանն ու ասաց. «Դավթի սաղմոսներ» սա առաջին գիրքն է, որ երեք հարյուր ութսուն տարի առաջ տպագրեցինք այստեղ»: Այնուհետև սենյակի փայտե ու մետաղե գործիքների մեջ փնտրեց իր տպարանի հին տառերը: Երբ դուրս եկավ շինությունից, բռան մեջ մի բան էր պահել: Ամենուր մթնել էր: Անցավ ժամացույցի աշտարակի տակով և նորեն կանգնելով հրապարակում՝ իր մշտական պատվանդանի վրա, ձեռքը վեր բարձրացրեց ու ասաց. «Սա հենց Ջուղայի տպարանի առաջին տառն է, որ մատներիս արանքում է» (157, 1399, هما جاسمی):

Հաջորդ «կամուրջը», որ ապահովում է պատումի տարածաժամանակային անցումը հյուսվում է Էռնեստ Հոլտերի կերպարի շուրջ: Նա էլ, ինչպես Խաչատուր Կեսարացին, եղել է իրական անձնավորություն՝ մեծ ավանդ ունենալով Սպահանի կյանքում: Հոլտերը (1835-1911) գերմանացի ինժեներ և լուսանկարիչ էր, որ 1863 թ. առաջին անգամ գնաց Սպահան, այնտեղ ամուսնացավ Մարիամ Հախնազար անունով մի հայ աղջկա հետ: Սպահանի շատ լուսանկարներ հենց նրա կողմից են արվել⁷: Պատմվածքում նրա լուսանկարների գիրքը կապ է ստեղծում հին ու նոր Սպահանների միջև, իսկ հայուհու հետ ամուսնացած գերմանացի Հոլտերը ասես այն կերպարն է, որ պիտի հեռվից խիզախություն պարզի մուսուլման

բժշկին՝ խոստովանելու իր սերը Արլինին: Եվ պատահական չէ Արլինի հարցը՝ բժշկին. «...Որ ի նչ ես անընդհատ նկարում ինձ: Չլինի՞ ուզում ես էն գերմանացու նման հայ կին առնել...» (155, 1399, هما جاسمی): Եվ ինչպես նման են Հոլտերի ու մուսուլման բժշկի կերպարները, այնպես էլ զուգահեռվում են Մարիամի ու Արլինի ճակատագրերը: Արլինի ցնորքներում ականատեսն ենք լինում նաև 19-20-րդ դարից եկած այդ կնոջը, որ հերոսուհուն պիտի ասի. «... Աղջի՛կս, ժամանակը կանգ է առել Էռնեստի լուսանկարներում» (155, 1399, هما جاسمی):

Բայց պետք է հիշել, որ այս ամենը՝ Արլինի սիրո փոխադարձ լինելը, Կեսարացու, Հոլտերի ու Մարիամ Հախնազարի՝ ժամանակակից օրերում հայտնվելը սուսկ հերոսուհու հոգեկան անառողջության արդյունքն են, և բուժվել նշանակում է մեռցնել, սպանել այն ողջ երազը, որ հյուսել էր Արլինը և այդ վերջում կարդում ենք. «... Դեղերի թիվը երբ մեծացավ, էլ ո՛չ հետն էի խոսում, ո՛չ է; տեսնում: Երբ նստում էի տաղավարում, պապայի գրքում նայում Սպահանի հին նկարները, Հոլտերի տունը, որ գունագարդ պատուհաններ ուներ: Կարող էի Մարիամ խանումի պես կանգնել պատշգամբների ու տեսնել Ջայանդեռուղը կամ Սիոսեփոլի պատուհաններին հայելին ձեռքս առնել ու սպասել նրա գալուն» (155, 1399, هما جاسمی):

Ժողովածուի՝ հայերին անդրադարձող հաջորդ պատմվածքը «Անետն ու Այլինը»-ն է: Սա ողբերգական պատմություն է երկու քույրերի, նրանց մենության ու դժբախտության մասին: Ինչպես նախորդ երկում, այստեղ ևս հանդիպում ենք մուսուլմանի և քրիստոնյայի սիրո դրվագի, որը, ի տարբերություն «Ախթամար»-ի, դարձել է ամուսնություն: Խոսքը պատումի նարատորի՝ Էսիի և Այլինի մասին է: Հետաքրքիր է, որ

⁷ Ernst Hoeltzer and his shots of 19th-century Isfahan <https://www.tehrantimes.com/news/458018/Ernst-Hoeltzer-and-his-shots-of-19th-century-Isfahan>, 21.12.2021.

նրանց ամուսնությունը ևս միանշանակ չի ընդունվում, հատկապես՝ ընտանիքի ավագ անդամների կողմից: Ահա, օրինակ, Էսիի մայրը ասում է. «... Էսի՛, էդ քո արածը հեջ քանի նման չի գեղում էսքան աղջիկ ունենք, գնացիր հայ աղջկա հետևի՛ց» (88, 1399, هما جاسمی):

Մակայն պատմվածքում առաջնային չէ հենց այս խնդիրը, և հեղինակը բնավ իր առաջ չի դնում հարցին որևէ կերպ գնահատական տալ: Պատումի առանցքը չարաբաստիկ մի պատահար է, որի արդյունքում զոհվել են Անետի ամուսինը՝ Էդվինը և երկու մանկահասակ զավակները: Անետն էլ, աշխարհից կտրված, եկել-հաստատվել է այն ձորի հարևանությամբ, որտեղ տեղի է ունեցել աղետը՝ ապրելով մի փոքրիկ խրճիթում: Հեղինակը վարպետորեն է հյուսել Անետի խռովքը աշխարհից, նկարագրել նրա մենությունը մութ ու ցուրտ խրճիթում, որի պատուհանները չունեն ապակի, և դրանց փոխարինող մուլաթները քամու հետ դիվային աղմուկ են բարձրացնում: Անետի կերպարին զուգահեռ՝ ականջալուր ենք լինում Այլինի՝ նարատորի կնոջ հոգեկան ծանր ապրումներին: Մեղքի զգացումից, անգորությունից, քրոջ ծանր ու դժբախտ ճակատագրի համար շարունակական մտածումներներից այս կինը նախ կորցնում է իր հիշողությունը, ապա՝ մահանում: Եվ միայն պատմվածքի վերջում է ընթերցողն իմանում, որ Էսին եկել էր Անետի մոտ՝ հայտնելու Այլինի մահվան մասին, սակայն գերադասում է վշտահար քրոջ սիրտը էլ ավելի չծանրացնել՝ թողնելով, որ ապրի իր ցնորքների աշխարհում: Իսկ ցնորքներ, միանշանակ կան. օրինակ՝ հեղինակը ներկայացնում է՝ ինչպես է «սահմանային վիճակի» հասած Անետը պատմում, թե ամուսինն ու երեխաները հաճախ են գալիս իր խրճիթ՝ ասելով. «... Գիտե՞ս՝ խոսելն ինչու չեմ մոռացել: Մեկ-

մեկ Էդվինը գալիս է էստեղ, նստում է կողքս՝ էս թախտին, գրուցում եմ նրանց հետ, երեխաներս խաղում են, մենք էլ՝ նայում նրանց: Միշտ չէ, որ գալիս են, բայց գալիս են» (92, 1399 هما جاسمی):

Թե՛ «Ախթամար» և թե՛ «Անետն ու Այլինը» պատմվածքներում հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել ցավի, դառնության պատճառով ճակատագրի լուսանցքում հայտնված հերոսների ներաշխարհի խորքերը թափանցելուն, և հաջողության գաղտնիքն էլ թերևս գրողի հոգեբան լինելն է:

Հետաքրքիր է, թե ինչ միջոցներով է Ջասեմին իր այս պատմվածքներում ստեղծել հայկական միջավայրը: Առաջին հերթին հեղինակը դիմել է լեզվական միջոցներին. այսինքն՝ պարսկերենով գրված հայերեն բառերի, արտահայտությունների միջոցով ասես հայկական շղարշ է տվել իր ստեղծագործություններին: Դրանցից են «բարև», «պապա», «Արլին, կոֆե ուզո՞ւմ ես», «մի՛ վախեցիր», «չէ», «այո» և այլ բառերը և նախադասությունները:

Հաջորդիվ նկատելի է կրոնական կոնտեքստը: Ինչպես գիտենք՝ հայերը Իրանում կրոնական փոքրամասնություն են, և իրանցիները հաճախ մի արտասովոր խորթությամբ, հետաքրքրասիրությամբ են հայացք գցում հայկական եկեղեցիներին, այնտեղի իրականությանը, որը միանշանակ տարբերվում է իսլամականից: Այսպես, երկու պատմվածքներում էլ յուրօրինակ ականածանքով ու խորհրդավորությամբ է խոսվում հայկական եկեղեցիների՝ Վանքի, Սուրբ Սարգսի մասին: Օրինակ՝ «Անետն ու Այլինը» պատմվածքում երբեք եկեղեցի չմտած Էսին զարմացած ասում է. «... Էս խաչերը մարդուն «Դրակուլայի» ֆիլմերն են հիշեցնում: Ես մինչև հիմա ոչ մի եկեղեցի չեմ մտել. վամպիր-մամպիր չհարձակվե՞ն վրաներս»

(90, 1399, هما جاسمی) : Ապա կարդում ենք եկեղեցու խնկաբույրի, միստիկ լռության, խորանում փակցված Մարիամ Աստվածածնի նկարի մասին: Հեղինակը նաև հետաքրքիր կերպով է անդրադառնում եկեղեցում աղոթող տարեց հայուհիներին: Նրանց անվանելով կարճիկ գուլպաներով ու մուգ գլխանոցներով «կանայք, որ իրենց երիտասարդությունը կարծես կորցրել էին քրոջների, եփված սուրճի հոտերի ու փողոցային փսիսոցների արանքում» (90, 1399, هما جاسمی):

Եզրակացություն

Հումա Ջասեմիի «Ախթամար» ժողովածուի երկու պատմվածք՝ «Ախթամար»-ը և «Անետն ու Այլինը» հյուսված են հայերի շուրջը և նրանց մասին են: Հեղինակը ներկայացրել է իրանահայ երկու ընտանիքների կյանքը, նրանց անձնական, մեծ ու փոքր խնդիրները: Երկու պատմվածքներում էլ հայկական թեմատիկան զուտ գեղարվեստական արտահայտչամիջոց է՝ երկն ավելի հետաքրքիր ու յուրահատուկ դարձնելու համար: Հայկականությունն ապահովելու համար հեղինակը «Ախթամար» պատմվածքում անդրադարձել է հայկական համանուն լեգենդին, Խաչատուր Կեսարացու և Էռնեստ Հոլսթրի կերպարներին: Երկու պատմվածքներում էլ Ջասեմին հայկական միջավայրին համ ու հոտ տալու համար մեծ տեղ է հատկացրել քրիստոնեական տարրերին՝ հայկական եկեղեցիներ, աղոթքներ, ինչպես նաև պարսկատառ հայերենով գրված որոշ բառերի:

AREG BAGRATYAN

Institute of Literature, NAS, PhD student

THE ARMENIAN CHARACTER IN THE HOMA DJASSEMI'S "AKHTAMAR" COLLECTION

Two short stories from the collection "Akhtamar" by Homa Djassemi, "Akhtamar" and "Anet and Aylin" are about Armenians. The author presented the life of two Iranian-Armenian families and their personal, big and small problems. In both stories, the Armenian theme is purely an artistic expression to make the composition more interesting and unique. To ensure Armenianness, in the story "Akhtamar" the author touched upon the Armenian legend of the same name, the characters of Khachatur Kesaratsi and Ernest Holster. In both stories, Djassemi devoted a lot of space to Christian elements: Armenian churches, prayers, as well as some words written in Armenian with Persian script to emphasize the Armenian environment.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հումա Ջասեմի, «Ախթամար», <https://www.cultural.am/hy/-2020-03-06-09-14-27/grakanutyun/3543-homa-jasemi-axtamar> :
2. Հումա Ջասեմի, «Անետն ու Այլինը», <https://granish.org/anetn-u-ayliny/>:
3. Homa Djassemi – Akhtamar, Tehran, Iran, 2021.
4. Ernst Hoeltzer and his shots of 19th-century Isfahan, <https://www.tehrantimes.com/>.
5. از پرسه زنی میان عکسهای قدیم اصفهان تا خلق آختامار - پدوم <https://shahrvand.com/archives/109480>.
6. <https://isfahanziba.com/>.

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Չափսը՝ 60x84¹/₁₆: Տպ. մամուլը՝ 24,75:
Տպաքանակը՝ 120: